ԱՎԵՏԻՍ
ՓԱՓԱՋՅԱՆ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՈՉ-ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(1839-1915 թթ.)

ԵՐԵՎԱՆ
2002

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԽԻՎ

ԱՎԵՏԻՍ ՓԱՓԱՋՅԱՆ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՈՉ-ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ (1839-1915ԹԹ.)

Ա II
8 72558



ԵՐԵՎԱՆ - 2002

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ՀՏԴ 94/99
ԳՄԴ 63.3 (4 Թու)
Փ 311

ՓԱՓԱԶՅԱՆ ԱՎԵՏԻՍ.

Փ 311 Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ-մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թթ.): - Եր.: «Զանգակ-97», 2002, 248 էջ:

Աղբյուրագիտական բնույթ ունեցող այս աշխատության մեջ օսմաներենից (արաբատառ թուրքերեն) թարգմանաբար բերված են 1839-1915թթ. Օսմանյան կայսրության կառավարության կողմից ոչ-մահմեդական ժողովուրդներին շնորհված պաշտոնական գրություններ՝ սուլթանական հրամանագրեր, օրենքներ, կանոնադրություններ, որոնք վերաբերում են նրանց իրավական վիճակին և պարտականություններին:

Բոլոր նյութերը քաղված են 1851-1911թթ. տարբեր տարիներին Կ.Պոլսում լույս տեսած Dustur (օրենսգիրք) խորագիրը կրող մատենաշարից:

Առաջաբանում և ծանոթագրություններում տրված է Թանզիմաթի շրջանում և հետո ազգային փոքրամասնությունների նկատմամբ թուրքական կառավարության վարած իրական քաղաքականությունը:

Նախատեսված է պատմաբանների, արևելագետների, կրոնավորների և ընթերցող լայն շրջանների համար:

Փ $\frac{0503000000}{0003(01)\text{-}2002}$ 2002 ԳՄԴ 63.3 (4 Թու)

ISBN 99930-2-451-1

© Ավետիս Փափազյան

© «Զանգակ-97» հրատարակչություն

Այս գրքի հովանավորությունը ստանձնեցին՝

ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՓԻԵՌ ԵՎ ԱՍՊԵՏՈՒՀԻ ՍԻՄՈՆՅԱՆՆԵՐԸ

իրենց եղբոր՝

ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ

անմար հիշատակին՝ մահվան 10-րդ տարելիցի առթիվ։

Հեղինակը հայտնում է իր խորին շնորհակալությունը հարգարժան մեկենասներին

Սիմոն Սիմոնյանը ծնվել է 1924 թվականին, Սիրիայի Ծովեզերյա քաղաք Լաթաքիայում: Նա ավագ զավակն էր Սամվել և Մարիամ Սիմոնյաններին:

Նախնական կրթությունը ստացել է Ս. Հակոբյանց ազգային երկսեռ վարժարանում, այնուհետև Հ.Բ.Ը.Մ.-ի նախաճեռնությամբ ուսումը շարունակում է Կիպրոսի Մելքոնյան հաստատությունում:

Հոր մահից հետո, բազմանդամ ընտանիքի ամբողջ հոգսը ընկնում է Սիմոնի ուսերին և նա իր քրտնաջան աշխատանքով սկսում է հոգալ մոր, քրոջ և 3 եղբայրների ապրուստը:


1947 թվականին, գործի բերումով տեղափոխվում է Բեյրութ, ուր քարտուղարի պաշտոնով աշխատում է նավային ընկերությունում:

1953 թվականին, Սիմոն Սիմոնյանը ամուսնանում է Զապել Թաշճյանի հետ և այդ համերաշխ ու երջանիկ ամուսնությունից ծնվում են 4 զավակները, որոնք իրենց ծնողների հոգատարությամբ ստանում են հայեցի դաստիարակություն:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի ընթացքում, Սիմոնը փոխադրվում է ԱՄՆ-ի Տեխաս նահանգը, ուր խաղաղ ու հանգիստ կյանք է վայելում իր ընտանիքով և թոռներով, մինչև իր կյանքի մայրամուտը, Սեպտեմբեր 13, 1992 թվականը:

Սիմոն Սիմոնյանը օրինակելի և հայրենասեր անձնավորություն էր: Որպես Հ.Բ.Ը.Մ.-ի աշխույժ անդամ, ժրաջան մասնակցել է Միության բոլոր աշխատանքներին և միջոցառումներին:

Սիմոնի մարդկային և հայրենասիրական հատկանիշները փոխանցվել են նաև իր զավակներին, որոնք այս դժվարին օրերին ամեն կերպ ձգտում են նեցուկ կանգնել իրենց հայրենիքին: Հատկապես Սիմոնի ավագ որդին՝ Սէմ Սիմոնյանը այս օրերին տևապես դրամական նշանակալի նվիրատվություններ է կատարում հայրենաբնակ չքավոր ընտանիքներին և ընդհանրապես Հայաստանի բարգավաճման գործընթացին:



ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՎԱՂՈՒՑ ՄՊԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Ճանաչված թուրքագետ, դոկտոր Ավետիս Փափազյանը ընթերցողի դրասեղանին դրեց իր նոր արժեքավոր աշխատությունը՝ «Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ-մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915թթ.)», որը, չենք կասկածում, կարժանանա մասնագետների ջերմ ընդունելությանը և բարձր գնահատականին:

Հեղինակին մշտապես հետաքրքրել է գիտության համար այս խիստ կարևոր հարցը, որի ուսումնասիրությունը նա սկսել է դեռևս այն տարիներին, երբ Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտական աշխատող էր: Հմտորեն տիրապետելով օսմաներենին, արաբատառ թուրքերենին, անցնելով Հայ արևելագիտական դպրոցի բովով և տիրապետելով նրա լավագույն ավանդույթներին և նրբություններին, Ա. Փափազյանը հրատարակել է մի շարք թուրքական աղբյուրներ՝ վավերագրեր, քաղաքական գործիչների հուշագրություններ և այլն, նվիրված Հայաստանին, Հայ ժողովրդի պատմությանը և Հայկական հարցին, որոնք ըստ արժանվույն են գնահատվել թե թուրքագետների, և թե Հայագետների կողմից:

Եվ ահա նրա բեղմնավոր գրչի տակից հրապարակ է իջել մի նոր աշխատություն, որի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն ընդգրկում է ոչ թե միայն մեկ ժողովրդի, այլ Օսմանյան կայսրության բոլոր ոչ-մահմեդական ժողովուրդներին վերաբերող սկզբնաղբյուր-վավերագրեր: Թե պատմագիտական և թե մեթոդոլոգիական առումով դա միանգամայն արդարացված մոտեցում է, որը բարձրացնում է աշխատության գիտական նշանակությունը:

Ընդհրվ այս աշխատության առաջին անգամ Հայերեն լեզվով հրատարակվում և գիտական շրջանառության մեջ են դրվում օսմանյան սուլթանների, մեծ վեզիրների և կառավարության սկզբունքային բնույթի ֆերմաններ, բերաթներ, հրովարտակներ և այլ բնույթի որոշումներ և կարգադրություններ, առանց որոնց անհնար է Օսմանյան կայսրության կազմում Հայ ժողովրդի և մյացած բոլոր ոչ-մահմեդական ժողովուրդների պատմության, իրավական կարգավիճակի, սոցիալ-տնտեսական դրության, նրանց պատկանող գույքի, նրանցից գանձվող հարկերի, պարտքերի, տեղական կառավարման և բազմաթիվ այլ հարցերի հիմնավորված և խորքային ուսումնասիրությունը:

Այս աշխատության լույս աշխարհ գալով, Հետազոտողը Հնարավորություն է ստանում իր ձեռքի տակ ունենալ սուլթանական մի շարք կարևոր որոշումների ամբողջական տեքստը և դրանցից օգտվել ոչ թե միջնորդավորված, այլ անմիջականորեն:

Կասկած չի հարուցում, որ Ա. Փափազյանի սույն աշխատությունը կխթանի Հայագիտական և Թրքագիտական հետագա ուսումնասիրությունները՝ Հարստացնելով նրանց աղբյուրագիտական հիմքը և բարձրացնելով նրանց Հավաստիության աստիճանը:

Նա կարևոր ներդրում է թուրքական աղբյուրների ուսումնասիրության և նրանց գիտական շրջանառության մեջ դնելու բնագավառում:

Նիկոլայ Հովհաննիսյան

Պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ գիտությունների ազգային
ակադեմիայի Արևելագիտության
ինստիտուտի տնօրեն

29 օգոստոսի 2002, Երևան

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Թուրք պատմաբանները երբեմն անտեղի հարց են բարձրացնում, թե իբր հայ հեղինակները չատ քիչ ուշադրություն են դարձնում թուրքական աղբյուրների վրա և ընդհանրապես հայերենի չեն թարգմանվում ժամանակակից թուրք պատմաբանների գրքերը։ Իրականում այդպես չէ։

Այս ուղղությամբ մեծ աշխատանք է կատարված և կատարվում է Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության Ինստիտուտի թուրքագիտական բաժնում, որն իր հիմնադրության (1958 թ.) օրից ուշադրության կենտրոնում է պահել ժամանակակից Թուրքիայի զարգացման առանձնահատկությունները՝ օսմանիզմի, հանմաթրքության, համաիսլամիզմի, քեմալիզմի հարցերը։

Առ այսօր, բազմաթիվ գրքեր են հրատարակվել ազգային փոքրամասնությունների իրավական վիճակի, հայկական հարցի, հայոց ցեղասպանության և ընդհանրապես Թուրքիայի քաղաքական պատմության տարբեր փուլերի հարցերի վերաբերյալ։

Հայ պատմաբանները մանրակրկիտ ուսումնասիրել են և թարգմանություններ կատարել ոչ միայն միջնադարի թուրք պատմագիրների երկերից, այլև հատուկ ուշադրություն դարձրել ուշ շրջանի հայ-թուրքական հարաբերությունների վրա և տվել դրանց անաչառ գնահատականները։

Թուրքիայում հրատարակվող արդի պատմաբաննե-

րի գրքերը եթե ամբողջությամբ չեն հրատարակվել Հայաստանում, ամենայն դեպս առանձին նյութեր, քաղվածքներ թարգմանաբար ընդգրկվել են հայ պատմաբանների երկերում։ Այնպես որ հայ ընթերցողը լավ դիտե, թե թուրք պատմագրությունը ինչպես է մեկնաբանել կամ խեղաթյուրել հայ ժողովրդի պատմությունն ու աշխարհագրությունը, հատկապես 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած եղեռնային ահավոր դեպքերը։

Հարկ է նշել, որ թուրքական աղբյուրների գիտական ուսումնասիրության ու հայերենի թարգմանության նախաձեռնությունը, ինչպես նաև հրապարակումը, պատկանում է Արամ Սաֆրաստյանին։ Հրապարակի վրա գտնվող «Թուրքական աղբյուրների» չորս հատորները՝ նրա երկար տարիների արգասավոր և քրտնաջան աշխատանքի արդյունքն են։ Մինչև Արամ Սաֆրաստյանը, հայ պատմագրության մեջ ոչ ոք չէր զբաղվել թուրքական աղբյուրները վերծանելու, թարգմանելու և գիտական շրջանառության մեջ դնելու խնդրով։*

Թուրքական միջնադարյան աղբյուրների և վավերագրերի, ինչպես նաև հայոց ցեղասպանության վերաբերող փաստաթղթերի թարգմանության և ուսումնասիրության ասպարեզում մենք ևս կատարել ենք զգալի աշխատանք։**

---

*Ա.Խ. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները Հայաստանի, Հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, Հատոր Ա. Երևան, 1961, Հատոր Բ. 1964, Հատ. Գ., 1967, Հատ. Դ., 1972։ Տե՛ս նաև Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում 16-17-րդ դդ., կանոն-նամեներ։ Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Սաֆրաստյանի և Մ. Զուլալյանի, Երևան, 1964։

**Տե՛ս 1) Քյաթիբ Չելեբիի «Ճիհան Նյումա»-ն և «Ֆեզլեքե»-ն որպես աղբյուր Հայաստանի պատմության (17-րդ դ.) Երևան, 1973 (ռուսերեն)։ 2) Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դա-

Այնուհանդերձ օսմաններեն բնագրերից կատարված պատմագիտական և վավերագրական նյութերի թարգմանության աշխատանքներում դեռևս շատ գործ կա անելու:

Այսօր Թուրքիայի արխիվներում և այլ երկրների հնադարաններում առկա են օսմաներեն (արաբատառ թուրքերեն) լեզվով շարադրված բազմաթիվ արխիվային նյութեր, որոնց զգալի մասը առնչվում է հայ ժողովրդի պատմության և հայոց ցեղասպանության հարցերին:

Դեռևս 20-րդ դարի սկզբին, պոլսահայ իրավագետ Սարգիս Գարակոչը հավաքել է Ստամբուլի հայ և հույն առաջնորդարանների արխիվային փաստաթղթերը և կազմել «Քյուլլիաթի կավանին» օրենքների ժողովածուն, որն այսօր անտիպ վիճակում պահվում է թուրքական պատմական ընկերության ձեռագրային ֆոնտում: «Քյուլլիաթի կավանին»-ը բաղկացած է 40 թղթապանակներից, որոնք պարունակում են 35,000 փաստաթղթեր:

Արդի թուրք պատմաբան Յավուզ Էրջանի տվյալներով, այսօր Թուրքիայի արխիվներում հայերին վերաբերող արխիվային նյութերը հերթականությամբ դասավորված են հետևյալ վերնագրերի տակ:

1. — 1860-1904 թթ. հայերին վերաբերող վճիռների դաֆթար (թղթապանակ):

2. — 1839-1910 թթ. հայերին վերաբերող բերաթների դաֆթար:

3. — 1820-1857 թթ. հայերին վերաբերող հնագույն վճիռների դաֆթար:

4. — 1911-1915 թթ. հայերին վերաբերող բերաթների դաֆթար:

տավարության փաստաթղթերի, Երևան, 1988, 1989: 3) Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Երևան, 1999: 4) Ցեղասպանություն և դոյատևման պայքար, Երևան, 2000: 5) Հայերի ցեղասպանությունը թուրք քաղաքական գործիչների հուշագրություններում, Երևան, 2001:

5. — Առանձին հավաքածուներով դասավորված են նաև 1869-1921 թթ. վերաբերող արևմտահայերի «եկեղեցական դաֆթարները»։

Գրիկէրի (Գրիգոր Կէրկէրյան) «Եոզղատի Հայասպանութեան Վաւերագրական Պատմութիւնը» աշխատության տվյալներով (տե՛ս էջ 33-34), թուրքական արխիվներում են գտնվում նաև Արևմտահայության տեղահանության և կոտորածին վերաբերող վավերագրական նյութեր, որոնք ամփոփված են 1919-1920 թթ. կ. Պոլսի ռազմական արտակարգ ատյանի 293 թղթապանակներում։

Դժբախտաբար, այսօր մենք չունենք հայազգի օսմանագետներ, որպեսզի ուսումնասիրեն և թարգմանեն այդ հույժ կարևոր նյութերը։

Ես բազմիցս բարձրացրել եմ մասնագետ պատրաստելու և ընդհանրապես օսմանագետների մի գիտական բաժին ունենալու հարցը, բայց ցավոք սրտի ոչ մի արձագանք չեմ գտել։

Այս մասին Գրիկէրը, իր «Եոզղատի Հայասպանութեան Վաւերագրական Պատմութիւնը» խորագիրը կրող գրքում, նույնպես կարևորելով օսմաներեն աղբյուրների եւ վավերագրերի նշանակությունը, գրել է։

«Շատ քիչ հետազօտողներ կան աշխարհի վրայ, որոնք կրնան կարդալ եւ հասկնալ, մեռեալ լեզու դարձած արաբատառ թրքերէն լեզուն, եւ անոնցմէ դեռ շատ աւելի քիչեր պիտի վախճաքէին իրենց ժամանակը նուիրել, իրենց միջոցները զոհել այդպիսի դժուարին եւ բարդագոյն ուսումնասիրութեան մը համար։

Հայասպանութեան վերաբերեալ գրեթէ բոլոր սկզբնաղբիւր վաւերագրերը գրուած են արաբատառ թրքերէն լեզուով։

Լուրջ երկեր արտադրելու համար, ուսումնասիրողէն կը պահանջուի շատ երկար ժամանակ, մտաւորական կորովի սպառում, յարատեւութիւն եւ յոգնաջան աշ-

խատանք անհրաժեշտ են» (*Տե՛ս*, *նշված աշխատությունը*, *Նյու-Յորք*, 1980, *էջ* 36)։

Ուստի, *գոհունակությամբ պիտի նշենք*, *որ ներկա հրատարակությունը*, *որոշ առումով լրացնելու է թուրքական աղբյուրների թարգմանության և ուսումնասիրության ասպարեզում կատարված աշխատանքների պակասը*։

ԱՌԱՋԱԲԱՆ

19-րդ դարում, Օսմանյան կայսրությունը շարունակում էր մնալ որպես հետամնաց հողագործական երկիր, գյուղատնտեսական արտադրության ծայր աստիճան ցածր մակարդակով: Աշխատավոր գյուղացիության դրությունը չափազանց ծանր էր, հատկապես տարեց-տարի աճող աշարի (տասանորդի) և այլ բազմապիսի գանձվող հարկերից: Երկրում մեծ չափերի էր հասել կաշառակերությունը, չարաշահումները և հատկապես ազգային խտրականությունն ու ճնշումները: Իրականում, տվյալ ժամանակ կայսրությունում իշխում էր ժամանակի բուրժ հասարակության ամենահետադիմական խավը: Բացարձակապես բացակայում էր կյանքի և ունեցվածքի ապահովությունը: Գյուղացու ծանր վիճակը բոլորովին չէր հետաքրքրում ո՛չ կենտրոնի և ո՛չ էլ գավառների կառավարիչներին: Սուլթանական պաշտոնյաները մըտածում էին միայն այն մասին, թե ինչպես ավելի շատ դրամ շորթեն ժողովրդից, որպեսզի ձեռք բերեն չերքեզ աղջիկներ, արաբական ձիեր, փարիզյան կառքեր և կառուցեն շքեղ պարտեզներ Վոսփորի ափերին:

Բնականաբար, ոչ մահմեդական աշխատավորության վիճակը ավելի ծանր էր, քանի որ նրանք հավելյալ շահագործման էին ենթարկվում պետու-

թյան հարկահավաքների կողմից: Իսկ էրիստոնյաների համար գոյություն ունեին բազմաթիվ հարկեր և տուրքեր, որոնց գանձումները կատարվում էին էմահաճ եղանակով: Հարկատեսակների անհամամասնությունը, անօրինական գանձումները Թուրքիայի վարած տնտեսական բաղաքականության օրինաչափություններն էր:

Մյուս կողմից իրենց տարածքային ամբողջականությունը պահպանելու համար, սուլթանական իշխանությունները ամենայն դաժանությամբ ճնշում էին ազգային ազատագրական ամեն մի շարժում:

Այսպես, դարասկզբի առաջին բառորդում բռնկված սերբիական ապստամբությունները թուրքերը ճնշեցին ամենադաժան կոտորածներով: Իսկ 1821 թվականին, ի պատասխան հունական ապստամբության, թուրքերը որոշեցին հաշվեհարդար տեսնել Կ. Պոլսի հույների հետ: Կառավարության թողտվությամբ զանգվածային ջարդ սկսվեց հույների դեմ: Ամենորեն զոհվեցին մոտ 10,000 հույներ: Նրանց թվում 84-ամյա պատրիարքը՝ Գրիգորին (որին կախեցին պատրիարքարանի դռան առջև) և շատ կրոնավորներ: Հույն բնակչության ջարդեր տեղի ունեցան նաև կայսրության այլ վայրերում՝ Կրետեում, Կիպրոսում, Ռոդոսում և այլն: Իսկ 1825 թ. սուլթան Մահմուդ Բ.-ի կարգադրությամբ, Իբրահիմ Փաշան դաժան հաշվեհարդար տեսավ ոչ միայն հույն ապստամբների, այլ նոյնիսկ ծերերի և երեխաների նկատմամբ, վառելով և ամայացնելով գյուղերն ու բաղաքները:

Բուլղարիայում ամենամեծ ապստամբությունը տեղի ունեցավ 1850 թվականին՝ Վիդինի և Նիշայի նահանգներում: Բարձրագույն Դուռը պատժիչ զորամասեր ուղարկելով, արյան մեջ խեղդեց ապստամ-

բուքյունը: Անկանոն զորքերը գարհուրելի գազանություններ գործեցին նաև խաղաղ բնակչության նկատմամբ: Ժողովրդական հուզումներ տեղի ունեցան Բոսնիայում, Հերցեկովինայում և Ալբանիայում՝ տեղի ավատատերերի անլուր ճնշումների դեմ: Թուրքական լծի դեմ պայքարի դուրս եկան նաև կայսրության արևելյան շրջանների կեղեքված ժողովուրդները: 19-րդ դարի կեսերին, կրոնական հողի վրա աններջ ընդհարումներ էին տեղի ունենում Լիբանանում: 1862 թվականին, հողային վեճեր ծագեցին Ջեյբունում և այդ հիման վրա ընդհարումներ տեղի ունեցան ապստամբած հայերի և թուրքական ջոկատների միջև: Մարաշի նահանգապետ Ազիզ փաշան տասը հազարանոց կանոնավոր զորքի և բազմաթիվ բաշիբոզուկների գլուխն անցած, արշավեց Ջեյբունի վրա, ավերելով տասնյակ գյուղեր և կոտորելով խաղաղ բնակչությանը: Այնուհանդերձ, Ջեյբունի խրոխտ բնակչությունը կարողացավ ինքնապաշտպանական կռիվներ մղել թուրքական զորքերի դեմ:

Բուլղար հաղափական գործիչ Զաբարիա Ստոյանովը, որը գործուն մասնակցություն է ունեցել թուրքական լծից Բուլղարիայի ազատագրման պայքարին, ականատեսի աչքով նկարագրել է Բուլղարիայում կատարված թուրքական բարբարոսությունները: Նա իր գրքում, ընթերցողին ծանոթացնում է թուրքական դատարանի, բանտերի ծանր կացության, պատմում է ավազակների այնպիսի ոճիրների և հրեշավոր հանցագործություններների մասին, որոնցից մարդ փշաքաղվում է. «Դժվար էր այդ ժամանակ ապրել Թուրքիայում: Ազատության նշույլն անգամ չէր մնացել: Մարդիկ իրար չէին վստահում. չէին վստահում, որովհետև կախաղաններն ու գարշահոտ բանտերը սարսափեցնում էին բոլորին, և սպանում

էին ամեն մի ազնիվ և գործունյա մարդու»:[1]

Զ. Ստոյանովը իր գիրքը ավարտում է բուլղարական Բաթակ գյուղում կատարված թուրքերի բարբարոսության նկարագրությամբ:

«Ծնկի եկե՛ք, հարգելի ընթերցողներ, հանեք ձեր գլխարկները՝ ձեր առաջ Բաթակի ավերածությունները են: Կոչ եմ անում բոլոր ազնիվ և անկեղծ բուլղարներին, որոնք սիրում են իրենց հայրենիքը, ինձ հետ այցելելու այս բուլղարական սրբատեղին: Մեր ազատագրության զոհասեղանն է այս, որը հազարավոր նահատակների և սրբերի, հարյուրավոր փոքր երեխաների, անթիվ անմեղ աղջիկների և պատանիների արյունով է ներկված...»[2]

19-րդ դարի վերջին Բառորդում, թուրքական արյունոտ վարչակարգի զոհ դարձան նաև հայերը:

Սուլթան Աբդուլ Համիդի (1876-1909 թթ) գահակալության շրջանում, ազգային հարցը ծայր աստիճան սրվեց և դարձավ ոչ միայն ներքին, այլև միջազգային կարևոր հարցերից մեկը: Հետևելով «բաժանիր՝ որ տիրես» վաղեմի սկզբունքներին, Աբդուլ Համիդը իր բազմազգ հպատակների միջև տևապես բորբոքում էր ազգային կրոնական թշնամանք:

Խորամանկորեն օգտագործելով հայկական հարցում մեծ տերությունների միջև գոյություն ունեցող հակասությունները, Աբդուլ Համիդը իրագործեց Արևմտյան Հայաստանը իր վաղեմի բնակչությունից դատարկելու հանցագործ ծրագիրը՝ տնտեսապես հայֆայելու, ֆիզիկապես ոչնչացնելու և բռնի արտաֆսելու նպատակով:

Արյունարբու սուլթան Աբդուլ Համիդը և նրա պետական բարձրաստիճան գործիչները 1878 թվականի Բեռլինի վեհաժողովից հետո, գիտակարար հայտարարում էին, որ հայկական հարցը լուծելու հա-

մար անհրաժեշտ է ոչնչացնել հայ ժողովրդին: Հայերի բնաջնջման համիդյան քաղաքականությունը սկսվեց կիրառվել 19-րդ դարի 90-ական թվականներից: Հատկապես 1894-96 թթ. երկու տարիների ընթացքում կոտորվեցին 300,000 հայեր, ավերակ դարձան հարյուրավոր գյուղեր ու քաղաքներ, ամայացան ամբողջ շրջաններ:

«Արդուլ Համիդը իր 32 տարվա «զուլումի» բռնատիրության շրջանում, — ինչպես իրավամբ իր ժամանակին նշել է ռուս դիվանագետ Ա. Մանդելշտամը, — ծայր աստիճան զարգացրեց այն բոլոր բացասական կողմերը, որոնք հատուկ են ընդհանրապես թուրքական տիրապետությանը, առանձնապես դաժան հալածանք բոլոր հպատակների նկատմամբ, իսկ երբեմն էլ բրիստոնյաների ջարդը, տգիտության և կրոնական մոլեռանդության պահպանումը ժողովրդի մեջ»[3]:

Իսկ ի՞նչ արեցին երիտթուրքերը ազգային հարցը լուծելու համար: 1908 թ. իշխանության գլուխ անցնելուց հետո, նրանք ոչ միայն մոռացան մինչ այդ իրենց տված խոստումները, այլև դարձան ժողովուրդների ազգային ազատագրական շարժման բացահայտ թշնամիներ: Ազգային հարցը լուծելու համար նրանք ընտրեցին այդ ազգերը թուրքացնելու կամ ոչնչացնելու ճանապարհը:

Եվ այդպես Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում երիտթուրքերի կողմից դաժանորեն կազմակերպվեց արևմտահայերի զանգվածային ջարդերը, որին ինչպես հայտնի է գոհ գնացին մոտ մեկուկես միլիոն անմեղ մարդիկ: Տեղի ունեցավ 20-րդ դարի մարդկության դեմ ուղղված առաջին ցեղասպանությունը:

* * *

Օսմանյան կայսրության ծանր լուծը թոթափելու համար, 19-րդ դարի սկզբներին սկսված կեղեքված ժողովուրդների ազգային ազատագրական պայքարը, հակառակ թուրքերի գործադրած դաժանություններին, մասամբ պսակվեց հաջողությամբ և աստիճանաբար ստեղծվեցին ազգային անկախ պետություններ:

Այնուհանդերձ 19-րդ դարի կեսերին, Օսմանյան կայսրության տիրապետության տակ մնացին ազգեր, որոնք ի վիճակի չեղան ազատագրվելու և ինքնուրույն կերտելու իրենց ճակատագիրը: Ահա այդ ժողովուրդների վիճակի բարելավումն ու ազատագրումը մեծ պետությունները դարձրին օրակարգի հարց, ավելի ճիշտ՝ իրենց շահերից ելնելով, բաժանել կայսրությունը և առաջին հերթին ստանալ ամենամեծ բաժինը:

Թուրքական կառավարությունը ձգտելով մեծ պետությունների ուշադրությունը շեղել այդ կենսոտ հարցերից, 1839 թ. սկսեց կիրառել բարենորոգումների քաղաքականությունը, եւ բոլոր միջոցներով աշխատեց համոզել Եվրոպային և մասնավորապես Ռուսաստանին, որ այսուհետև վերացվելու են մահմեդականների և ոչ-մահմեդականների միջև եղած խտրականությունը, թե ապահովվելու են Օսմանյան կայսրության հպատակների կյանքը, ունեցվածքը, պատիվը, կարգավորվելու են հարկերի արդարացի բաշխումն ու գանձումը, զինվորական ծառայությունը, դատական գործը, ևայլն: Իրականում, դրանց գործադրման համար ոչ հող կար, ոչ էլ անկեղծ մտադրություն:

Եվ այդպես թուրքական կառավարությունը

A II 22528

վարչական, հողային, բաղաքացիական բարեկորոգումների ծրագիրը իրագործելու համար, 1839 թ. նոյեմբերի 3-ին, Կ. Պոլսի սուլթանական պալատի Գյուլհանե կոչված պարտեզում, հրապարակեց կայսերական հրովարտակը՝ «Հաթթ-ը շերիֆ»ը (Սրբազան գիր», որը հետագայում ընդհանուր անունով կոչվեց Թանզիմաթ:

Դժբախտաբար, բարեկորոգումի այս նախաձեռնությունը և նրա հետագա ընթացքը ցույց տվեց, որ այն խախուտ էր իր հիմքից, որովհետև նախ այն խորթ էր ավատատիրական երկրին և ընդհանրապես՝ մահմեդական մտայնությանը:

Էական նշանակություն չունեցավ նաև 1856 թ. հրապարակված հրովարտակը՝ «Հաթթ-ը Հյումայուն» (սուլթանական գիր) անունով, ուր կրկին անգամ խոստացվում էր ապահովել երկրի հպատակների անվըտանգությունն ու երջանկությունը: Մի խոսքով, այդ հրովարտակների հիման վրա պատրաստված օրենքներն ու կանոնադրությունները համառորեն մնացին թղթի վրա և չգործադրվեցին կյանքում:

«Հաթթ-ը Հյումայուն»-ից մինչև 1876 թ. հրատարակված օրենքները խիստ թշնամությամբ դիմավորեցին մոլեռանդ հոգևորականներն ու հետադիմական տարրերը, նույնիսկ ամբողջ մահմեդական բնակչությունը, բանի որ բրիստոնյաներին շնորհված ամեն մի արտոնություն դավաճանություն էր համարվում շարիաթին:

Եվ իրոք, շարիաթի դրույթները չէին կարող հավասարություն դնել մահմեդականի և ոչ-մահմեդականի միջև: Ջնայած, որ բրիստոնյան էլ միևնույն պետության հպատակն էր, բայց նա միշտ պիտի ենթարկվեր և հարկատու լիներ մահմեդականին:

Օսմանյան կայսրության ազգային փոքրամաս-

ցուբյուններին շնորհված հրամանագրերից, առանձին սահմանափակումներով և խոչընդոտներով, կյանքում կիրառվեցին միայն կրոնական համայնքներին վերաբերող կանոնադրությունները, ինչպես նաև բրիստոնեաբնակ առանձին նահանգներին տրված ներքին ինքնավարության արտոնությունները:

Թանզիմաթի շրջանում հրապարակված օրենքները, կանոնադրությունները, հրամանագրերը և ընդհանրապես սուլթանական կառավարության կողմից ազգային փոքրամասնություններին շնորհված պաշտոնական գրությունները լույս են տեսել «Դյուստուր» (Օրենսգիրք) խորագիրը կրող մատենաշարում, արաբատառ թուրքերենով:

Առաջին անգամ այն լույս տեսավ հիջրի թվականով 1267-ին (1850-1851 թթ.): Այս առաջին հրատարակության սկզբում գետեղված էր նաև սուլթան Աբդուլ Մեջիդի (1839-1861) նշանավոր հրովարտակը «Հաթթ-ը շերիֆը»: Օրենսգրքի երկրորդ հատորը լույս տեսավ 1279 թ. (1863): Այս հրատարակության մեջ ընդգրկված էր վերոհիշյալ՝ առաջին հատորի նյութերը և այն օրենքները, որոնք հրապարակվել էին մինչև 1863 թվականը: Այս վերջինը վերահրատարակվեց նաև 1282 (1865-66) թվականին: Հետագայում (1289 (1872-73) թվականից սկսած «Դյուստուրը» լույս տեսավ 4 հատորով և 4 հավելվածով: Ի միջի այլոց, 4-րդ հատորը ունի երկու առանձին հրատարակություններ: Առաջինը լույս է տեսել 1296 (1878-79) թ. սուլթանական տպարանում, երկրորդը՝ 1299 (1881-82) թ. Մահմուդ Բեյի տպարանում: Բովանդակությամբ դրանք համընկնում են, տարբերությունը էջերի քանակի մեջ է:

1296 (1878-79) թվականից մինչև 1302 (1885) թվականը հրապարակված օրենքներն ու կանոնները

լույս են տեսել 3 հատորով և մի հավելվածով[5]:

1885 թ. մինչև 1908 թվականը ընկած ժամանակաշրջանում հրապարակված օրենքները կանոնավոր չեն հավաքվել և չեն հրատարակվել, բացառությամբ մի բանիսի, որոնք լույս են տեսել մամուլում: Դրա պատճառը իհարկե Աբդուլ Համիդի վարած դաժան բաղաքականության հետևանքն էր:

1911 թ. «Օրենքներ հրատարակող վարչությունը» լույս ընծայեց «Դյուստուր»ի երկրորդ մշակված խմբագրությունը[6]: Ի տարբերություն նախորդ հրատարակություններին, այս հատորների մեջ ընդգրկվեցին 1908-1915 թթ. հրապարակված սուլթանական հրամանագրերը (Irade-i Senie), մեջլիսի արձանագրությունները, բերաբները՝ ուղղված կ. Պոլսի թեմերին, գինվորական օրենքներն ու կանոնները, դիվանագիտական գրությունները, այդ թվում պայմանագրերը, համաձայնագրերը՝ ֆրանսերեն բնագրերի հետ:

Հարկ է նշել նաև, որ «Դյուստուր»ի մեջ չեն ընդգրկված բանգիմաթի շրջանում և հետագայում հրապարակված բոլոր օրենքներն ու կանոնադրությունները: «Դյուստուր»ի հատորներից դուրս են մնացել բազմաթիվ բերաթներ ու թաֆրիրներ, որոնք զանազան հարցերով ուղղված են եղել համայնքների առաջնորդներին, ինչպես օրինակ 1850 թ. Օսմանյան բողոքական հպատակներին շնորհված ֆերմանը, 1852 թ. հայ կաթոլիկ պատրիարքությունը հաստատող բերաթը, 1853 թ. ոչ-մահմեդական առաջնորդներին ուղղված ֆերմանը, կամ 1870 թ. մարտի 11-ին՝ բուլղարական եկեղեցու ինքնուրույնությունը սահմանող հրովարտակը և այլն:

Օսմանյան օրենքների, միջազգային պայմանագրերի, ինչպես նաև զանազան փաստաթղթերի թարգմանության և հրատարակության ուղղությամբ բա-

վական աշխատանք կատարել են թուրքագետները[7]: Սակայն հրատարակված այդ աշխատությունները հիմնականում պարունակում են Թուրքիայի եւ այլ պետությունների միջև կնքված պայմանագրերի թարգմանությունները և փոքր ուշադրություն է դարձված ազգային փոքրամասնություններին վերաբերող կանոնադրությունների կամ հրամանագրերի հավաքման և հրապարակման գործին:

Այնպես որ սույն հատորում ժամանակագրական կարգով բերված թուրքական վավերագրական նյութերը նոր լույս կսփռեն Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող ժողովուրդների պատմությունը բազմակողմանիորեն ուսումնասիրելու խնդրում*:

---

*Ի գիտություն ընթերցողներին նշենք, որ սույն հատորում չենք ընդգրկել սուլթանական հետևյալ երկու բերաթների թարգմանությունները. 1) «Հայ կաթոլիկների պատրիարք Հասուն էֆենդիին շնորհված կայսերական հրովարտակը». 2) «Հայ պատրիարք Արշարունի Հովհաննես էֆենդիի պաշտոնավարությունը բովանդակող բարձր բերաթը»: Այս հրովարտակների թարգմանությունները մենք հրատարակել ենք 1999 թ., տե՛ս Ավետիս Փափազյան, թուրքական վավերագրերը Հայաստանի եւ հայերի մասին, (16-19-րդ դարեր), Երևան, էջ 194-198, 199-202):

ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱՆԵՈՒՄ ԸՆԹԵՐՑՎԱԾ ՀԱԹԹ-Ը ՀՅՈՒՄԱՑՈՒՆԻ ՊԱՏՃԵՆԸ[1]։

Բոլորին հայտնի է, որ Օսմանյան կայսրության ծագման օրվանից, Ղուրանի վառավոր պատգամները և շարիաթի օրենքները կիրառվում էին կատարյալ կերպով։ Դրա համար էլ Օսմանյան կայսրության ուժն ու հզորությունը, բոլոր հպատակների բարեկեցությունը հասել էին գերագույն աստիճանի։

Բայց վերջին 150 տարիների ընթացքում, երկարատև պատերազմների և զանազան դեպքերի հետևանքով դադարեցին հարգվել մահմեդականության սրբազան օրենքները և այդ օրենքների հիման վրա ստեղծված կանոնները, այդ պատճառով թուլացավ [Օսմանյան կայսրության] վաղեմի հզորությունը և վատթարացավ [ժողովրդի] բարեկեցությունը։ Եվ այն երկիրը, որը չի կառավարվում սրբազան օրենքներով, բնական է, որ կորցնելու է իր հզորությունը։ Մեր երկրի ժողովրդի նյութական մակարդակը բարձրացնելու և գավառների բարեկեցությունը ապահովելու հարցը, դեռևս գահ բարձրանալու երջանիկ օրվանից, եղել է մեր վեհապետի ուշադրության կենտրոնում։

Օսմանյան տերության աշխարհագրական դիրքը, հողի բարեբերության, բնակչության ընդունակությունն

ու կարողությունը հանգեցնում են այն համոզման, որ Աստծո ողորմությամբ անհրաժեշտ միջոցառումներ նախաձեռնելու դեպքում, կարելի է 5-10 տարվա ընթացքում հասնել ցանկալի արդյունքների։

Այսուհետեւ, հույս դնելով Ամենաբարձրյալի և Մարգարեի օգնության վրա, մենք նպատակահարմար գտանք ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ և [հրապարակել] նոր օրենքներ, որպեսզի բարելավվի Օսմանյան երկրների կառավարումը։

Այս օրենքների հիմնական դրույթներն են լինելու.

1/ Կյանքի, պատվի և ունեցվածքի ապահովումը։

2/ Հարկերի համահավասար բաշխումն ու դանձումը։

3/ Զորակոչիկների ճիշտ հավաքագրումը և ծառայության ժամկետի ճշտումը։ Եվ իրոք, մարդու համար առավել թանկ բանը նրա կյանքի, պատվի և ունեցվածքի ապահովումն է։ Մինչև անգամ այն անձը, որը իր բնածին խառնվածքով հակված լինելով բռնության, վնաս է հասցնում պետությանը և երկրին, ամեն կերպ ձգտելու է ապահովել իր կյանքն ու պատիվը։ Եթե չլինի ունեցվածքի ապահովություն և [մարդու անձը] չարունակ գտնվի վտանգի առաջ, ապա ոչ ոք չի կարեկցի ո՛չ պետությանը և ո՛չ էլ իր ազգին, և ձգտում էլ չի ունենա՝ պայքարելու հասարակության ընդհանուր բարօրության համար։ Ընդհակառակը, եթե ունեցվածքի ապահովություն լինի, ապա կասկած չկա, որ բոլորն էլ իրենց աշխատանքային առաջադիմությամբ կօժանդակեն պետության և երկրի բարեկեցությանը։

Ձախազանց կարևոր է նաև կայսրության հարկերը համաչափ բաշխելու խնդիրը։ Եվ քանի որ յուրաքանչյուր պետություն իր տարածաշրջանի պաշտպանության համար կարիք ունի անհրաժեշտ գումարների, ուստի զորք պահելու և այլ կարիքների ծախսերը, տվյալ

պետությունը կարող է հոգալ միայն իր հպատակներից հարկեր հավաքելու միջոցով։

Թեև, փառք Աստծո, Օսմանյան կայսրության հպատակները վաղուց ի վեր ազատվել են պետության երբեմնի եկամուտ բերող մենաշնորհային վնասաբեր հարկահավաքությունից, այնուհանդերձ, իլթիզամի կարգավիճակը, որը երբևէ օգուտ չբերելով հանդերձ, նույնիսկ վնասաբեր կողմեր էլ ունի, շարունակում է դեռ գոյատևել։ Այս կարգավիճակի առկայությամբ, որևէ վայրի վարչական և ֆինանսական կառավարումը, երբեմն հանձնվում է մեկ մարդու քմահաճույքին, կամ էլ այնպիսի անբարեխիղճ և ագահ անձնավորության ձեռքը, որի համար առաջնայինը միմիայն իր անձնական շահն է։ Այս անարդարացի վիճակից դուրս գալու համար, այսուհետև հարկերը նշանակվելու են յուրաքանչյուր քաղաքացու ունեցվածքի և դիրքի համաձայն։ Այնպես որ, նշանակվածից ավելի չի պահանջվելու ոչ մի դումար։

Այնուհետև, հատուկ օրենքներով պետք է որոշվեն և նշանակվեն Օսմանյան կայսրության ցամաքային և ծովային ուժերի ծախսերը։

Զինվորական ծառայությունը ևս կարեւոր հարցերից մեկն է։ Ինքնին հասկանալի է, որ հայրենիքի պաշտպանության համար զինվոր տրամադրելը բոլոր բնակիչների պարտքն է։ Սակայն զինակոչիկների հավաքագրման ընթացքում, առանց հաշվի առնելու բնակչության թիվը, մի նահանգից չատ են վերցրել, իսկ մյուսից՝ քիչ։ Նման գործելակերպը անարդարացի է եղել և վնասաբեր տվյալ նահանգի թե՛ երկրագործության և թե՛ առեւտրի համար։ Եվ, վերջապես, ցմահ ծառայությունն էլ զինվորին կարող է հասցնել հուսահատության և մյուս կողմից էլ նպաստել երկրի բնակչության նվազեցմանը։ Ուստի անհրաժեշտ է, որ ըստ տեղի որոշվի զինվորական ծառայության հավաքագրումը և օրենքով սահմանվի 4

կամ 5 տարվա ծառայության ժամկետ։

Այս ամենը բերում է այն եզրակացության, որ առանց այդ օրենքների կիրառման՝ ոչ մի երկրում չի լինի ո՛չ զորություն, ո՛չ բարգավաճում, և ո՛չ էլ բարօրություն ու հանգիստ։

Այսուհետև ամեն մի հանցանք պետք է հետաքննվի, ապացուցվի և այնուհետև հրապարակայնորեն դատապարտվի չարիաթական օրենքի հիման վրա։ Եվ առանց դատավճռի ոչ ոքի չի թույլատրվելու բացահայտ կամ գաղտնի սպանությամբ պատժելու կամ թունավորելու մեկ ուրիշին։ Ոչ ոքի չի թույլատրվելու նաև վիրավորանք հասցնելու որևէ մեկին կամ բռնագրավելու մեկ ուրիշի հողը։ Յուրաքանչյուրի իրավունքն է կատարյալ ազատ և անկաշկանդ տիրելու իր ունեցվածքին և սեփականությանը։ Որևէ հանցագործի ժառանգությունը չպետք է բռնագրավվի, այնպես որ նրա անմեղ ժառանգները օգտվելու են իրենց օրինավոր ժառանգության իրավունքից։

Եւ քանի փադիշահի չնորհած հրովարտակը վերաբերում է տերության բոլոր հպատակներին՝ անկախ նրանց դավանանքից, ուստի կյանքի, պատվի և ունեցվածքի ապահովման խնդիրը, առանց բացառության, հավասարապես տարածվելու է բոլորի վրա։

Հիշյալ դրույթների իրագործման համար Արդարադատության խորհուրդը կայսրության նախարարների և բարձրաստիճան պաշտոնյաների հետ միատեղ, հավաքվելով մեր կողմից նշանակված օրերին, կքննարկեն կյանքի, ունեցվածքի ապահովման և հարկերի բաշխման հարցերը և կսահմանեն այս առթիվ անհրաժեշտ օրենքները։ Քննարկման ընթացքում բոլորն էլ ազատ են հայտնելու իրենց կարծիքն ու տեսակետը։

Զինվորական ծառայության վերաբերող բարեփոխությունների օրենքները քննարկվելու են Սերասքերաթի զինվորական խորհրդում։

Աստծո ողորմածությամբ, յուրաքանչյուր օրենք անմիջապես ներկայացվելու է մեզ, որպեսզի վավերացվի կայսերական ստորագրությամբ և ուժի մեջ մտնի առհավետ։

Եվ քանի որ այս նվիրական օրենքների նպատակը վերաբերում է կրոնի, կառավարության, ազգությունների և պետության բարգավաճմանը, ուստի մենք պարտավորվում ենք դրանց սկզբունքներին հակառակ չգործել։ Որպես ապացույց այս խոստման՝ մենք պարտավորվում ենք. — այն ժամանակ, երբ այս հրովարտակը ի պահ տրվի «Հըրքայի չերիֆի»[2] նվիրական սենյակում, Աստծո անունով կտանք մեր երդումը բոլոր ուլեմաների և տերության մեծամեծների ներկայությամբ և միեւնույն ժամանակ երդում կառնենք նրանցից։

Կայսրության բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները, ուլեմաները և այլ անձինք, որոնք կը խախտեն այս դրույթները, պատժի կենթարկվեն՝ իրենց գործած հանցանքի համեմատ, անկախ նրանց ունեցած աստիճանից, կոչումից և արժանիքներից։ Այս ուղղությամբ ևս հաստատվելու են քրեական օրենքներ։

Նկատի ունենալով, որ կայսրության բոլոր ծառայողները բարձր ամսական են ստանում, իսկ քիչ ստացողների ռոճիկներն էլ ավելացվելու վրա են, ուստի շարիաթի օրենքներով խստորեն պատժի է ենթարկվելու կաշառակերությունը, որը կայսրության անկման գլխավոր պատճառներից է։

Եվ քանի որ վերոհիշյալ դրույթները կատարելապես բարեփոխելու և վերանորոգելու են հին կարգերը, ուստի, այս կայսերական հրովարտակը հրապարակվելու է թե՛ Կ. Պոլսում և թե՛ կայսրության բոլոր վայրերում, պաշտոնապես հաղորդելով Կ. Պոլսում գտնվող բարյացակամ պետությունների դեսպաններին, որպեսզի նրանք ևս

վկա լինեն չնորհված այս օրենքներին, որոնք, Աստծո կամքով, հաստատ են մնալու հավիտենապես։

Թող Ամենաբարձրյալն պահպանի բոլորին իր սուրբ և ամենակարող հովանավորությամբ։

Իսկ նրանք, ովքեր հակառակ ընթացք ունենան այս դրույթներին, թող այդպիսիները արժանանան Աստծո պատուհասին և զրկվեն ամեն մի պաշտպանությունից, ամեն[3]։

1255 թ. Շաբան, 26 (1839, Նոյեմբեր, 3)։

ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՖԵՐՄԱՆԻ ՊԱՏՃԵՆ՝ ՈՒՂՂՎԱԾ ԼԻԱԶՈՐ-ՓՈԽԱՆՈՐԴԻՆ[1]

Իմ ամենաջերմ բաղձանքն է եղել միշտ ապահովել իմ արքայական հովանավորության տակ գտնվող բոլոր հպատակներիս երջանկությունը։ Եվ գահ բարձրանալուս այն երջանիկ օրվանից ես չեմ խնայել իմ ջանքերը այդ ուղղությամբ[2]։

Գոհունակությունս Աստծո, այդ անխոնջ ջանքերը արդեն ի հայտ են բերել բարենպաստ հետևանքներ։ Քանի որ օրեցօր ավելանում է թե՛ իմ ժողովրդի երջանկությունը, և թե՛ իմ երկրների հարստությունը։

Այժմ իմ բաղձանքս է՝ վերանորոգել և ավելի ընդլայնել այդ նոր կառույցները, որոնք հաստատված են իմ կայսրության արժանապատվությունը բարձրացնելու և քաղաքակիրթ ազգերի մակարդակին համապատասխանող կարգավիճակ ստեղծելու նպատակով։

Աստծո օգնությամբ, ինչպես նաև իմ բոլոր հպատակների հավատարմությամբ և գովելի ջանքերով, մեծ պետությունների և իմ անկեղծ դաշնակիցների բարեկամական աջակցությամբ, կայսրությունում ծավալվելու են նոր միջոցառումներ, որոնք գալու են ապացուցելու մի

նոր դարաշրջանի սկզբնավորումը։ Ես ցանկանում եմ ավելացնել իմ երկրի բարեկեցությունը, իմ կայսրության բարգավաճումը, ինչպես նաև իմ հպատակների երջանկությունը, որոնք հավասարազոր են իմ աչքի առաջ և հավասարապես սիրելի, և որոնք կապված են իրար հետ հայրենասիրական անկեղծ կապերով։

Ուստի ես որոշել և հրամայում եմ գործադրել հետևյալ միջոցառումները։

1/ Կյանքի, ունեցվածքի, ինչպես նաև պատվի ապահովության վերաբերող այն երաշխավորությունները, որոնք չնորհվեցին Գյուլհանեի «Հաթթ-ը հյումայուն»ով եւ Թանզիմաթի շրջանում հրապարակված օրենքներով, առանց դավանանքի և դասի խտրության, այսօր կրկին վավերացվում են և ամրացվում։ Եվ այսուհետև ձեռնարկվելու են ազդեցիկ միջոցներ, որպեսզի դրանք կատարյալ ուժ ունենան։

2/ Այն բոլոր առանձնաչնորհումները և կրոնական արտոնությունները որոնք հնուց ի վեր չնորհված են եղել իմ նախնիների կողմից՝ կայսրությունում գտնվող և իմ հովանավորությունը վայելող քրիստոնյա և ընդհանրապես ոչ-մահմեդական համայնքներին, կրկին մնալով ուժի մեջ ամրապնդվելու են։

Յուրաքանչյուր քրիստոնյա կամ ոչ-մահմեդական համայնք որոշակի ժամանակի ընթացքում ներկայացնելու է իր կողմից ընտրված մի հանձնաժողով, որը իմ հովանավորությամբ և Բարձրագույն դռան հսկողության ներքո վերանայելու է իրենց չնորհված արտոնությունները, որպեսզի ժամանակի պահանջներին համաձայն Բարձրագույն դռանը ներկայացվի անհրաժեշտ բարեփոխումների ծրագիրը։ Սուլթան Մեհմեդ Բ.-ի[3], ինչպես նաև նրա հաջորդների կողմից քրիստոնյա պատրիարքներին և եպիսկոպոսներին չնորհված արտոնությունները պիտի համաձայնեցվեն ներկա դրության հետ, որոնք իմ առա-

տաճեռն և բարյացակամ մտադրություններս ապահովելու են այդ համայնքների համար։

3/ Այժմյան ընտրության կանոնադրությունը վերանայելուց հետո պատրիարքներին ցկյանս նշանակելու սկզբունքը ճշտորեն պիտի գործադրվի՝ համաձայն իրենց պաշտոնավարության մասին տրված հրովարտակին։

4/ Բարձրագույն դռան և կրոնական համայնքների առաջնորդների հետ միատեղ մշակված ձևի համաձայն պատրիարքները, միտրոպոլիտները, արքեպիսկոպոսները և մեծ րաբբիները երդում են տալու իրենց պաշտոնին նշանակվելիս։

5/ Հոգեվորականության չարժական և անշարժ ունեցվածքները անձեռնմխելի են և նրանց բոլոր տեսակի հարկերը պիտի վերանան և դրանց տեղ նշանակվելու են նորերը, համաձայն պատրիարքի և համայնքի եկամուտի [քանակին], իսկ կրոնական տարբեր դասերի ռոճիկները պիտի որոշվեն ըստ նրանց աստիճանի, մեծության և արժանապատվության։

6/ Քրիստոնյա և այլ ոչ-մահմեդական համայնքների վարչությունը գտնվելու է հատուկ ժողովի հսկողության ներքո, որի անդամները ընտրվելու են համայնքի ներսում՝ հոգևոր և աշխարհիկ մարդկանցից։

7/ Քաղաքներում, ավաններում և գյուղերում, որտեղ ամբողջ բնակչությունը պատկանում է միևնույն կրոնին, դպրոցները, հիվանդանոցները, աղոթատեղիները և գերեզմանոցները իրենց առաջվա հատակագծի համաձայն նորոգվելու ընթացքում ոչ մի արգելք չպետք է հարուցվի։ Նման նոր կառույցների անհրաժեշտության դեպքում, դրանց նախագծերը պետք է հավանության արժանանան պատրիարքի կամ համայնքի առաջնորդների կողմից և, ներկայացնելով Բարձրագույն դուռ, վավերացվեն իմ կայսերական հրամանագրով։ [Կառույցների]

վերաբերյալ անհրաժեշտ դիտողությունները հայտնվելու են որոշակի ժամանակում: Այն վայրերում, ուր [բնակչությունը] հետևում է միևնույն դավանանքին, առանց որևէ արգելքի, ազատորեն կարող է իր կրոնական պաշտամունքը և ծիսակատարությունները հրապարակայնորեն կատարել:

Այն քաղաքներում, ավաններում և գյուղերում, որտեղ բնակչությունը հետևում է տարբեր դավանանքների և համայնք առ համայնք առանձնացված է առանձին թաղամասերում, նույնպես իրավունք են ունենալու, վերոհիշյալ արտոնության համաձայն, նորոգելու իրենց եկեղեցին, հիվանդանոցը, դպրոցը և գերեզմանը: Իսկ նոր կառույցների հարցը, պատրիարքի կամ համայնքի առաջնորդի միջնորդությամբ ներկայացվելու է Բարձրագույն դուռ և վարչական արգելք չլինելու դեպքում վավերացվելու է իմ կայսերական հրամանագրով: Նման կառույցների աշխատանքին վարչական իշխանությունները չպետք է միջամտեն:

8/ Իմ Բարձրագույն դուռը ազդեցիկ միջոցներ է ձեռնարկելու, որպեսզի յուրաքանչյուր աղանդ, անկախ նրա հետևողների թվից, կարողանա ազատորեն կատարել իր ծեսերը: Կրոնական, լեզվական և ցեղային առանձնահատկությունների հիման վրա, իմ կայսրության հպատակներից մեկը մյուսից զանազանողները կամ ատորադասողները հավիտենապես զրկվելու են վարչական բոլոր իրավունքներից: Օրենքը խստորեն հետապնդելու է այն առանձին անհատներին կամ կառավարական պաշտոնյաներին, որոնք անպատվաբեր և ստորացուցիչ բառեր կօգտագործեն:

9/ Իմ կայսրության մեջ գործադրվելու է դավանանքի ամեն մի ազատություն և իմ հպատակները առանց խոչընդոտի և բռնադատման հետևելու են իրենց դավանած կրոնին: Ոչ ոք պարտադիր կերպով կրո-

նախախնամության չի ենթարկվելու։

10/ Իմ կայսրության բոլոր պաշտոնյաների և ծառայողների ընտրությունը և պաշտոնի նշանակումը չնայած կախված է մեր կայսերական անմիջական կամքից, այնուհանդերձ իմ կայսրության բոլոր հպատակները, անկախ նրանց ազգային առանձնահատկություններից, իրենց արժանիքի և կարողության համաձայն, գոյություն ունեցող կանոնների հիման վրա նշանակվելու են հասարակական ամեն տեսակ պաշտոնների։

11/ Իմ կայսրության բոլոր հպատակները, առանց որևէ խտրականության, կարող պիտի լինեն ընդունվելու կառավարության, զինվորական և քաղաքական դպրոցները, եթե նրանք բավարարեն տարիքի և քննության պայմանները, որոնք հաստատված են տվյալ դպրոցի կանոններով։

12/ Ցուրաքանչյուր համայնքին թույլատրվելու է ունենալ արվեստի, գիտական և արտադրական դպրոցներ, ուր դասավանդման ընթացքը և ուսուցիչների ընտրությունը գտնվելու է լուսավորության նախարարության կողմից հաստատված հատուկ խառը հանձնաժողովի հսկողության ներքո։ Այս հանձնաժողովի անդամները նշանակվելու են իմ կայսերական հրամանագրով։

13/ Մահմեդականների և քրիստոնյաների միջև, կամ ոչ-մահմեդականների, քրիստոնյաների և տարբեր դավանանքի պատկանող [անձանց] միջև առաջ եկած առևտրական, վերադաստիարակման, քրեական հարցերը լուծվելու են խառը դատարաններում։ Դատավարությունները տեղի են ունենալու հրապարակայնորեն, որտեղ հակառակորդ կողմերը մասնակցելու են անձամբ, ներկայացնելով իրենց վկաներին։ Այդ վկայությունները ընդունվելու են առանց դավանանքի խտրության, յուրաքանչյուրը իր աղանդի կրոնական օրենքներով երդում տալուց հետո։

14/ Քաղաքացիական գործերի դատավարությունները տեղի են ունենալու հրապարակայնորեն, օրենքի և կանոնադրության համաձայն, նահանգային խառը խորհրդի առաջ, նահանգապետի և տեղի դատավորի ներկայությամբ։

15/ Առևտրական, քրեական և ուղղիչ աշխատանքային օրենքները, ինչպես նաև խառը դատարաններին վերաբերող օրենքները կազմվելու են շուտափույթ կերպով և ամփոփվելու են մի օրենագրքի մեջ։ Այդ օրենագիրքը հրապարակվելու է նաև կայսրության մեջ գործածվող բոլոր լեզուներով։

16/ Աշխատանքային ուղղիչ վայրերում, բանտերում և այլ տեղերում գործադրվող պատժաձևերը բարեփոխելու համար, ձեռնարկվելու են անհապաղ միջոցառումներ, որպեսզի արդարացի կերպով պաշտպանվեն մարդկային իրավունքները։ Նույնիսկ բանտերի մեջ վերացվելու է մարմնական պատիժների գործադրումը։ Դրանք կարող են գործադրվել բացառիկ դեպքում՝ համաձայն Բարձրագույն դռան կողմից հաստատված կանոնադրության։ Այս ուղղությամբ, օրինազանց գտնվողները, լինի պաշտոնյա թե վարչական աշխատող, հետապընդվելու են խստագույն կերպով և պատժվելու են քրեական օրենագրքի համաձայն։

17/ Մայրաքաղաքի, նահանգային քաղաքների, ինչպես նաև գյուղական վայրերի ոստիկանական կազմակերպությունները վերակազմվելու են շուտափույթ կերպով, որպեսզի կատարելապես երաշխավորվի իմ կայսրության բոլոր խաղաղասեր հպատակների կյանքի և ունեցվածքի ապահովությունը։

18/ Հարկատվության հավասարեցումը համազոր է հպատակների հավասարության, ինչպես նաև պարտականությունների հավասարությունը՝ իրավունքի հավասարության։ Այնպես, որ, բոլոր քրիստոնյա հպատակները

և այլ ոչ-մահմեդական կողմերը, համաձայն ընդունված որոշման, մահմեդականների նման արձանագրվելու են գինվորական ծառայության համար: Միևնույն ժամանակ, առաջվա պես պահպանվելու է փոխանորդ ճարելու և գնելու սկզբունքը: Քրիստոնյաների և այլ ոչ-մահմեդական հպատակների գինվորական ծառայության մեջ ընդունելու համար կարճ ժամանակամիջոցում հրապարակվելու է կանոնադրությունն:

19/ Նահանգային և գյուղական խորհուրդների կառուցվածքում, չուտափույթ կերպով կատարվելու են բարեփոխումներ, որպեսզի ապահովվի մահմեդական, քրիստոնյա և այլ համայնքների կողմից պատգամավորներ ընտրելու ազատությունը և այդ պատգամավորների իրավունքների գործադրումը: Բարձրագույն դուռը ձեռնարկելու է ամենաազդու միջոցներ, որպեսզի ճշտորեն գործադրվեն ընդունված բոլոր որոշումները:

20/ Քանի որ անչարժ գույքի գնման, վաճառման օրենքները ընդհանուր են բոլոր հպատակների համար, այսուհետեւ իմ կայսրության մեջ, օտարներին ևս թույլատրվելու է ունենալ անշարժ գույք, այն պայմանով, որ նրանք ենթարկվեն օրենքին, ոստիկանության պայմաններին և տեղի հպատակների նման վճարեն նշանակված հարկը: Այս գործարքը կկրառվելու է տվյալ օտար պետության հետ համաձայնություն կայացնելուն զուգահեռ:

21/ Իմ կայսրության բոլոր հպատակները հավասարապես հարկատու են՝ առանց դասի և դավանանքի խտրության: Այս առթիվ ձեռնարկվելու են ամենահրատապ միջոցները, որպեսզի վերացվեն տուրքերի գանձման, մանավանդ տասանորդների հավաքման ընթացքում ի հայտ եկած չարաշահումները:

22/ Պետական եկամուտի բոլոր ճյուղերում, կապալի փոխարեն, հնարավորին չափ շուտ և հետևողականորեն գործադրվելու է ուղղակի հարկահավաքման

համակարգը: Մինչև այդ դրութեան վերացումը, կառավարութեան բոլոր պաշտոնեաներին և մեջլիսի անդամներին արգելված է կապալառու դառնալ կամ մասնակցութեան ունենալ որևէ կապալի: Օրինազանցները պատժվելու են ամենայն խստութեամբ: Տեղական հարկերը սահմանվելու են այնպիսի ձևով, որպեսզի չտուժի տեղի արտադրութեունը, կամ էլ չարգելակվի ներքին առևտրի զարգացումը:

23/ Հասարակութեան վիճակը բարելավվելու է այնպիսի եկամտաբեր գործերով, որոնց մի մասը բխելու է այնպիսի նահանգներից, որտեղ կառուցվելու են ծովային և ցամաքային հաղորդակցութեան ճանապարհներ:

24/ Ընդունված օրենքի համաձայն, յուրաքանչյուր տարի հաստատվելու է պետութեան ֆինանսական բյուջեն: Այս օրենքները գործադրվելու են ամենայն խստութեամբ: Միևնույն ժամանակ վերանայվելու է յուրաքանչյուր պաշտոնի համար նշանակված ռոճիկը:

25/ Ցուրաքանչյուր համայնքի առաջնորդ ու ներկայացուցիչ նշանակվելու է իմ Բարձրագույն դռան կողմից եւ բոլոր հանդամանքներում, կայսրութեան հպատակների ընդհանուր շահերի համար, մասնակցելու են արդարադատութեան գերագույն խորհրդին: Այս նպատակի համար նրանք հրավիրվելու են իմ Մեծ վեզիրի կողմից: Ներկայացուցիչները պաշտոնի են նշանակվելու մեկ տարի ժամանակով և երդում են տալու պաշտոնի անցնելուց առաջ:

Խորհրդի բոլոր անդամները, ընդհանուր և արտակարգ դումարումների ընթացքում, իրավունք են ունենալու ազատորեն հայտնելու իրենց կարծիքն ու տեսակետները: Եվ այս հարցում ոչ ոք չի կարող ճնշում գործադրել:

26/ Զարաշահումների, կեղեքումների և հափշտակութեունների դեմ հաստատված օրենքները հավասարապես

տարածվելու են կայսրության բոլոր հպատակների վրա՝ անկախ նրանց գրաված դիրքից և պատկանելիությունից։

27/ Բանկեր և այլ նման հաստատություններ ստեղծելու համար, ձեռնարկվելու են համապատասխան քայլեր, որպեսզի բարեփոխությունները կատարվեն ֆինանսական համակարգում։ Հաստատվելու են նաև դրամագլուխներ՝ կայսրության նյութական հարստությունը ավելացնելու համար։ Կառուցվելու են ճանապարհներ, ջրանցքներ, որպեզի հեշտացվի հաղորդակցությունը և նպաստի երկրի զարգացմանը։

Այն ամենը, ինչ կարող է խոչընդոտ հանդիսանալ առեւտրի և երկրագործության զարգացմանը, վերացվելու է շուտափույթ կերպով։ Այս ծրագիրը իրագործելու համար, ձեռնարկվելու են հատուկ միջոցներ, որպեսզի օգտագործվի Եվրոպայի գիտությունը, արվեստը և կապիտալը։

Այս է իմ կամքն ու ցանկությունը։ Եվ դու, որ իմ Մեծ վեզիրն ես, կհրապարակես իմ այս կայսերական հրովարտակը ըստ սովորության, մայրաքաղաքում և թե կայսրության բոլոր վայրերում, և աչալուրջ կհետևես, որպեսզի ամենայն ճշտությամբ դրանք գործադրվեն[4]։

1272, Ջեմազի էլ-էվվել, 10 (1856, Փետրվար, 18)։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԷՅԱԼԵԹՆԵՐԻ, ԼԻՎԱՆԵՐԻ, ԳՅՈՒՂԵՐԻ ԵՎ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՀԱՐԿԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

1/ Ամեն տարի, երբ գալիս է հարկի բաշխման ժամանակը, կազաների մեջլիսներում, գյուղերի և թաղամասերի վրա նշանակված հարկերը ստանալու համար կազմվում են տարբեր ծանուցագրեր։ Մահմեդական և քրիստոնյա գյուղերի և թաղամասերի իմամները, քահանաները, մուխթարները, ստանալով այս ծանուցագրերը,

նախ և առաջ կազմում են բոլոր տների ցուցակը՝ սեփականատիրոջ անվանացանկով։ Այնուհետև հրավիրելով բնակիչներից մի շարք տարեց և երևելի անձանց, ժողով են գումարում, որտեղ կատարյալ արդարացի և յուրաքանչյուրի ունեցվածքի համեմատ բաժանում են ծանուցագրի մեջ նշված գումարը։

Այս ցուցակում, յուրաքանչյուր սեփականատիրոջ անվան դիմաց գրվում է իրեն բաժին ընկած հարկի գումարը։ Եթէ աղքատ ընտանիքների մեջ կան այնպիսիները, որոնք ազատվում են հարկատվությունից, նրանց անվան դիմաց նշում է կատարվում։ Այն բանից հետո, երբ տվյալ գրությունը վավերացվում է գյուղի և թաղամասի խամի, մուխթարի կամ քահանայի, ինչպես նաև մահմեդական կամ քրիստոնյա երևելի անձանց կողմից, այն մուխթարի և վստահված անձանց միջոցով հանձնվում է կազայի մեջլիսին։

2/ Երբ գյուղի կամ թաղամասի ցուցակը հասնում է մեջլիս, այն մանրամասնորեն քննության է առնվում։ Եթե ցուցակում նշված գումարը համապատասխանում է նախապես ուղարկված ծանուցագրի գումարին, և եթե հարկի բաշխումը արդարացի է կատարված, ապա այդ ցուցակը գրանցվում է կազայի համապատասխան մատյանում, և վերջում բացատրական նշում է կատարվում այն մասին, որ այսինչ թվականին, այսինչ գյուղում կամ թաղամասում, տարաբաշխվել է նման հարկատվությունը։ Այնուհետև ցուցակը վավերացվում է մեջլիսի անդամների կողմից և կրկին վերադարձվում բերողներին։

3/ Եթե քրիստոնյա գյուղերում թուրքերեն իմացող չգտնվի, ապա տվյալ ցուցակը անհրաժեշտ է կազմել մայրենի լեզվով և մեջլիսում թարգմանելուց հետո գրանցել մատյանում և այնուհետև վավերացնելուց հետո, կրկին վերադարձնել բերողներին՝ համաձայն վերոհիշյալ 2-րդ կետի։

4/ Եթե հարկի բաշխման ընթացքում գյուղի բնակչության մի մասը, մյուս մասի համեմատությամբ վճարի իր հնարավորություններից ավելի բարձր հարկ, կամ եթե մի չարք հեղինակավոր անձինք, չարաշահելով իրենց հնարավորությունները, ցածր հարկ վճարեն, ապա կազայի մեջլիսը, իմանալով այդ մասին, պետք է անմիջապես արդարացի բաշխում կատարի: Իսկ եթե առաջ գան այնպիսի հարցեր, որոնց լուծումը չի մտնում մեջլիսի իրավասության մեջ, ապա կազայի կառավարիչը պարտավոր է դիմել լիվայի ներկայացուցչին:

5/ Յուրաքանչյուր գյուղում, երբ գալիս է հարկի հավաքման ժամանակը, իմամները (մահմեդական գյուղերում), քահանաները (քրիստոնյա գյուղերում), մուխթարի հետ հավաքելով նշանակված հարկագումարը, գրանցում են վերոհիշյալ ցուցակի մեջ: Այնուհետև հավաքված գումարը այդ ցուցակի հետ միասին ներկայացվում է կազայի կառավարիչներին, որտեղ այդ գումարը հաշվելուց հետո համեմատվում է ցուցակի և կազայի մատյանի հետ: Այնուհետև գրանցում է կատարվում, նշվում է տարեթիվը և վավերացվում է կառավարչի և դանձապետի կողմից:

Եթե գյուղերում չգտնվեն բավականաչափ գրագետ մարդիկ, որոնք կարողանան լրացնել հարկային ցուցակները, ապա, համաձայն կազայի կողմից ներկայացված ծանուցագրի, տվյալ գյուղի բնակիչները իրենց սովորության համաձայն բաշխում են նշանակված հարկը: Այնուհետև իմամները (մահմեդական գյուղերից), քահանաները (քրիստոնյա գյուղերից), մուխթարները և մի քանի վստահված անձնավորություններ գալիս են կազայի ներկայացուցչի մոտ, և բերանացի բացատրություն են տալիս: Այնուհետև կազայի մեջլիսում կազմվում է անհրաժեշտ ցուցակը (տվյալ գյուղի) և գրանցվում է մեջլիսի մատյանում: Կազմված ցուցակը երբ ստորագրվում է գյուղից եկած մարդկանց կողմից և վավերաց-

վում մեջլիսի անդամների կողմից, կրկին վերադարձվում է տվյալ գյուղի ներկայացուցիչներին։

7/ Որևէ գյուղի հարկացուցակում նշված գումարը չպետք է բարձր լինի կազայի մեջլիսի ծանուցագրի գումարից։ Հավելյալ գումարը մեջլիսի կողմից ընդունման ենթակա չէ։

8/ Տարվա վերջին կազայի մեջլիսը ստուգում է յուրաքանչյուր գյուղի հարկային ցուցակը։

Եթե մի շարք գյուղեր հարկային մնացորդ ունեն, ապա մեջլիսը տվյալ գյուղն է ուղարկում դատական կատարածուին՝ ստուգում կատարելու համար։ Եթե հարկերը գանձելուց հետո մնացել են իմամների, մուխթարների կամ այլ անձանց մոտ, ապա վերջիններս, քրեական օրենքի համաձայն պատժի են ենթարկվում, իսկ եթե պարզվի, որ մի շարք մարդիկ դեռևս չեն վճարել նշանակված հարկերը, ապա ընդհանուր կարգով, նրանցից գանձում է կատարվում։

9/ Յուրաքանչյուր տարի, երբ հարկային ցուցակները գյուղերից ներկայացվում են կազայի մեջլիսին, դրանք համեմատվում են նախորդ տարվա ցուցակի հետ։ Եթե հարկերի բաշխման մեջ որևէ փոփոխություն կատարված լինի, այսինքն եթե նոր ցուցակներում մի շարք մարդկանց հարկերը բարձրացած կամ նվազեցված լինեն, ապա պատճառը պետք է պարզաբանվի։

10/ Տվյալ կանոնների ճիշտ կիրառմանը պարտավոր են հետևել ոչ միայն էյալեթի, լիվայի և կազայի ֆինանսական աշխատողները, այլև կազայի կառավարիչները, մեծարգո վալիները, մուֆթասարրիֆները և կայմակամները։ Երբեմն, անհրաժեշտության դեպքում, նրանք լիազորում են՝ կանչելու կազայի մեջլիսի այնդամներին և ծանոթանալու գործի ընթացքին։ Իսկ անհրաժեշտության դեպքում, մեծարգո մուֆթասարրիֆները, կայմակամները և կառավարիչները պետք է անձամբ չրջագայեն այն թա-

դամասերը, որոնք գտնվում են իրենց իրավասության ներքո, ծանոթանան իրադրության և ուշադրություն հրավիրեն տվյալ կանոնադրության գործադրման համար։

11/ Եթե յուրաքանչյուր գյուղի և թաղամասի տարեկան հարկը վճարվել է մաս առ մաս, ապա մուխթարները կազայի մեջլիսին են ներկայացնում բոլոր ստացականները, և դրանց փոխարեն ստանում ընդհանուր ստացական։

Ընդհանուր ստացականի վերևում գրվում է տվյալ սանջաքի, կազայի և գյուղի անունը, տարեթիվը և հարկային գումարը, իսկ ներքևի մասում նշվում է, որ ընդհանուր ստացականը տրված է նրա համար, որ տվյալ գյուղի կամ թաղամասի հարկային գումարը ամբողջապես մուծված է դրամարկղ։ Այնուհետև, այն վավերացվում է կազայի մեջլիսի անդամների և գանձապետի կողմից։ Կազա եկող մուխթարները գործը չպետք է ձգձգեն, երբ նրանք գալիս են հաշիվը ստուգելու համար։

12/ Այն գրությունները, որոնք լրացվում են էյալեթի և լիվայի իրավասության ներքո եղած գյուղերում և թաղամասերում, նույնպես ներկայացվում են լիվայի մեջլիսին և հարկահավաքման ամբողջ գործողությունը ընթանում է վերոհիշյալ կետերի համաձայն[1]։

1277 թ. Ռեջեբ, 15 (1861, Հունվար 28)։

ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԵՆԸ

Ջնայած սրանից առաջ բոլոր վայրերն էլ ուղարկվել էր մի կայսերական գրություն, որը պարունակում էր մի շարք հրահանգներ քրիստոնյաների ժառանգության մասին, սակայն մի շարք վայրերում, դրա բովանդակությունը սխալ մեկնաբանվեց, իսկ մի շարք

չրջաններում էլ, այն չարաշահումների առիթ հանդիսացավ։ Այս կապակցությամբ ընդունվեց խիստ որոշում հետևյալի մասին։

Եթե քրիստոնյա հպատակները իրենց մահից հետո թողել են չափահաս ժառանգներ, առանց իրենց ժառանգությունը դատարանի իրավասությանը հանձնելու, ապա տվյալ չափահաս ժառանգորդները, քանի դեռ իրենք չեն պահանջել այդ ժառանգության գրանցումն ու բաժանումը, օրինական դատարանները ոչ մի ձևով իրավունք չունեն միջամտելու գործին։ Իսկ եթե ժառանգությունը իրենց միջև բաժանվելու ընթացքում տարաձայնություն առաջանա, և հավակնորդներից մեկը բողոք ներկայացնի կառավարությանը, ապա ժառանգությունը գրանցվում է օրենքով՝ դատական եզրակացության հիման վրա։ Իսկ եթե որևէ մեկը մահից հետո անչափահաս ժառանգորդներ թողնի, ապա նման դեպքերում, կառավարությունը իր հովանավորության տակ է վերցնում որբերի ժառանգությունը, հանգուցյալի ժառանգությունը գրանցելով դատական օրենքներով։ Հանգուցյալի թաղման ծախսերը հոգալուց և բոլոր պարտքերը վճարելուց՝ հետո, կատարվում են նրա բոլոր պատգամները։ Մնացած ունեցվածքը և դրամը, գտնվելով հարմար խնամակալի հսկողության ներքո, հասատավում է անչափահաս ժառանգորդի անունով։ Եթե անչափահաս ժառանգորդը ազգական չունի, ապա տվյալ համայնքի երևելի մարդիկ ընտրում են մի խնամակալ և մեկ հսկիչ, որոնք պարտավորվում են խնամքի տակ վերցնել և հետևել ժառանգորդի անունդին և կրթությանը։

Այս և վերոհիշյալ դատական գործերի քննարկման համար, ըստ օրենքի որպես հարկ գանձվում է մեկ ղուրուշից մեկ փարա և 1000 ղուրուշից 60 փարա։ Նախազգուշացվում է, որ նշանակվածից ավելի, ոչ մի դրամ չգանձվի։ Բացի դրանից, կանոնադրության համաձայն,

հարկի գանձումը կատարվում է հանգուցյալի պարտքերը մարելուց հետո։ Եթե հանգուցյալի ժառանգորդները պըտնվում են արտասահմանում, կամ հոգեկան հիվանդներ են, ապա ժառանգության գանձումը կատարվում է վերևում նշված անչափահասների վերաբերյալ սահմանված կարգով։

Ինչպես նշվեց վերևում, եթե չափահասի ժառանգորդը ինքը պահանջ է ներկայացնում դատարան, ապա [դատական] ծախսերը գանձվում են միայն նրա հասանելիք բաժնից, և ոչ երբեք մյուսներից։

Եթե հանգուցյալը չունենա ոչ մի ժառանգորդ, ապա նրա ունեցվածքը փոխանցվում է պետության գանձարանին։ Նման մարդկանց ունեցվածքի դրանցումը տեղի է ունենում չարիաթի փառավոր օրենքով և պետական պաշտոնյաների իրավասության։

Եթե Կ. Պոլսի կամ այլ քաղաքների բնակիչներից որևէ մեկը մահանա մի այլ քաղաքում հյուր եղած ժամանակ, կամ առևտրի և ճանապարհորդության հետևանքով, ապա օրենքի հիման վրա գրանցվում է կատարվում։ Եթե նրա ունեցվածքի մեջ գտնվեն ոչ դիմացկուն ապրանքներ, դրանք վաճառվում են ցածր գներով։ Եվ, ինչպես նշվեց վերևում, անհրաժեշտ ծախսերը առանձնացնելուց, այդ թվում պարտքերը և սովորական հարկերը մարելուց հետո, մնացած գումարը հանձնվում է պետական գանձարան։ Իսկ եթե հանգուցյալը թանկարժեք քարեր կամ այլ արժեքավոր ապրանքներ ունենա, ապա դրանք պահ են տրվում մի ապահով տեղում, որպեսզի ժառանգորդ հայտնվելու դեպքում, դրամը հանձնվի կանխիկ հաշվարկով, իսկ արժեքավոր ապրանքները ըստ ցուցակի։

Եթե որևէ մեկը կենդանության օրոք ունեցվածքի մեկ երրորդ մասը կտակում է մի քանի մարդկանց անունով, ապա նրա մահից հետո, չարիաթի հիման վրա այդ կտակը մնում է ուժի մեջ։ Բացի դրանից, սեփականատերը իր կենդանության օրոք, լինելով կատարյալ

առողջ գիտակցության տեր, կարող է իր ամբողջ ունեցվածքը կտակել և բաժնել օրինավոր ժառանգորդի, կամ այլոց մինչև, յուրաքանչյուրին տալով իր բաժինը։ Այս պարագային, նախապես կազմվելու է պարտամուրհակ՝ վկաների ներկայությամբ, համայնքի երևելի անձերից կազմված, որը վավերացվելու է պատրիարքի, միտրոպոլիտի, եպիսկոպոսի կամ նրանց տեղակալներից մեկի կողմից։ Այն դեպքում, երբ նման պարտամուրհակները ընդունվում և հաստատվում են օրինավոր դատավորների կամ համապատասխան պաշտոնյաների կողմից, ապա հետագայում, անհրաժեշտություն չի զգացվում կրկին ցուցակ կազմելու և հանգուցյալի ունեցվածքը բաժանելու, քանի որ պարտամուրհակում գրանցված անշարժ և շարժական գույքը պատկանում է օրինավոր ժառանգորդին։

Եթե անշարժ ունեցվածքը հանդիսանում է վաքուֆային կամ պետական հող, ապա պետք է նկատի ունենալ, որ դա օգտագործողի ուղղակի սեփականությունը չի կարող համարվել։ Վաքուֆային ունեցվածքի վաճառքը առնչվելու է մութևելլիի հետ, իսկ պետական հողի վաճառքը համապատասխան պաշտոնյաների հետ։ Օրենքից դուրս կատարված վաճառքը չի կարող ուժ ունենալ։ Ուստի պարտամուրհակի մեջ գրանցվող անշարժ ունեցվածքի համար անհրաժեշտ է պահպանել հողի և վաքուֆի օրենքները։ Մի խոսքով, եթե որևէ մեկը այս մանրամասնություններից հետո գործի հակառակ վերը նշված որոշումների և կանոնների, ապա ենթարկվելու է խիստ պատասխանատվության։ Այս ամենը միևնույն ժամանակ պաշտպանում են անչափահասների իրավունքը։

Այս կապակցությամբ, նորին մեծություն Շեյխուլ-իսլամը տեղեկացնում և վճռականապես նախազգուշացնում է Օսմանյան կայսրությունում գտնվող բոլոր դատավորներին և նայիբներին։ Իսկ պատրիարքները պետք է որոշումներ կայացնեն միտրոպոլիտներին և եպիսկո-

պոսներին, որ, այսուհետև եթե որևէ մեկը գործի նշված կետերին հակառակ, կենթարկվի պատժի։

Իսկ Բարձրագույն դռան կողմից առաքվելու է վճռական զեկուցագրեր, որպեսզի բոլոր մեծարգո վալիները, մութասարրիֆները, կայմակամները և կազայի կառավարիչները և բոլոր պաշտոնյաները հետևեն այս կանոնների կիրառմանը[1]։

Ներկա կայսերական հրովարտակը տրվեց հատկապես նրա համար, որ բոլոր վերը նշված դրույթները կիրառվեն կյանքում։

1278 թ. Սաֆար, 7 (1861, Օգոստոս 15)

ՍԱՄՈՍ ԿՂԶՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ[1]։ ՍԱՄՈՍ ԿՂԶՈՒ [ԿԱՌԱՎԱՐԻՉ] ՄԻԼՏԻԱԴԻ ԲԵՑԻՆ

Իմ կայսրության սահմաններում գտնվող Սամոս կղզու բնակիչների բարեկեցության և ապահովության համար, դեռևս 1247 թվականին (1831) չնորհվել էր իմ [կայսերական հրովարտակը], որը բովանդակում էր հատուկ կանոնադրություն և ներքին գործերի կառավարման մի շարք արտոնություններ։ Տվյալ կանոնադրությունը, նշանակված դրոշակը և այլ արտոնությունները մնում են ուժի մեջ, քանի կղզու բնակիչները չեն չեղվել իրենց պարտավորություններից և հավատարիմ են մնացել իմ կայսրությանը։ Այնուհանդերձ, նկատի ունենալով, որ տվյալ հրովարտակի մի շարք կետերը չարադրված են համառոտակի և կրճատ ձևով, յուրաքանչյուր ոք այն մեկնաբանում էր իր ցանկության և կամքին համաձայն։ Այդ իսկ պատճառով, այն հուզումներն ու ապստամբությունները, որոնք բռնկվում էին նրանց կողմից ժամանակ առ ժամանակ, տեղիք էին տալիս թյուրիմացության։ Դրա հետևանքով, կղզու բնակիչները, որոնք Արարիչի կողմից

հանձնված են իմ խալիֆաթի[2] ապահովությանը, տևապես տուժում և վնաս էին կրում։

Ներկայումս վերոհիշյալ կանոնադրությունը կըրկին նշանակվում է կղզու ներքին կառավարման համար, բայց և այնպես, հետագա բախումներից խուսափելու համար, անհրաժեշտություն է զգացվել բարեփոխել այն և լրացնել հետևյալ մի շարք բացատրական հոդվածներով։

1/ [Սամոսի] իշխանը տարին մեկ անգամ ընդհանուր ժողովի գումարման համար նշանակում է հարմար և որոշակի տեղ։

Ընդհանուր ժողովը բաղկացած է լինելու 37 անդամներից։ Նրա կազմի մեջ ընդգրկվելու են միտրոպոլիտը, երկուական ներկայացուցիչներ կղզու 7 քաղաքներից և մեկական՝ 22 գյուղերից։ [Ընդհանուր ժողովի] անդամները պետք է հասարակության վստահության արժանացած և հայրենասիրությամբ օժտված մադիկ լինեն։ Նրանք պետք է լինեն այն անձնավորությունների թվից, որոնք իրենց ներդրումն ունեն հարկահավաքման և բարեգործական գանձարանի հարստացման ասպարեզում։

Ընդհանուր ժողովի մեջ չեն կարող ընդգրկվել և նրա գործերի հետ առնչություն ունենալ այնպիսի մարդիկ, որոնք ինչոր ժամանակ քրեական հանցագործություն, հափշտակություններ և չարաշահումներ են կատարել բարեգործական գանձարանից կամ կղզու տիրույթներից։ Անդամ չեն կարող լինել նաև այն մարդիկ, որոնք հեռացել կամ փախել են երկրից և ունեն մշտական բնակության վայր արտասահմանում և վայելում են օտար պետությունների հովանավորությունը։

2/ Ընդհանուր ժողովի անդամների ընտրությունը չի կատարվում ընդհանուր ընտրական կարգով։ Նրանք ընտրվում են յուրաքանչյուր գյուղի կողմից, իսկ ընտրելու իրավունք ունեն միայն Օսմանյան կայսրության հպատակ հանդիսացող ազնիվ և պատվարժան հողա-

տերերը, վաճառականները, նավատերերը։ Հիշյալ երեքի անձնավորությունները կազմակերպված ձևով հավաքվում են որոշված վայրում և նախապես իրրև ղեկավար ընտրում են առավել հարգարժան մարդուն և ապա անցնում ընդհանուր ժողովի անդամների ընտրության։

Ընտրության իրավունք ունեցող անձանց անունները և ազգանունները գրանցվում են մի ցուցակի մեջ։ այդ ցուցակը երեք տարին մեկ անգամ վերանայվում է իշխանության ներկայացուցիչների և տեղական առաջնորդների կողմից։

3/ Համաձայն կղզու հինավուրց սովորության, ընդհանուր ժողովի նորընտիր անդամները, ձայների մեծամասնությամբ նախագահ են ընտրում այն տարեց անդամներից, որոնք աչքի են ընկնում իրենց կարգապահությամբ։ Նախագահը ղեկավարում է ժողովը։ Ժողովի անդամներից որևէ մեկը եթե անպատշաճ վարմունք ցուցաբերի, ապա նախագահը կարգի պետք է հրավիրի նրան իր խորհուրդներով։ Եթե տվյալ անդամը չարունակի իր սխալ գործելակերպը, ապա ժողովի նախագահը մեծամասնության ներկայությամբ, դնում է նրա հեռացման հարցը

Ընդհանուր ժողովը զբաղվում է կղզու բյուջեով և ֆինանսական գործերով։ Ուշադիր հետևում է, որպեսզի տարեկան հարկերը գանձվեն ժամանակին և ոչ մեկը այդ ուղղությամբ հալածանքի չենթարկվի։ Խրախուսում է առևտուրը եւ ջանում է, որպեսզի կղզու ծախսերով չեն-քեր կառուցվեն և ընդհանրապես հոգում է երկրի ծաղկման և բարեկեցության մասին։ Այն հարցերը, որոնք լուծվում են ձայների մեծամասնությամբ և չեն հակասում հպատակության սկզբունքներին և հավատարմության, հաստատվում են ժողովի անդամների կողմից և գործադրման համար ներկայացվում [կղզու] կառավարչին։

Ընդհանուր ժողովը գումարվում է տարին մեկ անգամ, որտեղ [մասնակիցները] առաջին հերթին ընտրում են նախագահ և ապա անցնում աշխատանքի։ Ընդհանուր ժողովի գումարման ժամկետը առնվազն մեկից -- մեկ և կես ամիս է։

Ընդհանուր ժողովի վավերացված որոշումը ներկայացվում է կառավարչին։ Եթե այդ որոշումների մեջ հպատակության հետ առնչվող հակասական կետեր լինեն, կամ եթե այնպիսի հարցեր առաջ գան, որոնք ժողովը իրավասու չէ լուծելու, գործադրման համար, կառավարիչը կարող է հավանություն չտալ մինչև հաջորդ գումարումը, որպեսզի տվյալ հարցը կրկին անգամ քննարկվի ընդհանուր ժողովում։

Սամոս կղզին բաղկացած է չորս նահիյեներից։ Ընդհանուր ժողովը յուրաքանչյուր նահիյեից ընտրում է երկուական մուխթարներ, որոնք պետք է լինեն առնըվազն 30 տարեկան, ունենան կրթություն և բավականաչափ փորձ։ Այնուհետև նրանցից առավել հարմար չորս մուխթարները, կառավարչի կամ նրա տեղակալի մասնակցությամբ, կազմում են խորհուրդ, որպեսզի ընդհանուր ժողովի արձակման ընթացքում, մի տարվա մեջ կառավարեն կղզին։

4/ Վերոհիշյալ խորհրդի չորս անդամները, կառավարչի կամ նրա տեղակալի ղեկավարությամբ, [կայսրության] ընդհանուր օրենքի հիման վրա, վարում են կղզու քաղաքացիական և ֆինանսական գործերը։

Նրանց պարտականության մեջ է մտնում՝ ապահովել բարեգործական դպրոցների գույքը և այլ զանազան ծախսերը, գանձել բոլոր տեսակի հարկերը ճիշտ համամասնությամբ և համաձայն յուրաքանչյուր բնակչի նյութական կարողության, հետևել, որպեսզի երկու ժամկետներով, ժամանակին և կանոնավոր կերպով վճարվի իմ փառապանծ կայսրության համար նշանակված 400,000

ղուրուշ տուրքը։

Հարկերի համար պետական գանձարանից վերցված ստացականը կառավարչի գիտությամբ ներկայացվում է խորհուրդ և այնուհետև հանձնվում է ընդհանուր ժողով։ Խորհրդի անդամները իրենց պաշտոնավարման ժամկետը ավարտելուց հետո հաշվետվություն են տալիս ընդհանուր ժողովի հերթական գումարմանը և ժողովի ու օրենքի առաջ պատասխանատու են թե՛ կատարված ծախսերի և թե՛ հարկերի գանձման համար։

5/ Կառավարիչի, խորհրդի անդամների՝ ժանդարմաների ռոճիկները նշանակում է ընդհանուր ժողովը, իսկ ընդհանուր ժողովի արձակման դեպքում ամսական ռոճիկների նշանակման հարցով զբաղվում է խորհուրդը։ Այնուամենայնիվ, կառավարիչը կամ նրա տեղակալը պետք է հետևեն, որպեսզի չարաշահումներ չկատարվեն։ Մինչև այսօր որոշ բարդություններ էին առաջ գալիս այն հարցում, որ կառավարիչի և կղզու պաշտոնատարների ռոճիկները վերջնականապես չէին որոշված և նրանք օգտվում էին աշարից և մաքսային հարկերի եկամուտից։ Այսուհետև կապալի տալու իրավունք ունի միայն ընդհանուր ժողովը, իսկ ստացված եկամուտները պետք է ծախսվեն երկրի բարգավաճման օգտին։ Սամոսի կայմակամի և Ստամբուլում առևտրով զբաղվող պաշտոնյաների ռոճիկները նշանակում է կառավարիչը։

Սամոս կղզու կառավարիչի ամսական ռոճիկը կազմելու է 12,500 ղուրուշ։ Կառավարիչը, նրա տեղակալը և մյուս պաշտոնյաները իրավունք չունեն այլ գումարներ գանձելու կամ յուրացնելու կղզու տիրույթները։ Իմ կայսրության կամ հարևան երկրների վաճառականներից գանձվող մաքսային հարկերը պետք է կատարվեն կայսրությունում գործող առևտրական պայմանագրերի և մաքսային սակագների հիման վրա։

6/ Գյուղի ավագները փոխվում են տարին մեկ

անգամ։ Յուրաքանչյուր գյուղի ընտրողներ, այս պաշտոնի համար ներկայացնում են երկու թեկնածու, որոնցից մեկը նշանակվում է գյուղի ավագ և անցնում է պաշտոնի, խորհրդի որոշմամբ և կառավարչի կամ տեղակալի հաստատումից հետո։

7/ Սամոսի իշխանությունը պետք է հետևի գիտության և արվեստի զարգացման, պետք է հոգա համընդհանուր գրագիտության մասին, և բարելավի ուսուցիչների և տարրական դպրոցների վիճակը։

Այն անձնավորությունները, որոնք զբաղվելու են դպրոցական ծախսումներով և իրացնելու են բարեգործական նպատակներով հատկացված գումարները, նշանակվելու են խորհրդի 4 անդամների հավանությամբ և հաստատվելու են կառավարչի կողմից։ Եթե նրանց կողմից գործադրված չարաշահումները բացահայտվեն ու հաստատվեն, ապա խորհրդի որոշմամբ նրանք հեռացվում են և փոխարենը նշանակվում են ուրիշները։

8/ Սամոսի իշխանապետության մայրաքաղաքում, կառավարչի անմիջական իշխանության ներքո գտնվելու է ոստիկանության պետը՝ իր 50 ոստիկաններով։ Այս ոստիկանության մի մասը, կրտսեր հրամանատարության ներքո բաժանվելու է կղզու 4 նահիյեների վրա։ Մնացած ոստիկանները մնալու են պետի տրամադրության տակ և անհրաժեշտության դեպքում ուղարկվելու են գյուղ, որպեսզի հանցավորներին ներկայացնեն դատարան։ Այս 50 ոստիկաններից բացի, Բյոլուք բաշիի տրամադրության տակ պետք է գտնվեն 50 վարձկան ժանդարմաներ, որոնք նշանակվելու են, զսպելու ավազակ տարրերին, կամ կանխելու կղզում առաջ եկած անախորժ դեպքերը։

9/ Նավագնացության համար անձնագրերի և փաստաթղթերի հանձնումը, ինչպես նաև օտար հպատակների ժամանման և Սամոս կղզում բնակվելու հարցը հիմնականում մտնում է կառավարչի պարտականու-

թյունների մեջ: Կառավարիչը և նրա տեղակալը պետք է աչալրջորեն հետևեն, որպեսզի բոլոր պարտավորությունները կատարվեն առանց որևէ խոչընդոտի և համաձայն կնքված պայմանագրի:

10/ Իշխանապետության մայրաքաղաքում ստեղծվելու է 5 հոգուց բաղկացած դատարան, որի կազմի մեջ ընդգրկվելու են նախագահը, երկու անդամները, քարտուղարը և մի փաստաբան՝ քրեական հանցագործությունների համար: Փաստաբանը և քարտուղարը իրավասու չեն դատ վարելու: Այս դատարանը, կայսրությունում գործող օրենքի հիման վրա, զբաղվելու է քաղաքացիական իրավունքի պաշտպանությամբ, քրեական հանցագործություններով և տալու է համապատասխան պատիժ: Դատարանի անդամները ընտրվում և նշանակվում են խորհրդի կողմից:

Դատարանի անդամները պետք է լինեն ազնիվ և լուրջ անձնավորություններ, կատարելապես վայելեն կառավարության վստահությունը և ժողովրդի հարգանքը, դատական գործերում լինեն անկողմնակալ, և անաչառ կերպով պաշտպանեն ճշմարտությունն ու արդարությունը: Այս պաշտոնին դատարանի անդամները ցմահ չեն նշանակվում:

Եթե իրենց պաշտոնավարության ընթացքում նրանք չեղվեն արդարադատությունից, անմիջապես կփոխարինվեն այլ անձնավորություններով: Դատարանում գրաված պաշտոնի համեմատ, ընդհանուր ժողովը նշանակում է բավարար ռոճիկ: Դատական գործերի համար պետք է մի հարմար վայրում լավ ամրացած բանտ ունենալ:

11/ Դատարանի անդամների, ոստիկանության պետի և քարտուղարի պաշտոնում, կառավարչի կողմից նշանակվում են այնպիսի անձնավորություններ, որոնք աչքի են ընկել իրենց հավատարմությամբ և ունակություններով: Այնուամենայնիվ, եթե նրանցից մեկը հա-

մարձակվի չեղվել իր պարտավորութիւններից, խորհուրդը կառավարչի գլխավորութիւմբ կամ ընդհանուր ժողովը, քննարկելով հարցը, որոշում է կայացնում ձայների մեծամասնութիւմբ, և պատժում մեղավորին՝ հեռացնելով պաշտոնից։ Այս պաշտոններում կարող են հաւասարապես նշանակվել թե՛ կղզու բնակչութիւնը, և թե՛ Օսմանյան կայսրութիւն մյուս հպատակները, միայն թե թեկնածուն լինի նվիրված և վստահելի անձնավորութիւն։

12/ Կարանտինի գործը կատարվում է կայսրութիւնում գործադրվող ընդհանուր կանոնադրութիւն համաձայն՝ միայն տեղի առողջապահութիւն վարչութիւն հսկողութիւմբ և կառավարչի անմիջական իրավասութիւն ներքո։

13/ Անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել երկրի բարեկեցութիւն և Սամոսի բնակչութիւն երջանկութիւն վրա, որոնք հանձնված են իմ փառավոր կայսրութիւն հովանավորութիւնը, և ջանք թափել, որպեսզի ոչ ոք, ոչ մի ժամանակ չչեղվի այս կանոնադրութիւն հիմնական դրույթներից, որը գալիս է փոխարինելու 1268 թվականի Ջուլկադե ամսվա հրամանագրին։

Դու, որ հանդիսանում ես կղզու կառավարիչը, գրավոր խնդրել էիր նորոգել նախկին հրամանը։ Ահա այն վերափոխվել է իմ կայսերական հրամանագրով, և ուժի մեջ է մտնում այսօրվանից[3]։

Գրված է 1278 թ. Ջուլկադե ամսի սկզբին
(1862, Ապրիլ)։

ՀՈՒՆԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՈՒՆԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ[1]

ԳԼՈՒԽ 1

ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1։ Կ. Պոլսի պատրիարքարանը թափուր մնալու դեպքում խառը ժողովի անդամները թեմերի հետ միատեղ, Կ. Պոլսի արքեպիսկոպոսների միջից որպես տեղապահ ընտրում են արժանավոր մի անձնավորություն։ Այնուհետև իրադրությունը տեղեկագրով ներկայացվում է Բարձրագույն դուռ, որտեղ կայսերական հրամանագրով հաստատվում է տեղապահի պաշտոնը և պատրիարքի ընտրության կարգը։

Հոդված 2։ Նախորդ հոդվածում նշված տեղեկագիրը հաստատվելուց հետո, Կ. Պոլսի պատրիարքի իրավասության տակ գտնվող բոլոր թեմերին ուղարկվում են նամակներ, որոնք պարունակում են եպիսկոպոսի աստիճան ունեցող բոլոր կղերականների անունները։ Այնուհետև թեմակալները թղթի վրա գրում են այն եպիսկոպոսների անունները, որոնք ստորև բերված հատկանիշներով աչքի են ընկնում իրենց արժանիքներով և առավելապես համապատասխանում են պատրիարքի աթոռին։ Այս նամակը վավերացվելուց հետո, ծրարով ուղարկվում

է Կ. Պոլիս [տեղապահին] 41 օրվա ընթացքում։

Բացի դրանից, ստորև բերված 28 թեմերի գրասենյակներում գրանցված բնակիչները նախընտրական ժողովում իրենց ներկայացուցիչները ունենալու համար, պետք է նշանակված օրը Կ. Պոլիս ուղարկեն հարմար աշխարհիկ մի անձնավորություն։

Հոդված 3։ Նույն ձևով, Կ. Պոլսի թեմերի ներկայացուցիչները մի թղթի վրա գրում են այն եպիսկոպոսների անունները, որոնք արժանի են պատրիարքի աթոռին, վավերացնում են և ընտրությունից հինգ օր առաջ դնում են այն քվեատուփի մեջ, ուր հավաքվում են նաև գավառից եկած քվեաթերթիկները։

Հոդված 4։ Պատրիարքի ընտրության համար սահմանված 41 օրից 5 օր առաջ, այս կանոնադրության հիման վրա, հրավիրատոմսերով բոլոր կղերականներին և աշխարհիկ ներկայացուցիչներին հայտնվում է ընդհանուր ժողովի դումարման օրը։ Այս նախընտրական ժողովին, բոլորի ներկայությունը պարտադիր է։ Նշանակված օրը, այն բանից հետո, երբ բոլոր հրավիրվածները ներկայանալով ցուցակագրվում են ժողովատեղիում, դռները փակվում են, քարտուղարը ժողովի երկու անդամների հետ միատեղ բացում է քվեատուփը և բոլոր պատգամավորների ներկայությամբ հաշվում քվեաթերթիկները։

Հոդված 5։ Քվեաթերթիկներում գրված բոլոր եպիսկոպոսների անունները, առանց հաշվի առնելու ձայների թիվը, հերթականությամբ մտցնում են ընտրվողների ցուցակի մեջ։

Հոդված 6։ Աշխարհիկ պատգամավորներից մի քանիսը կարող են առաջարկություն մտցնել, որպեսզի պատրիարքի աթոռին արժանի մի քանի եպիսկոպոսների անունները, որոնք չկան քվեաթերթիկներում, նույնպես մտցվեն այդ ցուցակի մեջ։ Այս առաջարկությունը ընդունելի կհամարվի այն դեպքում, եթե կրոնական ներկա-

յացուցիչների մեկ երրորդը հավանություն տա այդ թեկնածուներին։

Հոդված 7։ Այս կարգով, պատրիարքության աթոռի հավանական թեկնածուների անունները գրվում է առաջին ցուցակի մեջ, ստորագրվում և վավերացվում է տեղապահի, թեմակալների և խառը ժողովի պատգամավորների կողմից։

Հոդված 8։ Այն անձնավորությունը, որը պատրիարք է ընտրվելու, հանդիսանում է ոչ միայն իր համայնքի կրոնական առաջնորդը, այլև Օսմանյան կառավարության իր համայնքի քրիստոնյաների աշխարհիկ գործերին վերաբերող հրամանների կատարման միջնորդը։ Կրոնական և ազգային գործերում որևիցե մեկին պաշտոն տալու իրավունքը պատկանում է կրոնական և աշխարհիկ առաջնորդներին։ Այսուհանդերձ, Օսմանյան կառավարությունը իրեն իրավունք է վերապահում ընտրությունն չանցկացնել նախընտրական ցուցակում եղած որևիցե թեկնածուի նկատմամբ։ Ինչպես նշվեց նախորդ հոդվածում, ընտրությանը մասնակցող բոլոր թեկնածուների ցուցակը անմիջապես ուղարկվում է Բարձրագույն դուռ։ Եթե այս ցուցակում լինի այնպիսի մի անձնավորության անուն, որը քաղաքականապես պիտանի չէ պատրիարքի աթոռի համար, ապա Բարձրագույն դուռը 24 ժամվա ընթացքում, գրավոր հայտնելու է պատրիարքարանին, որպեսզի տվյալ անձնավորության անունը հանվի և նրա տեղը ընտրվի մեկ ուրիշը։

Հոդված 9։ Ինչպես նշվեց նախորդ հոդվածում, նախընտրական ցուցակը ստուգվում է Բարձրագույն դռնում և ապա հանձնվում ընդհանուր ժողովին։ Ընդհանուր ժողովի տեղապահը պաշտոնապես հայտնում է Բարձրագույն դռան կարծիքը։ Եթե ցուցակում հեռացված անձինք լինեն, ապա ըստ կարգի, նախաձեռնում են նորերի ընտրությանը։ Այնուհետև, ընդհանուր ժողովը

ցուցակում ընտրված թեկնածուներից գաղտնի քվեարկությամբ և ձայների մեծամասնությամբ ընտրում է երեք հոգի։

Հոդված 10։ Ներկաներից յուրաքանչյուրը, այսինքն՝ աշխարհիկ և կրոնական պատգամավորները ընտրություններում մեկ ձայն տալու իրավունք ունեն։

Հոդված 11։ Երեք թեկնածուները որոշվելուց հետո, տեղեկագիր է կազմվում և ժողովի կրոնական պատգամավորները նրանց հետ մեկտեղ գնում են եկեղեցի։ Այնուհետև այս երեք թեկնածուներից մեկը գաղտնի քվեարկությամբ և ձայների մեծամասնությամբ պատրիարք է ընտրվում, և վաղեմի սովորության համաձայն, բոլորի ներկայությամբ կրոնական արարողություն է կատարվում։

Հոդված 12։ Հավասար ձայների դեպքում, հարցը որոշվում է տեղապահի ձայնի առավելությամբ։

Հոդված 13։ Ինչպես նախորդ հոդվածում նշվեց, ընտրության ավարտից հետո, վաղեմի սովորության համաձայն, տեղեկագիր է կազմվում և ներկայացվում Բարձրագույն դուռ։ Նորընտիր պատրիարքը, Բարձրագույն դռան հրավերով, ներկայացվում է նորին մեծությունն փադիշահին, որտեղ և պաշտոնապես հաստատվում է իր պաշտոնում։ Այնուհետև, այն բանից հետո, երբ հաստատման մասին հայտարարվում է Բարձրագույն դռան կողմից, պատրիարքը, իր շքախումբով գնում է պատրիարքարան, որտեղ և տեղի է ունենում հանդիսավոր ծիսակատարությունը։

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1։ Այն անձնավորությունը, որը ներկայացվում է պատրիարքի աթոռի համար, պետք է լինի տարիքը առած եպիսկոպոսներից և առնվազն 7 տարի

պաշտոնավարած լինի առանց վարկաբեկման։

Հոդված 2։ Այն անձնավորությունը, որը ներկայացվում է պատրիարքի աթոռի համար, պետք է բարոյապես հաստատակամ լինի։ Իր կրթությամբ և գիտելիքներով հանդերձ, պետք է կատարելապես տիրապետի եկեղեցական օրենքներին, լինի կայուն՝ կրոնական համոզմունքներում և բարեխիղճ՝ աստվածաբանության սկըզբունքնրում։ Պատրիարքը, հանդիսանալով ուղղափառ եկեղեցու առաջնորդը և իր համայնքի հոգևոր հայրը, միևնույն ժամանակ փոխադարձ կապի մեջ է գտնվում նաև այլ ինքնուրույն ուղղափառ եկեղեցիների հետ և միշտ, ամենուրեք և բոլոր հանգամանքներում, եռանդուն կերպով հովանավորում ուղղափառ եկեղեցին։

Հոդված 3։ Պատրիարքը հանդիսանում է Արևելյան եկեղեցու հոգևոր առաջնորդը։ Դեռևս նորին մեծություն, սուլթան Ֆաթիհ Մեհմեդ խանը իր բարձր բերաթում, որը հետագայում հավանության արժանացավ և գործադրվեց մեծն սուլթանների կողմից, հատուկ արտոնություն չնորհելով պատրիարքին, լիազորություն տվեց բոլոր գործերում, ինչպես նաև նշանակեց միջնորդ Օսմանյան պետության հրամանների կատարման ասպարեզում։

Այսպիսով, նկատի ունենալով այս վաղեմի արտոնությունը, այն անձնավորությունը, որը ընտրվելու է պատրիարքի աթոռին, պետք է ծնունդից լինի Օսմանյան կայսրության հպատակ, կատարելապես վայելի նրա վստահությունը, գիտակ լինի օրենքներին և կանոններին և ունակություն ունենա ոչ միայն կրոնական գործերում, այլև ընդհանրապես։ Պատրիարքը պետք է պատվավոր անձնավորություն լինի և վայելի ամբողջ ազգի հարգանքը։

ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1։ Ընտրական ընդհանուր ժողովը բաղկացած է հոգևորականներից և աշխարհականներից։

Հոդված 2։ Ընդհանուր ժողովի հոգևոր անդամների կազմի մեջ մտնում են Սինոդի բոլոր անդամները և Երեգլիի թեմակալը, որը մասնավորապես հրավիրվում է վաղեմի սովորութիւնը պահպանելու համար։

Հոդված 3։ Ընտրական ընդհանուր ժողովի մեջ ընդգրկվում են հետևյալ աշխարհական անձինք։

1/ Պատրիարքութեան երեք բարձրաստիճան անձինք, որոնցից մեկը պետք է լինի լոկոֆեթե.

2/ Խառը ժողովի անդամները.

3/ Հարգարժան և փորձառու երեք անձնավորութիւններ, որոնք առաջին և երկրորդ կարգի քաղաքացիական բարձր աստիճաններ ունենան, «միրալայի» զինվորական աստիճան ունեցող երկու անձ, ինչպես նաև պետական ծառայութեան մեջ գտնվող երեք անձ.

4/ Սամոսի կառավարիչը կամ նրա տեղակալը.

5/ Վալախիայի, Մոլդավիայի, ինչպես նաև Սերբիայի էյալեթների կառավարիչների տեղակալները.

6/ Ջորս կարող և փորձառու անձինք.

7/ Հինդ վաճառական.

8/ Մեկ բանկատեր.

9/ Տաս հոգի հարգարժան արհեստավորներից.

10/ Երկու հոգի կ. Պոլսի և Բոսֆորի չրջակա բնակիչներից.

11/ Քսանութ անձինք, որոնք ընտրվելու են ներքոհիշյալ թեմերի քրիստոնյա բնակիչներից. Կեսարիա՝ Քուչադասը (Իգեյան ծովի ափին), Երեգլի՝ Կապուդաղը, Իզմիթը՝ Իզնիկի հետ, Կաղըքէօյը՝ Թարապիայի հետ միասեղ, Սելանիկը, Տրնովան, Էդիրնեն, Ամասիան, Ցանիան, Բուրսան, Մանաստիրը, Բոսնիան, Կրետեն, Տրապիզոնը, Ենիչեհիրը, Ֆիլիպպոլը (Պլովդիվ), Սիրեսը, Իզմիրը, Միտիլինը, Վառնան, Վիդինը, Սոֆիան, Քիոսը, Ուսքյուփը,

Սպարտան, Կաստամոնուն։

Պատրիարքի ընտրությանը մասնակցելու իրավունք ունեն միայն Օսմանյան կայսրության հպատակները։

ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 1։ Ա/ Այն անձնավորությունը, որը եպիսկոպոս է ձեռնադրվելու, պետք է լինի Օսմանյան կայսրության հպատակ և պետական, ազգային գործերում պաշտոնավարած՝ առանց վարկաբեկման։

Բ/ Եպիսկոպոս ձեռնադրվողը մինչև պատրիարքարանում և որևիցե թեմում ծառայության անցնելը, պետք է պարտադիր կերպով նախկին բնակավայրերից բնութագիր ներկայացնի իր լավ վարքի մասին։

Գ/ Կատարելապես տիրապետի կրոնական օրենքներին։

Դ/ Կրոնական գործերում բավականաչափ փորձ ունենալու համար, տվյալ հոգևորականը պետք է 5 տարի ծառայության մեջ գտնվի պատրիարքարանում և կամ որևիցե թեմում, հանդես բերելով կայունություն և հավատարմություն կրոնի նկատմամբ։

Ե/ Բացի հունարենից, պետք է տիրապետի թուրքերենին և ըստ նշանակման վայրին՝ սլավոնական լեզվին։

Հոդված 2։

Այսպիսով, եպիսկոպոսի աստիճան ունենալը վկայում է այն մասին, որ տվյալ անձնավորությունը իր կրոնական ուսումը ստացել է ուղղափառ եկեղեցում։ Եպիսկոպոսի վկայական չունեցողներին վկայական են տալիս այն դեպքում, եթե նրանք բարոյապես լինեն կայուն, աչքի ընկնեն իրենց լավ վարքով և կատարյալ կերպով տիրապետեն կրոնական օրենքներին։ Եթե որևիցե մեկը, իր կրոնական ուսումը արտասահմանում ստանալով

[եպիսկոպոսի] վկայական ձեռք բերի, ապա, նա հաստատում կստանա այն դեպքում, եթե Կ. Պոլսի հոգևոր դպրոցի ուսուցիչները հավանություն տան նրա կրոնական գիտելիքներին։ Իսկ նրանք, ովքեր վկայական չունեն, քննություն են հանձնում հոգևոր դպրոցի կանոններով։ Եթե տվյալ հոգևորականները վկայական չստանան, ապա, չեն կարող եպիսկոպոսի աստիճան ստանալու համար թեկնածու առաջադրվել։

Հոդված 3։ Այն անձնավորությունները, որոնք իրենց լավ վարքով և գիտելիքներով հեղինակություն են վայելում հոգևորականության չրջանում, կարող են եպիսկոպոսի աստիճան ստանալու համար թեկնածու առաջադրվել, եթե մինչ այդ քննություն հանձնեն նախորդ հոդվածի հիման վրա։ Պարտադիր չէ, որ այդպիսի անձնավորությունները 5 տարի պատրիարքարանում կամ որևիցե թեմում ծառայության մեջ գտնվեն։

Հոդված 4։ Եպիսկոպոսի պաշտոնը թափուր մնալու դեպքում, նորի ընտրությունը և նշանակումը կատարվում է վաղեմի սովորության համաձայն՝ թեմակալների ժողովի հավանությամբ։

Պատրիարքի ցուցումով, թեմակալների ժողովը կազմում է այն հոգևորականների ցուցակը, որոնք արժանի են եպիսկոպոսի տվյալ պաշտոնին։ Այնուհետև, այդ ցուցակից մի տեղի համար առանձնացնում են 3 հոգու, որոնք առավել արժանի են եպիսկոպոսի պաշտոնին և աչքի են ընկնում եկեղեցու հանդեպ իրենց ունեցած հավատարմությամբ։ Այնուհետև հոգևորականները գնում են եկեղեցի և ժամերգությունից հետո գաղտնի քվեարկությամբ այդ երեք հոգուց մեկին ընտրում են եպիսկոպոսի պաշտոնին։ Հավասար ձայների դեպքում, հարցը որոշվում է պատրիարքի ձայնի առավելությամբ։

Հոդված 5։ Որևիցե եպիսկոպոսի մահանալու դեպքում, իրողությունը պաշտոնապես հայտնվում է պատ-

րիարքարանին։ Եվ քանի այդ քաղաքի հոգևորականությունը և երևելի աշխարհականները դրավոր չեն հայտնել պատրիարքարանին, նոր եպիսկոպոս չեն կարող ընտրել։

Հոդված 6։ Եպիսկոպոսները, պատրիարքի նման, թեմի աթոռը զբաղեցնում են ցմահ։ Եկեղեցական կանոններով, եթե եպիսկոպոսները իրենց պաշտոնավարության ընթացքում դավաճանեն Օսմանյան կայսրության, կամ բռնություն գործադրեն բնակչության նկատմամբ և չարաշահեն օրենքը, չպետք է փոխադրվեն մի այլ պաշտոնի։ Կարևոր պատճառի առկայության դեպքում, այսինքն՝ բնակչության չատության և տվյալ շրջանի կարևորության նից ելնելով, եթե անհրաժեշտություն առաջանա փորձված եպիսկոպոսի նշանակման, ապա, հազվադեպ կիրառվող վաղեմի սովորության համաձայն, թեմակալները պատրիարքի հետ միատեղ ձայների մեծամասնությամբ ընտրում են 3 առավել հարմար եպիսկոպոսներ։ Այնուհետև, ըստ սովորության, գնում են եկեղեցի, որտեղ ձայների մեծամասնությամբ ընտրում են մեկին։ Ընտրությունից հետո հայտնում են իրադրությունը նորընտիր եպիսկոպոսին և հարցնում նրա կարծիքը։ Եթե հիշյալ եպիսկոպոսը ցանկություն չունենա փոխելու իր պաշտոնը, ապա նախկին երկու թեկնածուներից ընտրում են մեկին։ Եպիսկոպոսի պաշտոնավարության տեղափոխությունը մի այլ տեղ հնարավոր է միայն մեկ անգամ և այն էլ խիստ անհրաժեշտության դեպքում։ Եպիսկոպոսի ընտրությունը մի այլ պաշտոնի համար տեղի է ունենում միմիայն այս կանոնի 4-րդ հոդվածի հիման վրա։

Հոդված 7։ Եկեղեցու կանոնների համաձայն, եպիսկոպոսները ընդհանրապես բնակվում են իրենց նշանակված չրջանում, որտեղ կատարում են իրենց պարտականությունները և հոգում են քրիստոնյաների կրոնական պահանջմունքները։ Ցուրաքանչյուր չրջանի կանոնների համաձայն, եպիսկոպոսները ժամանակ առ ժամանակ,

անձամբ չրջում են իրենց թաղամասերում։

Քանի դեռ եպիսկոպոսների մոտ ծերունական տարիքի կամ լուրջ հիվանդության կապակցությամբ հիմնավորված պատճառաբանություն հանդես չի եկել, կամ կառավարության, պատրիարքության կողմից կարևոր գործով կանչված չի եղել Կ. Պոլիս, նրանք իրավունք չունեն որևիցե կարևոր հարցի լուծումը թողնելու իրենց տրամադրության տակ գտնվող մի այլ եպիսկոպոսի։

Հոդված 8։ Ինչպես պարզաբանվեց 6-րդ հոդվածում, եպիսկոպոսները, չնայած որ թեմի պաշտոնը զբաղեցնում են ցմահ, այնուհանդերձ, եթե տվյալ չրջանի քրիստոնյա բնակչության կողմից բողոք ներկայացվի, ապա հարևան եպիսկոպոսները, հետաքննելով պատճառները, աշխատում են կարգավորել իրավիճակը կամ հեռացման համար միջոցառումներ ձեռնարկում։ Եթե բողոքավորները չարունակեն դժգոհել և պահանջել, որ դատական քննություն կատարվի, ապա մեղադրվող եպիսկոպոսը կանչվում է Կ. Պոլիս։ Եթե ամբաստանությունը միայն կրոնական նշանակություն ունի, ապա նրան դատում են եկեղեցական օրենքներով՝ թեմակալների ժողովում, իսկ եթե ամբաստանությունը առնչվում է աշխարհիկ գործերի հետ, ապա քննության համար, պատրիարքը թեմակալների հետ միատեղ կազմում է խառը հանձնաժողով, որի կազմի մեջ մտնում են չորս կրոնական, և չորս աշխարհիկ անձեր։ Այս հանձնաժողովը, երկու կողմերի ցուցմունքների հիման վրա քննարկում է հարցը և վերջնական որոշումը հայտնում պատրիարքին։ Այնուհետև տվյալ գործը հայտնվում է Բարձրագույն դուռ և եպիսկոպոսը պատժվում է համաձայն Օսմանյան կայսրության օրենսդրության։ Եթե մեղադրանքը քրեական բնույթ է կրում, պատրիարքությունը նախ զրկում է եպիսկոպոսական աստիճանից, ապա, օրենքով պատժում։

Հոդված 9։ Համաձայն էյալեթների մեջլիսների

կանոնի, որը հաստատված է նորին վսեմություն սուլթանի կողմից, եպիսկոպոսները իրենց պաշտոնավարության ընթացքում, անձամբ մասնակցում են այդ մեջլիսների նիստերին։ Հիվանդության կամ չրջագայության ընթացքում, եպիսկոպոսը պարտավոր է կրոնավորներից մեկին նշանակել տեղապահ։ Նրա կողմից է նաև նշանակվում կազայի ժողովի կրոնական ներկայացուցիչը։

Հոդված 10։ Եպիսկոպոսները լիազորված չեն իրենց ունեցվածքը կտակելու։ Եպիսկոպոսի մահանալու դեպքում, թաղման անհրաժեշտ ծախսերը առանձնացվում են նրա ժառանգությունից։ Մնացած անշարժ և շարժական ունեցվածքը բաժանվում է 3 մասի։

Մի մասը հատկացվում է եպիսկոպոսի կալվածքի ծախսերի համար։ Այդ ունեցվածքի եկամուտի մեկ երրորդ մասը օգտագործվում է երկրի բարեկեցության համար։

Երկրորդ մասը հատկացվում է հանգուցյալի բարեկամներին։

Իսկ երրորդը երկու մասի է բաժանվում։ Մի մասը ծախսվում է ազգի բարօրության համար, իսկ մյուսը հատկացվում է Կ. Պոլսի պատրիարքության տարեկան ռոճիկների համար։ Այնուհանդերձ, այս պատրիարքության ռոճիկի համար առանձնացված գումարի մի մասն էլ ծախսվում է պատրիարքության ընդհանուր գոյության և ազգի բարօրության համար։ Իսկ դրա կատարման ընթացքում, անհրաժեշտ է պահպանել հողային և վաքուֆային օրենքները։

Հոդված 11։ Պաշտոնավարության մեջ չգտնվող պատրիարքի, թեմակալի կամ եպիսկոպոսի մահանալու դեպքում, հուղարկավորության, հոգեհանգիստի և այլ անհրաժեշտ ծախսերը առանձնացվում են նրանց ժառանգությունից։ Իսկ մնացածը հավասարապես բաժանվում է երեք մասի։ Մի մասը տրվում է հանգուցյալի կարիքավոր ազգականներին։ Երկրորդը հատկացվում է Կ. Պոլսի

պատրիարքության, ազգի բարօրության համար։ Իսկ երրորդ մասը ծախսվում է բարեգործական հաստատությունների համար։

Հոդված 12։ Պաշտոնավարության մեջ գտնվող պատրիարքի մահանալու դեպքում, ժառանգությունը նույնպես բաժանվում է 3 մասի։ Մի մասը հատկացվում է կ. Պոլսի պատրիարքությանը և կալվածների ծախսերի համար։ Երկրորդը հատկացվում է հանգուցյալի կարիքավոր բարեկամներին, իսկ երրորդը՝ հավասարապես բաժանվում է պատրիարքության անհրաժեշտ ծախսերի և համայնքի բարեգործական հաստատությունների համար։

Հոդված 13։ Թեմային առաջնորդներից որևէ մեկի մահանալու դեպքում, ուղղափառ կրոնին հետևող չորս երևելի անձինք, չորս կրոնավորների հետ միասեղ, անմիջապես կազմում են հանգուցյալի ժառանգության ցուցակը։ Այնուհետև, այն վավերացնելուց հետո ուղարկում են կ. Պոլսի պատրիարքարան։ Իսկ հուղարկավորությունը և հոգեհանգիստը կատարվում է եկեղեցական սովորություններով։

Հոդված 14։ Այն հոգևորականները, որոնք գտնվելով Օսմանյան կայսրության տարբեր վայրերում, ցուցաբերում են լավ հատկանիշներ և արժանի են եպիսկոպոսի աստիճանի, նրանց անունները գրանցվում են հատուկ ցուցակի մեջ, որպեսզի անհրաժեշտության դեպքում, ներկայանան պատրիարքարան։ Հատուկ ցուցակում գրանցվելուց հետո, աստիճանաբար ստուգվում են այդ հոգևորականների կրոնական գիտելիքները և նախորդ հոդվածների հիման վրա քննություն են հանձնում կ. Պոլսի հոգևոր ուսումնարաններում։

ՍԻՆՈԴԻ ԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 1։ Վաղեմի սովորութեան համաձայն, Սինոդը բաղկացած է լինում 12 թեմերից՝ կ. Պոլսի պատրիարքի գլխավորութեամբ, որի հոգևոր իշխանութիւնը տարածվում է կ. Պոլսի հունական պատրիարքութեանը ենթարկվող բոլոր քրիստոնյաների վրա։

Հիշյալ Սինոդը, համաձայն կանոնադրութեան և եկեղեցական օրենքներին, ղեկավարում է ամբողջ ազգի կրոնական գործերը, ինչպես նաև նշանակում և փոխում է եպիսկոպոսներին, ղեկավարում է բոլոր վանքերը և ազգային դպրոցները, ուշադիր հետևում է, որպեսզի ոչ ոք չխախտի ուղղափառ քրիստոնյաների դավանանքը և բռնութիւն չգործադրի կրոնը փոխելու համար։

Սինոդը նշանակում և կ. Պոլիս կամ կայսրութեան նահանգներն է ուղարկում պատրաստված կրոնավորների, որպեսզի նրանք իրենց քարոզներով տարածեն սուրբ Աստվածաշնչի գաղափարները քրիստոնյաների շրջանում։ Բացի դրանից պատրաստում և հրապարակում է կրոնական գրքեր հոգևորականների օգտագործման և ընդհանրապես քրիստոնյաների ընթերցանութեան համար։ Այս կապակցութեամբ, պատրիարքարանում պետք է գրտնվի մի տպարան, որտեղ բացի կրոնական գրքերից, ընդհանուր լուսավորութեան նախարարութեան համաձայնութեամբ հրատարակվելու են նաև դասագրքեր և զանազան գրականութիւն։

Իր պարտականութիւնները կատարելիս, Սինոդը պետք է փոխադարձ կապի մեջ գտնվի գավառային եպիսկոպոսների հետ։

Կոմմնակի ոչ մեկը իրավունք չունի միջամտելու Սինոդի հոգևոր գործերին։

Հոդված 2։ Եպիսկոպոսները իրավունք չունեն կ. Պոլսում քեթխուդա պահելու։ Միևնույն ժամանակ վերացվում են թեմերին չնորհված մի շարք արտոնութիւնները, ինչպես նաև կ. Պոլսի նրանց կացարանները։

Հոդված 3։ Այն հոգևորականները որոնք եպիսկոպոսի աստիճան են ստանում, կարող են Սինոդի անդամ նշանակվել, իսկ 5 տարվա ծառայությունից հետո էլ՝ թեմի առաջնորդ։ Պաշտոնավարությունը կարող է փոխել միայն 3 տարվա ծառայությունից հետո։

Այն եպիսկոպոսները, որոնք հրավիրվում են որպես Սինոդի անդամ, պետք է չտապ ժամանեն կ. Պոլիս։ Բացառություն կարող են կազմել տարեց հասակ ունեցողները։

Հոդված 4։ Այն եպիսկոպոսները, որոնք Սինոդի անդամ նշանակվելով 50,000-ից ցածր եկամուտ ունեն, կ. Պոլիս ժամանելով, նրանց անհրաժեշտ ծախսերի համար հատկացվում է բավականաչափ գումար։

Հոդված 5։ Պատրիարքը Սինոդի անդամների հետ միատեղ բոլոր թեմերին երեք խմբերի է բաժանում և կազմում է մի ցուցակ, ընդգրկելով նրա մեջ յուրաքանչյուր խմբի մեկ երրորդ մասը։ Այնուհետև յուրաքանչյուր տարվա վերջում, երեք ամիս չուտ, պատրիարքը յուրաքանչյուր խմբից առանձնացնում է երկու հոգևորականի, որպեսզի փոխանակություն կատարի Սինոդի այն անդամների հետ, որոնց ծառայության ժամկետը լրացել է։

Սինոդի նոր անդամները պարտավոր են, առաջին իսկ հրավերով անցնել իրենց պաշտոնին։

Հոդված 6։ Մինչև ծառայության երկու տարվա ժամկետի լրանալը, եթե Սինոդի անդամներից մեկը վախճանվի, ապա, հաջորդականությունը կատարվելու է հետևյալ ձևով։

Եթե Սինոդի անդամը վախճանվում է իր ծառայության առաջին տարում, ապա, ըստ կարգի, երկու տարով նշանակվում է ցուցակում նշված հոգևորականը։ Իսկ եթե Սինոդի անդամը վախճանվի իր ծառայության երկրորդ տարում, ապա, նրա տեղ նույնպես նշանակվում է ցուցակում նշված անձնավորությունը, որը հանգուցյա-

լի ժամկետից բացի ծառայում է նաև երկու տարի։ Ինչ վերաբերում է Սինոդի կազմին, ապա, առաջին տարվա համար, պատրիարքը միտրոպոլիտների հետ միատեղ ժամանակավոր ժողովականների կազմից, գաղտնի քվեարկությամբ ընտրում է 3 եպիսկոպոսների և երեքական անդամներ՝ թեմերի երեք խմբերից։

Հոդված 7։ Հատուկ հանձնաժողով կազմելուց հետո, Սինոդի անդամները ազատվում են իրենց պարտականություններից, ինչպես նաև եկեղեցու և ազգային գործերին վերաբերող պարտքերի վճարումից։

Հոդված 8։ Առանց պատրիարքի մասնակցության, Սինոդի կողմից ընդունված որոշումները չեն կարող օրինավոր համարվել։ Օրինավոր չեն կարող համարվել նաև առանց Սինոդի անդամների մասնակցության, պատրիարքի ընդունած որոշումները։

Պատրիարքը պարտավոր է հաստատել և կիրառել կյանքում այն որոշումները, որոնք ընդունված են Սինոդի անդամների ձայների մեծամասնությամբ։

Հոդված 9։ Սինոդի բոլոր անդամները, իրենց ծառայության ժամկետը ավարտելով, պետք է հեռանան Կ. Պոլսից։ Անհրաժեշտության դեպքում, Սինոդի գիտությամբ կարող է որոշակի ժամկետ նշանակվել որևիցե եպիսկոպոսի մնալու մասին, այդ մասին հաղորդելով Բարձրագույն դուռ։ Իհարկե, տվյալ եպիսկոպոսը հետագայում չի կարող պաշտոնավարել և մասնակցել Սինոդի նիստերին։

Հոդված 10։ Թեմակալներին չի թույլատրվում մեկնել Կ. Պոլիս առանց պատրիարքի թույլտվության կամ Սինոդի գիտության։

Հոդված 11։ Սինոդը կազմվում է այն ժամանակ, երբ նորին մեծություն փադիշահը հաստատի ժամանակավոր ազգային ժողովի կողմից ընդունված կանոնադրությունը։ Իսկ Սինոդի անդամները պաշտոնավարելու

են երկու տարի ժամկետով՝ իրենց աշխատանքը սկսելով ամենամոտ տոնական օրերին։

Հոդված 12։

Եթե պատրիարքը չեղվի իր հոգևոր պարտականություններից, Սինոդը երկու անգամ պարտադրում է նրան, որպեսզի ճիշտ ուղիով ընթանա։ Համառության դեպքում Սինոդը խառը ժողովի անդամների հետ երրորդ անգամ զգուշացնում է պատրիարքին։ Եթե պատրիարքը չարունակի ընդդիմանալ, ապա նրանք կարող են դիմել Բարձրագույն դուռ և պահանջել պատրիարքի հրաժարականը։

Եթե պատրիարքը չեղումներ թույլ տա աշխարհիկ գործերում, ապա, առաջին հերթին նրան զգուշացնում է խառը ժողովը, իսկ անհրաժեշտ միջոցառումներ է ձեռնարկում Սինոդի անդամների հետ միատեղ։

Պատրիարքին պաշտոնավարությունից հեռացումը որոշվում է խառը ժողովի և Սինոդի անդամների երկու երրորդ մասի հավանությամբ։

Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՎ ՍԻՆՈԴԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա/ Պատրիարքը հանդիսանում է բոլոր այն հոգևորականների առաջնորդը, որոնք ենթարկվում են Կ. Պոլսի պատրիարքությանը։ Նրա հարաբերությունը հոգևորականների հետ պետք է լինի անկեղծ և հավասար հիմքերի վրա։

Բ/ Երբ հոգևորականներից մեկը չեղվի իր պարտականություններից, ապա, պատրիարքը Սինոդի անդամների հետ միատեղ պետք է աշխատեն ճիշտ ուղու բերել նրան։

Գ/ Պատրիարքը և Սինոդի անդամները պետք է աչալուրջ լինեն կղերականների գործունեության նկատ-

մամբ: Նրանք պետք է խրախուսեն նրանց, որոնք բարեխղճորեն կատարում են իրենց պարտականությունները և, ընդհակառակը, եթե որևէ մեկը խախտում է եկեղեցու կանոնները, նրան պետք է հանդիմանեն և պատժեն, իսկ անհրաժեշտության դեպքում հեռացնեն պաշտոնից:

Դ/ Պատրիարքը առանց բացառության պետք է սիրալիր և հարգալից լինի Սինոդի բոլոր անդամների հետ:

Ե/ Պատրիարքը, բարի և ազնիվ անձնավորություն լինելով հանդերձ, պետք է Սինոդի նիստերի ժամանակ լինի արդարամիտ և ճշմարտացի լուծում տա օրվա հարցերին:

Զ/ Պատրիարքը Սինոդի անդամների հետ միատեղ պետք է ամեն ջանք գործադրի, որպեսզի անաչառորեն պաշտպանի եկեղեցու և ազգի շահերը:

Է/ Բոլոր դեպքերում, Սինոդը իր նիստերը գումարելու է պատրիարքարանի շենքում: Պատրիարքը արտակարգ նիստերի համար պետք է հատուկ սենյակ հատկացնի նաև Սինոդի առանձին անդամներին:

Հոդված 1: Սինոդի անդամները բոլոր դեպքերում պետք է հարգեն պատրիարքին, լսեն նրա խրատները և հնազանդորեն կատարեն նրա հանձնարարությունները: Թե՛ նիստերի ժամանակ, և թե՛ առօրյա կյանքում, Սինոդի անդամները պետք է հարգալից լինեն և վարկաբեկիչ խոսքեր չօգտագործեն պատրիարքի հասցեին:

Հոդված 2: Եթե եպիսկոպոսներից մեկին անհրաժեշտ լինի այցելության մեկնել իր բարեկամներին, այդ մասին նա հայտնելու է պատրիարքին և խնդրելու է նրա թույլտվությունը: Նրանք, ովքեր մեկնում են առանց թույլտվության, առաջին անգամ զգուշացվում են պատրիարքի կողմից: Կրկնվելու դեպքում, պատրիարքը նկատողություն է անում Սինոդի նիստում: Իսկ երրորդ անգամ ձեռք են առնվում անհրաժեշտ միջոցներ:

Հոդված 3։ Եպիսկոպոսները տարբեր վայրերում չպետք է նսեմացնեն պատրիարքի հեղինակությունը, քննադատեն նրա թերությունները և անվայել խոսքեր օգտագործեն նրա հասցեին։

Նրանց, ովքեր կմահարձակվեն նման վերաբերմունք ցույց տալ, առաջին անգամ պատրիարքը զգուշացնում է, իսկ կրկնվելու դեպքում նկատողություն է անում Սինոդի նիստում։ Իսկ անհնազանդությունը եթե չարունակվի, ապա միջոցառումներ են ձեռնարկվում պատժելու համար։

Հոդված 4։ Առանց պատրիարքի թույլտվության, ոչ մի եպիսկոպոսի իրավունք չի տրվում այցելություն տալու մի այլ եպիսկոպոսի և այնտեղ 15 օրից ավելի մնալու։ Անհրաժեշտության դեպքում, գործերը ավարտելու համար կարող է տվյալ էյալեթի սանջաքում մի քանի օր մնալ, այդ մասին հայտնելով Կ. Պոլսի պատրիարքությանը։

Հոդված 5։ Ամեն մի հարց լուծվելու է պատրիարքի մասնակցությամբ և Սինոդի անդամների ձայների մեծամասնությամբ։ Ձայների հավասարության դեպքում, հարցը որոշվելու է պատրիարքի ձայնի առավելությամբ։ Սինոդի անդամները, անկախ իրենց հոգևոր աստիճանից, հավասար իրավունք ունեն։

Հոդված 6։ Սինոդի նիստերում, պատրիարքը պետք է ուշադրության կենտրոնում պահի անդամների ցուցմունքներն ու կարծիքը և նրանց նկատմամբ չկիրառի անվայել խոսքեր։ Նույն ձևով էլ, Սինոդի անդամները պիտի հարգեն պատրիարքին։

Հոդված 7։ Պատրիարքը Սինոդի անդամների հետ միատեղ երկու հոգևորականների նշանակում է առաջին և երկրորդ քարտուղարների պաշտոնին։ Առաջին քարտուղարը և նրա տեղակալը հանդիսացող երկրորդ քարտուղարը, արձանագրություններ են կազմում, պահում են

փաստաթղթերը և զեկուցում են Սինոդի նիստերում։ Քարտուղարները չեն կարող մասնակցել քվեարկությանը և առանց թույլտվության չեն կարող մասնակցել որևիցե հարցի քննարկմանը։ Բոլոր թղթակցությունները կարդացվում են առաջին քարտուղարի կողմից։

Վաղեմի սովորության համաձայն, քարտուղարը առաջ քաշվելու և եպիսկոպոս ընտրվելու համար պետք է տվյալ պաշտոնում ծառայի 5 տարի, իսկ երկրորդ քարտուղարը՝ 7 տարի։

Հոդված 8։ Սինոդը չաբաթը երեք անգամ նիստ է գումարում և իր որոշումներն ուղարկում է Բարձրագույն դուռ։ Բոլոր փաստաթղթերը կազմված են լինելու 6 օրինակից և վավերացվելու են Սինոդի 6 անդամների կողմից։ Այդ փաստաթղթերը հանձնվում են տևապես կ. Պոլսում գտնվող Սինոդի վեց անդամներին։ Յուրաքանչյուր փաստաթղթի հանձնումը գրանցվում է մատյանում՝ Սինոդի անդամի ստորագրությամբ։ Կնիքի բանալին պահվելու է պատրիարքի մոտ։

Հոդված 9։ Թեմերի առաջնորդ հանդիսացող եպիսկոպոսները իրավունք չունեն կ. Պոլսում մնալու երկու ամսից ավելի։ կ. Պոլսում գտնվելու ժամանակ, նրանք իրենց հոգևոր պարտականությունները կատարելու են նշանակված եկեղեցում։

Հոդված 10։ Թեմի այն առաջնորդները, որոնք հիվանդության պատճառով կամ գործի անհրաժեշտությունից ելնելով, եթե որոշ ժամանակ գտնվեն կ. Պոլսում, իրենց եկեղեցական նստավայրում իրավունք չունեն ժողով գումարելու։ Նրանք այլ եպիսկոպոսների նման կարող են իրենց հոգևոր պարտականությունը կատարել և իրենց ժամկետը լրանալու պես անմիջապես մեկնել իրենց թեմերը։

Կարևոր գործի կապակցությամբ, թեմերի առաջնորդներին եթե անհրաժեշտություն լինի կ. Պոլիս գալու,

պահանջվում է պատրիարքի և Սինոդի թույլտվությունը։ Եթէ թեմակալների կ. Պոլսում գտնվելը հակասի եկեղեցական գործերին, ապա, առանց ժամկետը երկարացնելու, նրանց անմիջապես ուղարկում են իրենց նստավայրը։

Հոդված 11։ Պատրիարքը Սինոդի անդամների հետ միատեղ նշանակում է համապատասխան ռոճիկ կարիքավոր պաշտոնաթող թեմակալներին և եպիսկոպոսներին։ Այն եպիսկոպոսները որոնք պաշտոնաթող են լինում իրենց ցանկությամբ, կարող են պատրիարքի և Սինոդի դիտողությամբ, իրենց համար ցանկացած բնակավայրը ընտրել։ Այսուհանդերձ, 8-րդ հոդվածի հիման վրա, եթե պաշտոնից հեռացված եպիսկոպոսի հանցանքը հոգևոր գործերին է վերաբերում, ապա, նրա նստավայրը որոշվում է պատրիարքի և Սինոդի կողմից, իսկ եթե հանցանքը առնչվում է աշխարհիկ գործերի հետ, ապա, նստավայրը նշանակվում է Բարձրագույն դռան և պատրիարքության որոշմամբ։

Հոդված 12։ Պատրիարքը Սինոդի անդամների հետ միատեղ, կրթված հոգևորականներից կազմում է մի հանձնաժողով, որը հետևելու է հոգևորականների վարքին և ուսումին։

Հոդված 13։ Թե՛ կ. Պոլսում, և թե՛ բոլոր այն գավառներում, որտեղ եպիսկոպոսներ կան, պետք է կազմվեն հոգևոր հանձնաժողովներ։

Հոդված 14։ Բոլոր եպիսկոպոսները պետք է հերթականությամբ հաճախեն իրենց տրամադրության տակ գտնվող եկեղեցիները և քարոզ կարդան։ Իր նստավայրում եպիսկոպոսը նշանակում է նաև քարոզիչներ։ Մեծ թեմերում գոյություն է ունենալու հոգևոր ուսումնարաններ, որոնց ծախսերը գանձվելու են քրիստոնյա բնակչությունից։ Այդ ուսումնարաններում, սովորելու են հատկապես քահանան, զավակները և նրանք ովքեր ցանկություն ունեն հոգևոր ուսման։ Այստեղ, կիսագրագետ

քահանաները պետք է խորացնեն իրենց գիտելիքները։

Խելացի և ընդունակ սովորողները, որոնք կցանկանան չարունակել ուսումը, կարող են եպիսկոպոսի գիտությամբ, ընդունվել Կ. Պոլսի ուսումնարանը։

Հոդված 15։ Թեմերի և գավառային երեսելի անձանց ջանքերով, պետք է սովորողներից ընտրվեն առավել կարողները, որպեսզի իրենց ուսումը չարունակեն Կ. Պոլսում։ Այս կապակցությամբ, պատրիարքը պետք է հաճախակի նամակներ ուղարկի և տա անհրաժեշտ ցուցմունքներ։

Հոդված 16։ Սինոդը պետք է առանձին դրամարկղ ունենա՝ հոգալու համար թեմային դպրոցների մանր ծախսերը։ Այդ գումարը ստացվելու է խառը ժողովի դրամարկղից։

Հոդված 17։ Գույությունն ունեցող օրենքի հիման վրա, քրիստոնեական վանքերը պետք է գտնվեն Կ. Պոլսի պատրիարքի կամ թեմային առաջնորդների տրամադրության տակ։ Վաղեմի սովորության համաձայն, վանքերը կառավարվելու են հատուկ կանոնադրությամբ։

Հոդված 18։ Այն բողոքները, որոնք պատրիարքարան են ներկայացվում բուլղար համայնքի կողմից, պետք է քննարկվեն Սինոդի նիստերում և ընդունվեն համապատասխան որոշումներ։

Հոդված 19։ Պատրիարքը, Սինոդի և խառը ժողովի անդամները պետք է ջանան աղքատ և որբ երեխաներին ուսում տալ և որբանոցներ կառուցել։

Հոդված 20։ Մշտապես ուշադրության կենտրոնում պետք է լինի Կ. Պոլսի ազգային հիվանդանոցը, Ֆեների[2] դպրոցը և գավառային դպրոցները։ Ինչպես նաև բարեգործական այլ հաստատությունները։ Ուսման ծրագիրը ամեն տեղ պետք է նույնանման լինի։

Հոդված 21։ Պատրիարքարանում պահվող կրոնական տարազները և եկեղեցական արժեքավոր իրերը պետք

է գրանցված լինեն մատյանում, և գտնվեն մի պահակի և Սինոդի անդամներից մեկի հսկողության ներքո։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՌԸ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1։ Մշտական խառը ժողովը բաղկացած է 4 եպիսկոպոսներից և 8 աշխատակիցներից, ընդամենը 12 հոգի։ Պատրիարքի գրավոր նշանակմամբ, 4 եպիսկոպոսներից մեկը նախագահում է խառը ժողովում։ Պատրիարքը կարող է ներկա գտնվել նիստերին թե՛ հրավերով, թե՛ առանց հրավերի։ Այսուհանդերձ, կարևոր հարցեր լուծելու կապակցությամբ, նրա ներկայությունը և նախագահությունը անհրաժեշտ է։ Ժողովը ունենալու է երկու քարտուղարներ (մեկը քարտուղար, իսկ մյուսը՝ տեղակալ), որոնք տիրապետելու են հունարեն, թուրքերեն, ինչպես նաև բուլղարերեն և ֆրանսերեն լեզուներին։

Հոդված 2։ Խառը ժողովի անդամները պաշտոնավարում են երկու տարի, իսկ նրա կազմը կիսով չափ նորացվում է յուրաքանչյուր տարի։

Հոդված 3։ Խառը ժողովի չորս եպիսկոպոսները ընտրվում են պատրիարքի և Սինոդի կողմից՝ Սինոդի անդամների կազմից։

Հոդված 4։ Խառը ժողովի աշխարհիկ անդամների ընտրությունը կատարվում է հետևյալ ձևով։ Ազգի երևելիներից ներկայացուցիչներ են ընտրում հետևյալ կարգով. երկու թեկնածուներ Ֆեների և Ջուբալիի թաղամասերից։ Երկուսը՝ Լոճայից, Յալըինուսից և Աքսթիփորտից, մեկը՝ Ալթը մերմերից, երկուսը՝ Բելգրադի և Սամաթիայի թաղամասերից՝ մեկը՝ Էդիրնե-կապուի թաղամասից, Սալմաթովրուկից, Էյրի-կապուից, Թուփ-կապուից։ Մեկական՝ Վալանկայի և Խաս-Քէօյի թաղամասից, երկուսը՝ Թաթավլայից, երկուսը՝ Բեյօղլու թաղամասից,

երկուսը՝ Գալաթայից, մեկը՝ Օրթաքէօյից, մեկը՝ Բեշիկթաշից, երկուսը՝ Կուրուչեշմե, Արնաուտ քէօյ և Բեբեկ թաղամասերից, մեկը՝ Բոյաջը-քէօյից, երկուսը Ստենյայից և Ենիքէօյից։

Նշանակված օրը, հիշյալ թաղամասերի ներկայացուցիչները հավաքվում են պատրիարքարանում։ Պատրիարքարանը տեղյակ է պահում նաև տվյալ թաղամասերի բնակիչներին։

Խառը ժողովը և Սինոդը համատեղ նիստ են գումարում՝ որոշելու համար յուրաքանչյուր ներկայացուցչի արժանիքները և հարմարագույն ներկայացուցիչների անունները դրանցելու ցուցակի մեջ։

Այնուհետև գաղտնի քվեարկությամբ և ձայների մեծամասնությամբ ընտրում են խառը ժողովի անդամներին։

Հոդված 5։ Ընտրությունների ավարտից հետո, պատրիարքը հաստատման համար խառը ժողովի նորընտիր անդամների ցուցակը ներկայացնում է Բարձրագույն դուռ։

Ընտրությունները հեշտացնելու՝ նպատակով, ձայների մեծամասնությամբ մեկ անգամ ընտրվում են աշխարհիկ թեկնածուների այն մասը, որոնք առաջադրվել են կ. Պոլսի բնակիչների կողմից, իսկ տարվա վերջին նրանց փոխարեն նշանակվում են մնացած ներկայացուցիչները։

Հոդված 6։

Այն դրույթը, որ «խառը ժողովի անդամները միայն երկու տարով կարող են պաշտոնավարել», չի տարածվում ժողովի հոգևոր անդամների վրա, քանի որ նրանց ծառայության ժամկետը վերջանալուց հետո, Սինոդը փոխարինում է նրանց այլ հոգևորականներով։

Հոդված 7։ Խառը ժողովի անդամները, իրենց ծառայության ժամկետը լրանալուց հետո, չեն կարող վերընտրվել՝ մինչև որ երկու տարի չանցնի։

Հոդված 8։ Խառը ժողովի անդամները պետք է լինեն Օսմանյան կայսրության հպատակ, բնակվեն Կ. Պոլսում, աչքի ընկնեն իրենց լավ արժանիքներով, բավականաչափ փորձ ունենան ազգային գործերում, և վայելեն կառավարության վստահությունը։ Անդամների տարիքը պետք է 30-ից բարձր լինի։

Հոդված 9։ Խառը ժողովի անդամները, իրենց երկու տարվա ծառայությունը չլրացրած, չեն կարող պաշտոնաթող լինել առանց հիմնավորված պատճառաբանության։

Հոդված 10։ Եթե խառը ժողովի անդամները, հիմնավորված պատճառաբանությամբ կամ մահվան հետևանքով ստիպված են պաշտոնաթող լինել, ապա պատրիարքը, Սինոդը եւ խառը ժողովի անդամները համատեղ ընտրում են նորը և հաստատման համար դիմում Բարձրագույն դուռ։ Նոր անդամները իրավունք ունեն վերընտրվելու հաջորդ ընտրական փուլում։

Հոդված 11։ Խառը ժողովի անդամներից ոչ մեկին չի թույլատրվում երկու ամսից ավելի արձակուրդ գնալու։ Երկու ամսից ավելի բացակայելու դեպքում, վաղեմի սովորության համաձայն, նրա տեղ ընտրվում է նորը, որի հաստատման համար պետք է դիմել Բարձրագույն դուռ։

Հոդված 12։ Յուրաքանչյուր անդամ պարտավոր է նշանակված օրը ներկա լինել ժողովում։ Մեկ ամսից ավելի բացակայելու դեպքում, պետք է ժողովի նախագահին հայտնի բացակայության պատճառը։ Առանց նախագահի գիտության, մեկ ամսից ավելի բացակայելու դեպքում, 10-րդ հոդվածի հիման վրա նա պաշտոնաթող է լինում և նրա տեղ ընտրում են նորը։

Հոդված 13։ Եթե ժողովի եպիսկոպոսներից մեկի նկատմամբ, չարաշահումների կամ հանցագործության հետևանքով դատական գործ հարուցվի, ապա նրան դատում են եպիսկոպոսների վերաբերյալ կանոնադրության

8-րդ հոդվածի հիման վրա։ Իսկ եթե մեղավորը աշխարհիկ անդամներից է, ապա, դատական գործը տեղի է ունենում կայսրության քրեական օրենքի հիման վրա, և որոշումը ի կատար է ածվում Բարձրագույն դուռան հավանությամբ։

Հոդված 14։ Խառը ժողովի առաջին քարտուղարի համար պատրիարքարանում նշանակվելու է առանձին գրասենյակ, որտեղ նշանակված օրերին տեղի են ունենալու նիստերը։

Հոդված 15։ Ժողովի աշխարհիկ անդամները պաշտոնավարելու են առանց ռոճիկի։

ՄՇՏԱԿԱՆ ԽԱՌԸ ԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1։ Մշտական խառը ժողովի անդամները նիստ են գումարում չաբաթը երկու անգամ։

Հոդված 2։ Ժողովին հասցեագրված բոլոր թղթակցությունները քննարկվում են հերթականությամբ, բացառություն կարող են կազմել հույժ կարևոր հարցերը։

Հոդված 3։ Խառը ժողովը պետք է հետևի ազգային դպրոցների, հիվանդանոցների և այլ բարեգործական հաստատությունների բնականոն ընթացքին։ Հսկի կ. Պոլսում և կ. Պոլսից դուրս գտնվող եկեղեցիների և վանքերի ծախսերին և եկամուտներին։ Զբաղվի կտակների և նվիրատվության գործերով։ Քննության ենթարկի այն քաղաքացիական գործերը, որոնք Բարձրագույն դուռան կողմից ներկայացվելու են պատրիարքության։ Եթե վաքուֆային, հողային և կամ հասարակական ունեցվածքի վերաբերող որևիցե հարց առաջանա, ապա, նման հարցերը քննվելու են պետության կողմից նշանակված դատարաններում և հանձնաժողովներում։

Հոդված 4։ Եթե որևէ գավառի քրիստոնյա բը-

նակչության կողմից աչխարհիկ գործերով հայց ներկայացվի տեղի եպիսկոպոսի դեմ, ապա, հարցը լուծվելու է եպիսկոպոսների ընտրության վերաբերյալ 8-րդ հոդվածի հիման վրա։

Հոդված 5։ Խառը ժողովը, պատրիարքի գիտության և հավանության, ազգային դպրոցների և այլ բարեգործական հաստատությունների կառավարման համար նշանակում է կառավարիչներ, որոնք պետք է լինեն տվյալ պաշտոնին արժանի քրիստոնյաներ և Օսմանյան հպատակներ։

Հոդված 6։ Այս կառավարիչների ընթացիկ հաչիվները ստուգվում են խառը ժողովի կողմից՝ տարին մեկ անգամ։ Ցուրաքանչյուր տարվա մուտքն ու ծախսումները գրանցվելու են առանձին մատյանի մեջ՝ առաջին քարտուղարի կողմից։

Հոդված 7։ Ցուրաքանչյուր տարվա վերջին, երկու նորընտիր անդամներ ստուգում են դրամարկղից վճարված գումարների մուրհակները և հաչվետվություն են տալիս խառը ժողովի նիստում։ Այնուհետև բոլոր մուրհակները լցնելով տոպրակի մեջ, կնքում են և պահելու համար հանձնում ժողովի արխիվին։

Հոդված 8։ Խառը ժողովը դպրոցական գրասենյակի դրամարկղի համար նշանակում է գնացուցակ և այն հաստատման համար ներկայացնում Բարձրագույն դուռ։ Հարկերի գանձումը գտնվելու է մեկ վստահված անձի ձեռքին, որը տվյալ պաշտոնին նշանակվում է երկու տարին մեկ անգամ՝ խառը ժողովի կողմից։ Գանձապահը, առանց ժողովի գրավոր թույլտվության, իրավունք չունի ոչ մի ղուրուշ վճարելու։ Գանձապահը, առաջին քարտուղարը և մյուս ծառայողները նշանակվում և նորացվում են խառը ժողովի կողմից։

Հոդված 9։ Ժողովը օրինավոր է ճանաչվում անդամների երկու-երրորդի ներկայության դեպքում։ Բոլոր

հարցերը վճռվում են ձայների մեծամասնությամբ։ Ձայների հավասարության դեպքում, հարցը որոշվում է նախագահի կարծիքով։

Հոդված 10։ Խառը ժողովը բաժանվում է երեք խմբերի։ Մի խումբը կազմվում է եպիսկոպոսների չորս անդամներից, իսկ մյուս երկու խմբերը՝ աշխարհիկ անդամներից։ Այս երեք խմբերն էլ օգտագործում են մի կնիք, որի բանալին գտնվելու է նախագահի մոտ։ Կտակներին, վաքուֆներին, եկեղեցիներին, և ազգային այլ պարտքերին վերաբերող մուրհակները վավերացվելու են կնիքով, իսկ ժողովի արձանագրությունները ստորագրվելու են ժողովի բոլոր անդամների կողմից, որոնք նույնպես վավերացվելու են պատրիարքի կողմից։

Ցուրաքանչյուր վաստաթուղթ, որը տրվում է ժողովի կողմից, պետք է պարտադիր կերպով գրանցվի մատյանում։

Հոդված 11։ Եթե երկու քրիստոնյաների միջև ժառանգության կապակցությամբ դատական գործ հարուցվի պատրիարքարանին, ապա, այն քննարկվելու և լուծվելու է խառը ժողովի կողմից։

Հոդված 12։ Խառը ժողովը հետևելու է, որպեսզի ուղղափառ եկեղեցուն պատկանող քրիստոնյաների ժառանգության հարցերը ճիշտ կիրառվեն։ Ժառանգության հարցերը լուծելիս պետք է հիմնվեն քրիստոնյաների ժառանգականության վերաբերյալ, վերջերս հրապարակված կայսերական հրովարտակին և Օսմանյան կայսրության այն օրենքներին և կանոններին, որոնք առնչվում են ժառանգականության հարցերին։

Հոդված 13։ Եպիսկոպոսի կողմից տրված բոլոր վաստաթղթերը, որոնք վերաբերվում են ազգային դպրոցներին, հիվանդանոցներին և այլ բարեգործական հաստատություններին, ինչպես նաև Կ. Պոլսի եկեղեցիների և վանքերի եկամուտներին, և ծախսումներին, կտակներին,

վաքուֆներին, պետք է օրինավոր կերպով ընդունվեն խառը ժողովի կողմից։

Հոդված 14։ Երրորդ հոդվածի հիման վրա, նրանք, ովքեր հայց են ներկայացնում, դատական քննութիւնից առաջ պետք է հոգան դատարանի բոլոր ծախսերը։

Հոդված 15։ Պատրիարքը եւ խառը ժողովի անդամները պետք է ամեն ջանք թափեն Օսմանյան կայսրութեան սահմաններից ներս գտնվող բոլոր ուղղափառ եկեղեցիների և սուրբ վայրերի բարեկարգման համար։ Նրանք հոգևոր առաջնորդների հետ պետք է հետևեն, որպեսզի բոլոր ծախսումներն ու եկամուտները, կտակները, նվիրատվութիւնները կատարվեն օրինական կերպով։

Հոդված 16։ Խառը ժողովի յուրաքանչյուր անդամ, ինչպես նաև բոլոր ուղղափառ քրիստոնյաները, տեղեկանալով որևէ հոգևոր շեղումների մասին, պետք է այդ մասին հայտնեն Սինոդ կամ պատրիարքարան։

ԽԱՌԸ ԺՈՂՈՎԻ ԲՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՎ ԹԵՄԱԿԱԼՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՌՈՃԻԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատրիարքի տարեկան ռոճիկը կազմում է 500,000 ղուրուշ: Այս գումարից 130,000 ղուրուշը տրամադրվում է Կ. Պոլսի քրիստոնյա բնակիչների կողմից, իսկ 370,000 ղուրուշը՝ եպիսկոպոսների կողմից հետևյալ համամասնությունների, ուր նշանակված է նաև յուրաքանչյուր եպիսկոպոսի պաշտոնական ռոճիկը: Տվյալ գումարը գանձվում է եպիսկոպոսների կողմից և հանձնվում է ազգային դրամարկղ, որտեղից և մաս-մաս վճարվում է պատրիարքի ռոճիկը:

Հոդված 1: Կ. Պոլսի պատրիարքի տարեկան ռոճիկը կազմում է 500,000 ղուրուշ: Այս գումարից վճարվում են նաև գանձապահի կնիքը պահողի և պատրիարքության այլ ծառայողների ռոճիկները, ինչպես նաև եկեղեցու և ազգի զանազան ծախսերը: Այս գումարից բացի, պատրիարքը իր այլ ծախսերի համար ազգային գանձարանից ոչ մի ղուրուշ չի ստանում:

	Եպիսկոպոսների տարեկան ռոճիկը	Ծուրաքանչյուր թեմի կողմից պատրիարքի տարեկան ռոճիկի համար վճարվող գումարը	Ընդհանուր գումարը
Կայսերի	60,000	300	63,000
Կուշ-Ադասը	100,000	5,000	105,000
Էրեգլի	90,000	5,000	95,000
Կապու դաղը	90,000	300	93,000
Իզմիդ	60,000	2,500	62,500
Իզնիկ	60,000	1,500	62,500
Կադը Քէօյ	70,000	2,700	72,700
Թարապիա	80,000	2,500	82,500
Սալոնիկ	90,000	2,500	82,500
Տրնովօ	70,000	27,000	97,000
Էդիրնե	100,000	14,000	114,000
Ամասիա	80,000	3,000	83,000
Ճանիա	80,000	9,500	89,500
Բուրսա	70,000	1,500	71,500
Դիմիտոկա	70,000	3,750	73,750
Մանաստիր	80,000	6,000	86,000
Կուլուս	80,000	6,000	86,000
Նիքսար	50,000	2,000	82,000
Քոնիա	50,000	2,250	52,250
Կարաֆուրիա	50,000	1,000	51,000
Բոսնիա	100,000	21,750	121,750
Անթալիա	40,000	15,000	55,000
Կրետե	70,000	2,500	72,500
Տրապիզոն	45,000	8,000	45,800
Ենիշեհիր	70,000	3,000	73,000
Նարդա Ակարադը	90,000	3,000	93,000
Ֆիլիբե	70,000	23,500	93,500
Ռոդոս	50,000	2,500	52,500

	Եպիսկոպոսների տարեկան ռոճիկը	Ծուրաքանչյուր թեմի կողմից պատրիարքի տարեկան ռոճիկի համար վճարվող գումարը	Ընդհանուր գումարը
Սիրոզ	85,000	6,000	91,000
Դերամե	70,000	4,000	74,000
Իզմիր	70,000	3,000	73,000
Միզիլլի	70,000	3,000	73,000
Անկարա	20,000	....	20,000
Ալաշեհիր	30,000	....	30,000
Մելիք	70,000	5,500	75,500
Օհրի	60,000	4,250	64,250
Ինոզ	25,000	....	25,000
Մեվլուա	40,000	2,000	42,000
Մեսուրա	45,000	1,000	46,000
Վիդին	70,000	5,500	75,500
Սիլիստրե	65,000	11,250	76,250
Խասմ Ջեզիրեսի (Սամոս կղզի)	40,000	3,000	43,000
Վառնա	60,000	1,500	61,500
Նասլիջ	40,000	1,500	41,500
Սոֆիա	70,000	11,250	81,250
Վիզե	50,000	1,500	51,500
Գյումյուշխանե	30,000	1,500	31,500
Ահիվելի	60,000	3,000	63,000
Մարդին	60,000	3,500	63,500
Փանայիր	45,000	1,000	46,000
Սյուզեպոլի	45,000	1,500	46,500
Իսքիջե	50,000	1,800	51,800
Կաթոզ	30,000	1,100	31,100
Սաքըզ	45,000	3,000	4,800
Լիմնի Ադասը	40,000	1,500	41,500

	Եպիսկոպոսների տարեկան ռոճիկը	Յուրաքանչյուր թեմի կողմից պատրիարքի տարեկան ռոճիկի համար վճարվող գումարը	Ընդհանուր գումարը
Իմրոզ	25,000	....	25,000
Ալա Սոնիա	40,000	1,000	41,000
Փաչա Լիմանի	25,000	700	25,700
Քեսեհնդրե	40,000	2,250	42,250
Դերամե	24,000	....	24,000
Շիմնի	40,000	2,500	42,500
Բոչոնիա	60,000	500	60,500
Արկիրի	50,000	3,000	53,000
Իսթանքէօյ	30,000	....	30,000
Նիշ	65,000	8,000	7,300
Իսկյուփ	65,500	17,250	82,250
Էրսեկ	70,000	3,750	73,750
Կոստանդիլ	70,000	10,000	80,000
Սեմակի	75,000	11,000	86,000
Էզվերնիկ	70,000	6,000	76,000
Բերզերին	65,000	3,500	68,500
Շեհիրքէօյ	60,000	4,600	64,600
Կեսերյա	50,000	2,000	52,00
Վուդինա	60,000	2,500	62,500
Կյորիչա	40,000	1,500	41,500
Ֆեներ Ջաթալչա	50,000	2,000	52,000
Իսթերումչա	70,000	4,200	74,200
Բերաթ	5,000	4,000	54,000
Կարա-Բինա	40,000	2,000	42,000
Ենիչե-Վարդար	40,000	2,000	42,000
Դեբրե	35,000	1,750	36,750
Քյոփրուլյու	50,000	....	50,000
Օրթաքէօյ	40,000	1,300	41,300

	Եպիսկոպոսների տարեկան ռոճիկը	Ծուրաքանչյուր թեմի կողմից պատրիարքի տարեկան ռոճիկի համար վճարվող գումարը	Ընդհանուր գումարը
Քորփէ	25,000	....	25,000
Այդընի Գյուզել Հիսար	46,000	1,150	47,150
Զեյմե	40,000	2,750	42,750
Գելիբոլու	40,000	2,000	42,000
Մերզիֆոն	30,000	1,350	31,350
Զաթալջա	30,000	750	30,750
Կամրոզ	30,000	850	30,580
Կոլեկե	60,000	2,000	62,000
Բելազմուն	50,000	550	50,550
Քոզնա	50,000	2,000	52,000
Թավիրան	30,000	3,000	33,000
Տիր	30,000	560	30,560
Իզրեմիդ	30,000	750	30,750
Բերիսու և Այնարուզ	30,000	750	30,750
Ռուչչուկ	40,000	5,000	45,000
Լեֆկե	40,000	7,500	47,500
Այվարաջա	60,000	15,000	75,000
Կապլան	40,000	2,150	42,150
Նիկոպոլի	24,000	....	24,000
Արկադիե	24,000	450	24,450
Թաամինա	50,000	1,500	51,500
Կանդիա	60,000	3,000	63,000
Դիյեր Բետրո	35,000	1,100	36,100
Խրուսթիսի	35,00	1,000	36,000
Սիս	40,000	1,000	41,000

	Եպիսկոպոսների տարեկան ռոճիկը	Ծուրաքանչյուր թեմի կողմից պատրիարքի տարեկան ռոճիկի համար վճարվող գումարը	Ընդհանուր գումարը
Կալամիկա	40,000	1,000	41,000
Գորվիք[3]	20,000	....	20,000
	25,000	350	25,350
	40,000	700	40,700
	25,000	1,000	26,000
	25,000	400	25,000
	12,000	....	12,000
	24,000	....	24,000
	12,000	....	12,000
Ընդհանուր գումար	6,001,000	401,040	6402040
Կ. Պոլսի բնակիչները		130,000	
		531,040	

Հոդված 2։ Մշտական խառը ժողովը և Սինոդի անդամները, նշանակելով Կ. Պոլսի պատրիարքի օրինական ռոճիկը, միևնույն ժամանակ պետք է ջանք թափեն, որպեսզի դրամի գանձման ընթացքում, իրենց ազգայիններին չծանրաբեռնեն։ Այս կապակցությամբ տվյալ հարցը քննարկվում և որոշվում է հավասար կերպով։ Պատրիարքի տարեկան ռոճիկը հիմնականում գանձվում է ազգային այն վանքերի եկամուտներից, որոնք գտնվում են Փոկոնիայում և Վելլեյում։ Այստեղ գտնվող վանքերի եկամուտների մի մասը հատկացվում է տվյալ վանքերի բարեկեցության համար, իսկ մնացածը հանձնվում է Կ. Պոլսի պատրիարքության։

Հոդված 3։ Պատրիարքի օրինավոր ռոճիկի համար նշանակված գումարը գանձվում է նախորդ հոդվածի

հիման վրա։ Այդ գումարը հատկացվում է Կ. Պոլսի պատրիարքի պաշտոնի, ինչպես նաև մի շարք բարեգործական նպատակների համար։ Եպիսկոպոսների օրինավոր ռոճիկների համար նշանակված գումարը, այսուհետև չի գանձվելու քրիստոնյա բնակչության կողմից։

Հոդված 4։ Եպիսկոպոսների օրինավոր ռոճիկները գանձվելու են հետևյալ կերպ։ Այն վայրում, որտեղ գտնվում է եպիսկոպոսը, Կ. Պոլսից առաքվում է զեկուցագիր, որպեսզի տվյալ եպիսկոպոսը բոլոր չորքաջինների, տվյալ կաստաբայի և գյուղի ներկայացուցիչներին հավաքի ժողովի, որպեսզի արդարացիորեն նշանակվի անհրաժեշտ գումարը՝ տվյալ վայրի յուրաքանչյուր բնակչի համար։ Այնուհետև կազմվում են երեք ցուցակներ, որոնցից մեկը պահվում է թեմի շենքում, մյուսը տրվում է չորքաջինների, իսկ երրորդը գրանցման համար ուղարկվում է պատրիարքարան։ Անհրաժեշտության դեպքում մեկական օրինակ տրվում է նաև գյուղերին։

Յուրաքանչյուր եպիսկոպոս տարին մեկ անգամ իր հաշվին պետք է շրջագայի իր շրջանում, որպեսզի եկեղեցիներում քարոզ կարդա և օրհնի ժողովրդին։

Այսուհանդերձ տոնավաճառների և զանազան հրավերների դեպքում անհրաժեշտ գումարը գանձվելու է հրավիրողներից։

ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Հոդված 5։ Կ. Պոլսի պատրիարքարանին ենթարկվող բոլոր թեմերում, ամուսնական վկայականների համար գանձվում է 10 ղուրուշ։

Հոդված 6։ Ապահարզանի համար գանձվող գումարը նշանակվելու է ըստ ապահարզանի տվողի կարողության։

Բոլոր դեպքերում, այդ գումարը չպետք է 100 ղու-

րուչից պակաս լինի։ Այդ գումարը ծախսվելու է տվյալ վայրի բարեկեցության համար։

Հոդված 7։ Երբեմն քրիստոնյաները հրավիրում են եպիսկոպոսներին՝ եկեղեցիներում հարսանյաց, հուղարկավորության արարողություն կատարելու համար և վճարում են նրանց ըստ ցանկության։

Բոլոր դեպքերում, այդ գումարը չպետք է 50 ղուրուչից պակաս լինի։

Հոդված 8։ Թեմերից տրված յուրաքանչյուր փաստաթղթի համար գանձվելու է 5-ից 10 ղուրուչ։ Բացի դրանից, ինչպես նշվեց, մշտական խառը ժողովին վերաբերյալ կանոնադրության 3-րդ հոդվածում, եպիսկոպոսները, հարկային օրենքի հիման վրա գանձելու են որոշակի գումար՝ փաստաթուղթը վավերացնելու համար։ Այդ գումարը նույնպես հատկացվելու է տվյալ վայրի բարեկեցության համար։

Հոդված 9։ Եթե բնակիչները վկայական պահանջեն եկեղեցուց հեռանալու պատճառով, ապա գանձվող գումարը 50 ղուրուչից պակաս չպետք է լինի։ Իսկ գանձվող գումարը, որոշվելու է տվյալ անձի ունեցած կարողությամբ, և այդ գումարը ծախսվելու է բարեգործական նպատակներով։ Ներում չնորհելու դեպքում, ոչ մի ղուրուչ չի գանձվելու։

Հոդված 10։ Համաձայն օրենքի, տեղական քահանաները, տվյալ շրջանի եպիսկոպոսին, տարեկան վճարելու են 10 ղուրուչ։ Արգելվում է առձեռն դրամով և ապրանքներով վճարում կատարել։

Հոդված 11։ Նկատի ունենալով, որ գեդիկները կազմալուծվում են, եպիսկոպոսներին վճարվող հարկերն էլ պետք է վերացվեն։ Վերացվելու են նաև կղերականներին օգնության անվան տակ հավաքվող նվիրատվությունները, ինչպես նաև նոր եպիսկոպոսի նշանակման դեպքում, եկեղեցիի նորոգման համար գանձվող գու-

մարները, քահանաների և վարդապետների ձեռնադրման ժամանակ գանձվող գումարները։

Հոդված 12։ Առանձին քահանաների տրամադրության տակ գտնվող գեղիկները, նույնպես վերացվելու են և վերադարձվելու եկեղեցիներին, փոխարենը եպիսկոպոսների և չորպաջիների հավանության համար, քահանաներին տրվելու է փոխհատուցում։

Հոդված 13։ Արքեպիսկոպոսը, գտնվելով Լոկոֆեթի պաշտոնում, չնայած ոչ պաշտոնական, բայց ստանում է որոշակի գումար պատրիարքի նշանակմամբ։ Վաղեմի սովորության համաձայն, առաջին աստիճանի եպիսկոպոսները, լոկոֆեթի պաշտոնում գտնվելով, ստանում էին 3,000 ղուրուշ, երկրորդ աստիճանում՝ 2,000, իսկ երրորդ աստիճանում՝ 1,000 ղուրուշ։ Նկատի ունենալով, որ էկզարխի պաշտոնը, խառը ժողովի որոշմամբ վերացվել է, ապա, ընդունված նոր բանաձևի համաձայն, լոկոֆեթի համար նշանակված 16,000 ղուրուշը վճարվելու է ազգային դրամարկղից։

Այսուհետև, եպիսկոպոսների վճարվող տվյալ գումարը վերացվելու է, իսկ լոկոֆեթի պաշտոնը մնալու է միայն որպես հարգանքի նշան։ Ինչ վերաբերում է ազգի և եկեղեցու պարտքերին, կազմվելու է հատուկ հանձնաժողով, որը տվյալ պարտքերը մարելու համար, յուրաքանչյուր նորապսակից գանձելու է որոշակի գումար։

ԲՈԼՈՐ ՎԱՆՔԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1։ Այն բոլոր վանքերը, որոնք գտնվում են Կ. Պոլսի պատրիարքի կամ թեմերի տրամադրության տակ, պետք է տվյալ եպիսկոպոսի մշտական հսկողության տակ լինեն։ Եպիսկոպոսները պետք է հետևեն քահանաների գործունեությանը և վանքերի բնականոն կառավարմանը։

Հոդված 2։ Այն վանքերը, որոնք մի շարք դյուղերի համար քահանաներ էին նշանակում, այսուհետև զրկվելու են այդ իրավունքից։ Տվյալ դյուղերը պետք է ենթարկվեն տվյալ շրջանի եպիսկոպոսին։ Այն քահանաները, որոնք հեռանալու են աշխարհիկ կյանքից, շարունակելու են իրենց ծառայությունը վանքերում։

Հոդված 3։ Ազգային բոլոր վանքերը բաժանվում են երեք խմբերի։ Առաջին խմբի մեջ մտնում են այն վանքերը, որոնք ունեն 20-ից ավելի կղերականներ։ Այդպիսի վանքերը ղեկավարվում են վանքերի վերաբերյալ կանոնադրությամբ, կատարելով ամենօրյա ժամերգությունն։ Երկրորդ խմբի մեջ մտնում են այն վանքերը, որոնք ունեն 10-ից ավելի կղերականներ։ Այդպիսի վանքերը նույնպես ղեկավարվում են վանքերի վերաբերյալ կանոնադրությամբ, կատարելով շաբաթը երեքօրյա ժամերգություն։ Երրորդ խմբի մեջ մտնում են այն վանքերը, որոնք ունեն 5-ից ավելի կղերականներ։ Այդպիսի վանքերը նույնպես ղեկավարվելով կանոնադրությամբ, ժամերգություն են կատարում Շաբաթ և Կիրակի օրերը։

Հոդված 4։ Այն վանքերը, որոնք ժամանակի ընթացքում, եթե այլևս չեն համապատասխանում վերոհիշյալ երեք խմբերին, տվյալ շրջանի եպիսկոպոսը միջոցառումներ է ձեռնարկում տվյալ վանքի պահանջներին համեմատ և այդ մասին հայտնում պատրիարքարան։

Հոդված 5։ Մի շարք վանքերի տնտեսությունը վաղուց ի վեր աչքաթող է արված և պատրիարքի կամ տվյալ շրջանի եպիսկոպոսի կողմից «ղումինուսի» աստիճանով քահանա չի նշանակված։ Նման վանքերում, եթե մի շարք կղերականներ, խորամանկությամբ ձեռք բերելով «ղումինուսի» աստիճան, սկսել են յուրացնել այդ վանքերի եկամուտները, դրանք համարվելու են կեղծ և ենթակա են չտապ կազմալուծման։ Բացի դրանից, եթե նման վանքերի գոյության մասին տեղեկացվի տվյալ

չրջանի թեմին կամ եպիսկոպոսին, խառը ժողովին, ապա նրանք պետք է նշանակեն հատուկ հանձնաժողով, որպեսզի երեք տարվա ընթացքում, տվյալ վանքում կարգ ու կանոն հաստատվի ընդհանուրի օգտի համար։

Այնպես որ, նման վանքերի եկամուտները այսուհետև չպետք է հափշտակվեն այս կամ այն կղերականի կողմից, այլ ծախսվելու են ազգի կարիքների և տվյալ վայրի բարեկեցության համար։

Հոդված 6։ Անհրաժեշտ է հուսալի ձեռքերում պահել այն վանքերի եկամուտները, որոնք գտնվում են Մոլդավիայում և Վալախիայում, որտեղ հողը հանձնում են Մակրիուով։ Եվ որպեսզի տվյալ վանքերի եկամուտները չարաշահումների չենթարկվեն, պատրիարքը ամեն կերպ ջանալու է, որպեսզի իլթիզամի բոլոր մուրհակները ըստուգվեն և եկամուտները ծախսվեն ազգի կարիքների համար։ Այդ վանքերի տարեկան եկամուտների 10 տոկոսը մտնելու է ազգային դրամարկղ։

Հոդված 7։ Այնորոզայի վանքերը, չնայած գտնվում են պատրիարքարանի սրամադրության տակ, սակայն կառավարվում են իրենց հատուկ կանոնադրությամբ։ Նման կառավարումը չի կարող ազդել պատրիարքության հետ ունեցած նրանց հարաբերության վրա։ Անհրաժեշտության դեպքում, պատրիարքը հովանավորելու է նրանց գործերը։ Այսուհետև այդ վանքերը ազատվելու են հարկերի վճարումից, բայց պարտավոր են տարեկան ազգային դրամարկղ հանձնել 4,000 հունգարական ոսկի։

Հոդված 8։ Ներքին կառավարման, ղումինուսների նշանակման և եկամուտների հաշվարկման ընթացքում, վանքերը պետք է ղեկավարվեն հատուկ կանոնադրությամբ[1]։

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ*

Հոդված 1։ Կ. Պոլսի պատրիարքը ազգային բոլոր ժողովների նախագահն է, վարում է դրանց գործադիր իշխանութիւնը և բոլոր հանգամանքներում, հանդիսանում է Օսմանյան պետութեան հրամանների կատարման միջնորդը[1]։

Պատրիարք ընտրվող անձնավորութիւնը, որպեսզի դրավի ամբողջ ժողովրդի վստահութիւնը, պետք է իր բոլոր կողմերով արժանի լինի այդ պաշտոնին և աչքի ընկնի իր անձնական հատկանիշներով և արժանապատվութեամբ։ Նախկին սովորութեան համաձայն, պատրիարքը պետք է լինի առնվազն 35 տարեկան, հանդիսանա հորից սկսած Օսմանյան կայսրութեան հպատակ, և ընտրվի եպիսկոպոսների դասից, կատարելապես վայելելով Օսմանյան կառավարութեան վստահութիւնը։

Հոդված 2։ Պատրիարքի մահանալու, հրաժարականի կամ տարբեր պատճառներով աթոռը թափուր մնալու դեպքում, հոգևոր և քաղաքական ժողովները պետք է միաժեղ նշանակեն որևէ մեկին որպես տեղապահ և խնդրեն նրա հաստատումը Բարձրագույն դռնից։

---

*Հայերեն օրինակում դրված է՝ «Ազգային կենտրոնական վարչութիւն»։ Պատրիարք Կոստանդնուպոլսո, ընտրութիւն և հրաժարում։

Պատրիարքի ընտրությունը տեղի է ունենում հետևյալ կերպ. նախ և առաջ, պատրիարքի տեղապահը կազմում է Օսմանյան կայսրությունում բնակվող բոլոր եպիսկոպոսների ցուցակը և առաջին հոգվածի հիման վրա, յուրաքանչյուրի անվան դիմաց նշում է արժանիքները և ընտրության համար ներկայացնում հոգևոր ժողովին։ Այնուհետև գումարվում է ընդհանուր ժողով, որը գաղտնի քվեարկությամբ քննարկում է թեկնածուների ցուցակը։ Ընդհանուր ժողովի յուրաքանչյուր անդամ թղթի վրա գրում է այն եպիսկոպոսների անունները, որոնք կրոնական գործունեության մեջ առավել արժանիքներ ունեն։ Այնուհետեւ, առանձին հերթականությամբ գրվում է ձայների մեծամասնություն ստացած եպիսկոպոսների անունների ցուցակը։ Այս ցուցակը վերոհիշյալ տեղապահի կողմից ներկայացվում է քաղաքական ժողովին, որը հիշյալ ցուցակում նշված եպիսկոպոսների քաղաքական ունակությունները նկատի ունենալով, ձայների մեծամասնությամբ ընտրում է 5 հոգու առավել արժանի պատրիարքարանի աթոռին և ներկայացնում է ընդհանուր ժողովին։ Միևնույն ժամանակ հոգևոր ժողովի կողմից քննարկված [առաջին]* ցուցակը կախվում է ազգային ընդհանուր ժողովի [սրահի] պատից։ Ընդհանուր ժողովը [այս երկու ցուցակներից]** տեղեկանալով թեկնածուների քաղաքական և կրոնական գործունեությունների մասին, գաղտնի ընտրությամբ և ձայների մեծամասնությամբ ընտրում է պատրիարքին։

Ընդհանուր ժողովը կարող է քվեարկել նաև ցուցակից դուրս որևիցե անձի օգտին, որը ներկայացված է քաղաքական ժողովի կողմից։

Այսուհանդերձ, այս թեկնածուի անունը պետք է

---

*Հայերեն օրինակում

**Հայերեն օրինակում

նախապես գրանցված լինի ընդհանուր հոգևոր ժողովի կողմից քննարկվող ցուցակում։

Եթե առաջին ընտրության ընթացքում, ձայների մեծամասնություն չստացվի, ապա, տեղապահը ընդհանուր ժողովին է ներկայացնում ավելի շատ ձայների մեծամասնություն ստացած երկու թեկնածուների անունները, և երկրորդ քվեարկությունը կկայանա այս երկուսի չուրջը։ Ընդհանուր ժողովի այն անդամները, որոնք ներկա չեն կարող գտնվել երկրորդ ընտրությանը, կարող են իրենց ձայները ստորագրությամբ կնքված նամակով ներկայացնել տեղապահին կամ ընդհանուր ժողովի նախագահին։ Ընդհանուր ժողովը ընտրում է 8 հոգի (4-ը հոգևոր և 4-ը աշխարհիկ), որոնք ընդհանուր ժողովի նախագահի ներկայությամբ հաշվում են քվեատուփի մեջ հավաքված քվեաթերթիկները։

Եթե երկրորդ ընտրության ընթացքում, այդ երկու թեկնածուներն էլ հավասար ձայներ ստանան, ապա ընտրությունը նրանց միջև կատարվում է վիճակահանությամբ։

Հոդված 3։ Ընտրությունը ավարտելուց հետո կազմվում է մի տեղեկագիր, որը ստորագրվում է ժողովի բոլոր մասնակիցների կողմից և տեղապահի միջնորդությամբ ներկայացվում է Բարձրագույն դուռ։ Այսպիսով, պատրիարքը վաղեմի սովորության համաձայն, հաստատվում է կայսերական հրամանագրով։

Հոդված 4։ Եթե նորընտիր պատրիարքը կ. Պոլսում է, ընդհանուր ժողովը հրավերի նամակ է ուղարկում մի քանի անձանց միջոցով, իսկ եթե գտնվում է կ. Պոլսից դուրս, ապա ուղարկվում է հատուկ պատվիրակություն։ Հրավիրագիրը ստանալով [նորընտիր] պատրիարքը գալիս է պատրիարքարան և մայր եկեղեցու մեջ ընդհանուր ժողովի առաջ հրապարակով*, տալիս է հետևյալ ուխտը.

---

*Հայերեն օրինակում գրված է «հանդիսավոր»։

«Աստծո առաջ և Ազգային ժողովի ներկայությամբ հրապարակավ պարտավորվում եմ* հավատարիմ լինել իմ ազգին և կայսրությանը, կատարելապես հսկել և գործադրել ազգային կանոնադրությունը»**:

Այս արարողությունից անմիջապես հետո դատարում է տեղապահի պաշտոնը և նորընտիր պատրիարքը Բարձրագույն դռան հրավերով ներկայանում է նորին մեծությունն փադիշահին, որտեղ պաշտոնապես հաստատվում է նրա պաշտոնը և հաղորդվում Բարձրագույն դուռ:

Հոդված 5: Եթե պատրիարքը կանոնադրության հիմնական դրույթներին հակառակ ընթացք ունենա, ապա նա մեղադրանքի կենթարկվի:

Հոդված 6: Պատրիարքին մեղադրելու իրավունքը պատկանում է միայն ընդհանուր, հոգևոր և քաղաքական ժողովներին: Մեղադրող կամ բողոքարկող ժողովը, Բարձրագույն դռնից թույլտվություն ստանալով, խնդրում է պատրիարքին ընդհանուր ժողով գումարել: Պատրիարքի մերժման դեպքում, դրությունը կրկին կհաղորդվի Բարձրագույն դուռ, որը համաձայն տվյալ խնդրանքին***, հրաման է տալիս կ. Պոլսո մեջ գտնվող եպիսկոպոսներից երիցագույնի նախագահությամբ ընդհանուր ժողով գումարելու մասին: Ընդհանուր ժողովը իր կողմից 10 հոգուց բաղկացած (հինգը հոգևոր և հինգը աշխարհիկ) մի հանձնաժողով է ընտրում: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այս հանձնաժողովի մեջ չեն կարող ընդգրկվել մեղադրող և բողոքարկող անձերը: Այս հանձնաժողովը փաստերը հետաքննելուց հետո, դրավոր զեկուցագիր է ներկայացնում ընդհանուր ժողովին, որը և պարզում է խնդիրը գաղտնի քվեարկությամբ: Այս որոշումը բովանդակող

*Հայերեն օրինակում գրված է «հանդիսավոր ուխտ կընե»:
**Հայերեն օրինակում գրված է «ճշմարտապես հսկել ազգային սահմանադրության անթերի գործադրությանը:
***Հայերեն օրինակում գրված է բողոքին:

թուղթը պետք է ստորագրված լինի քվեարկող ժողովի անդամների կողմից։ Եթե այդ որոշումով վճռված է պատրիարքի պաշտոնաթողությունը, ապա երկու ժողովների նախագահները, նախագահող եպիսկոպոսի հետ միասին, գնում են պատրիարքի մոտ և ներկայացնում ժողովի որոշումը։ Այսպիսով, պատրիարքը, տեղեկանալով ազգի ուղղակի ցանկությանը, պարտավոր է հրաժարական տալ։ Մերժման դեպքում, իրադրությունը հաղորդվում է Բարձրագույն դուռ, որը և պաշտոնազրկում է պատրիարքին։

Հոդված 7։ Պաշտոնաթող պատրիարքը անցնում է սովորական եպիսկոպոսների շարքը և այնուհետև ընդհանուր ժողովը, ըստ կանոնի, նրան է տալիս անհրաժեշտ նշանակում։

Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Հոդված 8։ Պատրիարքի պարտականությունը կայանում է նրանում, որ գործի համաձայն կանոնադրության սկզբունքներին և ուշադիր հետևի հիշյալ կանոնադրության բոլոր կետերի ճշգրիտ կատարմանը։ Իր անունով ստացված գործերը, պատրիարքը քննարկման է ներկայացնում համապատասխան ժողովի՝ անհրաժեշտ որոշում կայացնելու համար։ Ժողովներում ընդունված որոշումների հիման վրա, պատրիարքի թղթակիրները կամ այլ պաշտոնական գրությունները վավերական և գործադրելի չեն կարող համարվել, եթե տվյալ ժողովի կողմից ստորագրված և կնքված չլինեն։

Իսկ եթե մի ստիպողական գործ պատահի, որ անհնար լինի դրա հետաձգումը մինչև հերթական կամ արտակարգ ժողովի գումարումը, պատրիարքը իրավունք ունի իր վրա վերցնելու ամբողջ պատասխանատվությունը և ինքնուրույն ընդունելու համապատասխան որոշում։

*Հայերեն օրինակում գրված է «Պաշտոն և պարտավորություն»։

Սակայն, ընդունված կարգի համաձայն, նա պարտավոր է եղելությունը արձանագրել տալով, այն ներկայացնի համապատասխան ժողովի հաստատմանը։

Հոդված 9։ Իր բացակայության ընթացքում ընդունված որոշումների վերաբերյալ, պատրիարքը, դեռևս չստորագրած, իրավունք ունի իր կարծիքը հայտնելու և անհրաժեշտության դեպքում, նորից քննարկելու։ Վերաքննությունից հետո նա պարտավոր է ստորագրել այդ բանաձևը, եթե դրանում ընդունված որոշումները չեն հակասում կանոնադրության սկզբունքներին։

Հոդված 10։ Պատրիարքը կարող է կանոնադրության սկզբունքները խախտող որևիցե կղերականի, ուսուցչի և կամ եկեղեցու, վանքի, դպրոցի և հիվանդանոցի ծառայողի աշխատանքից հեռացնելու առթիվ, առաջարկություն մտցնել ընդհանուր ժողովում կամ խորհրդում։

Հոդված 11։ Պատրիարքը իրավունք չունի ինքնուրույնաբար լուծարել և փոխել հոգևոր ժողովները կամ դրանց հարակից խորհուրդները։ Սակայն, երբ նկատի, որ դրանցից մեկը չեղվել է կանոնադրության սկզբունքներից, առաջին անգամ բացատրություն է պահանջում ժողովի նախագահից, իսկ երկրորդ անգամ հաղորդում է օրինազանցության մասին և պահանջում պահպանել կանոնադրության սկզբունքները։

Իսկ երրորդին, երբ մեղադրվում է ազգային ժողովներից մեկը, պատրիարքը դիմում է ընդհանուր ժողովին, իսկ եթե խորհուրդներից մեկն է՝ քաղաքական ժողովին և հայտնաբերելով դրդապատճառները, առաջարկում է մեղադրվող ժողովը կամ խորհուրդը լուծարել։

Հոդված 12։ Պատրիարքը, ստանալով ազգային դանձարանից իրեն հատկացված ռոճիկը, ինքն է հոգում պատրիարքարանի ներքին ծախսերը։

Հոդված 13: Պատրիարքարանի մեջ հաստատվելու է մի գրասենյակ, ազգային անհրաժեշտ գրությունների համար: Այս գրասենյակը ունենալու է 3 բաժիններ:

ա/ Թղթակցության բաժին, որը զբաղվելու է պատրիարքարանից առաքվող և ստացվող գրություններով:

բ/ Արձանագրության բաժին, որը զբաղվելու է ազգային ժողովին և խորհուրդներին վերաբերող պաշտոնական գրություններով:

գ/ Ազգահամարի բաժին, որը զբաղվելու է (ազգի քաղաքական վիճակագրությամբ)*, այսինքն՝ ծննդյան, ամուսնության, մահվան վերաբերյալ գործերի արձանագրությամբ: Այս վերջին բաժնից է տրվում անհրաժեշտ ճանապարհորդական և այլ անձնական գործերի վերաբերող փաստաթղթերը, ինչպես նաև ծննդյան, ամուսնության և մահվան վկայագրերը:

Հոդված 14: Պատրիարքարանի գրասենյակը ունենալու է մի կառավարիչ, որը պատասխանատու է գրասենյակի բոլոր գործերի համար: Կառավարիչը ընտրվում է քաղաքական ժողովում և հաստատվում իր պաշտոնին պատրիարքի կողմից: Կառավարիչը վարում է նաև ընդհանուր ժողովի քարտուղարությունը: Գրասենյակի կառավարիչը պարտավոր է ամեն տարի 4. Պոլսում և դրսում ծնվածների, մահացածների և ամուսնացածների վկայականների պատճենները պահանջել, որպեսզի գրասենյակում գտնվող մատյանների մեջ համապատասխան դրանցում կատարվի: Կառավարիչը պետք է կատարելապես տիրապետի հայերեն, ինչպես նաև ֆրանսերեն ու թուրքերեն լեզուներին:

Հոդված 15: Գրասենյակը ունենալու է բավականաչափ թվով քարտուղարներ, որոնք նույնպես քաջ տիրա-

---

*Թուրքերեն բնագրում բաց է թողնված

պետելու են հայերենին և ունենալու են կատարյալ փորձ իրենց պաշտոնի նկատմամբ: Յուրաքանչյուր քարտուղար պատասխանատու է այն ժողովի կամ խորհրդի առջև, որին ինքը կցված է: Քարտուղարները համապատասխանաբար պատասխանատու են նաև դրասենյակի կառավարչին:

Հոդված 16: Ազգահամարի բաժնից տրված որևէ գրություն կամ փաստաթուղթ, պետք է ստորագրվի դրասենյակի կառավարչի կողմից և վավերացվի պատրիարքի կնիքով:

ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Հոդված 17: Երուսաղեմի պատրիարքը գլխաղեցնում է Ս. Հակոբա (վանքի) աթոռը ցկյանս: Նա հանդիսանում է Երուսաղեմի սահմաններում գտնվող բոլոր հայկական ուխտավայրերի և Ս. Հակոբա վանքի միաբանության առաջնորդը: Նրա պարտականությունների մեջ է մտնում՝ պահպանել Ս. Հակոբա վանքի կանոնադրության դրույթները և հետևել դրանց ճիշտ գործադրմանը:

Հոդված 18: Հիշյալ պատրիարքը կենթարկվի մեղադրանքի, եթե վանքի կանոնադրության դրույթներին հակառակ ընթացք ունենա:

Հոդված 19: Հիշյալ* պատրիարքը կարող է մեղադրանքի ենթարկվել վանքի միաբանության կամ Կ. Պոլսո հոգևոր և քաղաքական ժողովների կողմից: Նման պարագայում, գումարվում է ընդհանուր ժողով: Եթե քննությունից հետո մեղադրանքը հիմնավորվի, ապա ընդհանուր ժողովը, Կ. Պոլսո պատրիարքին վերաբերող 6-րդ հոդվածի հիման վրա, հատուկ բողոքագրով դիմում է

*Այսուհետև մենք խուսափում ենք թարգմանել «հիշյալ» կամ «վերոհիշյալ» բառերը, որոնք հաճախ կրկնվում են թուրքական օրինակում:

Երուսաղեմի պատրիարքին, որպեսզի վերջինս ճշտորեն գործադրի կանոնադրությունը, կամ ստիպում է նրան հրաժարվել պատրիարքարանի աթոռից, նրա տեղ նշանակելով մի տեղապահ՝ վանքի միաբանությունից, որը ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից՝ գաղտնի քվեարկությամբ։

Հոդված 20։ Երուսաղեմի պատրիարքի մահանալու դեպքում, վանքի միաբանությունը իր միջից ընտրում է մի տեղապահ, որը հաստատվում է Կ. Պոլսի Ազգային ժողովի կողմից։

Հոդված 21։ Ս. Երուսաղեմի պատրիարքը ընտրվում է Կ. Պոլսի Ազգային ժողովի կողմից։ Այսուհանդերձ, Ս. Երուսաղեմի միաբանությունը իրավունք ունի գրավոր ներկայացնելու իր կարծիքը, թեկնածու անձի արժանիքների մասին։ Պատրիարքի մահից անմիջապես հետո, տեղապահը գումարում է միաբանության ընդհանուր ժողով։ Ժողովը, Կ. Պոլսի պատրիարքի ընտրության կարգով, կազմում է (թեկնածուների) անվանացուցակ։ Այս ցուցակը բովանդակելու է միայն 7 թեկնածուների անունները։ Այս ցուցակը միաբանության կողմից ստորագրված մի հայտագրով ուղարկվում է Կ. Պոլսի պատրիարքարան։

Հոդված 22։ Այն անձնավորությունը, որը ընտրվելու է Երուսաղեմի պատրիարք, պետք է ի ծնե լինի Օսմանյան պետության հպատակ և բոլորած լինի իր 35 տարին։ Թեկնածուն միաբանությունից դուրս անձնավորությունն չպետք է լինի, այլ լինի հատկապես միաբանության եպիսկոպոսներից կամ այլ կղերականներից։ Միաբանությունից առանձնացված չեն համարվում այն անձնավորությունները, որոնք Կ. Պոլսի պատրիարքարանի ժողովների կողմից օգտագործված են ազգային գործերի մեջ՝ Երուսաղեմի պատրիարքի հավանությամբ։

Հոդված 23։ Կրոնական և քաղաքական ժողովները միատեղ քննարկում են հիշյալ ցուցակում ընդգրկված

թեկնածուների արժանիքները և, առանձնացնելով երեքին, ներկայացնում են ընդհանուր ժողովին։ Ստացված այս ցուցակը պետք է ցուցադրվի ընդհանուր ժողովի սրահում։ Ընդհանուր ժողովը, ծանոթանալով թե՛ միաբանության և թե՛ երկու Ազգային ժողովների կարծիքներին, գաղտնի քվեարկությամբ և ձայների բացարձակ մեծամասնությամբ, ընտրում է այդ ցուցակից այն անձնավորությանը, որը կրոնական և ուսման ասպարեզում, ինչպես նաև իր դրական վարքով առավել արժանի է [պատրիարքի] պաշտոնին։ Ընդհանուր ժողովում չի կարելի քվեարկել այն անձնավորության համար, որը գրանցված չէ ներկայացված ցուցակում։

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Հոդված 24։ Կրոնական ժողովը բաղկացած է 14 բանիմաց եկեղեցականներից, որոնք պետք է բոլորած լինեն 30 տարին և առնվազն 5 տարի չարունակ ձեռնադրված լինեն։

Հոդված 25։ Եկեղեցական համագումար ժողովը գաղտնի քվեարկությամբ ընտրում է Ազգային կրոնական ժողովի անդամներին թվի եռապատիկը և թեկնածուների ցուցակը ստորագրված հայտագրով ներկայացնում է Ազգային ընդհանուր ժողով։ Ընդհանուր ժողովը այդ ցուցակից գաղտնի քվեարկությամբ, ընտրում է կրոնական ժողովի անդամներին։ Այնուհետև այդ տեղեկագիրը պատրիարքի կողմից ներկայացվում է Բարձրագույն դուռ, որտեղ և հաստատվում է կայսերական հրովարտակով։

Հոդված 26։ Կրոնական ժողովը արձակվում է երկու տարին մեկ անգամ՝ Ապրիլի վերջին, և կրկին վերընտրվում Մայիսի սկզբին։ Արձակված ժողովի անդամները անմիջապես վերընտրելի չեն։ Նրանք կարող են կրկին վերընտրվել միայն երկու տարի անց։

Հոդված 27։ Եթե կրոնական ժողովի անդամները հրաժարական տալով և կամ այլ պատճառներով պակասողների թիվը երեքի հասնի, ապա, նրանց տեղ ընտրվում են նորերը՝ ընդհանուր ժողովի կողմից։ Մինչև նոր անդամների ընտրությունը պետք է, որ կրոնական ժողովում գտնվի անդամների մեծամասնությունը։

Հոդված 28։ Կրոնական ժողովը ղեկավարում է ազգի կրոնական գործերը։ Նրա պարտականությունների մեջ է մտնում՝ զարգացնել կրոնական զգացումը ազգի մեջ, անխախտ պահել հայ եկեղեցու դավանանքն ու ավանդությունները, հետևել եկեղեցիների բարեկարգությանը և հոգալ կղերականների ներկա վիճակի բարելավման մասին, ապահովել ապագայի անդորրությունը, երբեմն հաճախել ազգային դպրոցները և ստուգել կրոնի ուսուցումը, պատրաստել բանիմաց և արժանի քահանաներ և վարդապետներ, քննարկել ազգի մեջ առաջացած կրոնական տարաձայնությունները և հարթել դրանք կրոնական կանոններով։

Հոդված 29։ Եթե կրոնական ժողովը չկարողանա ինքնուրույնաբար լուծել կրոնական որևէ կարևոր հարց, ապա գումարվում է կրոնական ընդհանուր ժողով, հրավիրելով Կ. Պոլսում գտնվող եպիսկոպոսներին, քարոզիչ վարդապետներին ու աթոռակալներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ չրջակա գավառների առաջնորդներին։ Իսկ եթե կրոնական ընդհանուր ժողովը ևս չկարողանա լուծել հիշյալ հարցը, ապա ստորագրված տեղեկագրով անհրաժեշտ է դիմել համընդհանուր կաթողիկոսին։

Հոդված 30։ Կրոնական ժողովի բոլոր տեղեկագրերը պետք է ստորագրված լինեն ժողովի անդամների մեծամասնության կողմից։

Հոդված 31։ Կ. Պոլսում և գավառներում, վարդապետների համար անհրաժեշտ թույլտվությունը* տըր-

*Հայերեն օրինակում գրված է «հրաման»։

վում է կրոնական ժողովի կողմից։ Իսկ քահանաների ձեռնադրության թույլտվությունը, եթե կ. Պոլսի մեջ է՝ նույն կրոնական ժողովի կողմից, իսկ եթե գավառից է, ապա տեղի կրոնական ժողովի կողմից։

Հոդված 32։ Որևէ եկեղեցու քահանաները, ինչպես նաև [թաղական խորհուրդը]*, եթե անհրաժեշտություն չզգան նոր քահանա ընտրելու և ստորագրված տեղեկագրով չդիմեն կրոնական ժողովին, ձեռնադրության թույլտվություն չի տրվում։

Հոդված 33։ Կ. Պոլսի վարդապետները և ավագ-երեցները ընտրվում են կրոնական ժողովի կողմից և հաստատվում պատրիարքի կողմից։

Հոդված 34։ Կրոնական ժողովի բոլոր ընտրություններն տեղի են ունենում գաղտնի քվեարկությամբ։

Հոդված 35։ Կրոնական ժողովը պետք է պատրաստի մի կանոնագիր եկեղեցականների ներկա վիճակը բարելավելու և նրանց ապագան ապահովելու համար, որպեսզի իրենց հոգևոր պաշտոնները կարողանան անվճար կատարել։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Հոդված 36։ Քաղաքական ժողովը բաղկացած է ազգային գործերին և Օսմանյան կայսրության օրենքներին գիտակ 20 աշխարհականներից։

Հոդված 37։ Քաղաքական ժողովի անդամները ընտրվում են Ազգային ընդհանուր ժողովում՝ քվեարկությամբ և ձայների բացարձակ մեծամասնությամբ։ Իսկ տեղեկագիրը պատրիարքի կողմից ներկայացվում է Բարձրագույն դուռ, որպեսզի հաստատվի կայսերական հրամանագրով։

---

*Թուրքերեն օրինակում բաց է թողնված։

Հոդված 38։ Քաղաքական ժողովը արձակվում է երկու տարին մեկ անգամ՝ Ապրիլի վերջին, իսկ նոր ընտրությունները տեղի են ունենում Մայիսի սկզբին։ Քաղաքական ժողովի անդամները կարող են վերընտրվել միայն երկու տարի հետո։ Ջնայած, որ նրանք այդ երկու տարիների ընթացքում վերընտրելի չեն, սակայն կարող են օգտագործվել ազգային ամեն մի պաշտոնում։

Հոդված 39։ Եթե ժողովի անդամներից մեկը տևապես 3 անգամ բացակայի ժողովից և գրավոր չպատճառաբանի այդ, ապա ժողովի նախագահը գրավոր դիմում է նրան՝ պահանջելով նրա բացակայության պատճառները։ Պատասխան չստանալու դեպքում, ուղղում է երկրորդ նամակը, մատնանշելով, որ եթե չներկայանա հաջորդ նիստին, ապա նա հեռացված կհամարվի։ Եթե կրկին չներկայանա, ուրեմն վերջնականապես ժողովից հրաժարված կհամարվի։

Հոդված 40։ Քաղաքական ժողովից հրաժարող կամ այլ պատճառներով հեռացող անդամների թիվը եթե երեքի հասնի, ապա նրանց տեղ ընտրվում են նորերը՝ ընդհանուր ժողովում։ Մինչև ընտրությունները քաղաքական ժողովում բոլոր անդամների ներկայությունը պարտադիր է։

Հոդված 41։ Քաղաքական ժողովը ղեկավարում է ազգի քաղաքական գործերը։ Նրա պարտականությունն է՝ հետևել ազգի բարեկեցությանը և զարգացմանը, ուշադիր քննարկել իր հսկողության տակ գտնվող խորհուրդների ներկայացրած առաջարկությունները և անհրաժեշտության դեպքում հաստատել, կամ գործադրման համար արգելք հանդիսացող խոչընդոտները վերացնել։

Հոդված 42։ Քաղաքական ժողովի քննարկմանը ներկայացված բոլոր գործերը հանձնվում են համապատասխան խորհուրդներին։ Եվ քաղաքական ժողովը, մինչև տվյալ խորհուրդի կարծիքը չիմանա, չի կարող գործադրության քայլեր ձեռնարկել։ Ջնայած, որ քաղա-

քական ժողովը իրավացի պատճառներով կարող է հերքել որևիցե խորհրդի ընդունած որոշումը, սակայն ինքնուրույնաբար չի կարող այլ որոշում կայացնել։ Այդ իսկ պատճառով, տվյալ հարցը կրկին հանձնվում է խորհրդի քննարկմանը։ Քաղաքական ժողովը չի կարող փոխել կամ կազմալուծել ազգային* խորհուրդներից որևէ մեկը, քանի այդ խորհուրդը չի հակասել կանոնադրության սկզբունքներին։ Եթե քաղաքական ժողովը նկատի, որ նրանցից որևէ մեկը նման ընթացքի մեջ է, ապա առաջին անգամ բացատրություն է պահանջում տվյալ խորհրդի նախագահից՝ երկրորդ անգամ գրավոր պահանջում է հավատարիմ մնալ կանոնադրությանը, իսկ երրորդին՝ փոխում է նրա անդամներին։ Այս փոփոխության մասին անհրաժեշտ է ընդհանուր ժողովին տեղեկագրով պարզաբանել փոփոխության պատճառները։

Հոդված 43։ Եթե քաղաքական ժողովը չկարողանա լուծել իրեն հասած քաղաքական գործերից որևէ մեկը, ապա դիմում է ընդհանուր ժողովին։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 44։ Ուսման, տնտեսության, դատական և վանական գործերի կառավարման համար քաղաքական խորհուրդը ընտրում է 4 խորհուրդ, և 3 հոգաբարձություն՝ մատակարարման հարցերի համար։ Այս խորհուրդների և հոգաբարձությունների անդամները պաշտոնավարում են երկու տարի ժամկետով, իսկ նորացվում են կիսով չափ՝ յուրաքանչյուր տարվա սկզբին։

Դատական խորհրդի նախագահը հանդիսանում է Կ. Պոլսի պատրիարքի փոխանորդը։

*Թուրքերենում այս բառը բացակայում է։

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Հոդված 45։ *Ուսումնական խորհուրդը բաղկացած է 7 գրագետ աշխարհականներից, որոնք ղեկավարում են հայ ժողովրդի կրթուբյան գործը և ուշադիր հետևում են, որպեսզի ազգային դպրոցները գտնվեն բարեկարգ վիճակում։ Նրանց պարտավորուբյունների մեջ է մտնում նաև՝ օգնել այն կազմակերպուբյուններին, որոնք ըստեղծված են տղաների և աղջիկների դաստիարակուբյան և կրթուբյան համար պատրաստել հմուտ դասատուներ և կազմել հատուկ գրքեր դպրոցների համար։ Ուսումնական խորհրդի տնօրինուբյամբ է կատարվում տարեկան քննուբյունների, դասագրքերի նախապատրաստումը և վկայականների հանձնումը։ Հոգևոր սանները իրենց կոչման չնորհումը ստանում են կրոնական ժողովից։ Կրոնական ժողովն է որոշում նաև դասատուների նշանակումը, կրոնական դասագրքերի կազմումը, և քննուբյունների ընդունումը։*

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Հոդված 46։ *Տնտեսական խորհուրդը բաղկացած է 7 աշխարհիկ տնտեսագետներից, որոնց ձայների մեծամասնուբյամբ ընտրում է քաղաքական ժողովը։ Տնտեսական խորհրդի պարտականուբյունն է՝ հետևել կ. Պոլսում գտնվող բոլոր ազգային հաստատուբյունների և նրանց ունեցվածքի մատակարարմանը, ինչպես նաև հսկել և հոգ տանել այդ հաստատուբյունների բարեկարգմանը։ Տնտեսական խորհուրդը ուշադիր պետք է հետևի, որպեսզի բոլոր ազգային ունեցվածքները ունենան օրինական մուրհակներ։ Կ. Պոլսում և գավառներուն գտնվող ազգային անշարժ ունեցվածքի մուրհակների պատճեն-*

ները հավաքվում են տնտեսական խորհրդի կողմից և պահ են տրվում պատրիարքարանի գրասենյակում։ Ազգային ունեցվածքի գնումն ու ու վաճառումը չի կարող տեղի ունենալ առանց տնտեսական խորհրդի իրավասության, քաղաքական ժողովի համաձայնության և առանց պատրիարքի վավերացման։ Անհրաժեշտությունից ելնելով, մյութեվելլիության ձևը վերացված է հայոց ազգի համար։ Կ. Պոլսում և նրա չրջակայքում առանց տնտեսական խորհրդի գիտության և քաղաքական խորհրդի համաձայնության, չի կարելի որևիցե չինություն կամ վերանորոգում ձեռնարկել։ Տնտեսական խորհուրդը հետևում է ֆինանսական և կտակների գործերին, ինչպես նաև թաղական խորհուրդների և հիվանդանոցների հոգաբարձուների մատակարարման հարցերին և որոշյալ ժամանակներին հաշվետվություն պահանջելով, հաղորդելու է քաղաքական ժողովին։ Տնտեսական խորհուրդը նոր տարվանից երկու ամիս առաջ ստուգում է եկամուտները, ծախսումները և, հաջորդ տարվա հաշվեկչիռը կազմելով, ներկայացնում է քաղաքական ժողովին։

ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Հոդված 47։ Դատական խորհուրդը բաղկացած է 8 ամուսնացած, իրավաբան և 40 տարին բոլորած անձերից, որոնցից 4-ը պետք է լինեն կրոնական, իսկ 4-ը՝ աշխարհական։ Դատական խորհրդի անդամները ձայների մեծամասնությամբ ընտրվում են խառը ժողովի կողմից։ Դատական խորհրդի նախագահը պատրիարքի փոխանորդն է։

Դատական խորհրդի պարտականությունն է՝ հարթել ընտանեկան տարաձայնությունները, ինչպես նաև քննարկել և լուծել այն դատական գործերը, որոնք ներկայացվում են Բարձրագույն դռան կողմից։ Եթե դատական խորհուրդը ի վիճակի չլինի լուծելու դատական

որևէ գործ, ապա դիմում է կրոնական, քաղաքական կամ էլ խառը ժողովին։ Եթե մեղադրվող կողմը բողոքարկի դատական խորհրդի ընդունած որոշումը, ապա տվյալ գործը քննարկվում է հիշյալ ժողովներից մեկում։

ՎԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Հոդված 48։ Վանքերը հանդիսանում են ազգային սեփականություն և դրա համար էլ տնտեսության ընդհանուր կառավարումը և ծախսումների ու եկամուտների հսկողությունը պատկանում է ազգին։ Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր վանք ունենա իր ուրույն կանոնադրությունը։ Կրոնական ու քաղաքական ժողովները միատեղ հաշվի են առնում յուրաքանչյուր վանքի միաբանության և խորհրդի կարծիքը և դրա հիման վրա կազմելով կանոնադրությունը, ներկայացնում են Ազգային ընդհանուր ժողով։

Այդ կանոնադրության հիմնական դրույթները հետևյալներն են։

ա/ Յուրաքանչյուր վանքի կառավարումը վերաբերում է տվյալ միաբանությանը, իսկ վանքերի ընդհանուր ղեկավարումը պատկանում է վանական խորհրդին, որը գործում է պատրիարքարանի կենտրոնական վարչության հսկողության ներքո։

բ/ Յուրաքանչյուր վանահայր ընտրվում է իր միաբանության կողմից՝ կենտրոնական վարչության հավանությամբ և հաստատվում է պատրիարքի կողմից։ Վանահայրը պետք է բոլորած լինի 35 տարին և հանդիսանա Օսմանյան կայսրության հպատակ կղերականներից։

գ/ Բոլոր վանքերը պարտավոր են հոգալ ազգի բարոյական զարգացման մասին, դրա համար դրանցից յուրաքանչյուրը իր հնարավորության սահմաններում, պետք է ունենա հոգևոր ուսումնարան, դրադարան, տպա-

րան, հիվանդանոց և ազգի համար այլ օգտակար կազմակերպություններ։

Վանքի խորհուրդը բաղկացած է յոթը հոգուց, որոնց ձայների մեծամասնությամբ ընտրում է քաղաքական ժողովը։

Վանական խորհրդի պարտականությունն է՝ հետևել և ղեկավարել կանոնադրության կատարումը, ըստուգել և կանոնավորել յուրաքանչյուր վանքի եկամուտներն ու ծախսումները։

Վանական խորհուրդը յուրաքանչյուր վանքի միաբանությունից ընտրում է անհրաժեշտ մարդկանց, որպեսզի ղեկավարեն վանքի տնտեսությունը։ Նրանք վանահայրի նախագահությամբ և իրենց վանքի կանոնադրության հիման վրա կառավարում են վանքի տնտեսությունը և որոշակի ժամանակներում հաշվետվություն ներկայացնում խորհրդին։

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

Հոդված 49։ Ֆինանսական խորհուրդը բաղկացած է 7 հաշվագետ անձերից, որոնց ձայների մեծամասնությամբ ընտրում է քաղաքական ժողովը։ Ֆինանսական խորհրդի պարտականությունն է՝ կառավարել ազգային կենտրոնական դրամարկղը։ Այս դրամարկղի եկամուտն են ազգային հարկերը, կ. Պոլսի պատրիարքարանի գրասենյակի եկամուտները, կտակները և ազգային զանազան նվիրատվությունները։ Դրամարկղի ծախսումներին մեջ են մտնում պատրիարքարանի և գրասենյակի սովորական ծախսերը, կենտրոնական վարչության տրամադրության տակ գտնվող ազգային հաստատությունների և կրոտյալ թաղամասերին տրվող նպաստները, ինչպես նաև զանազան պատահական ծախսերը։ Ստանալով բոլոր այս եկամուտները, ֆինանսական խորհուրդը իրացնում է

բոլոր վերոհիշյալ ծախսումները, իհարկե, տնտեսական խորհրդի գիտությամբ և քաղաքական ժողովի հավանությամբ։

Ֆինանսական խորհուրդը պարտավոր է իր հսկողությանը հանձնված ազգային դրամարկղի հաշիվը տոմարակալության կանոնով կարգադրել և որոշված ժամանակին հաշվեցուցակ ներկայացնել տնտեսական խորհրդին, որը և ստուգելուց, վավերացնելուց հետո, հաղորդում է քաղաքական ժողովին։

ԿՏԱԿՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Հոդված 50։ Կտակների խորհուրդը բաղկացած է 7 անդամներից, որոնցից 3-ը հոգևորական, իսկ 4-ը՝ աշխարհիկ լինելով, ձայների մեծամասնությամբ ընտրվում են խառը ժողովի կողմից։ Կտակների խորհրդի պարտականությունն է՝ ղեկավարել ազգային կտակները, հետևել դրանց օրինավոր կատարմանը և հսկել, որպեսզի այն գործադրվի կտակարարի նպատակի և ցանկության համաձայն։

Լսելով տնտեսական և կտակների խորհուրդներին, խառը ժողովը կազմում է անհրաժեշտ կանոնադրություն կտակների խորհրդի համար, որը և հաստատվում է ընդհանուր ժողովում։ Կտակների խորհուրդը որոշակի ժամանակներում պետք է հաշվետվություն ներկայացնի տնտեսական խորհուրդ, որը ստուգվելուց և հաստատվելուց հետո հաղորդում է քաղաքական ժողովին։

ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հոդված 51։ Բժշկական խորհուրդը բաղկացած է 9-ը անձնավորություններից, որոնք ձայների մեծամասնությամբ ընտրվում են քաղաքական ժողովի կողմից։

Խորհուրդի 2 անդամները պետք է վկայեալ բժիշկներ լինեն։ Բժշկական խորհրդի պարտականութիւնն է՝ հետևել ազգային հիվանդանոցների ունեցվածքին ու եկամուտին և կառավարել դրանք ազգային դրամարկղի օգնութեամբ և ստացված հասույթներով։ Խորհուրդը բաժանվում է 4 բաժինների։ Նրանցից մեկը բուժում է աղքատ հիվանդներին, երկրորդը զբաղվում է ծեր և անկարող աղքատներին խնամելու հարցով, երրորդը՝ հոգեկան հիվանդներին, իսկ չորրորդը՝ նշանակված է զբաղվելու որբերի կրթութեան հարցով։

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հոդված 52։ Թաղական խորհուրդը բնակավայրերի համեմատ բաղկացած է 5-ից մինչև 12 անդամներից։ Թաղական խորհրդի պարտականութիւնն է՝ նշանակված թաղում հետևել ազգային գործերին, ղեկավարել դպրոցն ու եկեղեցին, խնամակալել աղքատներին և համայնքի ներսում առաջ եկած տարաձայնութիւնները քննարկել և հարթել։

Թաղական խորհուրդը պետք է հոգ տանի եկեղեցու բարեկարգման, երեխաների համար դպրոցների կառուցման, ինչպես նաև աղքատ ընտանիքներին օգնելու խնդրի մասին։

Հոդված 53։ Ցուրաքանչյուր թաղ պետք է թաղական խորհրդի տրամադրութեան ներքո ունենա մեկ դրամարկղ։ Այս դրամարկղի եկամուտն են կազմում տվյալ թաղի բնակչութեան հարկը, դպրոցի և եկեղեցու հասույթները, կտակով կամ այլ պարագաներով կատարված նվիրատվութիւնները։ Դրամարկղի ելքն են կազմում եկեղեցու, դպրոցի և աղքատների վրա կատարված անհրաժեշտ ծախսումները։

Ցուրաքանչյուր թաղական խորհուրդ պետք է

կանոնավոր կերպով, հատուկ մատյաններում գրանցի թաղում եղած ծնունդները, պսակադրությունները և մահերը։

Հոդված 54։ Թաղական խորհուրդները իրենց պարտականությունները կատարելու ընթացքում, անմիջականորեն կապված են վերոհիշյալ խորհուրդների հետ։ Այսինքն՝ դպրոցական գործերում՝ ուսումնական խորհրդի հետ, տնտեսական և դրամական գործերում՝ դատական խորհրդի հետ, և որոշակի ժամանակներում հաշվետու են նրանց առջև։

Հոդված 55։ Յուրաքանչյուր թաղական խորհուրդ ընտրվում է իր թաղի համայնքի կողմից։ Թաղի 25 տարին բոլորած յուրաքանչյուր անհատ, եթե կանոնադրության 67-րդ հոդվածի հիման վրա չի զրկվել ընտրելու իրավունքից, կարող է մասնակցել թաղական խորհրդի անդամների ընտրությանը։

Հոդված 56։ Թաղական խորհուրդների դերի և գործունեության համար կրոնական և քաղաքական ժողովները կազմում են կանոնադրություն։ Թաղական խորհուրդների գործունեությունը տևում է 4 տարի, իսկ 5-րդ տարվա սկզբին, խորհուրդը նորացվում և վերընտրվում է։

ԱԶԳԱՅԻՆ* ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 57։ Ազգային ընդհանուր ժողովը բաղկացած է 140 պատգամավորներից, որոնցից.

ա/ մեկ չորրորդ մասը, այսինքն՝ քսանը, կրոնականներ են, որոնք ընտրվում են կ. Պոլսի կղերականների կողմից.

բ/ երկու չորրորդ մասը, այսինքն՝ քառասունը, գավառային պատգամավորներ են.

գ/ Չորս չորրորդ մասը, այսինքն՝ ութսունը, կ.

*Թուրքերեն բնագրում բացակայում է։

Պոլսի թաղերից ընտրված պատգամավորներ են։

Հոդված 58։ Կրոնական և քաղաքական ժողովների անդամները կարող են ներկա գտնվել ընդհանուր ժողովին, սակայն, եթե ընդհանուր ժողովի անդամ չեն, ապա ձայն տալու իրավունք չունեն։

Հոդված 59։ Ընդհանուր ժողովը չի կարող նիստ գումարել, քանի անդամների մեծագույն մասը, այսինքն՝ 71 պատգամավորներ ներկա չգտնվեն։

Հոդված 60։ Ընդհանուր ժողովի պարտականությունն է՝ ընտրել կաթողիկոսին, պատրիարքին, ազգային գործիչներին, կրոնական և քաղաքական անդամներին, հետևել ազգային ժողովի գործունեությանը, քննարկել և լուծել այն գործերը, որոնք համապատասխան ժողովներում չեն հարթվել, և, վերջապես, անխախտ պահել այս կանոնադրությունը։

Հոդված 61։ Ընդհանուր ժողովը գումարվում է.

ա/ Վաղեմի սովորության համաձայն, ամեն երկու տարին մեկ անգամ, Ապրիլի վերջին, որպեսզի լսվի ազգային վարչության հաշվետվությունը, քննարկվի տնտեսական խորհրդի հավաքած և ծախսած գումարների ընդհանուր հաշիվը, փոխի կրոնական և քաղաքական ժողովների անդամներին և ընտրի նորին և որոշի հաջորդ երկու տարիների ազգային հարկը։

Ընդհանուր ժողովի գումարումը տևում է երկու ամիս։

Կրոնական և քաղաքական ժողովների այն ներկայացուցիչները, որոնք ընդհանուր ժողովի պատգամավորներ են, կարող են նիստերի ժամանակ ելույթ ունենալ ամեն մի հարցի կապակցությամբ, սակայն ձայնի իրավունք ունեն միայն հարկային և ընտրական հարցերում։

բ/ Կաթողիկոսի ընտրության համար.

գ/ Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքների ընտրության համար.

դ/ Կրոնական և քաղաքական ժողովների միջև, կամ այս ժողովների և պատրիարքի միջև առաջ եկած տարաձայնությունները հարթելու համար։ Նման հանդամանքներում, ընդհանուր ժողովի ընդդիմադիր կողմերը միայն ձայնի իրավունք ունեն, բայց ոչ քվեարկության։

ե/ Կանոնադրությանը վերանայելու և վերջապես այնպիսի հարցերի համար, որոնց լուծումը կապված է միայն ընդհանուր ժողովի հետ։

զ/ Արտակարգ նիստեր գումարելու համար, որի պատճառը հայտնվում է Բարձրագույն դուռ, որպեսզի ձեռք բերվի նրա հավանությունը։

Հոդված 62։ Պատրիարքը գումարում է ընդհանուր ժողով՝ կրոնական կամ քաղաքական ժողովների կամ ընդհանուր ժողովի պատգամավորների մեծամասնության պահանջով։ Ինչպես նշվեց վերևում, նման արտակարգ ժողովների գումարման համար, անհրաժեշտ է կառավարության համաձայնությունը։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 63։ Կ. Պոլսում գտնվող բոլոր կղերականները պատրիարքի հրավերով Ապրիլի վերջին հավաքվում են որոշված վայրերում, և գաղտնի քվեարկությամբ ու ձայների մեծամասնությամբ եպիսկոպոսների, վարդապետների և քահանաների միջից ընտրում են պատգամավորներ ընդհանուր ժողովի համար։ Ընտրվող անձնավորությունները պետք է առնվազն 5 տարվա ձեռնադրված լինեն, 35 տարին բոլորած և որևիցէ դատապարտություն չունենան։

Հոդված 64։ Կրոնական պատգամավորների լիազորությունը 10 տարի ուժի մեջ է, սակայն երկու տարին մեկ անգամ, նրանց 5-րդ մասը ենթակա է փոփոխման և

նորացման։ Այդ 5-րդ մասը, 8 տարվա ընթացքում արձակվում և ընտրվում է վիճակահանությամբ։ Նրանք, ովքեր վիճակահանությամբ ընտրվելով վերջացնում են 10 տարվա ծառայությունը, կարող են կրկին վերընտրվել։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՐՀԻԿ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 65։ Ընտրական իրավունքի նախապայմանն է՝ ազգային հարկը և անձնական արժանիքը։

Որպեսզի ազգային հարկը ընտրության իրավունք ընձեռնի, ընտրողը պետք է տարին առնվազն 75 դուրուշ ընդհանուր հարկ վճարի։

Ընտրելու արժանի անձերն են՝ պետական գրասենյակների պաշտոնակատարները, բժիշկները, գրողները, ուսուցիչները և այն անձնավորությունները, որոնք լումա ունեն ազգային ծառայության մեջ։

Հոդված 66։ Ընտրության իրավունք ունեն Օսմանյան կայսրության 35 տարին լրացրած հպատակները։

Հոդված 67։ Ընտրության իրավունքից զրկվում են հետևյալ 4 խմբի անձնավորությունները.

ա/ Հանցագործության համար դատապարտված անձինք, որոնք կայսրության քրեական օրենքի համաձայն զրկված են քաղաքացիական իրավունքից.

բ/ Ազգային տնտեսական գործերում իրենց չարաշահումների հետևանքով ազգային որևիցե ժողովի կողմից դատապարտված և պաշտոնազրկված անձնավորությունները.

գ/ Կառավարական դատավորների կողմից պատժված անձնավորությունները, որոնք զրկված են ընտրելու իրավունքից մինչև իրենց պատժի պայմանաժամը լրանալը.

դ/ Հոգեկան հիվանդները, որոնք զրկվում են ըն-

տրուքիայան իրավունքից, մինչև կատարյալ առողջանալը։

Հոդված 68։ Ընտրելու իրավունք ունեն Օսմանյան կայսրուքիայան 30 տարին բոլորած այն անհատները, որոնք ծանոթ են պետուքիայան օրենքներին, հմուտ՝ ազգային գործերին և 67-րդ հոդվածի համաձայն, զրկված չեն ընտրելու իրավունքից։ Կ. Պոլսի թաղերի կողմից ընտրվող 80 պատգամավորների 7-ը պետք է լինեն աստիճանավոր անձինք։

Հոդված 69։ Կ. Պոլսի թաղերի և գավառների կողմից ընտրվող պատգամավորների բաշխման ցուցակը կազմելու համար, յուրաքանչյուր 2 տարին մեկ անգամ, փետրվար ամսվա սկզբին կրոնական և քաղաքական ժողովները հարակից խորհուրդների նախագահների հետ մեկտեղ, ընդհանուր ժողով են գումարում և պատրիարքարանի գրասենյակի տված ընդհանուր ազգահամարի համեմատ, որոշում են յուրաքանչյուր թաղի և գավառի պատգամավորների թիվը։ Այս կազմված ցուցակի համեմատ, յուրաքանչյուր թաղի և գավառի համար նշանակված պատգամավորների թիվը պատրիարքի կողմից ծանուցվում է նրանց։

Այս պատգամավորների լիազորուքիյունը 10 տարի ուժի մեջ է, սակայն երկու տարին մեկ անգամ, նրանց 5-րդ մասը ենթակա է փոփոխման և վերանայման։ Այս հինգերորդ մասի ընտրուքիյունը կատարվում է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ, թե՛ թաղերի և թե՛ գավառների կողմից՝ իրենց մեջ պահելով փոփոխակի կարգը։ Այս փոփոխակի կարգը հինգերորդ մասի մեջ 8 տարիների ընթացքում, որոշվում է վիճակահանուքիյամբ, պայմանով, որ եթե տվյալ թաղի ընտրողների թիվը կամ գավառի բնակչուքիյան թիվը ավելացել կամ պակասել է, ապա տվյալ թաղի կամ գավառի համար նշանակված պատգամավորների թիվն էլ կամ պակասելու է կամ էլ ավելանալու։

Պատգամավորների հրաժարականի կամ մահվան դեպքում, պետք է ընտրվեն այլ անձինք՝ տարեսկզբից երկու ամիս չուտ։ Թաղական պատգամավորները ընտրվում են Կ. Պոլսի թաղային բնակչության կողմից, իսկ գավառայինները՝ յուրաքանչյուր գավառի ընդհանուր ժողովի կողմից։

Հոդված 70։ Անհրաժեշտություն չկա, որ ընտրվող պատգամավորները լինեն տվյալ թաղի կամ գավառի բնակիչ։ Բավական է, որ նրանք բնակվեն, Կ. Պոլսում և ունակություն հանդես բերեն տվյալ թաղի կամ գավառի ազգային գործերում, և իրենց հայրենասիրությամբ, արդարախոհեմությամբ արժանի լինեն իրենց ընտրողների հանդեպ։

Ընտրվող պատգամավորները ոչ միայն տվյալ թաղի կամ գավառի պատգամավոր են ընդհանուր ժողովում, այլև համազոր իրավունքներով ազգի պատգամավորներ։

Հոդված 71։ Թաղային պատգամավորների 5-րդ մասի ընտրության համար, պատրիարքը, յուրաքանչյուր երկու տարին մեկ, փետրվար ամսին, առանձին տեղեկացնում է ընտրական տեղամասերին, պատգամավորների թվի և ընտրության կարգի մասին։

Այս ծանուցագրի հիման վրա, թաղական խորհուրդները նախաձեռնում են պատգամավորների ընտրությունը։ Այս խորհրդի նախագահն է տվյալ թաղի քարոզիչը, կամ նրա բացակայության դեպքում՝ ավագերեցը։ Այս խորհրդի մեջ ընդգրկվում են նաև տվյալ թաղի երեքից վեց երևելի անձինք։

Այսպիսով, յուրաքանչյուր ընտրական ժողով իր թաղում ստուգում է ընտրողներին և այբբենական կարգով կազմում է ընտրողների ցուցակը և առնվազն 8 օր կախած պահում թաղական խորհրդի պատից։ Ընտրությունը հեշտացնելու համար, ընտրող ժողովը ընտրվող թեկնածուների թվից երեք անգամ ավելի ցուցակ է կազ-

մում, սակայն ընտրողները բոլորովին պարտավոր չեն ընտրվողների այդ ցուցակին հետևելու։

Նման կարգով ընտրվում են նաև գավառային ընդհանուր ժողովների պատգամավորները։

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հոդված 72։ *Ընտրողների ցուցակը ցուցադրվելուց մեկ շաբաթ հետո, կիրակի առավոտյան, ժամերգությունից ավարտից հետո սկսվում է քվեարկությունը թաղական խորհրդի շենքում հետևյալ կերպ։ Թաղական խորհրդի նախագահը ցուցակով հրավիրում է ընտրողներին, որոնք այդ ցուցակի մեջ իրենց անվան դիմաց ստորագրելուց հետո, առանձին թղթի վրա գրում են ընտրվող թեկնածուներին՝ յուրաքանչյուրի դիմաց նշելով ազգանունը, բնակության վայրը և մասնագիտությունը։ Այնուհետև ծալելով թուղթը գցում են հատուկ քվեատուփի մեջ։ Այն ընտրողները, որոնք տարբեր պատճառներով չեն կարող ընտրությանը ներկայանալ, ուղարկում են իրենց ձայնը վավերացված նամակով։*

Հոդված 73։ *Քվեարկությունը գաղտնի է, դրա համար էլ ընտրողները առանձնացված են լրացնում քվեթերթերը։*

Հոդված 74։ *Քվեարկությունը ավարտվելու է նույն օրը։ Այն ընտրողները որոնք չեն քվեարկում նույն օրը, զրկվում են բողոքելու իրավունքից։*

Հոդված 75։ *Ոչ ոք միևնույն ժամանակ չի կարող քվեարկել երկու թաղերում։*

Հոդված 76։ *Եթե թաղամասերը եւ թեմերը իրարու մոտ են, ապա ընտրողները կարող են համատեղ ընտրություն անցկացնել, իսկ եթե իրարից հեռու են, ապա յուրաքանչյուր թաղ և թեմ քվեարկությունը առանձին է անցկացնում և ապա միացնում երկու կողմերի ար-*

դյունքները։

Հոդված 77։ Նույն օրը, քվեարկությունից հետո, թաղական խորհրդի նիստում բացվում է քվեատուփը և նշանակված առուգող հանձնաժողովը հաշվում է քվեները և համեմատում ընտրողների թվի հետ։

Եթե տարբերություն նկատվի և կասկած առաջանա կեղծիքի մեջ, ապա թաղական խորհուրդը որոշում է կրկին քվեարկություն անցկացնել (հետագա օրերից մեկը՝ մինչև առաջիկա կիրակին)։ Նույն ձևով, եթե պատգամավորների նշանակված թիվը չլրացնի առաջին ընտրության ընթացքում, ապա մնացածի ընտրության համար նշանակվում է հետագա օրերից մեկը՝ մինչև առաջիկա կիրակին։

Հոդված 78։ Եթե ընտրողներից մեկը իր քվեաթերթի վրա հարկ եղածից ավելի թեկնածուների անուններ գրի, ապա այդ ավելորդ անունները ընդունելի չեն համարվի։ Անվավեր են համարվում նաև այն քվեաթերթերը, որոնց մեջ ընդգրկված անունները չեն գրված վերից վար հերթականությամբ։

Հոդված 79։ Պատգամավոր ընտրվում են այն թեկնածուները, որոնք ունեն ընտրողների ընդհանուր թվից կեսից ավելի քվեներ և ձայների առավել մեծամասնություն։ Եթե երկու թեկնածուներ ունենան հավասար թվով քվեներ, ապա ընտրվում է նրանցից ավագ տարիք ունեցողը։

Հոդված 80։ Եթե առաջին քվեարկության ժամանակ ձայների մեծամասնություն չստացվի, ապա, թաղական խորհուրդը առանձնացնում է երկու թեկնածուների, որոնք ձայների մեծամասնություն ունեն և երկրորդ քվեարկությունը օրինական կերպով կկայանա այդ երկուսի միջև։

Հոդված 81։ Յուրաքանչյուր թաղական խորհուրդ, հատուկ տեղեկագրով պատրիարքին է ներկայացնում ընդ-

տըրված պատգամավորների անունները, նչելով ազգանունները, բնակութեյան վայրը, մասնագիտութեյունը և քվեարկութեյան մանրամասնութեյունները։

Պատրիարքն էլ իր հերթին, այդ տեղեկագիրը ներկայացնում է քաղաքական ժողով, որը քննարկում և ըստուգում է պատգամավորների ընտրութեյան պայմանները։ Ստուգումից հետո, պատրիարքը պաշտոնապես հաղորդում է յուրաքանչյուր պատգամավորի օրինական կերպով ընտրված լինելու մասին և որոշված ժամանակին հրավիրում է բոլորին՝ ընդհանուր ժողովի գումարման համար։

Հոդված 82։ Ընդհանուր ժողովը իր առաջին նիստում, լսելով քաղաքական ժողովի կողմից ստուգված տեղեկագրերի մասին, վավերացնում է ընտրութեյունները և պատգամավորների լիազորութեյունները։ Այսպիսով, օրինականորեն կազմվում է ընդհանուր ժողովը։

• Կ. Պոլսի պատգամավորների մեծ մասը եթե ընտրված լինեն, առանց սպասելու գավառային պատգամավորների ընտրութեյան, ընդհանուր ժողովը կարող է գումարվել։

Հոդված 83։ Եթե որևէ մեկը միևնույն ժամանակ ընտրվում է մի քանի թաղերի կամ գավառների կողմից, ապա նա ինքն է որոշում, թե ո՞ր թաղում կամ ո՞ր գավառում կընդունի պատգամավորի պաշտոնը, իսկ եթե նա ինքնուրույն չորոշի, ընդհանուր ժողովն է որոշում վիճակահանութեյամբ։

Հոդված 84։ Ընդհանուր ժողովի պատգամավորների այբբենական կարգով կազմված անունների ցանկը պետք է կախվի ընդհանուր ժողովի սրահում, որտեղ յուրաքանչյուր անվան դիմաց նչվելու է հրաժարական տվողը, մահը կամ այլ պարագաները։ Այդ ցուցակը նորացվելու է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ։

ԺՈՂՈՎՆԵՐԻՆ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ՔԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Հոդված 85։ *Յուրաքանչյուր ժողով և խորհուրդ ունենալու է մեկ գրասենյակ՝ նախագահի և քարտուղարի գլխավորությամբ, կամ էլ նրանց տեղակալներով։ Նրանք բոլորն էլ նշանակվում են ժողովի անդամների կողմից և տարեց-տարի նորացվում են**։

Հոդված 86։ *Ժողովը չի կարող գումարվել, եթե անդամների մեծամասնությունը ներկա չէ։*

Հոդված 87։ *Որևէ հարցի քննարկումից հետո, ուշադրության է առնվում ժողովականների կարծիքը և հարցը որոշվում է քվեարկությամբ ու ձայների մեծամասնությամբ։ Եթե ձայները հավասար լինեն, ապա հարցը որոշվում է նախագահի կարծիքով, իսկ նրա բացակայության դեպքում՝ տեղակալի կողմից։*

Հոդված 88։ *Ընդհանուր ժողովում քննարկվող հարցի վերաբերյալ որոշում ընդունելու համար, անհրաժեշտ է, որ երկու ժողովներն էլ առանձին քվեարկեն։ Եթե երկու ժողովների ձայների մեծամասնությամբ ընդունվում է միևնույն որոշումը, ապա հարցը համարվում է լուծված։ Եթե ժողովները տարակարծիք լինեն, ապա տվյալ հարցը լուծվում է ընդհանուր ժողովում։ Խառը ժողովը օրինավոր է համարվում, եթե ներկա է երկու ժողովների մեծամասնությունը։*

Հոդված 89։ *Ընդհանուր ժողովը գումարվելուց առնվազն 6 օր առաջ, պետք է պատրիարքարանի կողմից հրավիրագրեր ուղարկվեն անդամներին։*

ԱԶԳԱՑԻՆ ՀԱՐԿ

Հոդված 90։ *Վաստակի տեր յուրաքանչյուր չա-*

**Հայերեն օրինակում գրված է՝ «Ատենական դիվանը տարին անգամ մը կնորոգվի, և անդամներն անմիջապես վերընտրելի են»։*

փահաս անձ, պարտավոր է դրամական օժանդակությամբ օգնելու ազգային ծախսումներին։ Այդ հարկը նշանակվում է տարին մեկ անգամ և բաշխումը կատարվում է ըստ յուրաքանչյուր անհատի կարողության։

Հոդված 91։ Ազգային հարկը լինում է երկու տեսակ, մեկը՝ ընդհանուր, որը գանձվում է պատրիարքարանի կողմից՝ կենտրոնական դրամարկղի և ազգային ընդհանուր ծախսումների համար, իսկ մյուսը՝ մասնավոր, որը գանձվում է թաղական խորհրդի կողմից՝ թաղական դրամարկղի համար՝ որը հատկացված է թաղի մասնավոր ծախսումների համար։

Հոդված 92։ Կ. Պոլսում, հարկի բաշխումը և գանձումը որոշվում է քաղաքական ժողովի կողմից և հաստատվում ընդհանուր ժողովում, իսկ մասնավորը որոշվում և հաստատվում է յուրաքանչյուր թաղական խորհրդում։

Նույն ձևով են որոշվում նաև գավառային ընդհանուր և մասնավոր հարկերը։

Հոդված 93։ Գավառների կողմից պատրիարքարանի դրամարկղին տրվող հարկի բաշխումը և գանձումը որոշվում է ընդհանուր ժողովի կողմից և գործադրվում Բարձրագույն դռան գիտությամբ։

[ԳԱՎԱՌԱՑԻՆ] ԹԵՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 94։ Թեմական առաջնորդը, հանդիսանալով գավառային ժողովի նախագահը՝ վարում է նրա գործադիր իշխանությունը։ Նրա պարտականությունն է՝ հետևել ներկա կանոնադրության գործադրմանը։

Հոդված 95։ Թեմական առաջնորդը չի կարող իր աթոռից հեռանալ և բնակվել վանքում։ Նա բնակվելու է գավառի կենտրոնում, ուր գումարվում է գավառային ժողովը։

Եթե թեմական առաջնորդը միևնույն ժամանակ հանդիսանում է նաև վանքի վանահայրը, ապա, վանքի հեռավորությունը կենտրոնից մի օրվա ճանապարհ լինելու դեպքում, կարող է զբաղեցնել երկու պաշտոնների և հաճախ այցելել վանք։

Իսկ եթե վանքը գտնվում է մի օրվա ճանապարհից հեռու տարածության վրա, ապա վանքում նշանակում է իր տեղակալին, և ինքը բնակվում է քաղաքում։ Անհրաժեշտության դեպքում, նա կարող է այցելել գավառային իր ցանկացած վայրը։

Հոդված 96։ Թե՛ կ. Պոլսում և թե՛ գավառներում, յուրաքանչյուր թաղամաս ունենալու է իր խորհուրդը, դրամարկղը և գրասենյակը։ Կրոնական և քաղաքական ժողովները գումարվում են թեմական առաջնորդի նստավայրում, իսկ քաղաքական ժողովը ունենալու է մեկ գավառային դրամարկղ։

Թեմը ունենալու է նաև գավառային գրասենյակ, որտեղ թաղական խորհուրդների տվյալների համաձայն կազմվում է գավառային բնակչության մարդահամարը։

Հոդված 97։ Թեմի առաջնորդի ընտրությունը, պատրիարքի նման, տեղի է ունենում գավառի ընդհանուր ժողովում, իսկ ընտրության տեղեկագիրը պատրիարքին է ուղարկվում տեղի խառը ժողովի կողմից։ Կ. Պոլսի խառը ժողովի հաստատումից հետո, պատրիարքը նշանակում է թեմի առաջնորդին և տեղեկացնում է Բարձրագույն դռան՝ պաշտոնական հրամանագիր ձեռք բերելու համար։

Հոդված 98։ Գավառային ժողովները կազմակերպվում են Կ. Պոլսի ժողովների սկզբունքով։ Նրանց պարտականությունները համանման են։ Գավառային ժողովի անդամների թիվը սահմանվում է մեկ անդամ՝ յուրաքանչյուր գավառի բնակչության թվին համապատասխան։

Մինչև որ գավառներում հաստատվի օրինական

ազգային հարկը, գավառային ընդհանուր ժողովի անդամները ընտրվելու են միայն այն անդամների կողմից, որոնք պետութեան առաջին, երկրորդ և երրորդ աստիճանի տուրք են վճարում։

Կենտրոնական վարչութիւնը գավառային թեմերի հետ համաձեռ, յուրաքանչիւր գավառի բնակչութեան համեմատ, որոշում է ժողովների կազմը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ*

Հոդված 99։ Այս կանոնադրութեան հիմնական դրոյթները անփոխարինելի են։ Այսուհանդերձ, եթե փորձութիւնը անհրաժեշտութիւն առաջացնի առանձին մասերի փոփոխութեան, ապա ընդհանուր ժողովը կանոնադրութեան հաստատումից 5 տարի հետո, կազմում է կրոնական խորհուրդ, նրա մէջ ընդգրկելով երեքական անդամներ կրոնական և քաղաքական ժողովներից, երկուական՝ վերոհիշեալ չորս խորհուրդներից, ինչպես նաև 6 անձնավորութիւններ՝ դրսից կամ ընդհանուր ժողովից, ընդամենը 20 հոգի։ Այս խորհուրդը որոշում է անհրաժեշտ փոփոխութիւնները, որոնք ընդհանուր ժողովում հաստատվելուց հետո ներկայացվում են Բարձրագոյն դուռ և գործադրվում կայսերական հրամանագրով։

*Հայերեն օրինակում գրված է «վերաքննութիւն սահմանադրութեան»։

ԼԵՌՆԱԼԻԲԱՆԱՆԻՆ ՏՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԵՓՈԽՎԱԾ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՍ Է[1]

Իմ կայսրության հպատակների ձեռք բերած արտոնությունների և բարեփոխությունների հիման վրա, Լեռնալիբանանում բնակվող ժողովրդին ևս սրանից առաջ ներքին կառավարման համար երեք տարի ժամկետով սահմանված էր [հատուկ] կանոնադրություն։ Հիշյալ ժամկետը ավարտված լինելով, կանոնադրությունը կրկին քննարկվել է և նրա մի քանի հոդվածները ենթարկվել են բարեփոխման։

Այս պարագան, իմ փառավոր սուլթանության հավանության արժանանալով, հաստատվում է և ուժի մեջ է կիրառության համար։

Հիշյալ կանոնադրությունը կայանում է հետևյալում։

Հոդված 1։ Լեռնալիբանանը կառավարվելու է Օսմանյան կայսրության կողմից նշանակված և ուղղակի Բարձրագույն դռնից կախում ունեցող մի քրիստոնյա մութասարրիֆի կողմից։ Մութասարրիֆի նշանակումը ցմահ չէ և ենթակա է պաշտոնանկության։ Կառավարչի պաշտոնում Մութասարրիֆը պետք է հսկի, որպեսզի պահպանվի կարգ ու կանոնն ու խաղաղությունը Լեռնալիբանանի բոլոր կողմերում և ապահովվի հարկերի գանձումը։ Մութասարրիֆը

կայսրության կողմից տրված հրամանի համաձայն և իր պատասխանատվության համար, նշանակում է տեղական պաշտոնյաներ և դատավորներ, միևնույն ժամանակ նախագահում է մեծ ժողովում։ Մուֆթասարրիֆը 8-րդ հոդվածի համաձայն, գործադրելու է դատավորների կողմից օրենքի հիման վրա տրված բոլոր վճիռները։

Հոդված 2։ Ամբողջ Լեռնալիբանանի կառավարման համար կազմելու է մի գործադիր մեծ ժողով հետևյալ 12 երեսփոխաններից։ Կեսրուանից երկու մարոնի երեսփոխան, Զեզինից՝ 3 երեսփոխան՝ մարոնի, դյուրզու և մահմեդական, Մեթենից 4 երեսփոխան՝ մարոնի, հույն, դյուրզյու և մյութվելի։ Շուֆից[2] միայն մեկ դյուրզու, Կուրայից՝ մեկ հույն, Զահլեից՝ մեկ հույն կաթոլիկ։ Ժողովը հետևելու է հարկերի հավաքման և ելևմտից գործերին։ Մուֆթասարրիֆի կողմից ներկայացված հարցերը քննարկվելու են այս ժողովում և ընդունվելու են համապատասխան որոշումներ։

Հոդված 3։ Լեռնալիբանանը բաժանվելու է 7 կազաների։

1) Կուրայի և մերճակա հողատարածները, որոնց բնակիչները պատկանում են հունական դավանանքին, (այսինքն՝ ուղղափառ եկեղեցուն)։ Այստեղ չի ընդգրկվում ծովափին գտնվող և մահմեդականներով բնակեցված Կոլման գյուղաքաղաքը։

2) Լիբանանի հյուսիսում գտնվող Զխմթուլ Բիչարան, Զաուրան և Բիլադ-ի Բադրունին։

3) Լիբանանի հյուսիսում գտնվող Բիլադի Զիբայիլից, Զխմթուլ Միզրիից, Ֆութ և Նըֆս-ի կրունայից մինչև Նեհր կելբ գտնվող [գյուղերը]։

4) Զահլեն և մերճակա հողատարածները։

5) Մեթենը, ինչպես նաև Սահիլի Նասրան և կաթրա Բոլիմայի հողատարածները։

6) Զեզինեն՝ սկսած Դամասկոսի ճանապարհի հարավային մասից։

7) Ջեզինը և Թըֆֆահը։

Հիշյալ յուրաքանչյուր կազայում պետք է ընտրվի և Մութասարրիֆի կողմից հաստատվի մեկական կառավարիչ։ Այդ կառավարիչները պետք է ընտրվեն միևնույն կրոնին պատկանող և մեծամասնութիւն կազմող բնակչութեան կողմից։

Հոդված 4։ Կազաները, նախկինում գոյութիւն ունեցող հողագոտիների նման, նահիյեների վիտի բաժանվեն և ամեն մի նահիյեում կազայի կառավարչի հավանութեամբ և Մութասարրիֆի հաստատմամբ, մեկական տեսուչներ են նշանակվելու։ Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր գյուղում, բնակչութեան կողմից հաստատված մեկական գյուղապետ է լինելու։

Հոդված 5։ Օրենքի առաջ բոլորն էլ հավասար են։ Կատարելապես վերանում են երկրամասի մեծամեծներին և հատկապես մուքաթաջիներին տրված բոլոր արտոնութիւնները։

Հոդված 6։ Լիբանանում գոյութիւն են ունենալու առաջին աստիճանի երեք դատարաններ, որոնք բաղկացած են լինելու Մութասարրիֆի կողմից նշանակված մեկ դատավորից, մեկ տեղակալից և ժողովրդի կողմից ընտրված 6 պաշտոնական փաստաբաններից։

Բացի դրանից գոյութիւն է ունենալու նաև գերագույն դատարան, որը բաղկացած վիտի լինի Մութասարրիֆի իրավասութեամբ նշանակված համայնքների ներկայացուցիչներից, այսինքն՝ մեկ սյունի մահմեդական՝ մյութվելի, մարոնի, դյուրզի, հույն (ուղղափառ) և կաթոլիկ հույն, և յուրաքանչյուր համայնքի կողմից ընտրված 6 փաստաբաններից։

Բողոքական կամ հրեական կրոնին պատկանող որևիցե անձի նկատմամբ դատ բացվելու դեպքում, հիշյալ 12 դատական անդամների թվին ավելանալու է նաև այս երկու համայնքների կողմից ներկայացված մեկական դա-

տավորներ և դատապաշտպաններ։

Գերագույն դատարանի նախագահը նշանակվելու է Մուֆթասարրիֆի հատուկ կարգադրությամբ։ Տեղի անհրաժեշտությունից ելնելով, Մուֆթասարրիֆը կարող է առաջին կարգի դատարանների թիվը ավելացնել։ Նույնիսկ կառավարչության հաջող ընթացքի համար կարիքը զգացվող տեղերում այժմվանից իրավունք է տրվում նշանակել առաջին կարգի դատարաններ։

Հոդված 7։ Գյուղի դատական գործերը վարող գյուղապետերը առանց վերաքննության դիմելու, իրավասու են երկու հարյուր ղուրուշի հասնող դատերը լուծել։ Երկու հարյուր ղուրուշից բարձր դատական գործերը քննարկվելու են առաջին կարգի դատարանում։ Խառը գործերը, այսինքն՝ այն դատերը, որոնք ծագել են տարբեր դավանանքի պատկանող երկու անձանց միջև, ալեւոք է, անկախ դրամի ծավալից, անմիջապես տեղափոխվի առաջին կարգի դատարան, եթե երկու կողմերն էլ ընդունելի չեն համարել միևնույն դավանանքի պատկանող դատախազի և դատավորի վճիռը։ Բոլոր դատական գործերը հիմնականում վճռվում են ձայների մեծամասնության՝ սակայն ամբաստանողն ու դատախազը եթե միևնույն դավանանքի են պատկանում, իրավունք ունեն այլ դավանանքի պատկանող դատավորին չընդունել։ Համենայն դեպս, այն դատավորները, որոնք ընդունելի չեն, կարող են ներկա գտնվել դատին։

Հոդված 8։ Դատարանները, քրեական հանցանքի համեմատ, ունենալու են երեք աստիճան։ Օրինապանցների հարցը քննվելու է դատավորի դերում հանդես եկող գյուղապետի կողմից, հանցանքները՝ առաջին աստիճանի դատարանում, իսկ ոճրագործությունները՝ գերագույն դատարանում։

Գերագույն դատարանի կողմից տրված դատավճիռները գործադրվում են Օսմանյան կայսրության տարբեր վայրերում գոյություն ունեցող սովորությունների և

ձևակերպումների համաձայն։

Հոդված 9։ Առևտրական հարցերին վերաբերող բոլոր դատերը, քննվելու են Բեյրութի առևտրական մեջլիսում։ Այն դատերը, որոնք առաջանում են Լեռնալիբանանի բնակիչների և օտարերկրյա հպատակների կամ այլ պետությունների հովանավորության տակ գտնվող անձերի միջև, նույնպես քննվելու են Բեյրութի առևտրական մեջլիսում։ Այն տարբերությամբ, որ տարաձայնության դեպքում, այս երկու կողմերի միջև համաձայնություն է կայացվում և դատը տեղի է ունենում Լեռնալիբանանի տեղական մարմինների և մեծ պետությունների դեսպանության ներկայացուցիչների մասնակցությամբ։ Եթե տրված դատավճիռը ընդունելի չի համարվում երկու կողմերի միջև և դատը տեղափոխվում է Բեյրութի դատարան, ապա, ըստ Բարձրագույն դռան կողմից սահմանված սակագնի, տեղափոխման ծախսը փոխհատուցում է դատը կորցնող կողմը։ Մի բան պարզ պետք է լինի, որ շահած կողմը, համաձայն ընդունված կարգի, մուրհակը վերցնելիս, ստորագրել և գրանցել է տալիս Բեյրութի դատարանում և Լիբանանի գերագույն դատարանում։

Հոդված 10։ Դատավորները նշանակվում են Մութասարրիֆի կողմից, իսկ կառավարչական ժողովի անդամները ընտրվում են նահիյեների բնակչության, գյուղապետերը և ավագները՝ յուրաքանչյուր գյուղի բնակչության կողմից։ Կառավարչական ժողովի անդամների մեկ երրորդ մասը երկու տարին մեկ նորացվում է։ Անդամությունից դուրս եկած անձինք, [հաջորդ տարիներին] կարող են վերստին ընտրվել։

Հոդված 11։ Բոլոր դատավորներն էլ պարկեշտ մարդիկ են լինելու։ Եթե դատավորներից մեկի կեղծարարությունը կամ իր պաշտոնի նկատմամբ անվայելուչ վարմունքը հաստատվի, ապա, այդպիսիք հեռացվում են պաշտոնից և ստանում իրենց արժանի պատիժ։

Հոդված 12։ Բոլոր դատարաններում, դատավարությունը տեղի է ունենալու հրապարակայնորեն, և հատուկ քարտուղարի կողմից արձանագրվելու է։ Բացի դրանից, հիշյալ քարտուղարը մատյանում գրանցում է նաև այն մուրհակները, որոնք վերաբերում են անշարժ գույքերի վաճառքին և փոխադրությանը։ Մատյանի մեջ չգրանցված մուրհակները չեն կարող ընդունելի համարվել։

Հոդված 13։ Լեռնալիբանանի բնակիչներից որևիցե մեկը եթե հանցագործություն է կատարում այլ սանջաքներում, ապա դատավարությունը տեղի է ունենալու այն սանջաքում, որտեղ կատարվել է հանցագործությունը։ Իսկ եթե այլ սանջաքների բնակիչները հանցագործություն են կատարել Լեռնալիբանանում, ապա նրանց դատավարությունն էլ տեղի է ունենում Լեռնալիբանանում։ Այնպես որ, եթե տեղի և այլ վայրերի բնակիչների կողմից հանցագործություն է կատարվում Լեռնալիբանանում և հանցագործը փախուստ է գործում այլ սանջաքներ, ապա Լիբանանի կառավարության տված հրահանգի համաձայն, անմիջապես տվյալ սանջաքի ոստիկանությունը ձերբակալում է նրան և հանձնում Լեռնալիբանանի իշխանության։ Նույն ձևով էլ, եթե այլ վայրերի և Լեռնալիբանանի բնակիչներից որևէ մեկը հանցագործություն է կատարում, որևիցե սանջաքում և թաքնվում է Լեռնալիբանանում, ապա հանցագործը անմիջապես ձերբակալվում է և վերադարձվում տվյալ սանջաքի ոստիկանության։

Եթե ապացուցվի, որ տվյալ վայրի պաշտոնյաները հանցագործի վերադարձման գործում անտարբերություն են ցուցաբերում կամ անհիմն պատճառներով թաքցնում են հանցավորին, ապա նրանք ըստ օրենքի ենթակա են պատժման։

Վերջապես, Լեռնալիբանանի և շրջակա սանջաքների միջև գոյություն ունեցող հարաբերությունը հիմնվե-

լու է Օսմանյան կայսրության սանջաքներում գործող սովորությունների և օրենքների վրա։

Հոդված 14։ Երկրամասում խաղաղությունն ու օրենքը պահպանելու համար Մութասարրիֆի կողմից նշանակվելու է խառը ոստիկանական զորաբաժին, մոտավորապես 1000 բնակչին 7 ոստիկանի հաշվով։ Ոստիկանները կրելու են համազգեստ և ըստ աստիճանի տարբերվելու են նշաններով։ Սովորական ժամանակներում, ոստիկանական զորաբաժնի ծանրաբեռնվածության հետևանքով, Բեյրութից մինչև Դամասկոս տանող ճանապարհի, ինչպես նաև սայդայի և Տրաբլուսի ճանապարհների վրա հսկողությունն պիտի կատարեն Օսմանյան կայսրության զինվորները՝ Մութասարրիֆի տրամադրության տակ։ Արտակարգ իրադրության դեպքում Մութասարրիֆը մեծ ժողովի վճիռը առնելուց հետո կարող է օգնության կարգով պահանջել Սիրիայում գտնվող կանոնավոր զորքը։ Հրավիրված զորքի հրամանատարը հանդիսացող սպան նախաձեռնում է անհրաժեշտ միջոցառումներ միայն Մութասարրիֆի կարգադրությամբ։ Իհարկե, հիշյալ սպան զինվորական հարցերում ազատ է և ինքնուրույն, սակայն Լիբանանում գտնված ժամանակ ենթակա է Մութասարրիֆին և գործելու է նրա կարգադրությամբ։

Անախորժությունները վերջանալուց հետո, զորքը Լիբանանից հեռանում է այն ժամանակ, երբ Մութասարրիֆը պաշտոնապես հայտարարություն է անում հրամանատարին։

Հոդված 15։ Բարձրագույն դուռը Լեռնալիբանանի տարեկան եկամուտից, որը լավ պայմաններում նույնիսկ հասնում է մինչև 7 հազար քիսեի, Մութասարրիֆի միջոցով վերցնում է 3,500 քիսե հարկ։ Այդ գումարը ծախսվելու է Լեռնալիբանանի վարչության և ընդհանուր բարօրության համար և ավելացածը մուտք է գործելու պետական գանձարան։ Եթե անհրաժեշտ ծախսերը անցնեն

Լեռնալիբանանի տարեկան եկամտահարկի ընդհանուր գումարից, ապա այդ ծախսերը վերցվում են կայսերական գանձարանից։ Բեհալիքները, այսինքն՝ կայսերական ունեցվածքի եկամուտները, տարեկան հարկի մեջ չեն մտնում և կայսրության հաշվին մուտք են գործում Լեռնալիբանանի գանձատունը։ Ժողովրդական շինությունները կամ արտակարգ ծախսերի համար, Բարձրագույն դուռը պատասխանատու կլինի միայն այն դեպքում, եթե դրանց համար նախապես հավանություն է տվել։

Հոդված 16։ Առանց հապաղելու, անհրաժեշտ է կազմել Լեռնալիբանանի բոլոր ցանքատարածությունների քարտեզը և մարդահամար անցկացնել թաղ առ թաղ և ըստ ազգությունների։

Հոդված 17։ Եկեղեցականների և վանականների միջև առաջ եկած բոլոր տարաձայնությունները հարթվելու են հոգևորական վերադասի կողմից, իսկ հարկ եղած դեպքում, թեմերը հանցավորին դատելու համար կարող են դիմել դատարան։

Հոդված 18։ Այն անձնավորությունը (հոգևորական կամ աշխարհիկ), որը հետապնդվում է կառավարության կողմից, իրավունք չունի ոչ մի կրոնական հաստատության մեջ ապաստարան գտնելու։

Վերևում չարադրված 18 հոդվածները կազմում են Լեռնալիբանանի հիմնական կանոնադրությունը, որը չնորհվել և հաստատվել է իմ կայսերական բարձր հրամանով և բարձրյալն Աստծո կամքով գործադրվելու է բոլորի կողմից տառ առ տառ և հույժ զգուշությամբ[3]։

1281 թ. Րեբի ուլ-ահըր, 14 (1864 Սեպտեմբեր 17)։

ՐԱԲԲԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ[1]

ԳԼՈՒԽ 1

ԳԼԽԱՎՈՐ ՐԱԲԲԻԻ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԻ, ՆՐԱ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ԵՐԴՈՒՄ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1։ *Այն անձնավորությունը, որը ընտրվելու է գլխավոր րաբբի, հանդիսանալու է Օսմանյան կայսրությունում բնակվող ամբողջ հրեական ազգի առաջնորդը և Օսմանյան պետության հրամանների կատարման միջնորդը։ Նա ծնունդով պետք է լինի Օսմանյան կայսրության հպատակ և բոլոր կողմերով պետք է արժանի լինի այդ պաշտոնին, կատարելապես վայելելով պետության և ազգի վստահությունը։ Բացի դրանից, նա բավականաչափ փորձ պետք է ունենա աշխարհիկ և հոգևոր գործերում, լինի հավատարիմ իր զբաղեցրած պաշտոնին և ոչ մի դեպքում չվարկաբեկի իրեն։ Րաբբիության թեկնածուն պետք է բոլորած լինի 30 տարին և 70-ից անցած չլինի։ Այնպես որ, ֆիզիկապես և մտավորապես կարող լինի ծառայությանը։ Տվյալ դեպքում, տարիքը չի կարող նրա պաշտոնաթողության վրա ազդեցություն գործել։*

Հոդված 2։ *Գլխավոր րաբբիի պաշտոնը թափուր մնալու դեպքում, քաղաքական ժողովը ներկայացնում է 5*

րաբբիներից բաղկացած մի ցուցակ, որի թեկնածուները առաջին հոդվածի հիման վրա պետք է աչքի ընկնեն իրենց արժանիքներով և առավելապես արժանի լինեն այդ պաշտոնին։

Այդ ցուցակը հաստատվում է րաբբիաւթյան տեղապահի կողմից և այնուհետև ներկայացվում է կրոնական ժողովի քննարկմանը։

Եթե թեկնածուների մեջ լինեն այնպիսի անձնավորություններ, որոնք իրենց հավատքով արժանի չեն գլխավոր րաբբիի պաշտոնին, ապա կրոնական ժողովը հայտնում է տեղապահին, որպեսզի այդպիսիները հանվեն ցուցակից և նրանց տեղը ընդգրկվեն նորերը՝ քաղաքական ժողովում։ Այն բանից հետո, երբ կրոնական ժողովը հավանություն է տալիս առաջադրված թեկնածուներին, հաստատում է այն և վերադարձնում տեղապահին։ Այնուհետև ընդհանուր ժողովի որոշմամբ, թեկնածուների ցուցակը կախվում է ժողովի սրահում։

Ընդհանուր ժողովի յուրաքանչյուր անդամ, քվեարկության ընթացքում, առանձին թղթերի վրա, դաղտնի գրում է այն թեկնածուին, որը իր կարծիքով, առավել արժանի է րաբբիաւթյան, և դնում է քվեատուփի մեջ։

Ընտրության վերջում, կրոնական և քաղաքական ժողովների առաջին քարտուղարները, հրապարակայնորեն բացում են քվեատուփը և հաշվում քվեաթերթերը։ Եթե քվեաթերթերը հաշվելուց հետո պարզվի, որ դրանց թիվը չի համապատասխանում անդամների թվին, ապա ժողովում, 3 անգամ հայտարարվում է այդ մասին, որպեսզի քվեարկողները տան իրենց ձայները։ Եթե քվեարկողները ձեռնպահ մնան, ապա ժողովը անցնում է քվեաթերթերի վերջնական հաշվարկին։ Այն թեկնածուն, որը ձայների բացարձակ մեծամասնություն ստացած լինի, ընտրվում է գլխավոր րաբբիի պաշտոնին։ Եթե քվեարկության ընթացքում ձայների մեծամասնություն չստացվի, ապա այդ 5 թեկնածուներից

առանձնացվում են երկուսը, որոնք առավել չատ ձայներ են ստացել, և ընդհանուր ժողովը վերստին անցնում է քվեարկութեան։ Եթե այդ երկու թեկնածուներն էլ հավասար ձայներ ունենան, ապա այդ ժողովում, նույն օրը չարունակվելու են ընտրութիւնները՝ մինչև վերջնական արդյունքի հասնելը։ Տվյալ դեպքում, բացի ցուցակում նշված թեկնածուներից, ուրիշները չեն կարող ընդգրկվել։

Հոդված 3։ Ընտրութեան ավարտից հետո, արձանագրութիւն է կազմվում ընդհանուր ժողովի բոլոր անդամների ստորագրութեամբ և տեղապահի միջոցով այն ներկայացվում է Բարձրագույն դուռ։ Այնուհետև վաղեմի սովորութեան համաձայն, կայսերական հրամանագրով նորընտիր րաբբին Բարձրագույն դռան հրավերով անցնում է պաշտոնի։

Հոդված 4։ Եթե նորընտիր գլխավոր րաբբին կ. Պոլսում է գտնվում, ապա հրավիրվում է իր պաշտոնին ընդհանուր ժողովի մի քանի ներկայացուցիչների կողմից, իսկ եթե կ. Պոլսից դուրս գտնվի, ապա, հրավիրվում է հատուկ պատվիրակութեան կողմից։

Նորընտիր գլխավոր րաբբին, անցնելով պաշտոնի, կրոնական և քաղաքական ժողովների, ինչպես նաև տեղապահի ներկայութեամբ, հրապարակայնորեն երդվում է Օսմանյան պետութեան և հրեական ազգին հավատարիմ լինելու մասին և պարտավորվում է կատարելապես գործադրել այս կանոնադրութիւնը և պարտադրել իր ենթականերին՝ նույնպես այն կիրառելու կյանքում։ Դրանով ավարտվում է վերոհիշյալ տեղապահի պաշտոնը։ Իսկ նորընտիր գլխավոր րաբբին, Բարձրագույն դռան հրավերով, ներկայացվում է նորին մեծութեան Փադիշահի ընդունելութեան, որտեղ և պաշտոնապես հաստատվում է նրա պաշտոնը։ Այնուհետև մեկնում է Բարձրագույն դուռ, որտեղ նմանապես հայտարարվում է նրա պաշտոնի հաստատման մասին։

Հոդված 5։ *Գլխավոր րաբբին պետք է ուշադիր հետևի կանոնադրության հիմնական դրույթների գործադրմանը և թույլ չտա որևէ մեկին՝ խախտելու այն։ Եթե գլխավոր րաբբին չեղվի կանոնադրության հիմնական դրույթներից, ապա, նա պատասխանատվության է ենթարկվում և ամբաստանվում 12-րդ հոդվածի հիման վրա։ Այն բոլոր գործերը, որոնք գալիս են ուղղակի գլխավոր րաբբիի անունով կամ էլ Բարձրագույն դռան միջոցով, նախ և առաջ քննարկվում և որոշում են համապատասխան ժողովում կամ խորհրդում, իսկ այնուհետև այդ որոշման հիման վրա, գլխավոր րաբբին տալիս է իլամներ, թաքրիրներ և կամ այլ փաստաթղթեր։ Այս բոլոր փաստաթղթերը գրանցվում են քաղաքական ժողովի արխիվում։ Գլխավոր րաբբին չի կարող ինքնակամ կերպով իլամներ և թաքրիրներ տալ, մինչև որ տվյալ հարցի կապակցությամբ, համապատասխան ժողովի կամ խորհրդի որոշումը չստանա։*

Հոդված 6։ *Եթե կրոնական և քաղաքական ժողովներում ընդունված որոշումը չի հակասում կանոնադրության հիմնական դրույթներին, ապա, գլխավոր րաբբին չի կարող հակառակվել այն հաստատելու խնդրում, իսկ եթե ընդունված որոշումը հակասի կանոնադրությանը, ապա տվյալ հարցը կրկին քննարկվելու է համապատասխան ժողովում՝ գլխավոր րաբբիի ներկայությամբ։*

Հոդված 7։ *Եթե ծագի որևիցե հարց, որի լուծման համար պահանջվի շտապ որոշում ընդունել, և մյուս կողմից էլ անհնար լինի արտակարգ նիստի գումարումը, ինչպես նաև հերթական նիստի գումարման սպասումը, ապա, գլխավոր րաբբին կարող է իր պատասխանատվությամբ, ինքնակամ կերպով ընդունել անհրաժեշտ որոշում։*

Հոդված 8։ *Եթե ժողովի կամ խորհրդի անդամները,*

քարտուղարները, ինչպես նաև ազգային գործերով զբաղվող անձինք կանոնադրությունից չեղվեն, ապա, գլխավոր րաբբին դատական գործ է հարուցում տվյալ անձի նկատմամբ համապատասխան ժողովում: Եվ եթե տվյալ անձնավորության մեղավորությունը ձայների մեծամասնությամբ հաստատվի ժողովում, ապա, գլխավոր րաբբին կարող է նրան հեռացնել պաշտոնից և նրա տեղ նշանակել նորին:

Հոդված 9: Գլխավոր րաբբին չի կարող ինքնակամ կերպով փոխել որևիցե ժողովի կամ հանձնաժողովի անդամներին: Եթե գլխավոր րաբբին նկատի, որ նրանցից մեկը չեղվում է տվյալ կանոնադրության հիմնական դրույթներից, ապա, գրավոր զգուշացնում է՝ պահպանել կանոնադրությունը, երկրորդ անգամ, եթե ամբաստանվի հանձնաժողովներից որևէ մեկը, ապա հարցը լուծվում է համապատասխան ժողովում, իսկ եթե ժողովներից մեկը ամբաստանվի, ապա հարցը քննվում է ընդհանուր ժողովում: Մեղադրանքը հաստատվելու դեպքում, գլխավոր րաբբին առաջարկում է փոխել տվյալ հանձնաժողովը կամ ժողովը:

Հոդված 10: Նորընտիր գլխավոր րաբբիի որդիները, թոռները, փեսան և եղբայրները չեն կարող ազգային ծառայություններում պաշտոն ունենալ: Այսուհանդերձ, եթե գլխավոր րաբբիի բարեկամները պաշտոնավարելիս լինեն ազգային գործերում մինչև նրա ընտրությունը, ապա, նրանք չարունակելու են իրենց ծառայությունը:

Հոդված 11: Գլխավոր րաբբիի նստավայրը, ինչպես նաև ազգային գրասենյակը, ժողովրդի հարմարության համար, գտնվելու է Ունքափանի կամ Ջյուբալի կափուսուի չրջանում:

Հոդված 12: Գլխավոր րաբբին կարող է ամբաստանության ենթարկվել միմիայն կրոնական և քաղաքական ժողովի կողմից: Եթե որևիցե հանձնաժողովի կամ ազգի անդամների կողմից բողոք ներկայացվի գլխավոր րաբբիի

հասցեին, ապա, այն պետք է դրավոր պարզաբանվի եւ ուղղվի ժողովներից մեկին։ Այնուհետեւ քաղաքական ժողովը տեղեկագրով հայտնում է Բարձրագույն դուռ և համաձայն կարգադրության քաղաքական և կրոնական ժողովի անդամները 5 օրվա ընթացքում, կրոնական ժողովի նախագահի նախագահությամբ, քննում են տվյալ հարցը։ Եթե խառը ժողովի երկու երրորդը հաստատի գլխավոր րաբբիի մեղադրությունը, ապա նա պարտավոր է որոշման համաձայն, թաքրիր ներկայացնել Բարձրագույն դուռ իր պաշտոնաթողության մասին։ Մերժման դեպքում, նրա պաշտոնաթողության վճիռը հայտնվում է Բարձրագույն դուռ՝ խառը ժողովի կողմից։

Հոդված 13։ Ընդհանուր ժողովը ազգային դրամարկղից նշանակում է անհրաժեշտ գումար՝ գլխավոր րաբբիի ռոճիկի համար։ Րաբբիության բոլոր ներքին ծախսերը վճարվում են գլխավոր րաբբիի կողմից։

Հոդված 14։ Գլխավոր րաբբիի նստավայրի կահկարասին և զարդարանքը վճարվելու է ազգային դրամարկղից։ Իսկ գլխավոր րաբբիի պաշտոնաթողության կամ հեռացման դեպքում, ամբողջ գույքը հանձվելու է տեղապահին՝ հատուկ գույքային մատյանով։

Հոդված 15։ Գլխավոր րաբբիի պաշտոնաթողության կամ պաշտոնից հեռացման դեպքում, քաղաքական և կրոնական ժողովները միատեղ ազգային գործերի ղեկավարման համար որպես տեղապահ ընտրում են հարմար մի անձնավորության և դիմում են Բարձրագույն դուռ՝ այն հաստատելու կայսերական հրամանագրով՝ մինչև նոր գլխավոր րաբբիի ընտրությունը։

Հոդված 16։ Ընդհանուր ժողովը բաղկացած է 80 պատվիրակներից՝ տեղապահի նախագահությամբ։ Ընդհանուր ժողովի 60 անդամները աշխարհիկ ներկայացուցիչներ են և ընտրվում են ստորև բերված կարգով՝ կ. Պոլսի և Բիլադ-ի Սելասիեի հրեական համայնքի կողմից։ Մնացած 20

անդամները հոգևոր ներկայացուցիչներ են, որոնք ընտրվում են րաբբիներից՝ ընդհանուր ժողովի աչխարհիկ պատվիրակների կողմից։ Այնուհետև ընտրվում են կոմիտեները։ Քաղաքական ժողովի համար ընտրվում է 9 հոգի, իսկ կրոնական ժողովի համար՝ 7 րաբբի։

Հոդված 17։ Ընդհանուր ժողովի անդամության թեկնածուները ընտրվում են րաբբիության կարգադրությամբ հետևյալ կերպ։ Տվյալ թաղամասի գլխավոր րաբբին երեքի անձանց հետ միատեղ կազմում է ընդհանուր ժողովի անդամության առավել արժանի թեկնածուների ցուցակը, ընդգրկելով պահանջված թվից երկու անգամ ավելին։ Այնուհետև հարմար օր է նշանակում ընտրությունների համար և այն մասին հայտնում է տվյալ թաղամասի բնակչությանը։ Իսկ թեկնածուների ցուցակը պետք է մեկ շաբաթ կախված լինի տվյալ թաղամասի հարմար վայրում։ Կանոնադրության համաձայն, ընտրության օրը բոլոր ընտրողները քվեարկում են հետևյալ ձևով. մի թղթի վրա գրում են այն թեկնածուների անունները, որոնք առավել հարմար են ընդհանուր ժողովի անդամության համար, և իրենց ստորագրություններով գցում են քվեատուփի մեջ։ Ընտրողները չեն կարող քվեարկել ցուցակում չընդգրկված անձերի օգտին։ Ընտրությունները ավարտվելու են երկու օրվա ընթացքում։ Եթե տվյալ ժամանակամիջոցում ընտրողները չքվեարկեն, ապա, մյուս օրերին, նրանք զրկվում են ձայն տալու իրավունքից։ Իսկ նրանք, որոնք հիմնավորված պատճառով չեն կարող ներկայանալ ընտրությանը, գրավոր ուղարկում են իրենց ձայները տվյալ թաղամասի գլխավոր րաբբիի անունով, որը և պարտավոր է այն գցել քվեատուփի մեջ։

Հոդված 18։ Քվեատուփը հրապարակայնորեն կընքվում է տվյալ թաղամասի գլխավոր րաբբիի և երեք կրոնավորների կողմից և տեղադրվում է նշանակված վայրում։ Ընտրության օրը ներկա են լինելու նաև րաբբիության

ներկայացուցիչները։ Ընտրությունները ավարտելուց հետո, քվեատուփը բաց է արվում տվյալ թաղամասի գլխավոր րաբբիի, երեք կրոնավորների, րաբբիության ներկայացուցիչների և տեղի այլ երևելի անձանց ներկայությամբ։ Այնուհետև հաշվում են քվեատուփի քվեաթերթերը, և ձայների մեծամասնությունը ստացած թեկնածուները ընտրվում են ընդհանուր ժողովի անդամներ։ Եթե երկու կամ ավելի թեկնածուներ ստանան հավասար ձայներ, ապա նրանց ընտրությունը կատարվում է վիճակահանությամբ։ Այնուհետև, երկու օրինակից կազմվում է ընտրված անդամների ցուցակը և հաստատվում տվյալ թաղամասի գլխավոր րաբբիի և երեք կրոնավորների կողմից։ Այդ ցուցակներից մեկը պահվում է տվյալ թաղամասի գլխավոր րաբբիի մոտ, իսկ մյուսը ուղարկվում րաբբիության։

Հոդված 19։ Այն անձնավորությունները, որոնք նախորդ հոդվածների համաձայն ընտրվելու են ընդհանուր ժողովի անդամներ, պետք է անհրաժեշտ չափով տիրապետեն հրեական լեզվին, կարող լինեն ազգային գործերին, վայելեն տվյալ թաղամասի հարգանքը, երբևիցե ենթարկված չլինեն քրեական հետաքննության և վարկաբեկված չլինեն ազգային ծառայության մեջ։

ԳԼՈՒԽ 4

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 20։ Կրոնական ժողովը, որը բաղկացած է 7 րաբբիներից, նշանակվում է ընդհանուր ժողովի կողմից։ Նրանցից մեկը ձայների մեծամասնությամբ նշանակվում է ժողովի նախագահ, իսկ երկուսը՝ նախագահի տեղակալներ։ Ընդհանուր ժողովը նրանց համար նշանակում է անհրաժեշտ ռոճիկ։ Կրոնական ժողովի րաբբիները, քանի ամբաստանության մեջ չեն ընկել և չեն զեղվել տվյալ կանոնադրությունից և դավանանքից, չեն կարող պաշտոնից հե-

ռացվել։

Հոդված 21։ Կրոնական ժողովի նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում, ընդհանուր ժողովը, նշանակելով նրա տեղակալներից մեկին, նրա տեղ ընտրում է կրոնական ժողովի րաբբիներից մեկին։ Իսկ վերջինի տեղը, ընդհանուր ժողովը գաղտնի քվեարկությամբ, որևիցե րաբբիի ընտրում է կրոնական ժողովի անդամ։

Հոդված 22։ Այն անձնավորությունը, որը ընտրվելու է կրոնական ժողովի նախագահ, պետք է լինի կարող և գործունյա՝ կրոնական ասպարեզում։ Նախագահի զառամյալ հասակը չի կարող նրա հեռացման պատճառ դառնալ։

Հոդված 23։ Հոգևոր ժողովի նախագահի և անդամների պարտականություններն են.

1) Պաշտպանել կրոնական սկզբունքները։

2) Չեղվել պետական օրենքի հիմնական դրույթներից և արգելել նրանց, ովքեր խախտում են այն։

3) Առանց կրոնական ժողովի թույլտվության, րաբբիները չեն կարող քարոզիչներ դառնալ, իսկ քարոզիչները իրավունք չունեն ազգին գրգռելու և պետական օրենքները խախտելու։ Րաբբիները իրավունք չունեն միջամտելու այն ազգային գործերին, որոնք իրենց իրավասությունից դուրս են։

Նրանք պետք է ջանան մարդկանց չրջանում գրքերի, գիտության և գիտելիքների տարածման գործի համար, եթե իհարկե դրանք չեն հակասում պետությանը, ազգին և կրոնին։ Ջնայած որ կրոնական ժողովի պարտականությունն է պահպանել կրոնական ծխակատարություններն ու սովորությունները, սակայն մի շարք հանգամանքներում, նրանք չեն կարող ինքնակամ գործել առանց գլխավոր րաբբիի թույլտվության։ Իր հերթին, նախագահը ևս առանց կրոնական ժողովի հավանության, չի կարող ինքնակամ վճռել որեւիցե հարց։

Հոդված 24։ Այն անձնավորությունները, որոնք

ընտրվելու են կրոնական ժողովի անդամ, պետք է փորձառու լինեն կրոնական գործերում, հավատարիմ ազգին և պետության հանդեպ, և երբևիցե չպետք է քրեական հանցագործության կամ չարաշահում գործադրած լինեն։

Հոդված 25։ Բացի կրոնական ժողովի նախագահից և անդամներից, ընդհանուր ժողովի մնացած 13 բաբբիներից 4-ը, հերթականությամբ, յուրաքանչյուր տարի կատարելու են կրոնական ժողովի ժամանակավոր անդամի պարտականությունը, իսկ նրանցից երեքը, կրոնական ժողովի նշանակմամբ, ղեկավարում են «Թարեֆ» և «Կամեր» գործերը։

Հոդված 26։ Ջորս ժամանակավոր անդամները մասնակցելու են կրոնական ժողովի նիստերին, միայն հիմնական անդամների խնդրանքով։ Նրանք ո՛չ քվեարկության իրավունք ունեն, և ո՛չ էլ որևիցե փաստաթուղթ վավերացնելու։

Հոդված 27։ Կրոնակա՛ն ժողովի ժամանակավոր անդամների համար, քաղաքական ժողովը նշանակում է անհրաժեշտ ռոճիկ։ Այդ պաշտոնում գտնվելու ժամանակաշրջանում, նրանք ոչ մի դեպքում, մարդկանցից դրամ կամ նվերներ չեն վերցնելու։ Նման արարքները հանցանք են համարվում։

Հոդված 28։ Կրոնական գործերով Կ. Պոլսից դուրս գնալու համար, հերթականությամբ նշանակվում են հինգ 17 բաբբիները։ Ուղեվորությունը ավարտելուց հետո, տվյալ բաբբին չարունակում է նախորդ ծառայությունները։

Հոդված 29։ Բոլոր կրոնական գործերը ենթակա են կրոնական ժողովի իրավասությանը և բացի նրա անդամներից, ոչ ոք իրավունք չունի միջամտելու կրոնական գործերին։

Հոդված 30։ Կրոնական պատիժ տալու իրավունքը վերապահվում է միմիայն գլխավոր բաբբիին, կրոնական ժողովի նախագահին և նրա տեղակալին։

Վերոհիշյալներից բացի, եթե որևիցե մեկը ինքնակամ կերպով համարձակվի կրոնական պատժի ենթարկել որևէ մեկին, ապա նա հավիտյան հեռացվելու է ծառայությունից, և զրկվելու է րաբբիի աստիճանից։ Այս կապակցությամբ, գլխավոր րաբբին դիմելու է Բարձրագույն դուռն, որպեսզի պատիժը իրագործելու թույլտվություն ձեռք բերի։

Հոդված 31։ Կրոնական ժողովը ունենալու է անհրաժեշտ թվով քարտուղարներ և այլ ծառայողներ։ Կրոնական ժողովի նիստերի ընթացքում, կազմվելու են արձանագրություններ, որոնք ստորագրվելու են նախագահի և անդամների կողմից։ Բոլոր փաստաթղթերը պետք է գրանցվեն թվերով, կրոնական ժողովի արխիվում։ Կրոնական ժողովի քարտուղարները և կամ մյուս ծառայողները, տվյալ կանոնադրությունը խախտելու դեպքում, հեռացվելու են պաշտոնից 8-րդ հոդվածի հիման վրա, իսկ նրանց տեղը զբաղեցնելու են ուրիշները։ Եթե ապացուցվի, որ նրանցից որևիցե մեկը զբաղվում է կաշառակերությամբ, ապա, նա պատժվելու է դատարանով, իսկ գործը հաղորդվելու է Բարձրագույն դուռ։

Հոդված 32։ Գլխավոր րաբբին կրոնական ժողովի նախագահն է։ Նրա տեղակալները և քաղաքական ժողովի երկու անդամները միատեղ կազմում են մի խորհուրդ, որպեսզի այս կանոնադրության հիման վրա կազմեն կրոնական ժողովի ծառայողների պարտականություններին վերաբերող հրահանգը։

Հոդված 33։ Կրոնական ժողովը գումարվում է երկու կամ երեք անգամ՝ շաբաթվա մեջ նշանակված օրերին, իսկ նրանց նստավայրը պետք է գտնվի հրեաներով խիտ բնակեցված թաղամասում։

Հոդված 34։ Եթե կրոնական ժողովի մշտական կամ ժամանակավոր անդամներից որևիցե մեկը, ինչպես նաև ծառայողները, առանց հիմնավոր պատճառի երեք անգամ

հաջորդաբար բացակայեն նիստերից, նրանք հեռացվում են իրենց պաշտոնից և նրանց տեղ նշանակվում են նորերը։ Բացի դրանից, եթե նրանցից մեկը չեղվի Օսմանյան կայսրության օրենսդրությունից, կամ մեկ ամսից ավելի ենթարկվի քրեական պատժի, այդպիսիները անմիջապես հեռացվում են պաշտոնից և նրանց տեղ նշանակվում են նորերը։

Հոդված 35։ Կրոնական ժողովի նախագահի, տեղակալի կամ որևիցե անդամի պաշտոնաթողության դեպքում, քաղաքական ժողովը, ազգային դրամարկղից ցմահ հատուկ գումար է նշանակում տվյալ կրոնավորի ռոճիկի մեկ քառորդի չափ, պայմանով, որ տվյալ րաբբին այլևս առնչություն չունենա ազգային գործերի հետ։ Թոշակի գնալու դեպքում, նշանակվում է ռոճիկի կեսը։

Հոդված 36։ Կրոնական ժողովի նախագահին կամ անդամին մեղադրելու իրավունքը պատկանում է միմիայն գլխավոր րաբբիին և քաղաքական ժողովին։ Մեղադրելու կարգը հետևյալն է։ Որևիցե խորհրդի անդամ կամ ազգի ներկայացուցիչներից մեկը եթե իրազեկ լինի րաբբիի կողմից կատարված հանցագործության, այդ մասին հայտնում է քաղաքական ժողովին, որը կազմում է խառը հանձնաժողով՝ գլխավոր րաբբիի նախագահությամբ, որի մեջ ընդգրկվում են նախագահները և երեքական անդամներ կրոնական և քաղաքական ժողովներից, ընդամենը 8 մարդ։ Մեղադրանքի պարագաները քննվելուց հետո, կազմվում է արձանագրություն խորհրդի անդամների մեծամասնության վավերացմամբ, և ընդունված որոշման համաձայն՝ ենթակա է իրագործման։ Եթե մեղադրանքի ենկարկվի կրոնական ժողովի նախագահը, ապա խառը հանձնաժողովի կազմի մեջ ընդգրկվում է նրա անդամներից մեկը, իսկ եթե մեղադրանքի է ենթարկվում ամբողջ կրոնական ժողովը, ապա, գլխավոր րաբբիի հավանությամբ, տվյալ հանձնաժողովի մեջ ընդգրկվում է ընդհանուր ժողովի 13 րաբ-

բինների միայն 3-ը։

Հոդված 37։ Կրոնական ժողովի կողմից տրված յուրաքանչյուր պաշտոնական գրություն ստորագրվելու է քարտուղարի, նրա անդամների մեծ մասի կողմից և հաստատվելու է նախագահի կնիքով։

Հոդված 38։ Կրոնական ժողովը ղեկավարում է իրեն ենթակա գլխավոր րաբբիների գործունեությունը։ Տեղական րաբբիները պարտավոր են ենթարկվել կրոնական ժողովի որոշումներին և իրենց թաղամասերում զբաղվել միայն կրոնական գործերով։ Տեղական րաբբիների ընտրության կարգը հետևյալն է։ Կրոնական և քաղաքական ժողովները համատեղ կազմում են մի խառը հանձնաժողով, որը համապատասխան թաղամասերում, 5-10 երևելի անձանց հետ, ձայների մեծամասնությամբ, ընտրում է առավել կարող և արժանիքներով օժտված րաբբիներից մեկին։ Նորընտիր տեղական րաբբիի պաշտոնավարությունը ուժի մեջ է մտնում գլխավոր րաբբիի հաստատումից հետո։

Եթե տեղական րաբբիները չեղվեն կանոնադրության կամ դավանանքի հիմնական սկզբունքներից, ապա, ինչպես վերևում նշվեց, խառը հանձնաժողովի կողմից ենթարկվում են դատական հետաքննության և ապացուցվելու դեպքում, փոխարինվում ուրիշներով։

ԳԼՈՒԽ 5

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 39։ Քաղաքական ժողովը բաղկացած է նախագահի գլխավորած 9-ը աշխարհական անձերից, որոնք ընտրվում են երկու տարին մեկ անգամ՝ ընդհանուր ժողովի կողմից։

Հոդված 40։ Քաղաքական ժողովի նախագահը ընտրվում է ձայների մեծամասնությամբ՝ նորընտիր 9-ը անդամների մեջից, որը առավել հարմար կլինի այդ պաշ-

տոնին։

Հոդված 41։ Եթե տարբեր պատճառներով, քաղաքական ժողովի անդամներից մեկը կամ երկուսը պաշտոնաթող լինեն, մինչև իրենց ծառայության ժամկետի ավարտվելը, նրանց տեղ ընտրում և նշանակում են ուրիշներին։ Այսուհանդերձ, երկու անդամների պաշտոնաթողության դեպքում, ընտրությունները պարտադիր կերպով անց են կացվում ընդհանուր ժողովում։ Նորընտիր բոլոր անդամների պաշտոնները հաստատվում են քաղաքական ժողովի մնացած անդամների հավանությամբ և Բարձրագույն դռան թույլտվությամբ։

Հոդված 42։ Եթե առանց հիմնավոր պատճառի, քաղաքական ժողովի անդամներից մեկը հաջորդաբար երեք անգամ բացակայի նիստերից, ապա չորրորդ նիստին մասնակցելու համար պետք է ունենա առաջին քարտուղարի թույլտվությունը։ Եթե տվյալ անձնավորությունը կրկին, առանց հիմնավոր պատճառի չորրորդ անգամ էլ բացակայի, ապա, համաձայն կանոնադրության ընտրում են նոր անդամի։

Հոդված 43։ Այս կանոնադրության հիման վրա, քաղաքական ժողովը զբաղվում է հրեա ազգի աշխարհիկ գործերով և կատարում է Օսմանյան կայսրության որոշումները։ Նրա պարտականությունն է՝ հետևել, որպեսզի իրագործվեն այս կանոնադրության հիմնական դրույթները, ազգի բարօրության համար նշանակել և գանձել անհրաժեշտ գումար, կորստից պաշտպանել որբերի ունեցվածքը, ավելացնել ազգի նյութական հարստությունը, քննարկել և լուծել համայնքում ծագող վիճելի հարցերը։

Այն անձնավորությունները, որոնք ընտրվելու են քաղաքական ժողովի անդամներ, առաջին հերթին պետք է նվիրված լինեն ազգին, վայելեն Բարձրագույն դռան վստահությունը և երբևիցե ենթարկված չլինեն քրեական դատավարության։ Քաղաքական ժողովի մի չարք անդամ-

ները պետք է տիրապետեն հրեական և թուրքական լեզուներին։

Հոդված 44։ Ոչ ոք իրավունք չունի միջամտելու կամ արգելք հանդիսանալու քաղաքական ժողովի ներքին գործերին։ Ժողովը նշանակում և հաստատում է աշխատանքի ընդունված քարտուղարների, հարկահավաքների և այլ ծառայողների ռոճիկները։

Հոդված 45։ Քաղաքական ժողովի անդամները պաշտոնից կզրկվեն, եթե չեղվեն վերոհիշյալ պարտականությունները գործադրելուց։ Ժողովը ժամանակին պետք է նախազգուշացնի այն անդամներին, որոնք կխախտեն տրվյալ կանոադրությունը կամ չեն զբաղվի ազգօգուտ գործերով։ Ժողովը հեռացնում է այն անդամներին, որոնք մեկ ամսից ավելի քրեական հանցագործության համար կալանքի տակ կգտնվեն։

Հոդված 46։ Որևիցէ անձնավորություն կամ հանձնաժողով, եթե տեղեկանա կանոնադրության սկզբունքների խախտման մասին, պետք է հայտնի գլխավոր րաբբիին, որը անմիջապես բացատրություն է պահանջելու ամբաստանվող անձից և պարտադրելու է պահպանել կարգը կանոնը։ Եթե ամբաստանվողը չուղղվի, ապա անհրաժեշտ է գործադրել 8-րդ հոդվածը։

Հոդված 47։ Ազգային հարկի նշանակումն ու գանձումը, ինչպես նաև ազգային դրամարկղի եկամուտի և ծախսումների ստուգումը մտնում է քաղաքական ժողովի պարտականությունների մեջ։ Ամեն տարի ընդհանուր ժողովի առաջին գումարման ժամանակ, լսվում է տարեկան հաշվետվությունը և հաստատվում է հաջորդ տարվա բյուջեն։ Այս երկուսը հրապարակվում են միատեղ։

Հոդված 48։ կրոնական ժողովի առաջնորդը, ինչպես նաև հանձնաժողովների նախագահները, երբ, որևիցէ հարց են ներկայացնում քաղաքական ժողովի քննարկմանը, ապա, այդ հարցի լուծման համար պահանջվում է անդամների

ձայների մեծամասնությունը։ Ձայների հավասարության դեպքում, հարցը լուծվում է նախագահների ձայների առավելությամբ։

Մյուս դեպքերում նախագահները մյուս անդամների նման հավասարազոր ձայներ ունեն։

Կայսերական հրամանագրով հաստատվելու տարեթիվն է։ 1281 թ. Շեվվալ 23-ը (1865, Մարտ 20)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆՔԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՅԱՐԱՆՆԵՐԸ ԱՆԿԱԽ ՆՐԱՆՑ ՀՊԱՏԱԿՈՒԹՑՈՒՆԻՑ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԻՑ ՄԱՔՍԱՑԻՆ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամենակարևոր արտոնությունը, որը հնուց ի վեր տրված է եղել կրոնական համայնքներին, դա նրանց մաքսային հարկերից զերծ մնալն է։ Օսմանյան կայսրության կողմից չնորհված այս արտոնությունը, որը բխում է մահմեդականության դավանանքից, այժմ ևս վերահաստատվում է Նորին Վսեմություն Փադիշահի կողմից չնորհված կայսերական հրովարտակով։ Սակայն, այս կապակցությամբ, բերվում են նաև մի շարք նոր դրույթներ։

Նախ և առաջ ծիսակատարությունների հետ կապված բոլոր զարդարանքներն ու առարկաները զերծ են մընալու մաքսային հարկերից։

Երկրորդ, այս արտոնությունները, ինչպես հայտարարվելու է ստորև, հիմնվելու են վանականների, միանձնուհիների, հոգևոր ուսումնարանների, հիվանդանոցների, դեղարանների, որբանոցների, անվճար տարրական և միջնակարգ դպրոցների և բարեգործական հաստատությունների տարեկան անհրաժեշտ ծախսումների վրա։

Հոդված 1։ Եկեղեցու զարդարանքները, ինչպես նաև ծիսակատարության վերաբերող առարկաները, առաջվա նըման ազատվելու են բոլոր ծախսերից, ըստ իրենց արժեքի

(որը ցույց է տրվելու երկրորդ և երրորդ հոդվածներում), բոլոր տեսակի հարկերից ազատվելու են նաև վանքերը, հոգևոր ուսումնարանները, հիվանդանոցները, բարեգործական դեղարանները, որբանոցները, անվճար տարրական և միջնակարգ դպրոցները և այն ապրանքները, որոնք չեն մտնում տվյալ հաստատության տարեկան մատակարարման գումարի մեջ, այդ թվում.

ա) Այն նվիրատվությունները՝ որոնք գալիս են «Կումամե» և այլ եկեղեցիներից։

բ) Հնություն հանդիսացող խաչերը, անզարդ եւ զարդարանքով անոթները։

գ) բաժակները, մետաղյա լագանները, կավե կուժերը, բուրվառները, խունկը, հախճապակե, արծաթյա կամ ոսկե կուժերը, ափսեները և պատարագի համար գործածվող արծաթյա և ոսկյա ամանները։

դ) Մեծ ու փոքր մոմակալները, զարդարանքով և անզարդ ծաղկամանները, արհեստական ծաղիկները, ամպհովանիները, վարագույրները, խորանի ծածկոցը, ասեղնագործված վարագույրները, զարդարանքի համար մետաքսը, բամպակեղենը, արծաթաթելից կամ ոսկեթելից պատրաստված մետաղյա ասեղնագործերը, ծոպավոր ժապավենները, եպիսկոպոսների ամեն տեսակի գավազանները և զարդարված և անզարդ փայտյա կախիչները։

ե) Միանձնուհիների կարված և չկարված հագուստները, ինչպես նաև բոլոր կղերականների տարազները, որոնցով կրոնական արարողություն են կատարում։

զ) Բրդե գործերը, ինչպես նաև կեղծ և թավշյա խալիչաները։

է) Եկեղեցում կախված լամպերը, կամ արծաթյա, ոսկյա, մետաղյա, հախճապակե ջահերը, զարդարված կամ պարզ ապակիները։ Ոսկեզոծ կամ արծաթազոծ թղթերը, նկարները, մոմերը (պատրաստի կամ հում վիճակում)։ Խունկը, աղոթագրքերը, արծաթյա կամ ոսկյա մեդալյոն-

ները։ Մեծ և փոքր փորագրված նկարները և բոլոր պատկերները։

ը) Պատրիարքարանի ունեցվածքը, ինչպես նաև Երուսաղեմում և այլ վայրերում գտնվող վանքերի ունեցվածքը։ Վանականների և միանձնուհիների համար Երուսաղեմում պատրաստված խաչերը, մետաղները, խեցիները, աղոթագրքերը և եկեղեցական արարողության մյուս իրերը։

թ) Հարմոնի և երգեհոնային երաժշտության գրքեր, երգարաններ, ժամերգության նոտաներ, կրոնական գրքեր, որոնք ներմուծվում են Եվրոպայից կամ հրատարակվում են Օսմանյան կայսրությունում գտնվող մեծ վանքերում։

ժ) Եկեղեցիներին, վանքերին և այլ կացարաններին պատկանող չինանյութերը։

Ոչ մի հարկ չի գանձվում նաև արտասահմանից ներմուծվող եկեղեցական զարդարանքներից, աղոթագրքերից, դասագրքերից և այլ առարկաներից, ինչպես նաև Օսմանյան կայսրության սահմաններում մի վանքից այլ վանք փոխադրվող ապրանքներից։ Հարկից ազատվում են նաև եկեղեցական այն առարկաները, որոնք վերականգման համար ուղարկվում են Եվրոպա։

Հոդված 2։ Հարկերից ազատվում են նաև Ֆրանսիացի հոգևորականները «Ֆրեր» անվան տակ, որոնք դասավանդում են Ճիզվիթական, Լազարյան և այլ քրիստոնեական դպրոցներում։ Հարկերից ազատվում են նաև Ֆրանսիացիների վանքերն ու հողերը, որոնք պատկանում են «Կապուչեն», «Դոմինիկեն», «Կարմելիտեն» և այլ միաբանությունների։ «Գթության Քույրեր»ը, «Սեն Ժոզեֆ»ի, Երուսաղեմի և այլ վայրերի միանձնուհիները, որոնց անվանումները չեն նշված այստեղ։

Հարկեր չեն գանձվում նաև յուրաքանչյուր վանականի և միանձնուհու տարեկան ապրուստին հատկացված ապրանքներից, որոնց ընդհանուր գումարը հասնում է 4,000 դուրուշի։ Այդ ապրանքները կարող են լինել, հա-

գուստը, աննդամթերքները, ամեն տեսակի թղթեր ու թանաք և այլ առարկաներ, որոնք անհրաժեշտ են վանականի և միանձնուհու ապրուստի համար։

Յուրաքանչյուր վանական կամ միանձնուհի, իր անձնական օգտագործման համար կարող է տարեցտարի Եվրոպայից պահանջել քթախոտ (էնֆիե) 150 ղուրուշի սահմաններում։ Եթե անհրաժեշտությունը զգացվի քթախոտ գնել առետրական ճանապարհով, ապա գոյությունն ունեցող հարկը պետք է 75 տոկոսով իջնի։

Հետագայում, եթե Օսմանյան կայսրությունը արգելի քթախոտի ներմուծումը Եվրոպայից և վերացնի այս արտոնությունը, հիշյալ վանականները և միանձնուհիները, բոլոր դեպքերում, իրավունք են ունենալու պահանջելու քթախոտ մինչև 150 ղուրուշի սահմաններում։

Հոդված 3։ Հոգևոր ուսումնարանները, դեղարանները, որբանոցները, անվճար հիվանդանոցները, անվճար տարրական և միջնակարգ դպրոցները, մի խոսքով՝ վանքին կցված բոլոր այն հաստատությունները, որոնք նշված են երկրորդ հոդվածում, օգտվելու են հարկային արտոնություններից։ Այդ թվում.

ա) Հարկերի գանձումից ազատվում են այն ապրանքները, որոնք անհրաժեշտ են հոգևոր ուսումնարանի յուրաքանչյուր սանի տարեկան ապրուստի համար, և որի անվանական արժեքը չի անցնում 1,800 ղուրուշից։ Այդ ապրանքները կարող են լինել՝ հագուստը, աննդամթերքը, ամեն տեսակի թղթերը, թանաքն ու մատիտը, քիմիայի և աստղաբաշխության վերաբերող սարքերը և ուսման հետ առնչվող այլ առարկաներ։

բ) Հարկերի գանձումից ազատվում են այն ապրանքները, որոնք անհրաժեշտ են հիվանդանոցի յուրաքանչյուր հիվանդի համար, որի տարեկան անվանական արժեքը չի անցնում 1,350 ղուրուշից։ Այդ ապրանքներն են՝ աննդամթերքը, դեղորայքը, ապակեղենը, անկողինը, մահճակալը և

այլն։ Բացի վիրաբուժական առարկաներից, հարկային գանձումից ազատվում են բարեգործական հաստատությունների նվիրաբերած ապրանքները, ինչպես նաև այլ ապրանքներ, որոնք անհրաժեշտ են հիվանդանոցի պարտեզի համար։

գ) Հարկային գանձումից ազատվում են այն ապրանքները, որոնք անհրաժեշտ են վերոհիշյալ դեղարաններում բուժման մեջ գտնվող յուրաքանչյուր աղքատի համար և որոնց տարեկան անվանական արժեքը չի անցնում 900 դուրուշից։ Այդ դեղարաններում բուժման մեջ գտնվող աղքատների թիվը երկու տարվա ընթացքում, հասնելու է մինչև 900 հոգու։ Հարկային գանձումից ազատված ապրանքները հետևյալներն են՝ սննդամթերքը, դեղորայքը, սպիտակեղենը և դեղարանին անհրաժեշտ մյուս ապրանքները։

դ) Հարկային գանձումից ազատվում են այն ապրանքները, որոնք անհրաժեշտ են որբանոցի յուրաքանչյուր որբի համար և որոնց տարեկան անվանական արժեքը հասնում է 1,800 դուրուշի։ Այդ ապրանքներն են՝ սննդամթերքը, հագուստը, թանաքը, մատիտը, թղթերը և ուսման վերաբերող այլ առարկաները, նկարազարդ գրքերը, նկարները, տուփերը, խաղալիքները, սպիտակեղենը, ասեղնագործությունները, տարբեր կտորները և հողագործության, արվեստի, գրականության և գիտության վերաբերող զանազան առարկաներ։

ե) Հարկային գանձումից ազատվում են այն ապրանքները, որոնք անհրաժեշտ են տարրական դպրոցների աշակերտների անվճար ուսման համար և որոնց տարեկան անվանական արժեքը հասնում է 450 դուրուշի։ Այդ ապրանքներն են՝ թանաքը, գրիչները, մատիտները և ամեն տեսակի թղթերը, ինչպես նաև նկարազարդ գրքերը, նկարները, գրչատուփերը, խաղալիքները և այլ նվերները, որոնք անհրաժեշտ են քննության ժամանակ աշակերտներին խրախուսելու համար։

զ) Հարկային գանձումից ազատվում են այն ապրանքները, որոնք անհրաժեշտ են սրբավայրերի ուխտավորների համար և որոնց տարեկան անվանական արժեքը հասնում է 3,500 ղուրուշի։ Ուխտավորների թիվը, որոնք կերակրվելու են երկու տարվա ընթացքում, պետք է հասնի 3,500 ղուրուշի։ Այդ ապրանքները կարող են լինել՝ աննդամթերքները, դեղորայքը և սրբավայրերին անհրաժեշտ այլ ապրանքները։

Հոդված 4։ Երկրորդ և երրորդ հոդվածներում ցույց տրված արժեքները հաշվված են ղուրուշի մաքուր հարկադրոշմով, այսինքն՝ ոսկե հարյուրանոց մեջիդիեն հաշվվում է 100 ղուրուշ։ Բացի դրանից, արծաթյա 5 քսան ղուրուշանոց դրամական միավորները կազմում են մեկ ոսկյա հարյուրանոց մեջիդիե։

Հոդված 5։ Եթե եկեղեցիների կամ վանքերի, հիվանդանոցների, հոգևոր ուսումնարանների, աղքատաց դեղարանների, անվճար տարրական և միջնակարգ դպրոցների անունով ծանրոց է գալիս Օսմանյան կայսրության որևիցե նավահանգիստը, ապա ավազ վանականը կամ միանձնուհին, որը գտնվում է տվյալ նավահանգստում, ծանուցում է այդ մասին հասցեատիրոջը։ Եթե ծանրոցի տերը օտարերկրացի է, ծանուցագիրը ուղարկվում է համապատասխան դեսպանությունն, իսկ եթե Օսմանյան կայսրության հպատակ է, ապա, այն ուղարկվում է պատրիարքարան։ Այդ ծանուցագիրը ստանալուց հետո, այն ներկայացվելու է մաքսատան վարիչին։

Այնուհետև ստացված ապրանքները ենթարկվում են մաքսային քննության, գրանցվում համապատասխան մատյանի մեջ և առանց հարկ գանձելու հանձնվում է հասցեատիրոջը։ Եթե ստացված ապրանքների քանակը գերազանցի մեկ տարվա համար արձանագրված վերոհիշյալ հաստատությունների ապրանքների գումարից, ապա, տվյալ դեպքում, հավելյալ ապրանքների համար գանձվում է հա-

մապատասխան մաքս։

Հոդված 6։ Եկեղեցիների, վանքերի, և այլ հոգևոր հաստատուԹյունների ծանրոցները հասցեատիրոջ են հանձնվում մաքսատան աշխատողներից որևիցե մեկի ներկայուԹյամբ։

Հոդված 7։ Եթե ծանրոցի պարունակուԹյունը չի համապատասխանում վանքի կամ այլ հոգևոր հաստատուԹյունների համար կանոնադրուԹյամբ հաստատված ապրանքների տեսակին, ապա, մաքսատան կառավարիչը նախ հայտնում է այդ մասին դեսպանատուն՝ եթե ապրանքատերը օտարերկրացի է, կամ պատրիարքարան՝ եթե ապրանքատերը Օսմանյան հպատակ է, և կատարելապես գանձվում է հարկ։

Հոդված 8։ Նկատի ունենալով, որ վանքի կամ հոգևոր այլ հաստատուԹյունների բնակիչների Թիվը կարող է ավելանալ կամ պակսել, դրա համար, անհրաժեշտ է երկրորդ և երրորդ հոդվածներում նշված յուրաքանչյուր հաստատուԹյան տարեկան օգտագործվող ապրանքների հաշվարկը կատարելու համար, յուրաքանչյուր տարվա Մարտ ամսվա սկզբին, կազմել հաշվարկը և ուղարկել վիլայեթի մաքսային վարչուԹյանը։ Այդ ցուցակի բնակիչների Թիվը ոչ մի պատրվակով, չպետք է ավելանա մինչև տարվա վերջը։

Եթե դեսպանատունը և պատրիարքարանը ամեն տարվա Մարտ ամսվա սկզբին նոր ցուցակ չուղարկեն, ապա, մաքսային վարչուԹյունը հենվելու է նախորդ տարվա ցուցակի վրա։

Այս ցուցակը ուղարկելուց հետո, եթե որևիցե վանքի կամ հոգևոր հաստատուԹյան անհրաժեշտ լինի կատուցելու որևիցե չինուԹյուն, ապա, որպեսզի օգտվեն վերոհիշյալ արտոնուԹյուններից, պետք է անմիջապես և պաշտոնապես այդ մասին հայտնեն մաքսային վարչուԹյանը։

Հոդված 9։ Որևէ վանքի կամ հոգևոր հաստա-

տուրյան ավագ վանականը կամ միանձնուհին պետք է դեսպանատան կամ պատրիարքարանի գիտությամբ լիազորեն որևիցե մեկին, որպեսզի վերջինս 5-րդ հոդվածի հիման վրա ստանա իրենց հասցեագրված ծանրոցը։

Վանքերը և այլ հոգևոր հաստատությունները պարտավոր են 8-րդ հոդվածի հիման վրա, յուրաքանչյուր տարվա Մարտ ամսվա սկզբին, դեսպանատան կամ պատրիարքարանի միջոցով հայտնել իրենց բնակիչների և արտոնման ենթակա ապրանքների ցուցակը։

Հոդված 10։ Եթե մեծ վանքերում անհրաժեշտությունն առաջանա, Եվրոպայից ստացված ապրանքները այլ վանքերը փոխադրել, ապա, տվյալ քաղաքի մաքսային վարչությունը պետք է մաքսային գանձումից ազատի տվյալ մեծ վանքի մեկ տարվա համար արտոնագրված ապրանքների հաշվին։

Հոդված 11։ Եթե Օսմանյան կայսրության արտադրանքներից անհրաժեշտությունն զգացվի մի վանքից մի այլ վանք տեղափոխել, ապա տվյալ վանքի վանականը կամ միանձնուհին, պարտավոր են, դեսպանատան կամ պատրիարքարանի միջոցով, հայտագիր ներկայացնել մաքսային վարչությանը, որպեսզի հարկային գանձումից ազատվելու արտոնություն ստանան։ Երբ այդ ապրանքը հասնի հասցեագրված վանք, ապա տվյալ վայրի մաքսային վարչությունը պետք է հարկային գանձումից ազատի տվյալ վանքի տարեկան արտոնագրված ապրանքների հաշվին և անմիջապես հանձնի հասցեատիրոջը։

Եթե վավերագրված ծանուցագիրը նշված ժամկետում առանց որևէ հիմնական պատճառաբանության չի հասնում մաքսային վարչությունն, ապա, հարկ է գանձվում այն վանքից, որը ուղարկել է այդ ապրանքը։

Պաղեստինում գտնվող վանքերի ավագ վանականները, կիպրոսից անհրաժեշտ քանակությամբ գինի տեղափոխելու համար, պետք է դեսպանության կամ պատրիար-

քարանի միջոցով հայտնեն մաքսային վարչությանը։ Եթե, որևիցե հիմնավորված պատճառաբանություն չլինի, ապա տվյալ ծանուցագիրը, 50 օրվա ընթացքում պետք է վավերացվի Ցաֆայի մաքսային վարչության կողմից և ետ վերադարձվի։ Երբ գինին հասնի Ցաֆայի նավահանգիստը, ապա մաքսային վարչության կառավարիչը այն բաժանում է հասցեագրված վանքերին, ազատելով տվյալ վանքի տարեկան արտոնված ապրանքների հաշվին։ Եթե տվյալ ծանուցագիրը առանց էական պատճառաբանության չվավերացվի 50 օրվա ընթացքում և չվերադարձվի ետ, ապա տվյալ կղզու մաքսային վարչության կառավարիչը իրավունք ունի տվյալ վանքից վերցնելու մաքսային հարկը։ Կիպրոս կղզում գտնվող վանքերը նույնպես ազատվում են գինու հարկից, միայն թե, ինչպես նշվեց վերևում, տվյալ վանքի վանականը, գինին ուղարկելով Ցաֆայի նավահանգիստը, պետք է ծանուցագիր ներկայացնի այդ մասին։ Կիպրոս կղզու վանքերը եթե ցանկություն ունենան Օսմանյան կայսրության սահմաններում գտնվող վանքերին գինի ուղարկել, ապա նրանք օգտվելու են հարկային վերոհիշյալ արտոնություններից։ Եթե լատինական վանքերում տեղական պահանջների համար գինի պատրաստվի, ապա նրանք զերծ են լինելու հարկային գանձումից։

Հոդված 12։ *Ինչպես հայտնի է, Երուսաղեմի մի* շարք վանքերի վանականների և միանձնուհիների, այդ թվում և «Փեր» (Père) և «Սէօր Դե Շարիդե» (Les sœurs de Charité) կրոնավորների հաղուստները ներմուծվում են Եվրոպայից։ Տվյալ ապրանքի հանձնելու ժամանակ, մաքսային վարչությունը ազատում է հարկային գանձումից տվյալ վանքի տարեկան արտոնությունների հաշվին։ Հարկային գանձումից ազատվում են այն ապրանքները, որոնք վոխադրվում են այլ վանքեր[1]։

1281 թ. Ջուլկադե, 7 (1865 թ. Ապրիլ 5)

ԿՐԵՏԵԻ ՎԻԼԱՅԵԹԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Կրետեի կայսերական զորքի հրամանատար և նահանգապետ, «Մեջիդի» և «Օսմանի[1]» առաջին աստիճանի շքանշանակիր, փառապանծ վեզիր Ավնի փաշային, ինչպես նաև Ռումելիի բեյլերբեյիի աստիճան ունեցող, Կանդիայի, Ռեսմիի, Իսֆիի, Լաչիդի Մութասարրիֆներ (Թող որ նրանց փառքը միշտ հարատևի), Բերթեվ փաշային, Սավան փաշային, Կոստակի փաշային և վեհապանծ կայմակամներին։

Կրետե կղզում բռնկած ապստամբությունը, մեծ վնաս հասցնելով տեղի բնակչությանը, իրականում խոր զայրույթ առաջացրեց նաև [Օսմանյան] կայսրության մայրաքաղաքում։ Այս կապակցությամբ, մեր կայսրությունը ճգտում է վերականգնել [նախկին] իրավիճակը և այնուհետև կազմավորել վարչակարգը և ապահովել կղզու բնակչության բարեկեցությունն ու երջանկությունը։

1284 (1867) *թվականի Մարտի սկզբից, բնակչությունը երկու տարով ամբողջովին ազատվելու է տասանորդի հարկից, հաջորդ երկու տարիներին՝ կես չափով։ Այս վերջին երկու տարիներից ստացված կես տասանորդի հարկը չի մտնելու պետության գանձարանը, այլ ընդհանուր ժողովի կողմից ծախսվելու է հողագործության, առևտրի զարգացման և կղզու ներքին բարեփոխությունների վրա։ Իսկ ընդհանուր ժողովը ընտրվելու է կղզու բնակչության կողմից և գումարվելու է տարին մեկ*

անգամ՝ վիլայեթի կենտրոնում։

Ինչպես հայտնի է, Խանիայի քրիստոնյա և մահմեդական ներկայացուցիչների կողմից կազմված ծրագիրը ստանալուց հետո, հարկերի կարգավորման հարցը խնդրո առարկա դարձավ մեր բարձր հրամանագրերից մեկում։ Այժմ, ներկա բարձր հրովարտակով, որի ճակատը զարդարված է մեր կայսերական կնիքով և կրում է 2 Ջումադի էլ-ահիր ամսի 1284 տարեթիվը, (1867 Հոկտեմբեր 1), տրվում է հետևյալ հիմնական կանոնակարգը։

1) Կրետե կղզու կառավարումը հանձնվելու է մեր կողմից նշանակված մեկ նահանգապետի (վալի), իսկ մեր կայսրության մեջ մտնող բերդի պաշտպանությունը և կղզու զինվորական հրամանատարությունը հանձնվելու է մի այլ անձնավորության։

2) Ջնայած որ նահանգապետի և զինվորական հրամանատարության պաշտոնները առանձնանում են իրարից, այնուհանդերձ անհրաժեշտության դեպքում, դրանք Նորին Մեծության Փադիշահի կամքով կարող են միացվել։

3) Նահանգապետը կառավարում է կղզին Օսմանյան կայսրության ընհանուր օրենսդրության, ինչպես նաև [Կրետե] կղզու համար կազմված կանոնադրության հիման վրա։ Նահանգապետը իր տրամադրության տակ ունենալու է երկու խորհրդական, մեկը մահմեդական, իսկ մյուսը քրիստոնյա, որոնք նշանակվելու և վավերացվելու են կայսերական հրամանագրով։

4) Կրետե կղզին բաժանվելու է անհրաժեշտ լիվաների, որոնք կառավարվելու են Օսմանյան պետության կողմից նշանակված եւ սուլթանական հրամանագրով հաստատված Մութասարրիֆների կողմից։ Այս Մութասարրիֆների կեսը լինելու են մահմեդականներ, իսկ կեսն էլ քրիստոնյաներ։ Մահմեդական Մութասարրիֆը իր տրամադրության տակ ունենալու է քրիստոնյա խորհրդական,

իսկ քրիստոնյա Մութասարրիֆը՝ մահմեդական խորհրդական։ Բոլորն էլ նշանակվելու են սուլթանական հրամանագրով։

5) Ցուրաքանչյուր լիվա բաժանվելու է կազաների, որոնց վրա պետության կողմից նշանակվելու են կայմակամներ՝ կամ մահմեդականներից կամ էլ քրիստոնյաներից։ Եթե նշանակված կայմակամը մահմեդական է, ապա նրա տեղակալը լինելու է քրիստոնյա, իսկ եթե կայմակամը քրիստոնյա է, ապա նրա տեղակալն էլ՝ մահմեդական։

6) Ֆինանսական գործերի համար, այս վիլայեթում նշանակվելու է մի դեֆտերդար, իսկ սանջաքներում եւ կազաներում՝ մեկական հաշվետար, որոնք ըստ անհրաժեշտության կարող են լինել մահմեդական կամ քրիստոնյա։ Վիլայեթները ունենալու են երկու գլխավոր քարտուղարներ, իսկ սանջաքները, երկու սովորական քարտուղարներ։ Կղզում, բոլոր պաշտոնական գրությունները կազմվելու են երկու լեզուներով։

7) Վալին, Մութասարրիֆը և կայմակամը, իրենց տնօրինության ներքո ունենալու են կառավարող ժողով (մեջլիս)։ Վիլայեթի մեջլիսի նախագահ է հանդիսանում Վալին, իսկ նրա անդամները՝ երկու խորհրդականները, քննիչը, թեմակալը, դեֆտերդարը, քարտուղարները և տեղի բնակչության կողմից ընտրված 3 մահմեդականներ և 3 քրիստոնյաներ։

8) Լիվայի խառը ժողովի [նախագահը] Մութասարրիֆն է, իսկ նրա անդամներն են՝ տեղակալը, դատավորը, եպիսկոպոսը, հաշվետարը, գլխավոր քարտուղարները և բնակչության կողմից ընտրված 3 մահմեդականներ ու 3 քրիստոնյաներ։ Այն սանջաքներում, որտեղ բնակիչները մեծ մասամբ քրիստոնյաներ են, մեջլիսը գլխավորելու է նույնպես Մութասարրիֆը, իսկ մեջլիսի անդամներն են լինելու, տեղակալը, եպիսկոպոսը, հաշ-

վապահը, գլխավոր քարտուղարը և վեց քրիստոնյաներ։

Կազայի մեջլիսը ունենալու է նույն համակարգը։

9) Բնակչության իրավունքները պաշտպանելու, կամ՝ քրեական հետաքննության համար այս վիլայեթում, լիվաններում եւ կազաներում կազմակերպվում են դատական խորհուրդներ։ Վիլայեթի, լիվանների, կազաների դատական խորհրդի անդամները ընտրվում են բնակչության կողմից և կարող են լինել թե՛ մահմեդականներ և թե՛ քրիստոնյաներ։ Այն լիվաններում եւ կազաներում, որտեղ բնակչությունը միայն քրիստոնյաներից է բաղկացած, դատական խորհուրդները կազմվում են միայն քրիստոնյաներից։

10) Վիլայեթի կենտրոնում և խառը բնակչություն ունեցող յուրաքանչյուր լիվայում, պետք է գոյություն ունենան չարիաթական հատուկ դատարաններ, որոնք հետաքննելու են մահմեդականների միջև առաջ եկած դատերը։ Գյուղերում և սանջաքներում, քրիստոնյաների և մահմեդականների համար կազմվում են առանձին ավագների խորհուրդներ, որոնք ընտրվում են տեղի բնակչության կողմից։

11) Բոլոր դատական հայցերը, որոնք առաջ են գալիս մահմեդականի և քրիստոնյայի միջև, քրեական, իրավական և առևտրական հողի վրա, պետք է հետաքննվեն հատուկ օրենքով՝ խառը մեջլիսի և առեւտրական դատարանի կողմից։

12) Կրետեի վիլայեթում, յուրաքանչյուր կազայից երկուական անդամ ընտրվելով, ստեղծվելու է մի ընդհանուր ժողով։ Մահմեդական բնակչություն ունեցող կազայի երկու անդամներն էլ լինելու են մահմեդական, իսկ քրիստոնյա բնակչություն ունեցող կազայի անդամները՝ քրիստոնյա։ Եթե տվյալ կազան, խառը բնակչություն ունի, ապա երկու անդամներից մեկը լինելու է մահմեդական, իսկ մյուսը՝ քրիստոնյա։

Ընդհանուր ժողովը գումարվում է տարին մեկ անգամ, և իր նիստերին ուշադրություն է դարձնում առևտրի, արդյունաբերության և հողագործության զարգացման հարցերին, ճանապարհների և կամուրջների շինարարության, կրթության և լուսավորության վրա։

Ստեղծվելու են նաև փոխօգնության դրամարկղներ և կազմակերպվելու են այլ հանրօգուտ աշխատանքներ։

13) Հնուց ի վեր, Կրետե կղզու բնակչությունը, համեմատած Օսմանյան կայսրության այլ վիլայեթների բնակչության հետ, ազատված է եղել մի շարք հարկերի վճարումից։ Նախկինում, կղզու բնակչությունից գանձվում էր տասանորդի հարկը, սպիրտային խմիչքների հարկը, ինչպես նաև աղի և ծխախոտի մաքսային հարկերը։ Այս անգամ, որոշ բարեփոխումների հետևանքով, մաքսային հարկերը գանձվելու են միայն որոշակի ապրանքներից։

14) Ընդհանուր ժողովը, պետության շահերը պահպանելու համար, հավասարակշիռ հարկեր է նշանակում բնակչության համար։ Այժմ ընդհանուր ժողովի առաջարկությունների և վերոհիշյալ դրույթների հիման վրա, սուլթանական հրամանագրով հաստատվում է կղզու իրավական, վարչական և ֆինանսական օրենքները[2]։

1284 թ. Ջումադի էլ-ահիր 2, (1867, Հոկտեմբեր 1)։

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԳԼՈՒԽ 1

ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՎ ՍԻՆՈԴԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1։ *Երուսաղեմի հունական պատրիարքը հանդիսանում է «Քումամե»ի պատրիարքությանը ենթակա բոլոր քահանաների, եպիսկոպոսների և միտրոպոլիտների առաջնորդը, ինչպես նաև հունական և այլ քրիստոնյա վանքերի, եկեղեցիների և բոլոր ուխտավայրերի, դպրոցների, հիվանդանոցների ընդհանուր դեկավարը։*

Պատրիարքի պարտականությունն է՝ ժամանակին կատարել բոլոր կրոնական ծեսերը, որոնք վաղուց ի վեր պահպանվում են «Քումամե»ի եկեղեցում, հետևել դրպրոցների և հիվանդանոցների կառավարմանը և, եկեղեցիների ու վանքերի եկամուտների համեմատ, հոգալ և խնամել աղքատներին, բոլոր կրոնավորների ջանքերով օգտակար լինել յուրաքանչյուր տարի Երուսաղեմ այցելող ուխտավորներին։

Հոդված 2։ *Եթե կրոնական գործերի հետ առնչվող, կամ քահանաների պարտականություններին վերաբերող որևիցե խնդրագիր ներկայացվի, ապա, Սինոդը պատրիարքի նախագահությամբ, քննարկելու է այն և որոշում է ընդունվելու միաձայն կերպով, կամ ներկաների ձայների*

մեծամասնությամբ։

Հոդված 3։ Սինոդը բաղկացած է 6 եպիսկոպոսներից և ինը վարդապետներից՝ որոնք մշտապես խորհրդակցում են պատրիարքի նախագահությամբ։ Պատրիարքը, պահպանելով հանդերձ Սինոդի անդամների ամբողջականությունը, կարող է ավելացնել, կրճատել կամ փոխել որևէ անդամին մի այլ հոգևորականով։ Սինոդը հետևում է եկեղեցիների, վանքերի և ուխտավայրերի հոգևոր կառավարմանը, քահանաների և ուսումնարանի սանների պարտականություններին։

Կրոնական իրերի գնումն ու վաճառումը կամ փոխանակումը կատարվում է Սինոդի գիտությամբ, և կանոնադրության հիման վրա։ Ստացված եկամուտները և տոկոսները օգտագործվում են կրոնական նպատակներով և ազգայինների բարեկեցության համար։

Սինոդի բոլոր որոշումները հաստատվում են պատրիարքի կողմից։ Պատրիարքը, իր բացակայության կամ հիվանդության դեպքում, ժամանակավորապես տեղապահ է նշանակում որևիցե թեմակալի, եպիսկոպոսի և կամ վարդապետի։

ԳԼՈՒԽ 2

ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 4։ Երուսաղեմի պատրիարքության աթոռի թափուր մնալու դեպքում, Սինոդը Երուսաղեմի եպիսկոպոսների և թեմակալների մեջից որպես տեղապահ ընտրում է հարմար մի հոգևորականի։ Այնուհետև, տվյալ տեղակալի ընտրությանը վերաբերվող տեղեկագիրը ներկայացվում է Մութասարրիֆին, որը վավերացնելու համար, հեռագրով կամ նամակով անմիջապես տեղեկացնում է Բարձրագույն դուռ։ Տեղապահի հաստատումը և նոր

պատրիարքի ընտրության պարագաները գործադրվում են ըստ Բարձրագույն դռնից եկած կարգադրության։

Հոդված 5։ Նախորդ հոդվածում նշված կետերը գործադրելուց հետո, տեղապահը գրավոր տեղեկացնում է Երուսաղեմի պատրիարքությանը ենթակա եպիսկոպոսներին և թեմակալներին, որպեսզի 21 օրվա ընթացքում, նրանք ժամանեն Երուսաղեմ՝ նոր պատրիարքի ընտրության համար։

Տվյալ ժամանակամիջոցին, ընտրական ժողովին հրավիրվում են նաև յուրաքանչյուր թեմի և եպիսկոպոսության թե՛ կղերականները և թե՛ աշխարհիկ ներկայացուցիչները։

Հոդված 6։ Տվյալ ժամկետի վերջին օրը, բոլոր հրավիրվածները հավաքվում են Երուսաղեմի վանքում, որտեղ և գումարվում է հոգևոր ժողովը։ Հոգևոր ժողովի յուրաքանչյուր անդամ, առանձին թղթի վրա գրում է առավել հարմար թվացող պատրիարքության թեկնածուին և այն ստորագրելուց հետո, հանձնում է տեղապահին։ Այդ ցուցակում կարող են ընդգրկվել Երուսաղեմի պատրիարքությանը ենթակա բոլոր թեմակալները և վարդապետները, եպիսկոպոսները, անկախ նրանց ներկայությունից։

Հոդված 7։ Ներկայացված բոլոր անձնավորությունները, անկախ ստացված ձայներից, հավասարապես ընդգրկվում են թեկնածուների ցուցակում, որը ստորագրվում է տեղապահի և Սինոդի ներկա անդամների կողմից։

Հոդված 8։ Պատրիարք ընտրվող անձնավորությունը հանդիսանալու է Երուսաղեմի եկեղեցու հոգևոր առաջնորդը, դրա համար էլ նախորդ հոդվածի համաձայն, թեկնածուների ցուցակը ներկայացվելու է Մութասարրիֆին, որը անմիջապես, հեռագրով կամ նամակով հայտնելու է Բարձրագույն դուռ։ Բարձրագույն դռանը իրավունք է վերապահվում, պետականորեն հարմար չթվացող թեկնածուին հանել ցուցակից և այդ մասին Մութասարրիֆի

միջոցով հաղորդել Սինոդին, որպեսզի պատրիարքը ընտրվի ցուցակում մնացած թեկնածուներից։

Հոդված 9։ Նախորդ հոդվածի համաձայն, Մութասարրիֆի կողմից Բարձրագույն դռան որոշումը հայտնվելուց հետո, Սինոդը Երուսաղեմի վանքի այլ վարդապետների և փոխերեցների հետ, ինչպես նաև հրավիրված գավառային ներկայացուցիչների և այլ քրիստոնյա համայնքների ներկայացուցիչը հանդիսացող երկու քահանաների հետ միատեղ, կազմում են ընդհանուր ժողով, որը ստացված կարգադրության համաձայն, նախաձեռնում է պատրիարքի ընտրությունը։ Ընդհանուր ժողովը գաղտնի քվեարկությամբ, և ձայների մեծամասնությամբ, թեկնածուների ցուցակից ընտրում է երեք հոգևորականների։ Այս երեք թեկնածուների ընտրությունից հետո, Սինոդի անդամները մեկնում են «Քումամե» եկեղեցին, որտեղ ընդհանուր ժողովի այլ անդամների հետ միատեղ, կրոնական վաղեմի սովորության համաձայն, գաղտնի քվեարկությամբ և ձայների առավելությամբ, երեք թեկնածուներից մեկին ընտրում են պատրիարք, կատարելով նաև կրոնական ծիսակատարություն։

Հավասար ձայների դեպքում, հարցը որոշվում է տեղապահի ձայնի առավելությամբ։

Հոդված 10։ Ընտրության հրավիրված եպիսկոպոսները և թեմակալները եթե բացակայեն քվեարկությունից, ապա նրանք հավանություն են տալիս ընտրության արդյունքներին։ Ընտրության մասնակիցները առանց բացառության, ընտրական մեկ ձայնի իրավունք ունեն։

Հոդված 11։ Վաղեմի սովորության համաձայն, ընտրության վերջում կազմվում է զեկուցագիր, որը Մութասարրիֆի միջոցով ներկայացվում է Մեծ վեզիրի վարչությանը, որպեսզի բարձր բերաթով հաստատվի նոր պատրիարքը։

ԳԼՈՒԽ 3

ԸՆՏՐՎՈՂ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 12։ *Այն անձնավորությունը, որը պատրիարք է ընտրվելու, պետք է բոլորած լինի 40 տարին, ունենա եպիսկոպոսի կամ վարդապետի աստիճան, առնվազն ծնունդով լինի Օսմանյան կայսրության հպատակ և 10 տարի առանց վարկաբեկման ծառայած լինի որևիցե թեմում։*

Հոդված 13։ *Պատրիարքության աթոռին ներկայացվող թեկնածուն, պետք է բարոյապես կայուն լինի, ունենա բավականաչափ կրթություն և գիտելիքներ, կատարելապես տիրապետի օրենքներին և եկեղեցական կարգ ու կանոնին, հաստատակամ լինի կրոնական իր համոզմունքներով և բարեխիղճ՝ աստվածային սկզբունքների նկատմամբ։*

Պատրիարքը, հանդիսանալով Երուսաղեմի համայնքի հոգևոր առաջնորդը, պետք է իրեն ենթակա եկեղեցիներում և վանքերում հովանավորի ուղղափառ կրոնը։

Հոդված 14։ *Պատրիարքը, բացի իր հոգևոր պարտականություններից, հանդիսանում է՝ միջնորդ այն արտոնությունների գործադրման համար, որոնք դեռևս չնորհվել են Օմար ուլ-Ֆարուկի — թող Աստծու օրհնությունը անպակաս լինի, — և սուլթան Մեհմեդ խան Ֆաթիհի և նրա հաջորդների կողմից։*

Նորընտիր պատրիարքը պետք է կատարելապես վայելի Օսմանյան կայսրության վստահությունը, իրազեկ լինի կայսրության օրենքներին, ինչպես նաև վայելի ամբողջ ազգի հարգանքը։

ԳԼՈՒԽ 4

ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ ԱՁԴ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱՐ

Հոդված 15։ ա) Այն անձնավորությունը, որը եպիսկոպոս է ընտրվելու, պետք է լինի Օսմանյան կայսրության հպատակ և պաշտոնավարած լինի պետական և ազգային գործերում՝ առանց վարկաբեկման։

բ) Տվյալ անձնավորությունը, իր ուսումը ստանալով Երուսաղեմի պատրիարքարանում, կամ էլ որևիցե այլ վանքում, պետք է աչքի ընկնի իր լավ վարքով։ Նույնիսկ եթե վարդապետի կամ փոխերեցի աստիճան էլ չունենա, պետք է ունենա բավականաչափ արժանիքներ։

գ) Պետք է բավականաչափ փորձ ունենա կրոնական գործերում եւ կատարելապես տիրապետի կրոնական օրենքներին։

դ) Բացի հունարենից, պետք է տիրապետի արաբերենին և հնարավորության չափ էլ թուրքերեն լեզվին։

Հոդված 16։ Եպիսկոպոսի պաշտոնը թափուր մնալու դեպքում, նորի ընտրությունը և նշանակումը կատարվում է կրոնական ժողովի հավանությամբ։ Պատրիարքի ցուցումով, կրոնական ժողովը ցուցակ է կազմում եպիսկոպոսության պաշտոնին առավել հարմար թեկնածուներից։ Այնուհետև այդ ցուցակից՝ առանձնացվում են այն 3-ը, որոնք առավելապես արժանի են այդ պաշտոնին և աչքի են ընկնում եկեղեցու հանդեպ իրենց ունեցած հավատարմությամբ։ Այնուհետև մեկնում են եկեղեցի, որտեղ և կատարվում է կրոնական արարողություն և ձայների մեծամասնությամբ, այդ երեք թեկնածուներից ընտրում են մեկին։ Հավասար ձայների դեպքում, հարցը որոշվում է պատրիարքի ձայնի առավելությամբ։

Հոդված 17։ Որևիցե եպիսկոպոսի մահանալու դեպքում, նորը ընտրվում է տվյալ քաղաքի հոգևորականության և երևելի անձանց կողմից՝ պատրիարքությանը ներկայացված նամակի հիման վրա[1]։

1292 թ. Սաֆեր, 5 (1875, Մարտ 14)։

3 ՄԱՅԻՍ, 1289 (1872) ԹՎԱԿԻՐ ԲԱՐՋՐ ՖԵՐՄԱՆԸ, ՈՐՈՎ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ԴԱՏԱՐԱՆԻՆ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ՊԱՅՄԱՆԻ ԽԱԽՏՈՒՄՈՎ ՏՈՒՆ Է ՎԱՃԱՌՎՈՒՄ ՈՉ-ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀՊԱՏԱԿՆԵՐԻՆ

Եթե մինչ այս մահմեդական թաղամասերում անհրաժեշտություն է առաջ եկել ոչ-մահմեդական հպատակներին տուն վաճառելու, ապա վաքուֆային վարչության կողմից տրված պարտամուրհակի մեջ նշվում էր, որ տվյալ ունեցվածքը չարժական չէ և բացի մահմեդականներից ոչ ոք իրավունք չունի բնակության հաստատելու այնտեղ։ Իսկ եթե գնորդը մահմեդական էր, ապա վաճառքի դեպքում պահանջվում էին մի շարք այլ պայմաններ։ Այսուհանդերձ, նման տների սեփականատերերը, հաճախ խախտելով վաճառքի պայմանները, երբ դիմում էին օրինական դատարանին, հարուցում էին զանազան դժվարություններ։ Այս կապակցությամբ, որպեսզի անհրաժեշտ բարեփոխություն կատարվի, նախարարների խորհրդում քննարկվեց վաքուֆային վարչության կողմից ներկայացված զեկուցագիրը։

Կասկած չկա, որ այսուհետև էլ մուսուլմանական թաղամասերում գտնվող տներում, ըստ օրենքի միայն մահմեդականները պիտի բնակվեն։ Սակայն մի շարք սեփականատերեր, իրենց տները վերջնականապես վաճա-

ռելով ոչ-մահմեդական հպատակներին, կանգնում են վակուղու առաջ և հենվում են այն պայմանի վրա, որ նման տները իբր կարող են վաճառել միայն մահմեդականներին:

Այս կապակցությամբ, նրանց զանազան հայցեր են ներկայացնում վաքուֆային վարչությանը և դժվարություններ հարուցում: Իրականում, նրանք, որոնք տալիս են իրենց տները օրինական գրավականով և աստիճանաբար մուծում իրենց պարտքը, իրավունք ունեն պահանջելու իրենց սեփականությունը: Եթե առանձին պատճառներով վեճ ծագի վաճառողի և գնորդի միջև, ապա գույությունն ունեցող օրենքի հիման վրա պետք է դիմեն վաքուֆային վարչությանը: Իսկ եթե որևիցե մեկը, խախտելով տան վաճառքի պայմանները, հայց է ներկայացնում դատարան, ապա վերջինս պարտավոր չէ նրա խընդրանքը բավարարելու:

Այս կապակցությամբ, Նորին Մեծություն Փադիշահի կայսերական հրամանագրը հաստատվեց Շեյխ-ուլ-Իսլամի ֆեթվայով, իսկ բովանդակությունը հաղորդվեց արդարադատության, առևտրի նախարարարության ներին, վաքուֆային վարչությանը և քաղաքային խորհուրդներին[1]:

ՄԵԾ ՎԵԶԻՐԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ԱՆԾԱՌԱՆԳ ՄԱՀԱՑԱԾ ԿՂԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Օսմանյան կայսրության հպատակ և Երուսաղեմի հունական եկեղեցու հանգուցյալ քահանա՝ կեսարիոս Հաջի Օվակիմի կողմից Աթենքի բանկում պահ էր դրվել որոշակի գումար, որը ձեռք բերելու համար նրա ժառանգը հայց էր ներկայացրել դատարան։

Չնայած որ ժառանգորդի իրավունքը հաստատվում է օրենքով, այսուհանդերձ Երուսաղեմի պատրիարքարանը պնդեց, որ պատրիարքարանում պահվող բարձր ֆերմանում նշում կա, որ բոլոր մահացած կղերականների ժառանգությունը մնում է հօգուտ պատրիարքարանի, և ժառանգորդը իրավունք չունի միջամտելու կամ հայց ներկայացնելու այն ստանալու համար։

Նման հայտարարություն կրկնվեց նաև Երուսաղեմի պատրիարքի տեղակալի զեկուցման մեջ։

Իմիջայլոց, սուլթանական դիվանի գրության մեջ նշված է եղել, որ Երուսաղեմի հույն կղերականների ժառանգությունը մնում է հօգուտ պատրիարքարանի՝ եթե հանգուցյալը ժառանգորդ չունենա։ Այս թյուրիմացության պատճառը կայանում է նրանում, որ [12] 55 (1839) և [12] 71 (1855) թվակիր բարձր ֆերմանների մեջ, որոնք ուղղված են եղել Երուսաղեմի հունական պատրիար-

քարանին, սխալմամբ բաց է թողնված «անժառանգ» բառը։ Այս իսկ պատճառով, Երուսաղեմի հունական պատրիարքարանի առարկությունը հերքվեց նախկինում գոյություն ունեցող պայմանների հիման վրա։ Միևնույն ժամանակ, հանգուցյալ Բարդանիոսի ժառանգական ունեցվածքը, որը Երուսաղեմի քահանա էր և գյուղացի Յաննիի եղբայրը, նույնպես բռնագրավվեց Երուսաղեմի նախկին պատրիարքի տեղակալ Յաքուդուս Լֆենդիի կողմից։ Այս կապակցությամբ, նույնպես հարց ծագեց ունեցվածքը ժառանգորդին վերադարձնելու համար։ Արդարադատության նախարարությունը վերոհիշյալ կեսարիոսին հատկացված գումարը վերադարձնելու համար, երկու զեկուցագիր ուղարկեց պետական խորհուրդ։

Իրականում, այս հարցի լուծման համար պահանջվում էր.

1) *Վերականգնել հիշյալ ժառանգորդների իրավունքը, որոնց մասին առարկություն է անում պատրիարքարանը։*

2) *Մահացած կղերականների ժառանգությունը նըշանակել գոյություն ունեցող օրենքի և կանոնադրության հիման վրա։*

Ստուգելով նախկինում Երուսաղեմի հունական պատրիարքարանին ուղղված բարձր ֆերմանների բովանդակությունը, ինչպես նաև սուլթանական դիվանի հնագույն գրությունները, պարզվում է, որ սկսած 1000 թվականից «անժառանգ» բառը օգտագործվել է մի շարք սուլթանական ֆերմաններում, իսկ մյուսներում բաց է թողնվել։ «Անժառանգ» բառը բաց է թողնվել նաև [12] 55 (1839) և [12] 71 (1855) թվականներին տրված սուլթանական ֆերմաններում։ Այս գրություններում պաշտպանվում է պատրիարքի և այլ մարդկանց անունով թողնված ամեն մի կտակ։ Բացի դրանից, նշված է նաև, որ պետական գանձարանի վարչությունը իրավունք չունի

միջամտելու անժառանգ մահացած կղերականների ժառանգությանը։ 18 Բելեր 1271 թ. (1855, Ապրիլ 8) կանոնադրության բովանդակությունից պարզվում է, որ ժառանգի առկայության դեպքում խաչը, տարազը և կղերականի այլ իրերը հանձնվում են եկեղեցուն, իսկ ունեցվածքը՝ ժառանգորդին։

Այս հարցը լուծելու և բեկանելու համար, անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալը։

Եթե վերոհիշյալ պատրիարքարանը պնդում է, որ մահացած կղերականների ժառանգությունը, ժառանգորդի առկայության դեպքում պատկանելու է իրենց, ապա ինչ միտք ուներ ժառանգության հարցով վերոհիշյալ պայմանները բերելով։ Վերոհիշյալ կանոնադրությունից կարիք չի զգացվում այլ պայմաններ բերել՝ ժառանգորդի առկայության դեպքում մահացած կղերականների ժառանգության մասին, քանզի կասկած չկա, որ սուլթանական մի քանի ֆերմաններում «անժառանգ» բառի բացակայությունը հետևանք է գրասենյակի ծառայողի սխալմունքին։

Այս պարագան հաստատվում է այն փաստացի ապացույցով, որ մի շարք սուլթանական գրություններում, իսկապես գրված է «անժառանգ» բառը։ Եթե նկատի ունենանք, որ հիշյալ կանոնադրության մեջ խոսվում է նաև ժառանգությունը գործող օրենքի հիման վրա բաշխելու մասին, ապա, պատրիարքարանի միակողմանի մոտեցումը այս հարցին, բոլորովին օրինավոր չի կարող համարվել։

Այժմ անհրաժեշտ է ետ վերցնել Աթենքի բանկում վերոհիշյալ հանգուցյալ Օվակիմի գումարը, ինչպես նաև հանգուցյալ Բարդանիոսի ժառանգական ունեցվածքը Երուսաղեմի հունական պատրիարքի նախկին տեղակալ Յաքուդուս էֆենդիից և նախկին պայմանների հիման վրա բաժանել ժառանգորդների միջև և գործի կատարման

մասին հայտնել գերագույն խորհուրդ։

Այսուհետև, գերագույն խորհրդի գրասենյակը պետք է ավելի ուշադիր լինի նախկին գրուբթյունների հիմնական դրույթների նկատմամբ, և հետագա բարձր ֆերմաններում, պարտադիր կերպով գրի «անժառանգ» բառը։ Ընդունված այս որոշումը հայտնվում է պատրիարքարանին և այս հարցի արձանագրությունը հանձնվում է Արտաքին գործերի նախարարին, իսկ Արդարադատության նախարարությունը նախաձեռնում է անհրաժեշտ միջոցառումը[1]։

1290 Զուլկադե, 26 (1874, Հունվար 16)

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ ՄԵԾ ՎԵԶԻՐԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ՝ ՏՐՎԱԾ 1293 Թ. ՋՈՒՄԱԴԻ ԷԼ-ԱՀԻՐ ԱՄՍԻ 16-ԻՆ (1876 Թ. ՀՈՒՆԻՍ 10)[1]

Մահմեդական զինակոչիկների ամենամյա զինակոչումը կատարվում է վիճակ գցելով (kura ile) *և զինվորական ծառայության է վերցվում* 180-*ից մեկը։*

Քրիստոնյաների և Օսմանյան կայսրության մյուս ոչ-մահմեդականների զինվորական ծառայության փոխարեն հարկվում են 5,000 *ղուրուշով* (bedalet-i askeriye), *և վճարումն էլ կատարվում է վերոհիշյալ բաժանման հիման վրա, այսինքն՝* 180-*ից հարկված է լինելու մեկը։ Այսուհանդերձ, քանի որ ներկայացվող բողոքներում նշվել էր, որ մի չարք տեղերում զինվորական հարկը բաշխվում և գանձվում է նաև անաշխատունակ և աշխատավարձ չունեցող անձերից, ուստի անհրաժեշտություն զգացվեց այս հարցը լուծել հետևյալ հարմար ձևով։*

12 [92] *թ.* (1875) *Ջուլկադե ամսին հրապարակված կայսերական հրովարտակի մի տեղում ասվում է, որ ոչ-մահմեդական հպատակներին վերաբերող զինվորական հարկը չի տարածվելու մինչև* 20 *տարեկան և* 40 *տարին անցած մարդկանց վրա, իսկ հիվանդների և անաշխատունակների անունները ընդհանրապես չեն ընդգրկվելու զինակոչիկների ցուցակում։ Հրովարտակում նշված էր*

նաև այն մասին, որ վերոհիշյալ որոշման գործադրման ընթացքում, սահմանված զինակոչիկների քանակը չպետք է խախտվի, իսկ զինակոչիկների թվի շատացման դեպքում, եկամուտը պետք է մուտք գործի պետական գանձարան։

Այսուհանդերձ, պետք է նկատի ունենալ, որ երբ զինակոչային տարիքը սկսվեց համարվել 20-ից մինչև 40 տարեկանը, զինվորական հարկատվությունը խիստ կըրճատվեց և միևնույն ժամանակ վատթարացավ հարկադիր զինակոչիկների վիճակը։ Այս կապակցությամբ, ոչ-մահմեդական հպատակներից, ինչպես նաև համայնքների հոգևոր ղեկավարներից ներկայացվեցին բողոքներ, որոնցում նշվում էր տվյալ հրամանի կիրառման անհնարության և դժվարությունների մասին։

Այս կապակցությամբ, վերոհիշյալ հոգևոր ղեկավարները, որպեսզի թեթևացնեն հարկադիր զինապարտների վիճակը և մյուս կողմից չնվազեցնեն պետական գանձարանի եկամուտը, ուղարկել են մի զեկուցագիր, ուր նշվում է, որ զինվորական հարկերը պետք է բաշխվեն և գանձվեն բոլոր ոչ-մահմեդական հպատակներից, բացառությամբ հոգևորականների, հիվանդների, անաչխատունակ անձանց և այն անձնավորությունների, որոնք դեռ չեն բոլորել 15 տարին, և նրանցից, որոնք 75-ից բարձր տարիք ունեն։

Տվյալ հարցը քննարկվեց նաև նախարարների հատուկ խորհրդում, որը և նպատակահարմար գտավ գործադրել այս առաջարկը այն իմաստով, որ այն կարող է թեթևացնել /զինապարտների/ վիճակը։

Այսպիսով, ընդունված որոշման համաձայն, զինվորական տուրքը նախկինի նման բաշխվելու է մահմեդական զինապարտներին վերաբերող և գործող կանոնադրության համաձայն, այսինքն՝ արական սեռից զինվորական ծառայության է վերցվում 180-ից մեկը։ Իսկ

ոչ-մահմեդական հպատակները ծառայության փոխարեն հարկատու են 5,000 դուրուշով։

Ջինվորական հարկը գանձելու ընթացքում, բոլոր /ոչ-մահմեդական/ համայնքները պետք է հետևեն այս կարգ ու կանոնին և զինվորական հարկը բաշխելու ընթացքում, հաշվի առնեն տվյալ անձնավորության առողջությունը և նյութական կեցությունը, այնպես որ 180 զինապարտերի միջև չպետք է գտնվեն 15-ը չլրացրած և 75-ը անց անձնավորություններ, ինչպես նաև կղերականներ, հիվանդներ և անաշխատունակ անձինք։

[Այս որոշումը] վավերացվեց նաև Նորին Մեծություն Փադիշահի հրամանագրով և հաղորդվեց բոլոր վիլայեթների կառավարիչներին, համայնքների առաջնորդներին, ինչպես նաև պետական գանձարանի վարչությանը, որպեսզի նրանք ևս օժանդակեն դրա գործադրմանը[2]։

ՄԵԾ ՎԵԶԻՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԵՆԸ, ՈՒՂՎԱԾ ՍԱՄՈՍ [ԿՂԶՈՒ] ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ

Վերջերս Ստամբուլ ժամանած Սամոս կղզու ներկայացուցիչները բերել էին մի հանրագիր, որը ընթերցվեց մեջլիսում։

Կայսերական դիվանի գրասենյակի արխիվային փաստաթղթերի և իրավասու չրջանների տվյալների հիման վրա, որոշվեց, որ տվյալ [հանրագրի] մի քանի կետերը չեն կարող ընդունելի համարվել և դրանք նախկինի նման կիրառվելու են գործող կանոնադրության հիման վրա։ Այնուամենայնիվ, Նորին Մեծության փադիշահի թույլտվությամբ և բարիկամեցողությամբ, մեջլիսը հաստատեց հետևյալ կետերը։

1) Կղզու առողջապահական գործերի համար կիրառվելու է 7 հոդվածից բաղկացած մի կանոնադրություն, որը կազմվելու է առողջապահական խորհրդի և ժողովրդի ներկայացուցիչների կողմից։

2) Այն խնդրանքը, որը կատարվել էր կայսրության տարբեր վայրերը ապրանք արտահանելու դեպքում մաքսային հարկերի վերացման, ինչպես նաև գինու և սպիրտային խմիչքների համար «խաթիմարե փարասը» անվան տակ նշանակված հարկի վերացման կապակցությամբ, չի կարող ընդունելի համարվել անվտանգության նկատառումներով։ սակայն դրա փոխարեն, կղզու տարեկան

հարկը իջեցվելու է 100,000 ղուրուշով։

3) Կղզու ծովային կայազորից բացի, որը գտնվելու է [իշխանապետության] մայրաքաղաքում երկրի մշտական անվտանգությունը ապահովելու համար, նախկինի նման, կայսերական զորքի կազմից մնալու է նաև մի դասակ։

4) Տեղի դատարանը լիազորություն ունի մահվան դատավճիռ կայացնելու, սակայն հանցավորին մահապատժի ենթարկելու կամ ներում չնորհելու իրավունքը պատկանում է Նորին Մեծություն Փադիշահին։ Եթե մահապատժի հետաձգումը բացահայտորեն ազդի կղզու անվտանգության վրա, ապա, տեղի իշխանության հրամանով, այն կարելի է ի կատար ածել։ Սովորական պայմաններում, անհրաժեշտ է անպայման դիմել Բարձրագույն դուռ և գործել համաձայն կայսերական հրամանագրի։

5) Քաղաքացիական իրավունքին վերաբերող հայցը, չնորհիվ Նորին Մեծություն Փադիշահի, փոփոխվելու է դատական ընդհանուր բարեփոխության հիման վրա։

Վերոհիշյալ կետերը գրանցվել են կայսերական դիվանի գրասենյակում և հաղորդվել համապատասխան ատյաններին։ Այս կետերի գործադրման համար հրապարակվելու է նաև անհրաժեշտ կայսերական հրովարտակ[1]։

[12] 96 թ. Րեբի էլ-էվվել, 10 (1878, Մարտ 4)

ՄԵԾ ՎԵՋԻՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԵՆԸ, ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՈՉ-ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀՊԱՏԱԿՆԵՐԻՑ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՐԿ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջինվորական հարկի գանձումը, որը նշանակված է ոչ-մահմեդական բնակչության համար, չի կատարվում անհրաժեշտ պայմաններով, որի համար էլ գինակոչիկների մեծ մասը դուրս է մնում հաշվարկից։ Այս առթիվ, Ֆինանսների նախարարությունը, որպեսզի ապահովի [զինվորական հարկի] գանձումը, նախաձեռնեց անհրաժեշտ միջոցառումներ։ Տվյալ հարցը քննարկվեց նաև նախարարների հատուկ խորհրդում։

Ձեռնարկված միջոցառումները հետևյալներն են։

«Մահմեդականները գինապարտ են համարվում 20-ից մինչև 40 տարեկան, իսկ 20-ից մինչև 40 տարեկան ոչ-մահմեդականները, զինվորական ծառայության փոխարեն հարկատու են լինելու 5,000 դուրուշով, որը բաժանվելու և գանձվելու է 180-ից մեկը հաշվով։ Ոչ-մահմեդականներից այս գումարի գանձումը այսուհետև կատարվելու է պետական հարկահավաքների կողմից։ Եթե վերակազմված զինվորական ծառայությունը բոլոր հպատակների վրա տարածվեր հավասարապես, ապա, հասկանալի է, որ անհրաժեշտություն չէր զգացվի զինվորական հարկ գանձելու ոչ-մահմեդական բնակչությունից։ Այսուհան-

դերձ, ֆինանսական դժվարութիւններից ելնելով, մինչև վերոհիշեալ որոշումը ուժի մեջ մտնելը, անհրաժեշտութիւն է զգացվում զինվորական հարկ գանձելու հաշվարկից դուրս մնացած զինապարտներից։

Իմիջայլոց, մի ժամանակ զինվորական նման ծառայութեան հետևանքով (այսինքն՝ 20-ից մինչև 40 տարեկան) զինվորական հարկի գանձումը խիստ նվազեց, որը և դժվարութեան տեղիք տվեց։ Այս կապակցութեամբ հոգևոր համայնքների առաջնորդների հավանութեամբ, առաջարկվեց զինվորական ծառայութեան հարկատվութիւնը բաժանել մահմեդական զինապարտերի կարգ ու կանոնով, այսինքն՝ արական սեռի 180-ից մեկը հաշվով։ Իսկ ոչ-մահմեդական հպատակները ծառայութեան փոխարեն հարկատու էին 5,000 դուրուշով։ Ինչ վերաբերում էր զինվորական հարկին, ապա, այն գանձվում էր բոլոր ոչ-մահմեդական հպատակներից, բացառութեամբ հոգևոր անձանց, հիվանդներից և աղքատներից և այն մարդկանցից, որոնք չէին հասել 15 տարեկան հասակին և կամ անցել էին 75-ը։ Հոգևոր համայնքների առաջնորդները զինվորական հարկի բաժանման և նշանակման ժամանակ պետք է հաշվի առնեին զինապարտի նյութական վիճակը։

Զինապարտութեան այդ ձևը հավանութեան էր արժանացել նախարարների խորհրդում և այնուհետև վավերացվել բարձր ֆերմանով, որը և հանձնվել էր պաշտոնական անձանց, համայնքի ղեկավարներին, որպեսզի նրանք օժանդակեին գործադրելու համար։

Այժմ, եթե վերոհիշյալ ձևը նորից տարածվի զինապարտների վրա (այսինքն՝ 20-ից 40 տարեկանների վրա), ապա, այդ կնշանակեր կրկին վերադառնալ այդ որոշմանը, որը մի անգամ արդեն փորձով հաստատվել է։ Այսպիսով, նկատի ունենալով, որ այժմյան գործող կարգը արդեն հավանութեան է արժանացել ոչ-մահմեդական առաջնորդների կողմից, ուստի այն մնում է ուժի մեջ և

այսօր։

Բայց և այնպես, զինվորական հարկի բաշխման և գանձման ընթացքում համայնքի ղեկավարների շրջանում, առաջ էին եկել մի շարք չարաշահումներ։ Այսուհետև այդ չարաշահումները կանխելու համար, անհրաժեշտ է կիրառել հետևյալը։ Զինվորական հարկի բաշխումը և գանձումը կրկին կատարվելու է համայնքների կողմից, սակայն բաշխման ցուցակների գումարը չպետք է անցնի պետությյան կողմից նշանակված գումարից։ Բացի դրանից, տվյալ ցուցակի մի պատճենը ցուցադրվելու է գյուղերում, թաղամասերում, եկեղեցիներում կամ այլ հարմար վայրերում, որպեսզի գյուղացիները և [քաղաքի] բնակիչները ծանոթանան դրա բովանդակությյանը։ Ցուցակներում նշված զինապարտերից բացի, ոչ ոքից հարկ չի գանձվելու։ Եթե ցուցակում նշված զինապարտերից մեկը հրաժարվի իրեն բաժին ընկած գումարը վճարելուց, ապա, համայնքի ղեկավարները դիմելու են պետական հարկահավաքներին, որոնք գանձելու են հարկը՝ գործող ընդհանուր օրենքի հիման վրա։

Այս կանոնը տարածվում է նաև այն զինապարտերի վրա, որոնք հաշվարկից դուրս են մնացել։

Այս որոշումը հավանության է արժանացել նախարարների խորհրդում և վավերացվել Նորին Մեծությյուն Փադիշահի հրամանագրով, իսկ նրա պայմանները հաղորդվելու են արդարադատության և պետական գանձարանին, որպեսզի օժանդակեն դրա գործադրմանը[1]։

1297 Սաֆեր, 27 (1879 թ. Հունվար 10)

ՄԻՆՉԵՎ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ /ՆՈՐ/ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄԸ 1304 Թ. ՍԱՖԵՐ ԱՄՍԻ 27-ԻՑ (1886, ՆՈՅԵՄԲԵՐ 7) ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՈՉ-ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՋԻՆԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՆՈՆԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Օսմանյան [հպատակ] ոչ-մահմեդական տարրերից գանձվող զինվորական տուրքը (bedel-i askeri) 1325 *թ. վերացվել է։ Այսուհանդերձ, ոչ-մահմեդականներից և կ. Պոլսում, Բիլադի Սալիսայում և այլ տեղերում, մինչև օրս գրանցված զինվորական ծառայության տարիքի անձանց վիճակահանությունը (այսինքն՝ 20-ից մինչև 40), կատարվելու է 1325 թվականից մինչև օրս գործածության մեջ գտնվող կանոնի հիման վրա։*

Ոչ-մահմեդական զինակոչիկների բժշկական քննությունը և վիճակահանությունը կատարելու համար կանոնադրության հիման վրա կազմվող հանձնաժողովում, թաղերի վերակացուները և հոգևորականները ներկա պիտի գտնվեն։

[Զինվորական] ծառայությունից ազատվելու են պաշտոնանկ և պաշտոնում գտնվող պատրիարքները, կաթողիկոսը, խախամբաշին՝ թեմակալը, եպիսկոպոսները,

արխիմանդրիտը, վարդապետները, գլխավոր խախամները, վանքերի ղումինուսները, վանահայրերը, կրոնական ծառայության մեջ գտնվող քահանաները, դիակոսները, խախամները, վանքերում ծառայություն կատարող հոգևորականները, բացառություն են կազմում նաև կրոնական և խախամական դպրոցների աշակերտները, վանքերում կրոնական ավանդությամբ զբաղվողները, ինչպես նաև պաշտոնապես լուսավորության նախարարության կողմից հաստատված բարձրագույն դպրոցների աշակերտները, գյուղերի և գյուղաքաղաքների տարրական դպրոցների առաջին, երկրորդ և երրորդ կարգի ուսուցիչները[1]։

Սոյն կանոնադրության գործադրումը հրամայված է Ռազմական, Ներքին և Ֆինանսների նախարարներին։

1327 թ. Բեյեբ, 20 (1909, Հուլիս 27)

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ, ՈՐՆ ԸՆԹԵՐՑՎԵԼ Է ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՌԱՆ ՄԵՋ 1326 ՐԵՋԵԲ, 3 (1908, ՀՈՒԼԻՍ 23)։

ԻՄ ՄԵԾԱՐԳՈ ՎԵԶԻՐ ՍԱՅԻԴ ՓԱՇԱ[1]

Ինչպես բոլորին հայտնի է, Օսմանյան կայսրության վերելքի շրջանում, հպատակ [ժողովուրդները] ապրում էին ապահով [չնորհված արտոնություններով], սակայն հետագայում առաջ եկած զանազան պատճառներով, նրանք չէին օգտվում հասարակական իրավունքներից համապատասխան մակարդակով։ Այդ կապակցությամբ, իմ փառավոր հայրս՝ Նորին Մեծություն սուլթան Աբդուլ Մեջիդ խանը, իր Գյուլհանեի հրովարտակով, վերահաստատեց անձի և իրավունքի ապահովությունը և կարեվոր օրենքներ հրապարակեց վարչական կառավարման ասպարեզում։ 1272 (1856) թ. հրապարակված ռեֆորմի հրովարտակով (Islahat fermani)[2] դարի քաղաքակրթության համապատասխան, բարեփոխեց վարչակարգը և ամրացրեց հայբենասիրությունը տարբեր դավանանքի պատկանող հպատակների միջև։ «Թանզիմաթը Հայրիէից»[3], մինչև մեր սուլթանության սկիզբը, ընդհանուր կրթության մեջ տեղի ունեցած առաջադիմությունը արդեն հուշում էր սահմանադրական կարգերի անցնելու մասին։ Ջնայած որ սահմանադրությունը[4] հռչակվեց մեր նախա-

ձեռնուխտյամբ, սակայն մի շարք [տարրեր], անտեսելով ընդհանուր շահերը, իրենց հետին նպատակների համար, դադարեցրել էին հիշյալ օրենքի գործադրությունը, որը ի վերջո Սաֆֆեթ փաշայի[6] վեզիրության չրջանում, պետության որոշմամբ դուրս եկավ գործադրությունից։ Այդ ժամանակվանից առ այսօր, հաշվի առնելով բոլորի ցանկությունները ու հակումները, երկրում սահմանադրական կարգեր հաստատելու մասին, հրապարակվեց և Բարձրագույն դռան կողմից, ամենուրեք ծանուցվեց մեր հրամանագիրը սահմանադրության գործադրման և ամեն տարի մեջլիսի գումարման մասին։ Երեկ, երբ ես այս կապակցությամբ ընդունում էի դեսպանների և դիվանագետների շնորհավորանքները, հայտնեցի նաև, որ այսուհետև սահմանադրության գործադրության հարցում երբևիցե և ոչ մի կերպ խոչընդոտ չի լինելու։

Սուլթանաթի և երկրի ընդհանուր շահերի համաչափ զարգացման համար անհրաժեշտ է, որ օրենքը և սահմանադրությունը կիրառվեն կանոնավորապես։ Ահա, ստորագրելով ներկա հրովարտակը, հայտարարում ենք սահմանադրության գործադրության և ամեն տարի պատգամավորների նստաշրջանի գումարման մասին։ Այս ևս ավելացնելով հայտարարում եմ, որ մեր պետությունը կազմող մարդիկ, կատարելապես ապահով պիտի լինեն և մի անձը մյուս անձի նկատմամբ և մի դասը մի այլ դասի նկատմամբ իրավական տեսակետից, ոչ մի խտրականություն չի ունենալու և բոլորն էլ հավասարապես արժանի են լինելու արդարության առաջ։

Հակառակ մեր ցանկության, որոշ ժամանակից ի վեր, մի շարք վայրերում գոյություն ունեցող օրենքների և տրված որոշումների մասին աղոտ պատկերացում է ստեղծվել։ Մեր պետության ընդհանուր կառավարման վերաբերյալ, բոլոր մասնաճյուղերի պարտականությունների համար, չնայած սահմանված են հատուկ կանոններ,

սակայն դրանց գործադրության անտեսումը պատճառ է դարձել որոշ վնասների առաջացման համար։ Ուստի, ներկա վիճակը բարելավելու համար, անհրաժեշտ է ուժեղացընել ընդհանուր օրենքների և պետական պարտականությունների գործադրությունը և նկատված թերությունները վերացնելու համար, ավելացնել մի շարք որոշումներ, որոնք կայանում են հետևյալում։

1) Ցուրաքանչյուր հպատակ, ինչ ազգության և դավանանքի էլ պատկանելիս լինի, օժտված լինելով անձնական ազատությամբ, հավասար է օրենքի և հարկատվության առաջ։

2) Օրենքից դուրս, ոչ մեկը չի կարող հարցաքննվել, բանտարկվել և կամ այլ կերպ պատժվել։

3) Արտակարգ հանգամանքների բերումով, այս կամ այն ձևով կամ անունով, եթե դատարաններ կամ հանձնաժողովներ կազմվեն, ապա, ըստ օրենքի, արտոնություն ունեցող մեկը չի կարող դատարանից դուրս մի այլ վայրում հարցաքննության ենթարկվել։

4) Որևիցե անձի բնակարանը հարձակման չի կարող ենթարկվել։ Օրենքից դուրս որևիցե անձի բնակարանը մտնել և խուզարկելը անթույլատրելի է։

5) Ասիկանության, կամ տարբեր անվան տակ այլ պաշտոնյաներ, ոչ մի ձևով իրավունք չունեն օրենքի սահմաններից դուրս որևիցե անձի նկատմամբ բռնություն գործադրելու։

6) Մեր հպատակները, առևտրի և ուղևորության նկատառումներով, իրավունք ունեն ցանկացած երկիրը գնալու և ցանկացած անձնավորություններ հետ հանդիպելու և հաղորդակցության մեջ մտնելու։

7) Տպագրության [գործը] կառավարության կողմից չի կարող քննության ենթարկվել։ Անձնական նամակները և պարբերական մամուլը, նամակատներում ըստուգման ենթակա չեն։ Տպագրության հետ առնչվող

հարցերը լսվելու են սովորական դատարաններում։

8) Ուսուցումը ազատ է։

9) Առանց տվյալ անձնավորության համաձայնության, պաշտոնի նշանակում չի կարող լինել (բացառությամբ զինվորական դասից)։ Տվյալ պաշտոնյան պարտավոր չէ ենթարկվելու օրենքից դուրս տրվող հրամաններին և ազատ է ցանկացած ժամանակ պաշտոնաթող լինելու։ Հետևաբար, պաշտոնյաները պարտավոր են և պատասխանատու իրենց գործերում։

10) Ռազմական և Ծովային նախարարությունների և այլ պաշտոնատեղերի նախարարները նշանակվում են Սադրազամի կողմից և հաստատվում են իմ կողմից։ Պետությունների նշանակվող դեսպանատան աշխատողները, Արտաքին Գործերի նախարարը, վալիները, Ներքին Գործերի նախարարը և պետական խորհրդի անդամները և նախագահը, ձայների մեծամասնությամբ նշանակվում են նույնպես Սադրազամի կողմից։ Նախարարությունների և նահանգային բոլոր պաշտոնների նշանակումը և անհրաժեշտության դեպքում նրանց փոփոխումը, ինչպես նաև չքանչանների, աստիճանների և այլ վարձատրությունների արժանի եղողները, պարգեվատրվում են տվյալ նախարարության կամ վարչության նախագահի համաձայնությամբ և Եպարքոսության ստացած ձայների մեծամասնությամբ։

11) Ցուրաքանչյուր պաշտոնյա, բերանացի կամ գրավոր կերպով կարող է դիմել միայն իր վերադաս պետին։ Իսկ փոխադարձաբար, յուրաքանչյուր պաշտոնյային կարող է հրաման տալ միմիայն իր վերադասը։ Տվյալ վերադասը չի կարող մի այլ պաշտոնյայի տալ բերանացի կամ գրավոր հրաման, կամ խոչընդոտ հանդիսացող որևիցե հարցում։

12) Եթե պետական պաշտոնյաների ընտրության և փոփոխության մեջ թերություններ նկատվեն, ապա, ան-

հրաժեշտ է բացահայտել և վերացնել դրանք։ Իսկ եթե ակնհայտ դառնան պաշտոնյայի կողմից գործադրված չարաշահումները, կամ բացահայտվի զբաղեցրած պաշտոնի նկատմամբ նրա անկարողությունը, ապա, Եպարքոսությունը պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկի այդպիսիներին փոխելու համար։

13) *Սովորական և արտակարգ ժամանակներում, պետք է կազմվի և նույնությամբ հրապարակվի պետության տարեկան ծախսերի և եկամուտների հաշվեկշիռը (բալանսը)։ Ընդհանուր հաշվեկշռի համաձայն, հրապարակվելու է նաև յուրաքանչյուր պաշտոնատան և վիլայեթի հաշվեկշիռը։*

14) *Նախարարությունների և վիլայեթների վարչության ու պաշտոնավարության վերաբերող վիճելի օրենքներն ու կանոնադրությունները բարեփոխելու համար, տեղեկագիրը լսելու և քննվելու է առաջիկայում գումարվող խորհրդարանում։*

15) *Մեր պետության հզորությունը, կայսրության զինվորական ուժի մեջ է, ուստի մեզ համար առաջնակարգ խնդիրներից մեկն է համարվում ռազմական գործի զարգացումը, զենքերի և այլ սպառազինությունների կատարելագործումը։ Այս կապակցությամբ, արդեն հատուկ կարգադրություն է արված ռազմական նախարարությանը։ Մենք բոլորս պարտավոր ենք առանց ջանք խնայելու, միահամուռ կերպով իրագործելու նոր կազմված հանճնախմբի կողմից մեր հաստատմանը ներկայացված վերոհիշյալ բոլոր կետերը։ Ապավինենք բարձրագույն Աստծո ողորմությանը*[6]։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀՎԱԾ ԲԱՐՁՐ ՆԵՐՈՒՄԻՑ, ՍՈՎՈՐԱԿԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԵԾ ՎԵՋԻՐԻ ՀՐԱՄԱՆԸ

ՄԵՋԼԻՍԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Նրանք, որոնք բուլղար ավազակների հետ հանդրգնել էին ոճրագործություն կատարել, տներ այրել, վառոդ թաքցնել և օժանդակել ավազակներին ապաստարան տալով, դատապարտվել են Ռումելիի արտակարգ դատարանների կողմից։ Ռոդոսի բանտում բանտարկված 70 բուլղարների ազատ արձակումը ձգձգելու պատճառն այն է, որ 280 սովորական բանտարկյալներ սպառնացել են, որ եթե իրենք էլ բուլղարների հետ չարձակվեն բանտից, ապա արգելք են հանդիսանալու բուլղարների արձակման հարցում և սպանելու են բոլորին բանտի մեջ։ Իրզրումի դեպքերի[1] հետ կապ ունեցող բանտարկյալներից 19-ը քաղաքական ամբաստանյալներ լինելով, դատապարտվել են բերդարգելության, մի մասը՝ մահվան, մի մասն էլ զանազան քրեական պատիժների։ Սրանցից 41-ը ուղարկվել են Սինոպ, և այնուհետև բարձր ներման չնորհիվ, ովքեր քաղաքական դատապարտյալներ են եղել, ազատվել են՝ իսկ Սինոպում մնացած մյուս 24-ը և [Իրզրումի] դեպքի ժամանակ, նրանք, որոնք երկու կոմիսար և մեկ ոստիկան են սպանել, կալանքի տակ մնալով, սկսել են տրտնջալ և

խռովութիւն բարձրացնել։ Այն բանտարկեալները, որոնք մեղադրվել են կողոպուտի և սպանութեան մեջ, դատապարտվել են մահվան։ Էրզինջանի բանտում գտնվող 11 հայերի հետ միասին, մի շարք սովորական քրեական հանցագործներ, որոնք Դերսիմի ավազակներից են, ներում են պահանջել։ Բացի դրանից, կեսարիայում բանտարկված մի քանի հայերի նկատմամբ, որոնք դատապարտվել են ոճրագործութեան հանցանքով, տարակուսանք է առաջացել ազատ արձակելու հարցում, քանի որ չնորհված բարձր ներումը իր մեջ չի բովանդակում ոճրագործների վերաբերեալ առանձին կետ։ Կաստամոնունի [հունական] Արխիբեպագի, Էրզրումի և Անգարայի նահանգներից ստացված հաղորդագրութեան համաձայն, Ներքին Գործերի նախարարութիւնը իր երկու գրութիւններում այդ մասին հայտնել էր մեզ մեր հիվանդութեան միջոցին։ Հիշյալ բարձր հրահանգի համաձայն, քաղաքական հանցագործներին չնորհված ներումը տարածվել էր ընդհանրապես բոլոր քաղաքական հանցագործների վրա։ Սակայն քաղաքական հանցագործների ազատ արձակման հողի վրա, որոշ քրեական հանցագործներ, նույնպես ձգտել են ազատվել [բանտից]։ Նման հանցագործներին ներում չնորհելը բացառված է և համաձայն ընդհանուր օրենքի՝ անհնար։ Նման քաղաքական և քրեական հանցագործների անհատական դատը տեղի է ունենալու չահագրգռված կողմերի մասնակցութեամբ և համաձայն օրենքի։ Բոլոր վայրերում էլ, իրավականորեն բարձր ներման արժանանալու են միայն քաղաքական հանցագործները, իսկ սովորական քրեական հանցագործները, բարձր ներումից օգտվելու իրավունք բոլորովին չունեն։

Արխիբեպագի կղզիների վիլայեթի խորհրդից այս գիշեր հասած հեռագրից պարզվում է, որ Ռոդոսի բանտում գտնվող քաղաքական հանցագործների ազատ արձակմանը արգելք հանդիսացող և նրանց հետ միասին

դուրս գալու նպատակներով սովորական [քրեական] հանցագործները, որոնք չարդելով բանտի դուռը, բռնի ուժով ձգտել են դուրս գալ, զինվորական ճնշման հետևանքով վերադարձվել են իրենց խուցերը, իսկ քաղաքական հանցագործները՝ ազատ են արձակվել։ Այլ վայրերում ևս, քաղաքական հանցագործներին ազատ արձակելու ընթացքում, որպեսզի սովորական քրեական հանցագործների փախուստի տեղիք չտրվի և անհրաժեշտ զինվորական հսկողություն սահմանվի, ներփակ գեկուցագրեր են ուղարկված Արդարադատության, Ներքին և Ռազմական նախարարություններին։

Բոլոր դեպքերում, հրամանի և հրովարտակի [իրավունքը] պատկանում է վեհափայլ Սուլթանին[2]։

1326 Րեջեբ, 15 (1908, Օգոստոս 5)։

Սադրազամ Քյամիլ

ԲԱՐՁՐ ԲԵՐԱԹԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՄ Է ՀՐԵԱՆԵՐԻ ԽԱԽԱՄԲԱՇԻ ԽԱՅԻՄ ՆԱՀՈՒՄ ԷՖԵՆԴԻԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վսեմափայլ պայծառափայլության, աշխարհակալն սուլթանի բարձր թուղրայի վճիռն է։

Կ. Պոլսի [րաբբիության] թափուր տեղի համար ընտրող հանձնախումբը ըստ կանոնադրության հրեա ազգի առաջնորդ է ընտրել Խայիմ Նահում Էֆենդիին (թող հարատևի նրա փառքը)։ Արդ, կրոնական գործերի և արդարադատության նախարարությունից տրված ծանուցագրի և իմ վսեմաշուք նախարարների հատուկ խորհրդի տված որոշման և հինավուրց կանոնի համաձայն շնորհեցի սույն կայսերական բերաթը հիշյալ րաբբիության պաշտոնի հաստատման համար։

Միևնույն ժամանակ հրամայեցի, որ հիշյալ Խայիմ Նահում Էֆենդին հանդիսանում է թե՛ Կ. Պոլսի և թե՛ հրեական ազգին պատկանող հպատակների խախամբաշին [րաբբին]։ Իմ Օսմանյան կայսրության մեջ գտնվող ամբողջ հրեա ազգի խախամները, առաջնորդները, մեծերն ու փոքրերը հիշյալին ճանաչելու են որպես խախամբաշի և րաբբիության վերաբերող բոլոր գործերի համար դիմելու են նրան։ Նրա խոսքից և հնազանդությունից դուրս չեն գալու և իրենց սովորության համաձայն ենթարկվելու են նրան։ Հիշյալ խախամբաշիի բնակարա-

նում և այլոց բնակարաններում հնգամատյանի ընթերցումը իրենց սովորութիւններին չի հակասում։ Եվ նրանք, ովքեր իրենց բնակավայրերում ծիսակատարութիւն են կատարում հնգամատյան կարդալով, վարագույր և կանթեղ վարելով ու նստարան օգտագործելով, ոչ ոքի ոչ մի պատրվակով չի թուլլատրվում նրանց ծիսակատարութիւններին միջամտել և անարգանքի ենթարկել և տվյալ իրերը պահանջելու համար ոստիկանութեան միջոցով անիրավացի և անարդարացի վերաբերմունք ցույց տալ։ Հիշյալ ազգի համար, հնուց ի վեր հաստատված աղոթատեղիներին և դպրոցներին ոստիկանութեան կողմից հետախուզութեան նպատակով ճնշում գործադրելը կամ տուգանքի ենթարկելը արգելվում է։ Իրենց տնօրինութեան տակ գտնվող [չինութիւններում] և չարիաթի թուլլտվութեամբ կատարվող վերանորոգումներին ոստիկանութիւնը իրավունք չունի միջամտելու և բռնութիւն գործադրելու։ Նրանց աղոթատեղիների և դպրոցների գույքը ոչ միայն չի բռնագրավվելու և գրավի տակ առնվելու, այլ որևէ պատրվակով բռնի կերպով վերցված գույքը չարիաթի հիման վրա կրկին վերադարձվելու է իրենց նախկին տեղերը։

Իրենց սովորութիւնների հիման վրա, ամուսնական գրանցման և ապահարզանի գործում և կամ այլ հարցերում եթե երկու հրեաների միջև տարաձայնութիւն է առաջանում, երկու կողմերի համաձայնութեամբ, այն հարթվելու է հիշյալ խախամբաշիի կամ նրա կողմից նշանակված ներկայացուցիչների միջնորդութեամբ։ Եվ այնուհետև իրենց սովորութեան համաձայն, երդում են տալու իրենց սինագոգայում։ Մեղավորութիւն ունեցող մարդկանց, եթե անհրաժեշտ է մերժել և արտաքսել, ապա, հակառակ հին սովորութեան, թող նրանց գործերին չմիջամտեն ո՛չ դատավորները և ո՛չ էլ պետութեան մյուս ներկայացուցիչները։

Այն խախամները, որոնք իլթիզամի տակ են գըտնըվում, առանց հիշյալ խախամբաշիի, խախամների և վոխանորդների, իրավունք չունեն ամուսնական պսակադրություն կատարելու։ Եթե հրեաներից մեկը ցանկանա ամուսնանալ մի կնոջ հետ, կամ ապահարզան տալ մի կնոջ, կամ իր կնոջից բացի մի այլ կնոջ հետ ամուսնանալու նպատակով գնա գավառ և ձգտի գրանցվել, ապա, առանց խախամբաշիի թույլտվության, ամուսնական պըսակադրություն չի կատարվելու։

Որևէ կնոջ որևէ հրեայի հետ ամուսնացնելու համար, թող հեղինակավոր անձնավորությունները ճնշում չգործադրեն խախամների վրա։ Կադիները, պետության ներկայացուցիչները, ոստիկանությունը և այլ հեղինակավոր անձնավորություններ, թող ճնշում չգործադրեն խախամների վրա, որպեսզի նրանք վերցնեն այն հրեայի [դիակը], որը իր կենդանության օրոք անօրեն վերաբերմունք է ցուցաբերել իրենց ծիսակատարությունների նըկատմամբ։ Հիշյալ խախամբաշիի հովանավորության տակ գտնվող վայրերում եթե իմ բարձր բերաթով նշանակված խախամները հարկ են հավաքում, ապա, ոչ մեկը իրավունք չունի խանգարելու նրանց գործին։ Որևիցե ինքնահավան մեկը թող հիշյալ ազգի սովորություններին վերաբերող ուտելիքի և ըմպելիքի համար չասի թե դըրանք պղծված են։ Խախամբաշիության հովանավորության տակ գտնվող նահանգներում, եթե փաշաները, կադիները կամ պետության ներկայացուցիչները խախամների չարաչահումների և կամ պաշտոնից հեռացման համար գանգատ են հարուցում, ապա, առանց խախամբաշիի իրավասության հետաքննություն անցկացնելու իրավունք չունեն։

Առանց հիշյալ խախամբաշիի գիտության, եթե ինչոր ճանապարհով որևիցե խախամի բարձր բերաթ տրվի, թող այդ [անձը] իր նշված վայրում չընդունվի։

Եթե գավառների խախամբաշիներից մի քանիսը չտապ գործով Կ. Պոլիս գան, ապա նրանց տեղ նշանակված փոխանորդների նկատմամբ, ոստիկանությունը անօրեն միջամտություն չկատարի։ Հիշյալ խախամբաշիի կողմից պետության հարկերը հավաքելու համար նշանակված մարդկանց ուղեցույց է տրվելու։ Բացի դրանից, նրանց անցնելիք վայրերից ապահով գնալու համար, եթե ըզգեստները փոխեն և իրենց կյանքը ավազակներից ապահովելու համար եթե զենք կրեն, ապա ոստիկանությունը, ֆինանսական և այլ պաշտոնյաները թող չմիջամտեն և դրամաշորթություն անելու նպատակով չարիաթին հակառակ արարքներ չգործադրեն։ Հիշյալ խախամբաշիի, խախամների, փոխանորդների և ընդհանրապես մարդկանց չարաչահումների վերաբերյալ եթե դատական գործ բացվի, ապա նրանց հարցը լսելու է միայն Կ. Պոլսում։ Եթե իրենց կրոնական օրենքներով, հրեա խախամներից մեկին պաշտոնից հեռացնելու անհրաժեշտություն է զգացվում, ապա դա կատարվելու է հիշյալ խախամբաշիի իրավասությամբ։ Որևիցե հրեա, առանց իր համաձայնության, չի կարող բռնությամբ մահմեդական դառնալ։ Հնուց ի վեր խախամության իրավասության տակ գտնվող թաղերում, սինագոգների և դպրոցների հողերը թող առաջվա նման իրենց պատկանեն և որևիցէ միջամտություն չկատարվի։ Հրեաների վրա տարեկան նշանակված պետական հարկի, հանդանակության դրամի, «ղաբլե» կոչված գանձանակի հարկի և ծախսի, ինչպես նաև խախամբաշիության համար նշանակված հարկի վճարման գործում չպետք է ձգձգում և խուսափողականություն կատարվի։ Առանց ժառանգի մահացած խախամների գույքից, դրամից, անասուններից և այլ իրերից, երբ խախամբաշիի կողմից նշանակված ներկայացուցիչները պետության համար էլ նշանակումներ են կատարում, թող պետության գանձարանի աշխատողները,

վաքուֆի կառավարիչները և այլ մարդիկ միջամտութիւններ չկատարեն։ Ըստ իրենց սովորութեան, մահացած խախամները ինչ կտակ որ թողել են իրենց կրոնակիցներին և աղքատներին, իրենց կանոնադրութեան և սովորութեան համաձայն, օրինավոր կերպով պետք է ընդունվեն հրեա վկաների կողմից։ Հրեաներից, նրանք ովքեր իրենց կենդանութեան ժամանակ խախամբաշիին և խախամներին և իրենց կրոնակիցներին ու աղքատներին ինչոր կտակ թողնելով մահանան, օրենքի հիման վրա պետք է վերցվեն իրենց ժառանգներից։ Խախամբաշիի հովանավորութեան տակ գտնվող խախամները, համայնքի ղեկավարները իրենց սովորութիւններին հակառակ գործելով՝ եթե որևիցե հանցանք կատարեն և նրանց պատժելու համար եթե խախամբաշիի ֆերաշը [պահապանը] հատուկ թեզքերեով դնա տվյալ խախամի բնակարանը, թող ճանապարհին, ոստիկանութեան և այլոց կողմից միջամտութեան չենթարկվի։ Խախամների և համայնքի գլխավորների բնակած չենքերում, գինվորականների և այլոց կողմից հրավերի պատրվակով, չպետք է նրանց վնաս հասցվի։ Հիշյալ խախամբաշիի ծառայութեան տակ գտնվող դռնապանից և այլ 15 աշխատողներից չպետք է չարիաթի տուրք, պետական ավարիզ և սովորական հարկեր պահանջվեն։ Խախամութեան աղոթատեղիներին և դպրոցներին պատկանող գույքից մաքսատներում չպետք է մաքս և այլ տուրքեր վերցնեն։ Աղոթատեղիներում, կ. Պոլսում և թե գավառներում գտնվող ուխտատեղիներում՝ «Ձեր մեռելը այսպե՛ս վերցրեք, կամ նրա վրա այսպե՛ս կարդացեք» ասելով, ոստիկանութեան կողմից չպետք է միջամտութիւն կատարվի։ Իրենց սովորութիւններին համաձայն, հիշյալ խախամբաշիի կողմից կնքված գրութիւնները գործադրելի համարելով, որևիցե մեկը բռնութեամբ չպետք է միջամտի և «քեզ ծառա կլինեմ»՝ ասելով, խախամբաշիի գործերի վրա ճնշում գործադրի։

Խայիմ Նահում Էֆենդին ազատորեն կարող է ղեկավարել իր համայնքը և ո՛չ մի անհատ օրինականութիւնից դուրս ոչ մի տեսակետով և պատճառով, չի կարող արգելել և խափանել նրա գործունեութիւնը[1]։

1327 թ. Ջումադի էլ-ահիր, 23 (1909, Հունիս 13)

ՄԻՐՈՖ ԷՖԵՆԴԻԻՆ ԲՈՒԼՂԱՐ ԿԱԹՈԼԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՎՍԵՄ ԲԵՐԱԹԸ

Վսեմափայլ պայծառափայլութ֊յան, աչխարհակալն Սուլթանի բարձր թուղրայի վճիռն այն է, որ Օսմանյան կայսրութ֊յան հպատակ և կաթոլիկ եկեղեցուն հետևող բուլղարների կրոնական առաջնորդ՝ Նիկոս եպիսկոպոսը պաշտոնից հեռանալուց հետո, (որին բարձր բերաթ էր տրված գլխավոր եպիսկոպոսութ֊յան համար, 1293 (1876) թ. Զյուլքադեի 14-ին), անհրաժեշտութ֊յուն էր առաջացել թափուր տեղի համար նշանակել մեկ ուրիշին։

Այժմ, հենվելով մեծաչուք նախարարների խորհրդի վճռի վրա, կայսերական բերաթը Միրոֆ Էֆենդիին հաստատում է գլխավոր եպիսկոպոսութ֊յան պաշտոնում, քանի որ նա ընտրվել և նշանակվել է վերոհիշյալ բուլղար կաթոլիկ համայնքի կողմից՝ իր ունեցած արժանիքների, մտախոհութ֊յան և կրոնական գործերին լավատեղյակ լինելու շնորհիվ։ Միևնույն ժամանակ, Միրոֆ Էֆենդին իր [համայնքի] կրոնական և այլ անհրաժեշտ գործերի համար Բարձրագույն դռան և իր [հոտի] միջնորդն է հանդիսանալու[1]։

1327 Զյումադի էլ-ահիր, 9 (1909, Հունիս, 19)

ՌՈՒՄԵԼԻՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՎԻՃԵԼԻ ՀԱՐՑԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1։ Հունական պատրիարքության և բուլղարական էկզարխության բնակչության ենթակա եկեղեցիների և դպրոցների վիճելի հարցերը կարգավորվելու են սույն կանոնի համաձայն։

Հոդված 2։ Մի ագարակում, գյուղում կամ գյուղաքաղաքում և ընդհանրապես պատրիարքությանը կամ էկզարխությանը ենթակա բնակչության կողմից օգտագործվող եկեղեցիները և դպրոցները պատկանելու են տվյալ [պատրիարքությանը և էկզարխությանը]։ Բացառություն են կազմում այն աղոթատեղիները, որոնք կառուցվել են ագարակատերերի կողմից և հատկացվել են օրթակջիներին[1]։

Հոդված 3։ Եթե մի ագարակում, գյուղում կամ գյուղաքաղաքում գտնվի մի վիճարկելի եկեղեցի կամ դպրոց, որի բնակչության մի մասը ենթարկվի պատրիարքությանը, իսկ մյուս մասը՝ էկզարխությանը, այդ դեպքում, այդ եկեղեցին և դպրոցը իրականում պատկանելու է այն [համայնքին], որը հիմնել է այն։ Եթե այդ [համայնքը] մեկ երրորդից էլ նվազ փոքրամասնություն կազմի, ապա տվյալ [հաստատությունը] հանձնվելու է մյուս [մեծամասնություն կազմող] կողմին և փոքրամասնության համար էլ կառուցվելու է նորը և, համաձայն 5

և 6 հոդվածների, կառավարության կողմից հատկացվելու է դրամական օժանդակություն։

Հոդված 4։ Պատրիարքությանը, և մասամբ էլ էկզարխությանը ենթակա ագարակում, գյուղում կամ գյուղաքաղաքում եթե կան վիճարկելի մի չարք եկեղեցիներ և դպրոցներ, որոնք կառուցվել են միայն մի [համայնքի] կողմից, ապա այդ համայնքը օգտագործելու է իր նախընտրած եկեղեցին կամ դպրոցը, իսկ մնացած եկեղեցին և դպրոցը հանձնվելու է մյուս [համայնքին]։ Եթե տվյալ համայնքը մյուսի համեմատությամբ մեկ երրորդից նվազ փոքրամասնություն կազմի, ապա, նրա անունով կառուցված եկեղեցու և դպրոցի նախընտրությունը պատկանելու է մյուս կողմին [այսինքն՝ մյուս համայնքին]։

Հոդված 5։ Դրամական օգնության քանակը նշանակվում է կառավարության կողմից՝ դպրոցի և եկեղեցու ունեցած կարիքի համեմատ։ Դրամական օգնության իրացումը և կառուցման արագացման հետ առնչվող միջոցառումները կատարվելու են կառավարության օժանդակությամբ։

Հոդված 6։ Կառավարության դրամական օգնությունը հատկացվում է միայն գոյություն ունեցող եկեղեցիների և դպրոցների անհրաժեշտ կարիքներին և մինչև այս կանոնադրության հրապարակումը չկարգավորված հարցերին։ Հետագայում առաջ եկած վեճերի և տարաձայնությունների վրա չի տարածվում։

Հոդված 7։ Այս կանոնադրության հրապարակումից և ուժի մեջ մտնելուց հետո, եթե համայնքների միջև փոփոխություն կամ կապերի վերահաստատում լինի, ապա, եկեղեցիների և դպրոցների փոխհարաբերության պատճառ չի կարող հանդիսանալ։ Հետևաբար, նրանք, որոնք բնակչության մեջ մասնակի կամ ընդհանուր առումով փոփոխություններ եթե մտցնեն, ապա, իրենք են հոգալու անհրաժեշտ ծախ-

սերը։

Հոդված 8։ *Այս կանոնադրության երրորդ և չորրորդ հոդվածները տարածվում էին նաև մինչև հիմա համայնքների միջև հերթականությամբ օգտագործվող եկեղեցիների վրա։ Հիշյալ երկու հոդվածների գործնականորեն կիրառելու թվականից վերացվելու է հերթականությամբ օգտագործելու ձևը։*

Հոդված 9։ *Եկեղեցիների և դպրոցների անշարժ գույքերի հետ առնչվող տարաձայնությունները, ինչպես նաև ունեցվածքի իրավունքի վերաբերող հարցերը, կարգավորվելու են դատական օրենքով։*

Հոդված 10։ *Համաձայն այս կանոնադրության, կառավարության կողմից հատկացված դրամական օժանդակության և նոր եկեղեցիների կառուցման համար կայսերական հրովարտակի անհրաժեշտությունը չի զգացվում։ Կարելի է անմիջապես չինարարություն սկսել նահանգային խորհրդի որոշումով տրված արտոնության հիման վրա, միայն թե եկեղեցու կառուցումը համապատասխանի հողատարածության ձևին, և բնավարձակալության և տասանորդի վճարը ժամանակին մուծվի և փաստաթղթերն էլ ուղարկվեն նահանգային տեսչությունն։*

Հոդված 11։ *Սույն կանոնադրության գործադրման համար լիազորվում են Ներքին գործերի նախարարությունը և կրոնական առաջնորդները*[2]։

Նախարարների խորհրդում ընդունված սույն կանոնադրության օրինականացումը և պետական օրենսդրության մեջ ընդգրկելու որոշումը հաստատում եմ.

Մեհմեդ Ռեշադ

1328 թ. Ջումադի ալ-ահիր, 25 (1910, Հունիս, 5)

Ներքին Գործերի նախարար՝ Թալէաթ

Արդարադատության նախարարը գտնվում է Եվրոպայում

Մեծ վեզիր՝ Իբրահիմ Հաքքը

ՀՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՄԱՆՈՍ ԷՖԵՆԴԻԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՂ ԲԱՐՁՐ ԲԵՐԱԹԸ

Կ. Պոլսի և հույն հպատակների պատրիարք, Հովակիմ էֆենդիի մահվան և նրա տեղ հարմար մեկին ընտրելու կապակցությամբ չնորհվել էր իմ կայսերական բարձր հրամանը։ Ընտրական կանոնադրության համաձայն, թեմակալների խորհուրդը և [հույն] ազգի երևելիները, պատրիարքարանում ժողով գումարելով, պատրիարք են առաջադրել Քադըքէօյի աթոռակալ, իմ կայսերական բերաթով առաջին աստիճանի «մեջիդի» փառավոր շքանշան ստացած և իր արժանապատվությամբ, պարկեշտությամբ և փորձառությամբ հայտնի Երմանոս էֆենդիին։ Նրա պաշտոնավարումը ընդունվելով ընդհանուրի կողմից, հավանության է արժանացել նաև իմ նախարարների փառավոր խորհրդում և այդ առթիվ կազմված արձանագրությունը ներկայացվել է իմ վսեմ վեհապետության հաստատմանը։ Արդ, տրվում է իմ կայսերական բարձր հրամանագիրը՝ հաստատելով նրա պաշտոնավարությունը հիշյալ պատրիարքությունում։ Համաձայն կանոնադրության և պատրիարքության կողմից ներկայացված ծանուցագրի, ստորև նշված պայմաններով չնորհում եմ իմ կայսերական կնիքով զարդարված այս բարձր բերաթը։ Միևնույն ժամանակ հրամայում եմ, որ հիշյալ պատրիարքը, մինչև որ իր ժողովրդի կրոնական օրենք-

ների նկատմամբ հակառակ գործունեություն չունենա, կանոնադրության նկատմամբ օրինազանցություն չանի, Օսմանյան պետության դեմ անհավատարմություն չցուցաբերի և մինչև անձամբ հրաժարական չտա, թող ցմահ չհեռացվի իր պաշտոնից։ Եվ այս նշված որևէ կետի հիման վրա, եթե պաշտոնից հեռացնելու անհրաժեշտություն զգացվի, ապա թող այն գործադրվի կանոնադրության մեջ նշված պայմանի համաձայն։ Եվ իմ կայսրության մեջ ապրող հույն հպատակների սովորությունների կիրառմանը վերաբերող բոլոր գործերը և քահանաների նստավայրերի ծախսերը, և այլ անհրաժեշտ գործերը թող կատարվեն նոր կազմված կանոնների համաձայն։

Հնուց ի վեր թեմերի կ. Պոլիս գալն ու գնալը տեղի էր ունենում պատրիարքի և թեմերի խորհրդի թույլտվությամբ և նրանց իրավասությամբ։ Այժմ, առաջվա նման, այդ հարցում չպետք է տարաձայնություն առաջանա։ Պատրիարքը, թեմակալները և թե քահանաները ազատ կարող են իրենց ծիսակատարություններին հետևել իրենց բնակավայրերում, և այս կապակցությամբ ոչ ոք իրավունք չունի ճնշում և միջամտություն բանեցնելու կամ անիրավացիորեն խոչընդոտ հանդիսանալու։ Առանց կարգադրության, ոստիկանությունը իրավունք չունի որևէ հրամանագրով, հետախուզություն կատարելու պատրիարքի և թեմակալների իրավասության տակ գտնվող եկեղեցիներում և վանքերում։

Թեմակալները, արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները, ղումիհնուսները, քահանաները, կալոկիրյանները, իմ կայսրության հույն հպատակները, ինչպես նաև մեծը և փոքրը, հիշյալին իրենց վրա պատրիարք են ճանաչելու և պատրիարքության հետ առնչվող բոլոր գործերով հլուհնազանդ դիմելու են նրան։ Նախկին պայմաններով, պատրիարքի լիազորությունը տարածվում է Ստամբուլի, Թևաբիի, կեսարիայի, Մանիայի, էրեգլիի, Գելիբոլիի,

Մյուրեֆդեյի, Ջաթալջայի, Ջորլուի Քապուդաղի, Իզմիտի, Իզնիկի, Քադըքէօյի, Թերկոսի, Խասլարի, Սալոնիկի, Խըդրոսի, Կապանիայի, Փելաթումնայի, Սերֆիջեի, Թուվիրանի, Ռադումիրի, Այնարուզի, Ջերմենի, Էդիրնեի, Ամասիայի, Բրուսայի, Նիքսարի, Քոնիայի, կարաֆերիայի, Անթալիայի, Կրետե կղզու, Տրապիզոնի, Ռոդոսի, Սիրոզի, Դերամեի, Չիխնայի, Իզմիրի, Միդիլլիի, Յանիայի, Հալեբի, Թեմիտոկայի, Անկարայի, Ալաշեհիրի, Իսպարտայի, Մինելիկի, Իյնոզի, Մուդուի, Մեսուրի, Միդիայի, Վիզայի, Կումլուջայի, Սելուրի, Սուզապուլիի, Իսկեջեի, Սագըզ կղզու, Լիմանի, Իմրոզի, Կուրդուսի, Մարմարայի, Լիտիզայի, Ալասոնյայի, Սիսամ կղզու, Խսոանքէօյի, Գյումյուշհանեի, Կեսենդիրայի, Էկինի, Փուղունիայի, Կերաբինայի, Ալաքիլիսայի, Ռեվանդուզի, Ակվայի, Իսթաբուլուլի չրջանների վրա։

Հետևյալ չրջանների վրա, որոնք նախապես ենթարկվում էին Իպեկի պատրիարքութեանը։ Ռազլըկի, Սեմակուչի, Օղարիջայի, Բադիայի, Սանդուրի, Իսկյուպի, Էկրիի, Փլանդայի, Կալկանդայի, Ալաջահիսարի Ռըսուհի, Քյովերջինլիկի, Ռադումիրի, Իշտիբի, Կարադուհի, Կուջունայի, Փարղայի, Ռախդայի, Ենի Բազարի, Ենի Վարոշի, Բիրղուշդայի, Բիրգենիկի, Մետրուֆջայի, Փլասինջայի, Վելեչդրինի, Փիրափոլի, Դաշլըջայի, Օլակյորդա նահիյեների, Քիլիսի, Փերեղրինի, Փերեչդինայի, Յակովայի։

Նույնպես հետևյալ չրջանների վրա, որոնք նախապես մտնում էին Օխրիի պատրիարքութեան մեջ, իսկ հետագայում [Ստամբուլի] պատրիարքութեանը ենթարկվեցին Օրխիի և Թեւաբիի վանքերը, Փերլեպեի, Քյոփրյուլյուի, Նըկուշի, Ռադովիշդայի, Իստրումջայի, Փետրիջի, Լատրոյի, Պուլիջայի, Գյոկելի, Ենիջեի, Արդարը կենիսայի հետ, Լաթը, Իսլափջայի նահիյեն, կարաջա Օվասըն, Իսթավրայնի, Ֆիլորունայի, Ջեմաայի, Էկրին, Պջակի, կեսրիյանի, Խուրփշտայի, Նասլիջի, Շիդոբնիջայի, Պա-

Հալիշդայի, Ֆյօրիջայի, Օքարի, Կալունիայի, Շանի, Կարափինայի, Իսկըրբարի, Փիրեմիդի, Թեփեդելենի, Բելգրադի, Արնաուդի, Մալակեսրիի, Մեզակիայի, Կարաբընարի, Ավլունիայի, Իշբադի, Իյլբիսանի, Կուայայի, Դերաջի, Թիրանի, Դեբրեի, Կարաջուհի, Փերսեպե և Թեմուր Հիսարի անունով հայտնի վայրերի վրա։

Առանց չերիֆի հրամանի ոչ ոք իրավունք չունի նրանցից վերցնելու հնուց ի վեր նրանց պատկանող եկեղեցիները և վանքերը, որոնք գտնվում են իմ կայսրության մեջ։ Թող ոչ մեկը չմիջամտի և արգելք չհանդիսանա իմ արտոնությամբ կատարվող վերանորոգումներին։ Ոչ մեկը թեմակալ, արքեպիսկոպոս կամ եպիսկոպոս չի կարող նշանակվել՝ առանց հիշյալ պատրիարքի և թեմակալների խորհրդի կնիքի հաստատման։ [Համայնքի] մարդկանցից մեկը եթե իրենց սովորությունների հիման վրա պահվում կամ ապահարզան է տալիս, ապա, տվյալ դեպքում, միայն պատրիարքը կամ նրա կողմից նշանակված ներկայացուցիչը կարող է միջամտել և կարգավորել հարցը։ Դրսից որևէ մեկը իրավունք չունի ճնշում գործադրելու։ Այն քահանաները, որոնք առանց պատրիարքի գիտության կամ թույլտվության, իրենց սովորություններին հակասող պահակ են կատարում, ապա, նրանք կրում են անհրաժեշտ պատիժ իրենց իսկ սովորությունների համաձայն, առանց որևէ կողմնակի միջամտության։ Թե՛ պահպանության և թե՛ ապահարզանի հարցում, կամ իրենց սովորություններին վերաբերող այլ հարցերում, երկու քրիստոնյաների միջև տարաձայնություն առաջանալու դեպքում, միջամտել և կարգավորել կարող են հիշյալ պատրիարքը, կամ նրա կողմից նշանակված և իմ բարձր բերաթով հաստատված թեմակալները, արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները և նրանց փոխանորդները։ Երկու կողմերը հաշտեցնելուց հետո իրենց սովորությունների համաձայն, իրենց եկեղեցիներում երդվել

են տալիս, և «Ափրուս» կոչվող պատիժով պատժելու ընթացքում, հակառակ հին սովորութեան, կադիները, նախիրները և այլ մարդիկ չպետք է միջամտեն և ճնշում գործադրեն։ Պատրիարքի, թեմակալների և նրանց փոխանորդների թուլլտվութեունը չստացած, իլթիզամի տակ գտնվող կղերականները իրավունք չունեն իրենց սովորութեունների հետ առնչութեուն չունեցող պսակադրութեունները կատարելու, իրենց սովորութեունների համաձայն պատշաճ չէ կնոջից բաժանվելը, կամ կին ունենալով հանդերձ երկրորդ կին վերցնելը, կնոջ մահից հետո երեք անգամից ավելի ամուսնանալը, և ընդհանրապես առանց պսակադրութեան կին վերցնելը։ Օրինազանցները կրելու են համապատասխան պատիժ։

Այս սովորութեուններին հակառակողները չպետք է եկեղեցի հաճախեն։ Նման օրինազանցների մահից հետո, քաղաքային պաշտոնյաները, կադիները, ոստիկանութեան ներկայացուցիչները և այլ հեղինակավոր անձինք «նրանց [դիակը] դո՛ւք վերցրեք» ասելով, իրավունք չունեն քահանաների վրա ճնշում գործադրել։ Մահացած թեմակալները, արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները, քահանաները, կալոկիրիաները և ուրիշները, որոնք իրենց սովորութեունների համաձայն կտակ են թողել եկեղեցիներին, աղքատներին, պատրիարքարանին, թեմերին, արքեպիսկոպոսութեանը, եպիսկոպոսութեանը, ընդունվելու են պատշաճորեն՝ հույն վկաների ներկայութեամբ։ Իրենց կենդանութեան ժամանակ պատրիարքութեանը, թեմերին, արքեպիսկոպոսութեանը, եպիսկոպոսութեանը, եկեղեցիներին, աղքատներին, դպրոցներին, հիվանդանոցներին կտակ թողած և այնուհետև մահացած անձերի ժառանգութեունից պետք է առանձնացրել և հանձնել կտակատիրոջը։ Տղամարդկանց և կանանց համար նշանակված «փարիսե» և «փրութիսիս» կոչվող հարկերը նույնպես վերցվելու են նրանց ժառանգութեունից։ Որոշ մարդիկ, եթե իրենց

ունեցվածքի մեկ երրորդ մասը կտակել են եկեղեցիներին, վանքերին, պատրիարքությանը, թեմերին, արքեպիսկոպոսությանը, դպրոցներին, հիվանդներին, ապա, այդ կտակը օրենքով վերցվելու է նրա ժառանգությունից։ Թող կողմնակի անձինք չմիջամտեն, եթե հիշյալ պատրիարքի իրավասության տակ գտնվող թեմերը արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները, ղումինուսները, քահանաները, կալոկիրիաները և մյուս կղերականները, որոնք իրենց սովորություններին հակառակ հանցանք գործելով, պատժվում են պատրիարքի և թեմակալների խորհրդի կողմից։ Իրենց սովորությունների համաձայն հեռացված քահանաների տեղ նորերը նշանակելու դեպքում, թող ոչ մեկը չմիջամտի և արգելք չհանդիսանա։ Մեռնողներուն փոխարինելու արժանի թեմակալները, արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները, նույնպես խորհրդի որոշմամբ են պաշտոնի նշանակվելու և պատրիարքարանի կնիքով կնքված ծանուցագրով, դիմելով իմ կայսերական չեմին, պաշտոնի համար տրվելու է իմ կայսերական բարձր բերաթը։

Ոչ մեկը թող միջամտություն չկատարի՝ ճնշում գործադրելով և կամ ասելով՝ թե «այս քահանան թող թեմակալ դառնա, կամ այնինչ արքեպիսկոպոսր եպիսկոպոս դառնա»։ Պատրիարքարանի իրավասության տակ գտնվող վիլայեթներում, երբ փաշաները, կադիները, նահիները գանգատվեն թեմակալների, արքեպիսկոպոսների, եպիսկոպոսների սխալ արարքներից և ծանուցեն նրանց հեռացման մասին, ապա այդպիսիների հարցը չի քննվելու՝ մինչև որ պատրիարքի և թեմերի խորհուրդը իրազեկ չդառնա այդ մասին։ Եթե պատրիարքի և թեմակալների կնիքներով չհաստատված ծանուցագիր ներկայացվի և նոր կամ հին տարեթվերով «ինչ որ ճանապարհով» բարձր բերաթ չնորհվի որևէ մեկին, ապա, այն զուրկ է լինելու լիիրավ ուժ ունենալուց։ Այսուհետև պատրիարքը իրավասու չէ իրեն ենթակա Իպեկի և Օխրիի պատրիարքու-

թյուններից և թեմականներից որևիցե մեկին հեռացնելու և այլ տեղ ուղարկելու։ Այս կարգը գործադրվելու է միմիայն իմ կայսերական հրամանագրով և իմ կայսերական կնիքով։ Հիշյալ պատրիարքի, թեմականների, արքեպիսկոպոսների, նրանց փոխանորդների և այլոց իրավասությանը վերաբերող բոլոր դատերը լսվելու են միայն Կ. Պոլսում։ Ոչ ոք չի կարող որևէ մեկին մահմեդական դարձնել՝ առանց նրա համաձայնութեյան։ Եթե որևէ մեկը իրոք ցանկութեյուն ունի ընդունելու մահմեդական կրոնը, թող այդ կատարվի համապատասխան կարգ ու կանոնով։ Պատրիարքութեյանը պատկանող այգիները, պարտեզները, ագարակները, դաշտերը, մարգագետինները, տոնավաճառները, վանքերը, նվիրական աղբյուրները, ջաղացները, տները, խանութները և վաքուֆային մյուս ունեցվածքները թող կողմնակի միջամտութեյան չենթարկվեն և օգտագործվեն ըստ վաղեմի սովորութեյան։ Ըստ կանոնադրութեյան, պատրիարքութեյանը նշանակված ռոճիկը հանձնվում է պատրիարքին։ Թե՛ այդ ռոճիկի, և թե՛ ազգային այլ ծախսերի համար, հույն համայնքից գանձվող հարկի և օգտագործման հարցում կառավարութեյունը պետք է զորավիգ կանգնի։ Եվ հիշյալ պատրիարքութեյանը պատկանող այգիների բերքը և «թասդուք» անունով տրվող չիրան (քաղցու), յուղը, մեղրը, և այլ ապրանքները տեղափոխելու ընթացքում, մաքսատան աշխատողները և այլ մարդիկ չպետք է ճնշում բանեցնեն։ Հիշյալ պատրիարքի իրավասութեյան տակ գտնվող կազաներում, գյուղաքաղաքներում և գյուղերում, առանց ժառանգի մահացած թեմականների, արքեպիսկոպոսների, եպիսկոպոսների, ղումինուսների, քահանաների, տերտերների, կալոկիրների փողը, ունեցվածքը, անասունները և մնացած գույքը, վերցվում են պատրիարքի և թեմականների կողմից և կայսերական գանձարանը, կասսամները, մյութեվելլիները, մուհասիլները և այլ պաշտոնյաները չպետք է միջամտու-

թյուն կատարեն, ասելով թե «պետական կալվածատոմարում այդ [ժառանգը] մեզ վրա է գրված եղել»։ Իսկ նրանք, որոնք ժառանգորդ ունեն, ապա նրանց դրամի և այլ ունեցվածքի նկատմամբ որևէ մեկը հավակնություն ունենալ չի կարող, ինչպես այն հաստատվել է նաև սրանից առաջ տրված և գործածության մեջ գտնվող կայսերական հրամանագրի պայմաններով։ Իրենց սովորություններին հակառակ լինելով հանդերձ, պսակվող ցանկացողները երբ այլ վայրեր են մեկնում [գրանցման համար], ապա տվյալ վայրի [առաջնորդը] չպետք է պսակադրություն կատարի։ Հեղինակավոր անձնավորությունները իրենց սովորություններին հակառակ հարցերում, չպետք է ճնշում գործադրեն պատրիարքի և թեմակալների վրա, ասելով թե՝ «այս կնոջը այսինչ մարդու հետ պսակեք, կամ այս քահանային եկեղեցուց հեռացրեք ու այնինչին նշանակեք»։ Եթե որևէ մեկին կարդի հրավիրելու համար «աֆրուս» կոչվող պատժաթուղթ է ուղարկվում, ապա, ոչ ոք արգելք հանդիսանալու համար չպետք է միջամտություն կատարի։ Պատրիարքին և թեմակալներին ոչ ոք արգելք չպետք է հանդիսանա, եթե նրանք որևէ քահանայի, որը ճգնավոր դառնալով թափառում է այս ու այնտեղ, ուղարկում են հատուկ նշանակված վանքերը։ Եթե այլ վայրերի պատրիարքները կամ թեմակալները իրենց գործերը կարգադրելու համար կ. Պոլիս մեկնելու ցանկություն ունենան, թող այդ կատարվի վերոհիշյալ պատրիարքի և թեմակալների խորհրդի գիտությամբ։ Եթե թեմակալներից կամ կղերականներից որևիցե մեկի կ. Պոլսում մնալու անհրաժեշտություն զգացվի, ապա, այն կատարվելու է պատրիարքի իրավասությամբ։ Պատրիարքը և թեմակալները իրենց սովորությունների համաձայն կարող են պատժել և կրկին իրենց բնակավայրն ուղարկել այն կղերականներին, որոնք իրենց մշտական վանքն ու եկեղեցին չունենալով, չրջագայում

են այս ու այնտեղ և առիթ տալիս տարաձայնութիւնների։ Եկեղեցու և վանքի բերքը յուրացնող կղերականների դատաստանը տեսնվում է պատրիարքի և թեմակալների կողմից։ Այն դիմումները, որոնք կնքված են պատրիարքի կամ թեմակալ խորհրդի կողմից, և առնչվում են պատրիարքարանի հետ, համարվում են գործադրելի։ Պատրիարքի ձեռքի գավազանին կամ իրենց սովորութիւններին վերաբերող ծիսակատարութիւններին, թող ոչ մեկը արգելք չհանդիսանա և ճնշում չգործադրի՝ ասելով, թե՝ «մենք քեզ ծառա կլինենք»։ Հիշյալ պատրիարքը, պատրիարքարանին վերաբերող բոլոր գործերում, որոնք հաստատված են թեմակալների խորհրդի ձայների մեծամասնութեամբ, կարող է ազատորեն գործադրել և կողմնակի ոչ մի անձ, որևէ պատճառով կամ չարժառիթով, չի կարող խափանել և արգելք հանդիսանալ[1]։

1331 թ. Րեբի էլ-էվվել, 6 (1912, փետրվար, 14)

ԲԱՐՁՐ ԲԵՐԱԹԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՄ Է ՄԱՐՈՆԻՆԵՐԻ ՊԱՏՐԻԱՐՔ՝ ԻԼՅԱՍ ԷՖԵՆԴԻԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Օսմանյան կայսրության հպատակ կաթոլիկ համայնքների առաջնորդների [ընտրության] օրինակով, Իլյաս էֆենդին ևս խնդրել էր մարոնի համայնքի վրա պատրիարք նշանակելու կապակցությամբ իրեն չնորհել այս բարձր բերաթը։ Նրա պաշտոնավարության անհրաժեշտությունը ծանուցվել է նաև Արդարադատության և կրոնական Գործերի նախարարության կողմից, քննարկվել է նաև իմ նախարարների բարձր խորհրդում, ինչպես նաև մարոնի համայնքի կանոնադրության համաձայն և կրոնական առաջնորդների որոշմամբ։ Իմ կայսրության հանդեպ մյուս համայնքների առաջնորդների ունեցած պարտավորությունների, ինչպես նաև կաթոլիկ համայնքների պատրիարքներին տրված պայմանների հիման վրա, Իլյաս էֆենդիի պատրիարքության պաշտոնավարության համար չնորհեցի իմ կայսերական բարձր բերաթը և հրամայեցի։

Պատրիարքության աթոռը թափուր մնալու դեպքում, իմ կայսրության հպատակ եպիսկոպոսներից հարմար մեկը ընտրվելու է այդ պաշտոնին, որը և հաստատվելու է իմ կայսերական բարձր հրամանագրով։ Պատրիարքության, եկեղեցիների, վանքերի և այլ բարեգործական հաստատությունների կառավարումը, գույքի ձեռք

բերումը և վաճառքը կատարվելու են կայսրությունում գործող օրենքների հիման վրա: Համայնքի կողմից հիմնադրված կամ հիմնադրվելիք հիվանդանոցների, պանդուխտատների, վանքերի, դպրոցների և այլ չինություններ կառուցման ու կառավարման ընթացքում, կամ պատրիարքության և Բարձրագույն դռան միջև առաջ եկած գործերի կարգավորման ասպարեզում, չպետք է կողմնակի միջամտություն կատարվի: Հիշյալ Իլյաս էֆենդին, պատրիարքությունը պիտի ղեկավարի կայսրությունում գործող ընդհանուր օրենքների հիման վրա և քանի կաթոլիկական դավանանքին և Օսմանյան կայսրությունում գործող օրենքներին հակառակ գործունեություն չունենա, թող ցմահ մնա իր պաշտոնին: Հնուց ի վեր, պատրիարքության տրամադրության տակ գտնվող վայրերում, մարոնի համայնքի եպիսկոպոսները, վանականները, մայրապետները, քահանաները և ընդհանրապես համայնքի բոլոր անդամները, հիշյալին ճանաչելու են որպես պատրիարք և պատրիարքության վերաբերող բոլոր գործերում պետք է դիմեն նրան և հետևեն նրա պատգամներին: Պատրիարքի և համայնքի սովորությունները կիրառվելու են առաջվա նման և վալիները, պաշտոնյաներն ու մյուս պետական գործիչները, ուշադիր և խնամքով հետևելու են դրանց գործադրմանը: Իրենց պատկանող եկեղեցիներում, վանքերում, ոչ ոքի կողմից չպետք է հետախուզություն կամ միջամտություն կատարվի: Ամուսնության հարցում, նույնպես հետևելու են իրենց կրոնական սովորություններին, իսկ օրինազանցները պատժվելու են: Պսակադրության և ապահարզանի, կամ էլ համայնքի առանձին անդամների միջև ծագած տարաձայնությունները կարգավորվելու են առաջվա նման, պատրիարքի կամ էլ նրա ներկայացուցիչների իրավասությամբ՝ իրենց կրոնական սովորություններով: Իրենց սովորություններին օրինազանց վերաբերմունք ունեցող անճնավորությունների

մահվան դեպքում, չպետք է քահանաների վրա ճնշում գործադրվի և պարտադրվի, որ նրանք վերցնեն նման օրինագանցի դիակը։ Եկեղեցիների և վանքերի գույքը, ոչ մի պատրվակով գրավի տակ չի դրվելու և չի բռնագրավվելու որևէ մեկի կողմից։ Հիշյալ համայնքից որևէ մեկը, իր կենդանության ժամանակ, եթե իրենց աղքատների համար ինչոր բան կտակի, ապա այդ անճնավորության մահից հետո, պատրիարքը, եպիսկոպոսները, վանականները, քահանաները, օրենքի հիման վրա իրավասու են վերցնելու ժառանգությունը, և հանձնելու տիրոջը։ Առանց ժառանգի մահացած վանականների, քահանաների, մայրապետների գույքը, կենդանիները և այլ ունեցվածքը, պատրիարքի իրավասությամբ վերցվելու է պետության օգտին և պետական գանձարանի պաշտոնյաները, կասամները, մյութեվելլիները և մյուսները խոչընդոտ չեն հարուցելու։ Ժառանգ ունենալու դեպքում, գույքը հանձնվելու է ժառանգորդին։ Մահացած եպիսկոպոսների, քահանաների, մայրապետների և այլոց կողմից իրենց պատրիարքին կամ եկեղեցուն, աղքատներին կտակված գույքը, մարոնի վկաների ներկայությամբ, իրենց սովորություններով հանձնվելու է տիրոջը։ Համայնքում ազդեցություն ունեցող անձինք, չպետք է պարտադրեն [պատրիարքին], որ այսինչ քահանան այնինչ եկեղեցին ուղարկվի, կամ այնինչ եկեղեցին այսինչ քահանային հանձնվի։ Եկեղեցիներին պատկանող գույքից, ինչպես նաև պատրիարքին պատկանող այգիների բերքից և «ողորմություն» անվան տակ մարոնիների տված չիրայից, յուղից, մեղրից և այլ ապրանքներից նավահանգիստներում և մաքսատներում չպետք է մաքս և հարկ պահանջվի։ Եկեղեցապատկան այգիները, պարտեզները, ագարակները, դպրոցները, ջաղացները, մոմանոցները, խանութները, տները, պողատու և ոչ պողատու ծառերը, անասունները թող օգտագործվեն ընդհանուր օրենքով և կողմնակի [ոչ մեկը] խոչընդոտ

չհանդիսանա։

Հիշյալ համայնքի կողմից պատրիարքությանը և պետությանը վճարվող տարեկան հարկերի և ողորմության ընդունման հարցում, չպետք է կողմնակի միջամտություն լինի։ Պատրիարքությանը ենթակա վայրերում գտնվող եկեղեցիներում, վանքերում, ուխտատեղիներում կատարվող ծիսակատարություններին կամ «Ձեր մեռելները այսպես եք վերցնում, կամ այնպես եք [աղոթք] կարդում» պատրվակով, միջամտություն չպետք է կատարվի։ Քինվորականության կամ այլ մարմինների կողմից չպետք է պատրիարքի բնակավայրում հյուրընկալության պահանջ ներկայացվի։ Եվ ընդհանրապես նրա տարազի կամ իր ձեռքում հատուկ գավազան պահելու համար, չպետք է որևէ մեկը արգելք հանդիսանա։

Իմ այս վսեմ բերաթի պայմանները, թող կիրառվեն օրինավոր և ազատորեն և որևէ պատրվակով, կողմնակի ոչ մեկը արգելք կամ խոչընդոտ չհանդիսանա[1]։

1333 թ. Սաֆեր, 27 (1914 թ. Հունվար, 17)

1915 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ՏՐՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕՐԵՆՔԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՅԼ ՎԱՅՐԵՐ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՆՀԱՏՆԵՐԻ ԼՔՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻՆ ԵՎ ՊԱՐՏՔԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ[1]

1331 Թ. (1915) ՀՈԿՏԵՄԲԵՐ 26

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1։ *Սույն կանոնադրության պաշտոնապես հրատարակման հաջորդ օրը տեղահանված անձանց պատկանող անշարժ գույքերի գտնված յուրաքանչյուր կազայում, քաղաքագլխի իրավասության ներքո կազմվելու է մի հանձնաժողով, որի մեջ մտնելու են թափուի, հարկային և անձնագրային վարչության ներկայացուցիչները [մեկ ներկայացուցիչ էլ վաքուֆային վարչության առկայության դեպքում]։*

Առաջին հերթին, այս հանձնաժողովը հիշյալ անձանց տեղափոխության թվականին նախորդող 15 օրվա ընթացքում, կամ տեղահանության հրամանից հետո, վաճառքի ենթարկված բոլոր [գույքերի] ցուցակը երեք օրվա ընթացքում, հանելու է պետական կալվածատոմարից և

վավերացնելուց հետո, հանձնելու է կարգավորիչ հանձնախմբին։

Որպես տեղահանության թվական ընդունվելու է տեղահանության կապակցությամբ տրված առաջին հրամանի ամսաթիվը, որը գործադրվելու է տվյալ վայրի քաղաքապետի կողմից, գրավոր կերպով վավերացվելուց հետո։

Հոդված 2։ Առաջին հոդվածում նշված գործողությունը կատարելուց հետո, հանձնաժողովը դիմելու է պետական հարկային կալվածատոմարին, և զանազան վայրերից և գյուղերից տեղահանված անձանց վերաբերող 1915 թվականի Մայիսի 27-ի ժամանակավոր կանոնադրության համաձայն, չուտափուլթ երկու օրինակից առանձին-առանձին կազմվելու է անհատների, սեփականատիրական իրավունք ունեցող ընկերությունների, կազմակերպությունների, բարեգործական հաստատությունների, ինչպես նաև եկեղեցապատկան իջարեթեյն չենքերի, կալվածների, վաքուֆների, և այլ անշարժ գույքերի ցուցակը։ Յուրաքանչյուր ցուցակում նշվելու է անշարժ գույքերի գտնված փողոցի, տեղի, կամ դուռն թիվը, ինչպես նաև արժեքը։ Եթե փայատիրական իրավունքով է, նշվելու է քանակը և տիրոջ անունը։

Այն գյուղերում, որտեղ մինչև այսօր բնակչությունը տեղահանվել է ամբողջապես, դրանց ցուցակները կազմելու համար անհրաժեշտ է դիմել հարկային տոմարների հերթական ցանկին, որոշելու համար իրական կալվածատիրոջը։ Անհրաժեշտ է մանրամասն ուշադրություն դարձնել նաև հարկատվության ցուցակների նշումներին։ Անհրաժեշտության դեպքում կարելի է դիմել գյուղի հարկահավաքների և քարտուղարների տվյալներին, ինչպես նաև տվյալ գյուղի շրջակայքի բնակչության մեջ գտնվող տարեց և վստահելի անձերի ցուցմունքներին։

Հոդված 3։ Նախորդ հոդվածի հիման վրա, կազմը-

ված ցուցակները հանձնաժողովի կողմից վավերացվելուց հետո, մեկ օրինակը ներկայացվում է հետաքննող վարչախորհուրդին, իսկ մյուսը՝ պետական կալվածատիրական վարչության քարտուղարին, որպեսզի պահանջի դեպքում այն ներկայացվի կալվածատիրոջը։ Վարչախորհուրդը, ցուցակում նշված չենքերը և կալվածները, գնահատում է անժառանգ մնացած ստացվածքների համար ներկայումս գոյություն ունեցող պետական օրենքներով և վավերացվելուց հետո վերադարձնում ֆինանսական և վաքուֆային վարչություններին, իսկ մյուս վավերացված օրինակն էլ ներկայացնում է կարգավորիչ հանձնախմբին։

Հոդված 4։ 1331 թ. (1915) թվականի Սեպտեմբերի 13-ի օրենքի համաձայն ֆինանսական և վաքուֆային գանձարանների անունով ուղղակի կամ ի զորու կատարվող արձանագրություններից տուրք չի վերցվելու։

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Վերաբերում է հանձնախմբերի կազմության ձևին, պաշտոնավարմանը և նրանց արտոնություններին։

Հոդված 5։ 1331 թ. (1915) թվականի Սեպտեմբեր 13 թվակիր կանոնադրությունը գործադրելու համար կազմվելու են հանձնախմբեր, որոնք գործելու են Ներքին և Արդարադատության նախարարությունների կողմից նշանակված վայրերում։ Յուրաքանչյուր հանձնախումբ բաղկացած է լինելու Արդարադատության և Ֆինանսական նախարարությունների կողմից ընտրված մեկական ներկայացուցիչներից։ Հանձնախումբը գլխավորելու է Ներքին Գործերի նախարարության կողմից նշանակված անձնավորությունը։ Այն վայրերում, որտեղ գործերը առավել շատ են ու կարևոր, տվյալ հանձնախմբին կարող է ավելացվել Ներքին եւ Ֆինանսական նախարարությունների կողմից նշանակված ևս մեկական ներկայացուցիչ։

Հոդված 6։ Հանձնախմբի նախագահները իրավասու չեն միջամտելու կարգավորման հարցերին, սակայն իրավունք ունեն ծառայությունից վերցնելու ցանկացած թվով պաշտոնյաներ և քարտուղարներ։

Հոդված 7։ Գործերով չծանրաբեռնված վայրերում, որտեղ անհրաժեշտություն չի զգացվի հանձնախումբ կազմելու, տեղահանված անձանց [լքյալ գույքերի] կարգավորման հարցով զբաղվելու է այդ վայրերի մոտակայքում գործող հանձնախմբերը։ Նրանց գործերը կարգավորելու համար, հանձնախմբի նախագահը կարող է տվյալ վայրը ուղարկել իր փոխանորդին, կամ որևէ վստահելի անձնավորության, որոնց պարտականության մեջ չի մտնելու պարտքերի ստուգման հարցը։ 1331 (1915) թվականին Սեպտեմբերի 13-ին հրապարակված կանոնադրության 5րդ հոդվածի համաձայն, պարտք ունեցողների [ցանկը], տեղահանությունից առաջ գոյություն ունեցող օրենքի համաձայն, պետք է արձանագրել տալ իրենց բնակավայրերում գոյություն ունեցող դատարաններում։

Հոդված 8։ Հանձնախմբերի նախագահներին հասնում է մեկուկեսական, իսկ անդամներին՝ մեկական լիրա օրավարձ։ Նախորդ հոդվածի հիման վրա, նախագահին փոխանորդ նշանակվող անձնավորության օրավարձը չի անցնելու կես լիրայից, պաշտոնյաներինը և քարտուղարներինը՝ 40 ղուրուշից։ Սրանց օրավարձը նշանակվելու է հանձնախմբի կողմից։

Հոդված 9։ Նախագահը վավերացնում է պաշտոնական գրությունները, հետևում է, որպեսզի հանձնախումբը կանոնավոր կերպով գործադրի օրենքի և կանոնադրության բոլոր կետերը։ Այն գործը, որը հնարավոր է կատարել մեկ հոգով, հանձնելու է հանձնախմբի համապատասխան անդամի իրավասությանը։

Հոդված 10։ Տեղական անձանց չարժական լքյալ գույքերի, դրամի ավանդադրումների ու պարտքերի հա-

վաքումը, դատական հարց հարուցելը, անվիճելի լքյալ գույքերի աճուրդով վաճառելը, ինչպես նաև հանձնախմբի իրավասության տակ եղած մյուս հարցերը լուծելու համար ընդունված որոշումները, 3-րդ հոդվածի համաձայն գործադրվելու են անձամբ, նախագահի կամ նշանակած փոխանորդի կողմից։

Հոդված 11։ Սույն կանոնադրության գործադրությունից առաջ, կառավարության կողմից կազմված հանձնաժողովների մոտ գտնվող բոլոր փաստաթղթերն ու պաշտոնական գրությունները հանձնվելու են կարգավորիչ հանձնախմբերին։ Եթե հանձնված փաստաթղթերի մեջ լինեն տեղահանված անհատներին վերաբերող պարտապահանջներ կամ լքյալ գույքերի ձեռք բերման խընդիրներ, ապա հաջորդ հոդվածի համաձայն, պակասները ամբողջացնելուց հետո, կատարվելու է անհրաժեշտ գործողությունները։

Հոդված 12։ Տեղահանված այն անձինք, որոնք հանդես կգան որոշակի [գույքային] պահանջներով, պարտավոր են դիմում ներկայացնել հանձնախմբի նախագահին, կցելով համապատասխան փաստաթղթեր, կամ դրանց վավերացված պատճենները, միևնույն ժամանակ նշելով իրենց նոր բնակավայրը, զբաղմունքը, նախկին բնակավայրը և կրոնը։ Հիշյալ պարտապահանջներին տրվելու է հանձնախմբի կնիքով հաստատված ստացագրերը, նշելով հանձման օրն ու թվականը, դիմողի անունը, պահանջարկի ընդհանուր քանակը, կցված փաստաթղթերի տեսակն ու դրանց թվականները։ Շարժական և անշարժ ամեն տեսակի լքյալ գույքերի համար պահանջ ներկայացնող յուրաքանչյուր անձնավորություն, վերցնելով հանձնախմբի կողմից տվյալ պահանջարկը, հաստատող գրությունը դիմելու է դատարան։

1331 (1915) Սեպտեմբերի 13-ի թվակիր կանոնադրության 4-րդ հոդվածում նշված պայմանաժամից օգ-

տրվելով, պարտապահանջը իր դատական հայցով, կարող է պարտք ունեցողի նախկին բնակավայրում գործող հանձնախմբին դիմել հեռագրով։ Բոլոր դեպքերում, այս հոդվածի առաջին մասում նշված կետերի համաձայն, պարտապահանջները, պետք է, որ համապատասխան վավերաթղթերը ներկայացնելով արձանագրվեն հանձնախմբի գրասենյակում։

Հոդված 13։ Ստորև բերված կետերը վերաբերում են հանձնախմբերի պաշտոնավարությանը։

ա) Առաջին հոդվածի համաձայն, հանձնախումբը ստուգելու է վաճառքի ենթարկված [գույքերի] ցուցակը և այնտեղ կեղծիք կամ խաբեություն հայտնաբերելու դեպքում այն չեղյալ համարելով, տվյալ գործը հանձնելու է դատաքննության։

բ) Հանձնախումբը իր հսկողության տակ է վերցնելու տեղահանված անձանց պատկանող դրամական գումարները, ապրանքները և ամեն տեսակի գույքերը, որոնք ի պահ են տրված կառավարության կողմից։

գ) Դիմելով բանկերին, զանազան հաստատություններին և առանձին անձանց, հանձնախումբը պահանջելու է տեղահանված անհատների կողմից ի պահ դրված դրամի և գույքերի ընդհանուր հաշիվները, և ընդհանուր հիմունքներով, ձեռք է բերելու գրավի ենթարկված գույքերն ու դրամական գումարները։

դ) 1331 (1915) Սեպտեմբեր 13-ի թվակիր օրենքի 7-րդ հոդվածի առաջին կետի համաձայն, անհրաժեշտ է դիմել դատարաններին, վերացնելու համար տեղահանված անձանց պատկանող ապրանքի արգելակալանքները։

ե) Ըստ հնարավորին փնտրել, գտնել և ձեռք բերված առևտրական մատյաններն ու մուրհակները ստուգելով, ի հայտ բերել և գանձել տեղահանված անձանց դրամական պարտքերը, իսկ անհրաժեշտության դեպքում դրամական գումարները գանձել դատարանի միջոցով, ու-

ժի մեջ պահելով 1331 (1915) թվականի Սեպտեմբերի 13ի թվակիր օրենքի 7-րդ հոդվածի վերջին կետը։

Հոդված 14։ Նախորդ հոդվածի «գ» կետի բովանդակության համաձայն, բանկերը, զանազան հաստատությունները և առանձին անձինք պարտավոր են չտապ կերպով հանձնախմբի նախագահին ներկայացնել պահանջված հաշիվները, կամ այդ հաշիվները հաստատող փաստաթղթերը, մուրհակներն ու գրությունները։

Հոդված 15։ Հանձնախմբերը տեղահանված անձանց դրամական պահանջների իսկությունը համեմատելու են պարտք ունեցողների հայտնաբերված առևտրական հաշիվների հետ։ Դատարանները և մյուս պաշտոնական հաստատությունները վերցնելու են կնքված և ստորագրված այն փաստաթղթերը, որոնք կներկայացվեն՝ հաստատելու համար պարտապահանջների դրամական դումարները։ Միևնույն ժամանակ նրանք դիմելու են տվյալ խնդրի հետ կապ ունեցող անձնավորությունների վկայություններին։ Եթե տրված վկայությունները համապատասխանեն իրականությանը, ապա դատական արձանագրություններում նշվելու է նաև վկաների անունները։ Առևտրական կեղծ մուրհակների նկատմամբ կատարվելու է անհրաժեշտ հետաքննություն։

Հոդված 16։ Եկեղեցիներում գտնվող ապրանքները, սուրբ գրքերը պետք է արձանագրվեն և վերցվեն պահպանության ներքո։ Դպրոցները, վանքերը, ինչպես նաև դպրոցական պիտույքներն ու կահկարասին հանձնելու են լուսավորության մարմիններին։

Հոդված 17։ Անանուն գույքերը գրանցվելու են տվյալ գյուղի վայրի անունով, որպեսզի հետագայում, կառավարության իրավասությամբ ուղարկվեն տեղափոխված անձանց նոր բնակավայրերը։

Հոդված 18։ Լքյալ գույքերը աճուրդով վաճառելու դեպքում, հանձնախմբերը նկատի են ունենալու ժամա-

նակն ու վայրը և աշխատելու են հնարավորին չափ վաճառքը կատարել գույքի համապատասխան արժեքով։

Հոդված 19։ Հանձնախմբերը հիմնականում ունենալու են երկու հաշվետոմարներ։ Մեկը՝ մայր հաշվետոմար, իսկ մյուսը՝ լքյալ գույքերի գործածական հաշվետոմար։ Այս երկու տոմարների ձևերն ու գործածության կերպը կցված է սույն կանոնադրության վերջում։ Անհրաժեշտության դեպքում, հանձնախմբերը կարող են պահել նաև այլ հաշվետոմարներ։ Հանձնախմբի նախագահը բարեխղճորեն հետևելու է, որպեսզի հաշիվները կատարվեն կանոնավոր և օրենքի սահմաններում։ Հաշիվների մեջ թույլ տրված չարաշահումների համար պատասխանատու է նախագահը։

Հոդված 20։ Հանձնախմբերը պարտավոր են գործադրելու հատուկ օրենքով սահմանված (հոդվածները)[2] և այս կանոնադրության որոշումները։

Հոդված 21։ Հատուկ օրենքով սահմանված [հոդվածները] և սույն կանոնադրության որոշումները գործադրելու համար, անհրաժեշտության դեպքում հանձնախմբի նախագահին տրամադրվելու են բավարար՝ չափով ոստիկաններ և ժանդարմերիա։

Հոդված 22։ Իրենց գործունեության ընթացքում, հանձնախմբերը տևապես գտնվելու են կենտրոնական կառավարության հսկողության ներքո։

Հոդված 23։ Հանձնախմբերի անդամների պաշտոնավարության ընթացքում, եթե հատուկ օրենքով սահմանված [հոդվածների] և սույն կանոնադրության մեջ նշված որոշումների նկատմամբ, անփութություն և քմահաճ վերաբերմունք ցուցաբերվի, ապա առաջացած վնասի համար նյութական տույժի են ենթարկվելու, թե՛ նախագահը և թե՛ անդամները։

Հոդված 24։ Սույն կանոնադրությունը ուժի մեջ է իր հրապարակման օրից։

Հոդված 25։ Սույն կանոնադրության գործադրությունը հրամայված է Ներքին, Արդարադատության և Ֆինանսների նախարարություններին։

Հրամայում եմ սույն կանոնադրությունը դնել գործածության մեջ և կցել Օսմանյան պետական օրենքներին[3]։

(Սուլթան) Մեհմեդ Բեչադ

Մեծ վեզիր՝
Մեհմեդ Սայիդ

Շեյխ ուլ-իսլամ և կայսերական վաքուֆների նախարար՝
Հայրի

Ռազմական նախարար և ծովային նախարարի տեղակալ՝
Էնվեր

Ներքին գործերի նախարար՝ և ֆինանսական գործերի նախարարի տեղակալ՝
Թալէաթ

Արտաքին Գործերի նախարար՝
Խալիլ

Արդարադատության նախարար՝ և պետական խորհրդի տեղակալ՝
Իբրահիմ

Հասարակական աշխատանքների նախարար՝
Աբբաս

Լուսավորության նախարար՝ և կապի նախարարի տեղակալ՝
Ահմեդ Շյուքրի

Առևտրի և գյուղատնտեսության նախարար՝
Ահմեդ Նեսիմի

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՌԱՋԱԲԱՆ

1. *Զաքարյա Ստոյանով, գրառումներ բուլղարական ապստամբության մասին, Մոսկվա*, 1956, էջ 9, (*ռուսերեն*)։

2. *Զաքարյա Ստոյանով, նշվ. աշխ.*, էջ 668։

3. *Ա.Ն. Մանդելշտամ, Երիտասարդ թուրքերի պետությունը, Ս. Էջմիածին*, 1916, էջ 5։

4. Düstur, Tertip-i evvel, cild 1-2, Istanbul, 1289. cild 3, 1293. Cild 4, 1296.

5. Düstur, Tertip-i evvel, cild 1, Istanbul, 1298. cild 2, 1299. Cild 3, 1300.

6. Düstur, Tertip-i sani, cild 1, Istanbul, 1329.

7. *Տե՛ս* 1) Testa. I., Recueil des traités de la Porte Ottomane avec les puissances étrangères depuis 1536, vol. I-VIII, Paris, 1865-1896. 2) Aristarchi bey, Législation Ottomane, ou Recueil des Lois, règlements, ordonance traités, capitulations et autres documents officiels de l'Empire Ottoman, Constantinople, 1873-1878, T. 1-5. *Նույն մատենաշարի* 6 *և* 7 *հատորները տե՛ս՝* Démétrius Nicolaides, Législation Ottomane, sixième partie 1881, septième partie 1888. 3) Noradounghian G., Recueil d'actes intetrnationaux de l'Empire Ottoman, T.I. 1897, T. 2, 1900, T. 3, 1902, T. 4, 1905. 4) Young G., Corps de droits Ottoman, Tt. I-VII, Oxford, 1905-1906. Biliotti A., Ahmed Sedad, Législation Ottomane, depuis le Rétablissement de la Constitution, 1912. 5) *Փ. Դորեվ, Թուրքական վավերագրերը Բուլղարիայի պատմության մասին*, (1564-1908) *Ա. մաս, Սոֆիա*, 1942, (*բուլղարերեն*), 6) Fekete L., Einfürung in die Osmanisch Türkische Diplomatik der Türkischen Botmassigkeit in Ungarn, Budapest, 1926.

ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒԼՀԱՆԵՈՒՄ ԸՆԹԵՐՑՎԱԾ ՀԱԹԹ-Ը ՀՅՈՒՄԱՅՈՒՆԻ ՊԱՏՃԵՆԸ

1. *Բարենորոգումների սկիզբը Թուրքիայում սովորաբար համարում են 1839 թվականին հրապարակված «Հաթթ-ը Շերիֆը», սակայն, իրականում, բարենորոգումների սկիզբը դրել է ոչ թե սուլթան Աբդուլ Մեջիդը (1839–1861), այլ Մահմուդ Բ.-ը (1808–1839), որը 1826 թվականին, երկրում անցկացրեց ռազմական բարենորոգում ոչնչացնելով ենիչերիների զորամասը։ Մահմուդ Բ.-ի ժամանակ էր, որ Մուստաֆա Ռեշիդ փաշան կազմեց «Հաթթ-ը Շերիֆի» բովանդակությունը և ներկայացրեց Մեջլիսի քննարկմանը։ Նրա օրոք էր, որ բարենորոգման նախաճեռնությունները (վարչական, հողային, քաղաքացիական) ընդհանուր անունով կոչվեցին «Թանզիմաթ»։ «Թանզիմաթ» բառը արաբերեն թանզիմ բառի հոգնակի ձևն է, որ նշանակում է՝ կարգադրել, խմբագրել, բարեփոխել։*

Թանզիմաթի երկրորդ շրջանը սկսվում է 1856 թվականի փետրվարի 18-ի «Հաթթ-ը Հյումայունով»։ Ինչ վերաբերում է նրա վերջնական թվականին, ապա այդ հարցում հետազոտողների մոտ ընդհանուր կարծիք չկա։ Մեր կարծիքով, այն ավելի ճիշտ կլիներ հասցնել մինչև 1876 թվականը, երբ Թուրքիայում հռչակվեց առաջին սահմանադրությունը։

Անհրաժեշտ է նշել, որ բարեփոխումների վերաբերյալ առաջին կայսերական հրովարտակը, որը հռչակվեց 1839 թվականին, պատմության մեջ հայտնի է, որպես «հաթթ-ը շերիֆ» (նվիրական գիր) անունով, իսկ 1856 թվականին հրապարակված հրովարտակը, «հաթթ-ը հյումայուն» (կայսերական գիր) անունով։ Այս երկու հրովարտակներն էլ հրապարակվեցին սուլթան Աբդուլ Մեջիդի (1839–1861 թթ.) գահակալության շրջանում։

2. *Ըստ ավանդության, վեյսի էֆենդի անունով մի մահմեդական, Մուհամմեդ մարգարեի թիկնոցը բերելով Ստամբուլ,*

կառուցում է գմբեթավոր մի չինուհյուն և ցուցադրուհյան համար այն զետեղում է այնտեղ։ Այդ չինուհյունը վերանորոգվում է 1847 թվականին, սակայն որոշ ժամանակ անց, սուլթան Աբդուլ Մեջիդի կարգադրուհյամբ, նույն վայրում կառուցվում է մի մզկիթ և Մարգարեի թիկնոցը փոխադրվում է այնտեղ։ Թե՛ այդ վայրը, և թե՛ մզկիթը հայտնի է «Հըրքայի չերիֆ» անունով։ (Տե՛ս Resimli Osmanli Tarihi ansiklopedisi, Istanbul, 1958, S. 142).

3. Դյուստուր, հատ. Ա., էջ 4-7։

ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՖԵՐՄԱՆԻ ՊԱՏՃԵՆԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԼԻԱԶՈՐ-ՓՈԽԱՆՈՐԴԻՆ[1]

1. Դյուստուրում հրովարտակի վերնագրի բառացի թարգմանուհյունը այս է։ Ռուս պատմաբան Ա. Ուբրիչինիի աշխատուհյան վերջում բերված ռուսերեն թարգմանուհյան, ինչպես նաև Մ. Իզմիրլյանի հայերեն թարգմանուհյան մեջ այն վերնագրված է «Հաթթը հյումայուն»։

Այդ թարգմանուհյուններում, հրովարտակը սկսում է այսպես՝ «Թող այնպես ըլլայ, ինչպես որ հոս գրված է։ Ո՛վ իմ մեծ եպարգոս, Մուհամմէդ էմին Ալի փաշա, որ իմ կայսերական մեճիտիեյի առաջին աստիճանի պատվանշանով պատուած ես, թող Աստված քեզ չնորհե մեծուհյուն և ավելցնե քու զորուհյունդ»։ (Տե՛ս, Մատենադարան, Մ. Իզմիրլյանի արխիվ, պաշտոնաթղթեր, մասն 7-րդ, գլ. Լ., վ. 614)։

Անհրաժեշտ է նշել, որ «Հաթթ-ը հյումայուն»ի բնագիրը առանձին հոդվածների բաժանված չէ։

Տարբեր պատմաբանների աշխատուհյուններում տեղ գտած թարգմանուհյուններում, այն բաժանված է 19, 26, 24, 35 հոդվածների։ Մ. Իզմիրլյանը իր հայերեն թարգմանուհյան մեջ այն բաժանել է 23 հոդվածների։

2. Խոսքը սուլթան Աբդուլ-Մեջիդի մասին է։

3. Սուլթան Մեհմեդ Բ. Ֆաթիհ։ Առաջին գահակալուհյան շրջանը՝ 1444-1446 թթ., երկրորդը՝ 1451-1481 թթ.։

4. Դյուստուր, հատ. Ա., էջ 7-14։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀՅԱԼԵԹՆԵՐԻ, ԼԻՎԱՆԵՐԻ, ԳՅՈՒՂԵՐԻ ԵՎ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՀԱՐԿԻ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Դյուստուր, հատ. 2, էջ 22-25։

ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԵՆԸ

1. Դյուստուր, հատ. 2, էջ 25-28։

ՍԱՄՈՍ ԿՂԶՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

1. 19-րդ դարում, Օսմանյան կայսրության մեջ ստեղծվեցին մի քանի նահանգներ, որոնք կառավարվում էին վարչական և դատական յուրահատուկ օրենքներով։ Այդ նահանգներն էին՝ Կրետե կղզին, Սամոս կղզին, Լիբանանի և Աֆրոնի լեռները։ Այդ նահանգների բնակչությունը զերազանցապես բաղկացած էր քրիստոնյաներից։

Սամոս կղզին կիսանկախ իշխանություն (բեյություն) է դարձել դեռևս 1831 թվականին՝ Մահմուդ Բ.-ի չնորհած հրովարտակով։ Այս հրովարտակը չի ընդգրկուած «դյուստուր»ի մեջ։

2. Թուրքական սուլթանները սկսել են իրենց խալիֆ անվանել 1774 թվականին կնքված Քյուչուկ-կայնարջիի հաշտության պայմանագրից հետո։ Այդ պայմանագրով, Ռուսաստանը առաջին անգամ ճանաչեց սուլթանի (տվյալ դեպքում՝ Աբդուլ Համիդ Ա.-ի, 1774-1789) հոգևոր իշխանությունը Ղրիմի թաթարների վրա։ Հետագայում, սուլթանները, իրենց նվաճողական ձգտումներից ելնելով, պահպանեցին այդ տիտղոսը՝ որպես ամբողջ մահմեդական աշխարհի խալիֆ։

3. Դյուստուր, հատ. Դ. 5 էջ 798-803։

ՀՈՒՆԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՈՒՆԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հունական համայնքը Օսմանյան կայսրությունում ուներ 4 պատրիարքություն։ Դրանք էին՝ Կ. Պոլսի, Երուսաղեմի, Անտիոքի և Ալեքսանդրիայի պատրիարքությունները։ Վերջին երեք պատրիարքությունները ինքնուրույն էին և ունեին հավասար իրավունքներ։ Սակայն կրոնական գործերում, վճռական իրավունքը պատկանում էր Կ. Պոլսի պատրիարքությանը։ Կ. Պոլսի պատրիարքության իրավասության մեջ էին մտնում նաև բարձրաստիճան հոգևորականների նշանակումը, հեռացումը և պատժումը։

Կ. Պոլսի պատրիարքության կանոնադրությունը Բարձրագույն

դևան կողմից վավերացվել է 1862 թվականին։

2. Ստամբուլում, Ոսկեղջյուրի մի թաղամասն է, ուր ապրում էին գլխավորապես հույները։ Ֆեների հույներից, մեծ թվով պետական գործիչները կոչվել են «Ֆեներլի»։ Արտաքին Գործերի նախարարությունում նրանք վարել են թարգմանչի ևայլ կարևոր պաշտոններ։ Ֆեներում է գտնվել նաև ուղղափառ եկեղեցու տիեզերական պատրիարքարանը։ Բերված թաղամասերը նույնպես գտնվում են Ստամբուլում և մասամբ բնակեցված են եղել հույներով։

3. Դյուստուրի մեջ, ներքևի քաղաքների անունները բաց է թողնված։

4. Դյուստուր, հատ. 2, էջ 902–118։

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Դեռևս 1854 թվականի Օգոստոսին, Գր. Օտյանը, Սերվիչենը (Սերովբե Վիչենյան), Գ. Պալյանը, Ն. Ռուսինյանը, ինը հոգևորականների մասնակցությամբ կազմում են հայ ազգի կանոնադրության նախագիծը և ներկայացնում պատրիարքին՝ վավերացնելու համար։ Կանոնադրության այս անդրանիկ նախագծի վավերացումը ձգձգվում է 2 տարի և ի վերջո ձախողվում պոլսահայ ամիրաների և կղերականների կողմից։ 1858 թվականին, նոր կազմված հանձնաժողովը կանոնադրությունը վերամշակելուց հետո, ներկայացնում է Ազգային ժողովի հաստատմանը։ Տևական ու համառ պայքարից հետո, 1860 թվականի Մայիսի 24-ին, հայ առաջադիմական մտավորականներին հաջողվում է կանոնադրության նոր խմբագրությունը ներկայացնել ընդհանուր ժողովի քննարկմանը, որը հաստատվելուց հետո, Ն. Ռուսինյանի առաջարկությամբ, սկսում է կոչվել «Ազգային սահմանադրություն»։ Այնուհանդերձ, որպեսզի Ազգային սահմանադրությունը իրավական ուժ ունենար, պետք է հաստատվեր կառավարության կողմից։ Բարձրագույն դուռը իր հերթին, մոտ 3 տարի ձգձգելուց հետո, 1863 թվականի Մարտի 17-ին, հաստատում է խմբագրված օրինակը։ (Մանրամասն տե՛ս Հայկ Ղազարյան։ Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800–1870 թթ.։ Երևան, 1967, էջ 446)։

«Դյուստուր»ի մեջ հրապարակված Ազգային սահմանադրության երքերեն թարգմանությունը կատարված է այս վերջին հայերեն խմբագրությունից։ Անհրաժեշտ է նշել, որ կանոնադրության թուրքերեն և հայերեն խմբագրության մեջ կան որոշ տարբերություններ։ Հայերեն բնագրի մեջ «Ազգային սահմանադրություն

հայոց» խորագիրը թուրքերենում դարձել է «Հայ ազգի կանոնադրություն» (Nizamname-i millet-i Ermenian)։ Բնականաբար, թուրքիայում տիրող միապետական կարգերում, խոսք անգամ չէր կարող լինել «Սահմանադրություն» բառի գործածության մասին։ Մեր թարգմանության տողատակերին նշել ենք այն բոլոր տարբերությունները, որոնք կան հայերեն և թուրքերեն խմբագրությունների միջև։

Անհրաժեշտ է նշել, որ 1916 թ. Հուլիս 28-ի հրամանագրով, թուրքական կառավարությունը դադարեցրեց Ազգային սահմանադրության գործադրությունը։ (Տե՛ս Զաւէն արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս։ Վավերագրութիւններ և վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 192)։

Այնուհանդերձ, այն կրկին գործածության մեջ մտավ 1918 թվականին, Երիտթուրքերի կառավարության անկումից հետո։ Այն որոշ փոփոխություններով գործադրվում է Թուրքիայում մինչև այսօր։ (Տե՛ս Լուֆթիկ Գուլումճեան։ Հարցապնդում, հայ համայնքային անցուդարձեր։ Իստանպուլ, 1950, էջ 9-10)։

Ազգային սահմանադրության 1860 թվականի խմբագրությունը ամբողջովին թարգմանված է ֆրանսերենի և հրապարակված է 1861-1862 թթ. Փարիզում «Revue de l'Orient, de l'Algérie et des colonies» ամսագրում։ Իսկ 1863 թվականի ֆրանսերեն թարգմանությունը, կրճատումներով լույս է ընծայել Ցունգը։ (Տե՛ս George Young, Corps de droit Ottoman, Oxford, 1905, թ. 79-92)։ 1863 թվականի խմբագրությունը ունի նաև անգլերեն և ռուսերեն թարգմանություններ։ (Տե՛ս, 1) F.B. Lynch, Armenia, Vol. II., London, 1901. 2) Ֆ.Պ. Լինչ, Հայաստան, հատ. 2, թուրքական նահանգ, Թիֆլիս, 1910, էջ 581-609 (ռուսերեն)։

Կանոնադրության հայերեն բնագրերի հրատարակությունները տե՛ս «Մասիս», 1857, 28 Մարտի, N. 270։ «Ազգային սահմանադրութիւն հայոց», կ. Պոլիս, 1860։ Ատոմ, Ազգային սահմանադրություն, կ. Պոլիս, 1914 և այլն։

2. Դյուստուր, հատ. 2, էջ 938-961։

ԼԵՌՆԱԼԻԲԱՆԱՆԻՆ ՏՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲԱՐԵՓՈԽՎԱԾ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՑՍ Է։

1. 1860 թվականին, Լիբանանի մահմեդական դյուրզիները ջարդ կազմակերպեցին քրիստոնյա մարոնիների նկատմամբ։ Նույնպիսի ջարդ տեղի ունեցավ նաև Դամասկոսում։ Այդ ջարդերից հետո, հինգ

մեծ տերությունների անմիջական միջնորդությամբ, Լիբանանին տրվեց ներքին ինքնավարության որոշ արտոնություններ։ 1861 թվականի Հունիսի 9-ին, չտապ կազմվեց առաջին փորձնական կանոնադրությունը՝ որը պիտի գործադրվեր երեք տարում՝ միջազգային հսկողության ներքո։

Այս նոր բարեփոխված կանոնադրությունը հաստատվել է 1864 թվականի ամռանը, Կ. Պոլսում։

2. Դյուստուրի մեջ գրված է Սուկ, որը վրիպակ է։ Պետք է լինի Շուֆ։

3. Դյուստուր, հատ. 4, էջ 695-701։

ՐԱԲԲԻՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հրեական համայնքը համեմատած ոչ-մահմեդական մյուս համայնքների հետ, եղել է ամենից ավելի կազմակերպված և ունեցել է լավ վարչություն։

1859 թվականին, աշխարհիկ և հոգևոր ղեկավար տարրերի միջև առաջ եկած մրցակցության հետևանքով, մի շարք տարաձայնություններ են ծագում համայնքի ներսում։ Համայնքը բաժանվում է երկու խմբավորումների։ Ի վերջո, Բարձրագույն դռան որոշմամբ, համայնքի ղեկավարները, ընդհանուր ժողով գումարելով, ընդունում են այս կանոնադրությունը, որը անմիջապես վավերացվում է կառավարության կողմից։

Այս կանոնադրության հեղինակները, ամեն կերպ ձգտել են որոշ չափով աշխարհականացնել իրենց համայնքի կառավարումը, որը մինչ այդ տևապես գտնվել էր կրոնավորների ձեռքին։ Միևնույն ժամանակ, նրանք նպատակ ունեին մշտական կապ հաստատել կայսրության զանազան կենտրոններում (Սալոնիկ, Էդիրնե, Պլովդիվ, Իզմիր, Բուրսա, Երուսաղեմ) գտնվող միաբանությունների միջև և ստեղծել ընդհանուր ղեկավարություն՝ Կ. Պոլսի խախամբաշիի գլխավորությամբ (տե՛ս Ա. Ուլիչինի և փ. դէ Քուրթէյլ, Օսմանյան կայսրության արդի վիճակը, Ս. Փեթերսպուրկ, 1877, էջ 180 (ռուսերեն)։

2. Դյուստուր, հատ. 2, էջ 962-975։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՆՔԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԸ ԱՆԿԱԽ ՆՐԱՆՑ ՀՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔԻՑ ՄԱՔՍԱՑԻՆ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Դյուստուր, հատ. 2, էջ 610-617։

ԿՐԵՏԵԻ ՎԻԼԱՅԵԹԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. *Մեջիդիեն, սուլթան Աբդուլ Մեջիդի* (1839-1861) *գահակալության շրջանում հատված պատվո նշան էր, իսկ «Օսմանիեն»՝ սուլթան Աբդուլ Ազիզի* (1861-1876)։ *Այս պատվո նշանները ունեին առաջինից մինչև հինգերորդ կարգի աստիճաններ։*

2. *Կրկնությունից խուսափելու համար, մենք այստեղ նպատակահարմար չգտանք բերելու կանոնադրության առանձին հոդվածների թարգմանությունը, քանի որ դրանք կազմված են հիշյալ դրույթների հիման վրա։*

Այդ հոդվածներում, հիմնականում տրված են կրետե կղզու ընդհանուր ժողովի, ավագների խորհրդի, կազաների և մութասարրիֆությունների, խառը դատարանների և առևտրական դատարանների իրավունքներն ու պարտավորությունները և նրանց ընտրության կարգը։

3. *Դյուստուր, հատ.* 1, *էջ* 652-655)։

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. *Դյուստուր, հատ.* 3, *էջ* 562-566։

3 *ՄԱՅԻՍ* 1289 (1872) *ԹՎԱԿԻՐ ԲԱՐՁՐ ՖԵՐՄԱՆԸ, ՈՐՈՎ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ԴԱՏԱՐԱՆԻՆ ՀԱՑՑ ՆԵՐԿԱՑԱՑՆԵԼ ԱՑՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ՊԱՑՄԱՆԻ ԽԱԽՏՈՒՄՈՎ ՏՈՒՆ Է ՎԱՃԱՌՎԱՈՒՄ ՈՉ-ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀՊԱՏԱԿՆԵՐԻՆ*

1. *Դյուստուր, հատ.* 4, *էջ* 375։

ՄԵԾ ՎԵԶԻՐԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ ԱՆՀԱՒԱՆԱԳ ՄԱՀԱՑԱՇ ԿՂԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԺԱՒԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. *Դյուստուր, հատ.* 3, *էջ* 568-570։

ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ ՄԵԾ ՎԵԶԻՐԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ՝ ՏՐՎԱԾ 1293 *Թ. ՋՈՒՄԱԴԻ ԷԼ-ԱՀԻՐ ԱՄՍԻ* 16-*ԻՆ* (1876 *Թ. ՀՈՒՆԻՍԻ* 10)

1. *Մինչև թանզիմաթը, ոչ-մահմեդականների ծառայությունը Օսմանյան բանակում բացառվում էր։ Ծառայության փոխարեն, ոչ-մահմեդականները պարտավոր էին գլխահարկ (խարաջ) վճարել։*

Հաթթը չերիֆի հրատարակումից հետո, այդ անհավասարությունը վերացնելու համար, անհրաժեշտություն էր զգացվել մտցնել նաև ոչ-մահմեդականների ծառայությունը բանակում։ Այդ իսկ պատճառով, 1847 թվականից սկսած, հուլն նավաստիները ընդգրկվեցին ռազմածովային ծառայության մեջ։ Այնուհետև (1855 թվականին), պետական խորհուրդը մշակեց հատուկ օրենք, ըստ որի, բոլոր ոչ-մահմեդական հպատակները պիտի ընդգրկվեին թուրքական բանակի ծառայության մեջ։ Այսպիսով խարաջը վերանալու էր։ Այս միջոցառումը խիստ դժգոհություն առաջացրեց թե՛ մահմեդականների, և թե՛ քրիստոնյաների չրջանում։ Դրա համար խարաջը փոխարինվեց զինվորական հարկով (bedel-i askeriye)։ *Իսկ տվյալ չրջանում, զինվորական ծառայության զորակոչը կատարվում էր հետևյալ կերպ։ Ցուրաքանչյուր տարի, վիճակահանություն էր կատարվում նույն տարում ծնված մահմեդական 180 զորակոչիկների միջև և ծառայության էր վերցվում մեկը, մյուսների վիճակահանությունը հետաձգվում էր հաջորդ տարվա։ Ոչ-մահմեդականներն էլ նույն հարաբերությամբ (այսինքն՝ 180 հոգու դիմաց) պետք է վճարեին 5,000 ղուրուշ։*

Ինչպես երևում է այս հաջորդ հրամանագրից, բեղելի այքերիյեն գանձելու եղանակը հարափոփոխ վիճակում է գտնվել 19-րդ դարի երկրորդ կեսին։

2. *Դյուստուր, հատ. 4, էջ 407-408։*

ՄԵԾ ՎԵԶԻՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԵՆԸ, ՈՒՂՂՎԱԾ ՍԱՄՍՈՆ ԿՂԶՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ

1. *Դյուստուր, հատ. 4, էջ 803-804։*

ՄԵԾ ՎԵԶԻՐԻ ԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԵՆԸ, ՈՐՆ ՈՒՂՂՎԱԾ Է ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՈՉ-ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀՊԱՏԱԿՆԵՐԻՑ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՐԿ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. *Դյուստուր, հատ. 4, էջ 804-807։*

ՄԻՆՉԵՎ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՉՄՈՒՄԸ 1304 Թ. ՍԱՖԵՐ ԱՄՍԻ 27-ԻՑ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՈՉ-ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԶԻՆԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

1. *Դյուստուր, հատ. 1, երկրորդ հրատարակություն, էջ 420։*

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ, ՈՐՆ ԸՆԹԵՐՑՎԵԼ Է ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՐԱՆ ՄԵՋ

1. *Քյուչուկ Մեհմեդ Սալիդ փաշան, 1878-1908 թվականներին, 7 անգամ եղել է Աբդուլ Համիդի Մեծ վեզիրը։*

2. *Նկատի է առնվում 1856 թվականի Ղրիմի պատերազմից հետո ռեֆորմի վերաբերյալ Աբդուլ Մեջիդի (1839-1861) չնորհած կայսերական հրովարտակը՝ Հաթթը Հյումայունը։*

3. *Նկատի ունի 1939 թվականի բարենորոգումների հրովարտակը՝ Հաթթը Չերիֆը։*

4. *Նկատի ունի 1876 թվականի Դեկտեմբերի 23-ին հռչակված թուրքական առաջին սահմանադրությունը։*

5. *1878 թվականին, մեկ տարով եղել է Աբդուլ Համիդի Մեծ վեզիրը։*

6. *Դյուստուր, հատ. 1, երկրորդ հրատարակություն, էջ 11-14։ Սահմանադրության վերահաստատման մասին այս հրովարտակը հրապարակվեց 1908 թվականին։ Համանման հրովարտակ Աբդուլ Համիդը տվել է նաև 1876 թվականին՝ ուղղված Միդհատ փաշային, որը չի ընդգրկված Դյուստուրի մեջ։*

1876 թվականի թուրքական առաջին սահմանադրության վերաբերող հրովարտակը ստորև բերում ենք ֆրանսերեն թարգմանությունից։ Տե՛ս Doustour-i – Hamidié, Appendice à la Législation ottomane publié Démétrius Nicolaides, cinquième partie, Constantinople, 1878, pp. 2-7:

Հաթթը Հյումայուն

Իմ մեծարգո վեզիր Միդհատ փաշա։

Մեր պետության հզորությունը մի առ ժամանակից իվեր գտնվում է անկման մեջ։ Այդ անկման հիմնական պատճառը արտաքին գործոններից առ ավելի, ներքին վարչության մեջ գոյություն ունեցող թերություններն են, որոնք թուլացնում են պետության և հպատակների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունները։ Այս կապակցությամբ, իմ վեհափայլ հայրս՝ հանգուցյալ սուլթան Աբդուլ Մեջիդը ձեռնարկել էր բարենորոգումների մի ծրագիր, որը չարիաթի նվիրական օրենքներով երաշխավորում էր բոլոր հպատակների կյանքը, ունեցվածքը և պատիվը։ «Թանզիմաթ»ի այդ միջոցառումները վերականգնեցին մեր ուժերը և հնարավորություն տվեցին մեզ այսօր հրապարակելու այս սահմանադրությունը, որը արդյունքն է մեր գաղափարների ազատ արտահայտման։

Այս երջանիկ օրը հատկապես հիշատակության արժանի է իմ հանգուցյալ հայրս, որը բարեփոխություններ կատարելով կայսրու-

թյունում, անկասկած կհուչակեր նաև այս սահմանադրությունը։ Ես մեծապես փառք կտամ Աստծուն, որ մեր ազգի կատարյալ երջանկությունը ապահովող այդպիսի մի գործ վերապահեց մեր սուլթանության այս օրերին։

Այսուհանդերձ, մեր պետության կառավարման ձևը բոլորովին գոհացուցիչ չէ թե՛ երկրի ներսում և թե՛ արտաքին հարաբերությունների մեջ։ Ուստի մեր մեծագույն ցանկությունն է վերացնել այն խոչընդոտները, որոնք արգելք են հանդիսացել բոլոր մեր հպատակների առաջադիմության ու զարգացման ճանապարհին։

Այս նպատակին հասնելու համար մենք անհրաժեշտ համարեցինք ընդունել կառավարման մի նոր ձև, որը կայանալու է հետևյալում. 1) Պահպանել կառավարության իրավունքները և օրենքները. 2) Վերացնել այն բոլոր զեղծումները, որոնք գործադրվում են առանձին մարդկանց չարաշահումների հետևանքով. 3) Պահպանել մեր ժողովուրդների ազատությունը, հավասարությունը և արդարության բարիքներից օգտվելու անաչառ իրավունքը, որին արժանի է ամեն մի քաղաքակիրթ երկիր։

Այս բարիքների ապահովության և իրականացման համար անհրաժեշտ է ստեղծել սահմանադրական և պառլամենտական կարգ։ Արդեն մեր գահակալության սկզբից հրատարակված հաթթը հյումայունի մեջ մենք հայտնել էինք պառլամենտ կազմելու անհրաժեշտության մասին։

Այս կապակցությամբ, պետական բարձր պաշտոնյաները և հոգևորականները համատեղ կազմեցին սահմանադրությունը, որը բազմակողմանի քննարկվելուց հետո վավերացվեց բարձր մեջլիսում։

Այդ սահմանադրության հոդվածները գալիս են հաստատելու իսլամի մեծ խալիֆայությունը, Օսմանյան սուլթանության իրավունքները, Օսմանցիների ազատությունն ու հավասարությունը, պետական գործիչների պարտավորությունները, Ազգային ժողովների իրավունքները, դատարանների օրինականությունը, ֆինանսական գործերի հավասարակշռությունը, կենտրոնական կառավարության իրավունքները և նահանգների վարչական ապակենտրոնացումը։ Այս բոլորը ելնում են չարիաթի պահանջներից, երկրի և ժողովրդի պահանջներից, և ընդհանուրի առաջադիմության ու երջանկության վսեմ գաղափարից, որը մեր նվիրական ցանկությունն է։

Ահա, Աստծո օգնությամբ և Մարգարեի օժանդակությամբ հաստատում եմ Ձեր հղած այս սահմանադրությունը։

Աստծո ողորմությամբ, մենք որոշած ենք Օսմանյան կայսրության բոլոր կողմերում գործադրել այս սահմանադրությունը և

նախաձեռնել հարկ եղած միջոցները, որպեսզի կազմվեն և հրապարակվեն անհրաժեշտ օրենքներ։

Թող Աստված հաջողությամբ պսակի մեր երկրի ու ժողովուրդների երջանկության համար աշխատողների ջանքերը։

1293 Զիլհիջե, 7 (1876, Դեկտեմբեր, 23)

Աբդուլ Համիդ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇՆՈՐՀՎԱԾ ԲԱՐՁՐ ՆԵՐՈՒՄԻՑ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԵԾ ՎԵԶԻՐԻ ՀՐԱՄԱՆԸ

1. 1906–1907 թվականներին, Երիտթուրքերի կենտրոնի կարգադրությամբ, հակակառավարական ցույցեր տեղի ունեցան Էրզրումում, Վանում, Բիթլիսում, Դիարբեքիրում։ Հատկապես 1907 թվականի Մարտի 5–22-ը Էրզրումում տեղի ունեցան զանգվածային ցույցեր, որոնց մասնակիցները պահանջեցին վերացնել մի շարք հարկերի գանձումը և պաշտոնից հեռացնել բնակչության համար ատելի վարչական աշխատողներին, այդ թվում Էրզրումի վալի Նազիմ փաշային։ Բնակչության կողմից սպանվեցին նաև մի քանի ոստիկաններ։ Հետևանքը եղավ այն, որ Բարձրագույն դռան որոշմամբ, զանգվածային ձերբակալություններ եղան թե՛ Էրզրումում և թե՛ շրջակա գյուղերում։ Ռուսական հյուպատոսի տվյալներով, 1907 թվականի Նոյեմբերին ձերբակալվել են 92 հոգի, որոնցից 8-ը դատապարտվել են մահվան, 18-ը ցմահ կալանքի, իսկ մյուսները՝ տարբեր ժամկետների բանտարկության։ Տե՛ս, Յուրի Պետրոսյան, Երիտթուրքերի չարժումը, Մոսկվա, 1971, էջ 220–225 (ռուսերեն)։

2. Դյուստուր, հատ. 1, երկրորդ հրատարակություն, էջ 40–42։

ԲԱՐՁՐ ԲԵՐԱԹԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՄ Է ԽԱԽԱՄԲԱՇԻ ԽԱՅԻՄ ՆԱՀՈՒՄ ԷՖԵՆԴիի ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Դյուստուր, հատ. 2, երկրորդ հրատարակություն, էջ 351–355։

ՄԻՐՈՖ ԷՖԵՆԴիին ԲՈՒԼՂԱՐ ԿԱԹՈԼիԿ ԵՊիՍԿՈՊՈՍՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆին ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՎՍԵՄ ԲԵՐԱԹ

1. Դյուստուր, հատ. 1, երկրորդ հրատարակություն, էջ 324։

ՌՈՒՄԵԼԻՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԴՊՐՈՑՆԵՐի ԵՎ ԿՆՔՂԵՑիՆԵՐի ՎԻՃԵԼի ՀԱՐՑԵՐին ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Գյուղացիների խմբակցություն։
2. Դյուստուբ, հատ. 2, Երկրորդ հրատարակություն, էջ 431–433։

ՀՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՐՄԱՆՈՍ ԷՖԵՆԴԻԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՂ ԲԱՐՁՐ ԲԵՐԱԹԸ

1. Դյուստուբ, հատ. 5, Երկրորդ հրատարակություն, էջ 63–68։

ԲԱՐՁՐ ԲԵՐԱԹԸ ԲՈՎԱՆԴԱԿՈՒՄ Է ՄԱՐՈՆԻՆԵՐԻ ՊԱՏՐԻԱՐՔ ԻԼՅԱՍ ԷՖԵՆԴԻԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Դյուստուբ, հատ. 7, Երկրորդ հրատարակություն, էջ 207–210։

1915 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ՏՐՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕՐԵՆՔԻ ԴՈՐԾԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՑԼ ՎԱՅՐԵՐ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՆՀԱՏՆԵՐԻ ԼՔՅԱԼ ԳՈՒՅՔԵՐԻՆ ԵՎ ՊԱՐՏՔԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. 1915 թվականի Մայիսի 22-26-ը գումարված Երիտթուրքերի ժողովը հաստատեց հայերի բռնագաղթին վերաբերող տեղեկագիրն ու հատուկ կանոնադրությունը և վավերացման համար ներկայացրեց Մեջլիսի հերթական նիստին։ Բնականաբար, Մայիս 27-ին, Մեջլիսը առանց հապաղելու վավերացրեց այն։ Այսպիսով օրինականացվեց հայերի չարժական գույքերի, կալվածների, բոլոր հարստության բացահայտ կողոպուտն ու թալանը, որն արդեն իսկ գործադրվում էր ամբողջ Թուրքիայում։ Հայերի լքյալ գույքերին վերաբերող այս առաջին կանոնադրությունը բաղկացած էր 34 հոդվածներից, որոնց հիման վրա, իբր թե հայերի գույքերն ու կալվածները պետք է գրանցվեին և արձանագրվեին պետական պաշտոնյաների կողմից՝ և արժեքները գնահատելուց հետո իբրև ավանդ պահ դրվեին պետական գանձարանները, որպեսզի հետագայում, դրանք հանձնվեին իրենց տերերին։ Թե ինչ ձևով դրանք պիտի վերադարձվեին և երբ, հայտնի չէր, որովհետև կանոնադրության հեղինակները արդեն վաղօրոք քաջ գիտեին թե ինչ էր սպասվում ամբողջ հայությանը։

Բնականաբար, հայերի լքյալ գույքերի կողոպտման հարցը չսահմանափակվեց լոկ այս կանոնադրությամբ։ Գոյություն ունեն բազմաթիվ հեռագրեր, հրահանգներ, առանձին կարգադրություններ (տե՛ս Լևոն Վարդան, Հայկական Տասնհինգը և Հայերու լքեալ գոյքերը, Պէյրութ, 1970՝ էջ 94-100), առաքված երիտթուրքերի

կենտրոնական կառավարութիւն կողմից, որոնք իբրև թե կոչված էին ուղղելու և սրբագրելու գործադրված սխալները։ Այնուհանդերձ, այդ բոլորը մասն էին կազմում հայութիւն ոչնչացման և նրանց ունեցվածքը կուլ տալու ընդհանուր գործին։

1915 Սեպտեմբերի 13-ին, Երիտթուրքերի կառավարութիւնը հայերի լքյալ գույքերի հարցը կարգավորելու համար հրատարակեց 11 հոդվածներից բաղկացած մի նոր կանոնադրութիւն ևս, որը ճշտելու էր սեփականատերերի իրավունքները, հանձնախմբերի կազմութիւն ձևն ու գործելակերպը (Տե՛ս Լևոն Վարդան, նշվ. աշխ., էջ 153-155)։

1915 թվականի Հոկտեմբերի 26-ին հրապարակված այս կանոնադրութիւնը հայերեն թարգմանել ենք առաջին անգամ։

2. Նկատի ունի լքյալ գույքերին վերաբերող առաջին կանոնադրութիւնը։

3. Դյուստուր, հատ. 7, էջ 775-781։

ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

ԱՇԱՐ – *Տասանորդի հարկ։*

ԲԱՐՋՐԱԳՈՒՅՆ ԴՈՒՌ – *(թուրքերեն՝ Բաբը-Ալի) – Ստամբուլում մեծ վեզիրի և մի շարք նախարարությունների շենքը։ Հաճախ գործածվում է Օսմանյան կառավարության իմաստով։*

ԲԵՅԼԵՐԲԵՅԻ – *Նահանգի (վիլայեթի, էյալեթի) կառավարիչ և զինվորական հրամանատար, որի տնօրինության տակ էր գտնվում թե՛ քաղաքացիական վարչությունը և թե՛ ավատատիրական աշխարհազորը, ինչպես նաև տեղի ենիչերիների կայազորը։*

ԲԵՐԱԹ – *Սուլթանի կողմից տրված աստիճանների, չքանշանների և արտոնությունների հրամանագիր։*

ԲԻԼԱԴ-Ի ՍԵԼԱՄԻԵ – *Ստամբուլի երեք արվարձաններին՝ Էյուբիյե, Ղալաթա և Ուսկյուդար, միատեղ տրված անվանումը։*

ԲՅՈՒՅՈՒԿԲԱՇԻ – *Հեծելավաշտի հրամանատար։*

ԳԵԴԻԿ – *Կրոնավորներին չնորհված հողաբաժին։*

ԳՅՈՒՂՀԱՆԵ – *Բառացի՝ վարդանոց։ Ստամբուլում տեղի անուն։*

ԴԵՖԹԵՐԴԱՐ – *Սուլթանական արքունիքի բարձրաստիճան պաշտոնյա, պետական գանձարանի կառավարիչ։*

ԴԻՎԱՆ – *Սուլթանին առընթեր պետական բարձր խորհուրդ, որը հաճախ գլխավորում էր մեծ վեզիրը։*

ԵՆԻՉԵՐԻ – Բառացի՝ «նոր զորք»։ Օսմանյան կայսրության կանոնավոր հետևակային զորք։ Ստեղծվել է 1361 թվականին, սուլթան Մուրադ Ա-ի ժամանակ։

ԷԿԶԱՐԽ – Ուղղափառ ինքնուրույն եկեղեցու մարզային առաջնորդություն։

ԷՅԱԼԵԹ – Նահանգ, վարչական բաժանման մեծ միավոր։

ԹԱՓՈՒ – Մեծ հողատերի կամ պետության կողմից տրված վկայական, որը որոշակի հողաբաժին մշակելու համար համապատասխան վճարով հատկացվում էր գյուղացուն։ Այդ հողաբաժինը սահմանված վարձակալային վճարումով կարող էր ժառանգաբար անցել վարձակալողի սերունդին։

ԹԱՔՐԻՐ – Գրավոր ուղերձ, կարգադրություն

ԹԵԶՔԵՐԵ – Գրավոր թույլտվություն։

ԹՈՒՂՐԱ – Սուլթանի անունը պարունակող դժվար ընթեռնելի հատուկ նշան, որը դրոշմվում էր սուլթանական բոլոր գրությունների վրա։

ԻԼԱՄ – Ջեկուցագիր, ծանուցագիր, դատարանի գրավոր որոշում։

ԻԼԹԻԶԱՄ – Պետական եկամուտների որևէ ճյուղը (գլխավորապես՝ գյուղատնտեսական հարկերը) նախապես վճարելու պայմանով պարտավորագրով վերցնելը կոչվում էր իլթիզամ, իսկ պարտավորագրով վերցնող անձնավորությունը կոչվում էր մյուլթեզիմ կամ մուքաթաաջը։ Մյուլթեզիմները զանազան պատրվակներով հաճախ նշանակված հարկերից ավելի բարձր էին գանձում։

ԻՄԱՄ – Մահմեդական հոգևորության առաջնորդ։

ԻՋԱՐԵԹԵՅՆ – Վաքուֆապատկան որևէ հողատարածության կամ շենքի անժամկետ վարձակալում, որը կատարվում էր հետևյալ կերպ։

Վարձակալողը նախապես վճարում էր հողատարածության կամ շենքի ընդհանուր արժեքի մի մասը, իսկ այնուհետև, ամսական նշանակված վարձը։ Այս ձևով վարձակալողը դառնում էր տվյալ հողատարածության կամ շենքի կատարյալ սեփականատերը, և վաքուֆային վարչությունը երբեք չէր կարող նրան զրկել այդ իրավունքից։

ԻՍԹԻՄԱՐԵ ՓԱՐԱՍԸ — Որևիցե տեղի բարեկարգման համար ծախսվող գումարը։

ԻՐԱԴԵ — Սուլթանական հրաման, հրամանագիր, չարադրված գլխավոր քարտուղարի կողմից՝ սուլթանի կամքով։

ԼԻՎԱ — Տե՛ս Կազա։

ԼՈԿՈՖԵԹ — Դեռևս Բյուզանդական արքունիքում բարձր պաշտոն էր, որի մոտ էր գտնվում պետության կնիքը։ Այս տիտղոսը պահպանվել է նաև հետագայում։

ԿԱԴԻ — Դատավոր, Կազայի կառավարիչ։

ԿԱԶԱ — Օսմանյան պետության Ռումելիի և Անատոլիայի երկրամասերը բաժանվում էին նահանգների՝ վիլայեթների կամ էյալեթների։ Վիլայեթները բաժանվում էին սանջաքների կամ լիվաների, սանջաքները՝ կազաների, որոնց կառավարիչները կոչվում էին կազիներ կամ կադիներ, իսկ կազաներն էլ բաժանվում էին նահիյեների։

ԿԱՍԱԲԱ — Գյուղաքաղաք կամ մզկիթ և իջևանատուն ունեցող մեծ գյուղ։ Սովորաբար կասաբան վարչական կենտրոն էր, ուր նստում էր կազայի կամ նահիյեի կառավարիչը։

ԿԱՍՍԱՄ — Շարիաթական օրենքների հիման վրա ժառանգականության և կտակների հարցերով զբաղվող պաշտոնյա։

ՀԱԹԹԸ ՀՅՈՒՄԱՅՈՒՆ — Կայսերական հրովարտակ։

ՀԱՎԱԼԵ — Գրավոր հրաման կամ թույլտվություն,

որը տրվում էր այն անձնավորություններին, որոնք պետությունից ստանալիք իրենց դրամի գանձումը կատարում էին մյուլթեզիմներից (տե՛ս Իլթիզամ)։

ՂՈՒՐՈՒՇ – Արծաթյա դրամ, որը հատվելով սլավոնյան երկրներում (գրոշ) գործածություն մեջ էր նաև Օսմանյան կայսրությունում։ Թուրքական ղուրուշը սկսել է դրամահատվել XVII դարի վերջերից։

ՄԱԿԹՈՒ – Այսպես էին կոչվում այն հարկերը, որոնք յուրաքանչյուր տարի, առանց հաշվի առնելու բերքի քանակն ու պայմանները, նախապես որոշված հատուկ գումարով գանձվում էին պետության կամ հողատերի օգտին։

ՄԵՋԻԴԻՅԵ – Սուլթան Աբդուլ Մեջիդի ժամանակաշրջանում հատված արծաթյա դրամ, որը շրջանառության մեջ է եղել մինչև հանրապետության հաստատման շրջանը (1923)։

ՄԵՋԼԻՍ – Պետական գործերի քննության և որոշման համար գումարվող ժողով։

ՄԻՐԱԼԱՑ – Գնդապետի աստիճան ունեցող սպա։

ՄՅՈՒԹԵՎԵԼԼԻ – Վաքֆի կառավարիչը, որը կրոնական խորհրդի հրամանների և կարգադրության համաձայն իրավունք ուներ ծախսելու վաքֆի եկամուտները։

ՄՈՒԹԱՍԱՐՐԻՖ – Թանզիմաթից առաջ սանջաքները կառավարվում էին սանջաքբեյների կողմից, որոնց ձեռքին էր գտնվում թե՛ քաղաքացիական և թե՛ զինվորական ղեկավարությունը։ Թանզիմաթի շրջանում այդ պաշտոնները առանձնացան։ Սանջաքի կառավարիչը սկսեց անվանվել մութասարրիֆ։

ՄՈՒԽԹԱՐ – Մուխթար էր կոչվում 1834 թվականին, կ. Պոլսի թաղերի բնակիչների կողմից ընտրված ներկայացուցիչը։ Հետագայում Մուխթար սկսվեցին անվանվել նաև գյուղական ավագները։

ՄՈՒՀԱՍԻԼ – Պետական գանձարանի եկամուտ-

ները, ինչպես նաև հարկերը հավաքող պաշտոնյա։

ՄՈՒՔԱԹԱԱՋԸ – *Տե՛ս Իլթիզամ*։

ՆԱՀԻՑԵ – Վարչական բաժանման միավոր, գավառ։ *Տե՛ս Կազա*։

ՆԱՑԻԲ – Շարիաթական դատարանի դատավոր։

ՇԱՐԻԱԹ – Մահմեդական իրավական օրենսդրություն, որը կազմված է հոգևոր հրամանների և պատվերների հիման վրա։

ՇԵՅԽ ՈՒԼ-ԻՍԼԱՄ – Մինչև Մահմուդ Բ.-ը (1808–1839) մահմեդական հոգևորականության ամենաբարձր պատվո տիտղոսը։ Հետագայում, Շեյխ ուլ-Իսլամը դարձավ սուլթանական դիվանի բարձր պաշտոնյաներից մեկը։ Մեծ վեզիրից հետո ամենաբարձր պաշտոնյան։

ՇԵՐԻՖ – Մեքքայի կառավարիչի տիտղոսը։

ՋՈՐԲԱՋԻ – 1) Ունեվոր քրիստոնյա. 2) Ենիչերիական զորամասում սպայական աստիճան (վաշտի հրամանատար)։

ՌՈՒՄԵԼԻ – Օսմանյան կայսրության եվրոպական մասը։

ՍԱԴՐԱԶԱՄ – Կամ Վեզիրի ազամ – մեծ վեզիր, եպարքոս, (վարչապետ)։

ՍԱՆՋԱՔ – Գավառ։ *Տե՛ս Կազա*։

ՍԵՐԱՍՔԵՐԱԹ – 1826 թվականին ենիչերիների զորատեսակը կազմալուծվելուց հետո նոր զորքի հրամանատարը կոչվում էր Սերասքեր, իսկ պաշտոնատեղին՝ Սերաքերաթ կամ Սերասքեր քափըսը։

ՎԱԼԻ – Վիլայեթի կառավարիչ։

ՎԱՔՈՒՖ – Շարիաթի սկզբունքներով մզկիթներին չնորհված կալվածներ և այլ շարժական ու անշարժ ունեցվածքներ, որոնց եկամուտները հատկացվում էին կրոնական կամ բարեգործական նպատակներին։

ՈՒԼԵՄԱ – Գիտությամբ և կրոնական գործերով զբաղվող անձնավորություն։

ՓԱՐԱ – *Մանր դրամ, ղուրուշի մեկ քառասուներորդ մասը։*

ՔԱՅՄԱԿԱՄ – *Տեղակալ. քայմաքամ էր կոչվում նաև նահիյեի կառավարիչը։*

ՔԵԹԽՈՒԴԱ – *Քաղաքացիական և պինվորական կոչում ունեցող անձնավորություն։*

ՔԻՍԵ – *Մեկ քիսեն հավասար է 500 ղուրուշի։*

ՔՈՒՄԱՄԵ – *Երուսաղեմում հունական տաճար, ուր գտնվում է Քրիստոսի դերեզմանը։*

ՖԵԹՎԱ – *Որևիցե հարցի կամ դատական գործի մասին շարիաթի սկզբունքների և պատվերների հիման վրա մահմեդական կրոնավորի (մյուֆթի, կադի) տված իրավական որոշումը։*

ՖԵՐՄԱՆ – *Հրովարտակ։ Սուլթանի թուղրայով չնորհված հրամանագիր։*

AVETIS PAPAZYAN

TURKISH DOCUMENTARY MATERIALS ABOUT NON-MUSLIM PEOPLE OF THE OTTOMAN EMPIRE (1839-1915)

Summary

In 1839, a major-political reform movement began within the Ottoman Empire. This process of change has generally been labeled "Tanzimat", which in Arabic means, to reform or to order

One of the goals that the Tanzimat relays is a desire to abolish discrimination between varying religious groups. By abolishing discrimination, the life, property and honor of all Ottoman subjects would be protected and thus maintained. During this period, the Tanzimat reformers aspired to create a justification for the appointment of taxes, a compulsory military conscription, a court of justice, a reformation of inheritance laws and speculations.

Although the Tanzimat strove to reform, in varying degrees, the strongest reformation that arose, due to the Tanzimat, did so by giving a certain restricted amount of reli-

gious rule to religious communities, similar to the way in which some Christian nations held the authority of self determination. For instance, Mountainous Lebanon, Mount Afon, Crete, and the Samos Islands are only a few examples of where some internal self determined rules can be observed.

Unfortunately, the majority of adopted laws, made during the Tanzimat, which could have improved the conditions for Christians, remained unrealized. The laws appeared on paper, and were never enacted in life. In fact, conditions for the non-Muslim Ottoman citizen became worse.

In the years after the close of the Tanzimat, in order to solve the "national questions," Young Turks decided to annihilate suspect nations. Therefore, between the years of 1915 and 1916, the Young Turks committed a policy of Genocide in order to resolve the "Armenian question."

This book includes translations of laws, rules, and other Turkish governmental official resolutions, which were periodically issued in Arabic script in the volumes of Düstur between 1851-1915. (The volumes of Düstur were a collection of Ottoman legislation).

The topic of all of these materials are; the status of non muslim people within the Ottoman Empire. The materials hold important significance for the history of the non-Islamic population.

In this introduction, the author provides information about the Tanzimat period, along with a detailed analysis.

Annotations have been provided for all the translated materials. A terminology glossary is also present.

Here are the titles of the translated materials;

1. The copy of the"Hatt-i Humayun" (Imperial letter) which was read in Gulhane (Istanbul).
2. The copy of the highest Imperial edict relating to the reforms.

3. The rule about the appointment of taxes on the residents of states, provinces, districts and villages.
4. The copy of the Imperial letter relating to the heritage of Christians.
5. The Imperial edict relating to Samos island.
6. The general rule constituted by the Council of Grecian Patriarchate, about the reforms, election and assignment of the Grecian patriarch.
7. The coordination of the election of the Armenian patriarchate in Istanbul.
8. The new reformed rule of the Mountainous Lebanon, as the date of the previous has expired.
9. The rule of Rabbis.
10. The rule tells, that all religious institutions, without taking into consideration their national belongings, are free from taxation.
11. The rule of vilayet (state) Crete.
12. The rule of Grecian patriarchate of Jerusalem.
13. Under the highest edict (dated May 3, 1872), will be forbidden to sue, if someone upon displaying the contract will sell a house to a non-muslim subject.
14. This is the decree of the Grand Vizier about the inheritance of clergymen who have died without an heir.
15. The decree of the Grand Vizier about the distribution and collection of the military taxes.
16. The copy of the Grand Vizier's letter which is directed to the Authority of Samos Island.
17. The copy of the Grand Vizier's letter, which is directed to the Ministries of Justice and Finance, about the collection of military taxes from non-muslim subjects.
18. Until the reorganization of a new military serving system, there will be a reform in the rule (dated November 7, 1886), relating to the collection of non-muslim recruits.

19. This is the Imperial edict about the execution of the constitution, which was announced in the Sublime Port.
20. The order of the Grand Vizier describes that the criminals can take advantage of the same pardon that was given to the political criminals.
21. The great order tells about the function of the Jewish spiritual leader Khayim Nahum efendi.
22. The great order relates to the assignment of Mirof efendi to the function of Bulgarian Catholic Episcopacy.
23. This is the rule relating to the disputable questions about the schools and churches in Rumeli.
24. The great order relates to the assignment of Grecian patriarch Yermanos efendi.
25. The great order relates to the assignment of Maronites patriarch Ilyas efendi.
26. For the execution of the September 13, 1915 temporary law, this rule relates to the debts and abandoned properties of those people who were deported to other places.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վաղուց Սպասված աշխատություն 6

Երկու խոսք 7

Առաջաբան 12

ՎԱՎԵՐԱԴՐԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Գյուլհանեում ընթերցված Հաթթը Հյումայունի պատճենը* 22
2. *Բարեփոխություններին վերաբերող կայսերական բարձր ֆերմանի պատճենը՝ ուղղված լիազոր-փոխանորդին* 27
3. *Կանոնադրություն էյալեթների, լիվաների, գյուղերի և թաղամասերի բնակիչների վրա նշանակված հարկի բաշխման մասին* 35
4. *Քրիստոնյաների ժառանգության վերաբերյալ կայսերական գրության պատճենը* 39
5. *Սամոս կղզու վերաբերյալ կայսերական հրովարտակը* 43
6. *Հունական պատրիարքի ընտրության, նշանակման և պատրիարքարանի բարեփոխությունների վերաբերյալ հունական պատրիարքարանի խորհրդի կողմից կազմված ընդհանուր կանոնադրությունը* 51
7. *Կ. Պոլսի հայկական պատրիարքության ընտրության կարգի մասին* 90
8. *Լեռնալիբանանին տրված կանոնադրության ժամկետը լրանալու կապակցությամբ բարեփոխված նոր կանոնադրությունը այս է* 123
9. *Բաբբիության կանոնադրությունը* 131
10. *Կանոնադրություն՝ վանքերը և այլ հոգևոր կացարանները, անկախ նրանց հպատակությունից և դավանանքից մաքսային հարկերից ազատելու մասին* 147
11. *Կրետեի վիլայեթի կանոնադրությունը* 156
12. *Երուսաղեմի հունական պատրիարքության կանոնադրությունը* 161
13. *3 Մայիս 1289 (1872) թվակիր բարձր ֆերմանը, որով արգելվում է դատարանին հայց ներկայացնել այն դեպքում, երբ պայմանի խախտումով տուն է վաճառվում ոչ-մահմեդական հպատակներին* 167
14. *Մեծ վեզիրի հրամանագիրը անժառանգ*

14. *Մեծ վեզիրի հրամանագիրը անժառանգ մահացած կղերականների ժառանգության մասին* .169
15. *Զինվորական հարկի բաշխման և գանձման մասին Մեծ վեզիրի հրամանագիրը* 173
16. *Մեծ վեզիրի գրության պատճենը, ուղղված Սամոս կղզու իշխանությանը* 176
17. *Մեծ վեզիրի գրության պատճենը, որն ուղղված է Արդարադատության և Ֆինանսների նախարարություններին, ոչ-մահմեդական հպատակներից զինվորական հարկ գանձելու մասին* 178
18. *Մինչև զինվորական ծառայության վերաբերյալ կանոնադրության կազմումը 1304 թվականի Սեֆեր ամսի 27-ից (1886 թվականի Նոյեմբեր 7) գործածության մեջ գտնվող ոչ-մահմեդական զինակոչիկների վիճակահանության վերաբերյալ կանոնի բարեփոխման մասին* 181
19. *Սահմանադրության կիրառման վերաբերյալ հրովարտակը, որն ընթերցվել է Բարձրագույն դռան մեջ* 183
20. *Քաղաքական հանցագործների համար չնորհված բարձր ներումից, սովորական քրեական հանցագործների օգտվելու մասին մեծ վեզիրի հրամանը* 188
21. *Բարձր բերաթը բովանդակում է հրեաների խախամ Բաշիի Խայիմ Նահում էֆենդիի պաշտոնավարությունը* 191
22. *Միրոփ էֆենդիին բուլղար կաթոլիկ եպիսկոպոսության պաշտոնին նշանակելու վսեմ բերաթը* 197
23. *Ռումելիում գույություն ունեցող դպրոցների և եկեղեցիների վիճելի հարցերին վերաբերող կանոնադրություն* 198
24. *Հույն պատրիարք Երմանոս էֆենդիի պաշտոնավարությունը բովանդակող բարձր բերաթը* 201
25. *Բարձր բերաթը բովանդակում է մարոնիների պատրիարք Իլյաս էֆենդիի պաշտոնավարությունը* 210
26. *1915 թվականի Սեպտեմբեր 13-ին տրված ժամանակավոր օրենքի գործադրման համար այլ վայրեր տեղափոխված անհատների լքյալ գույքերին և պարտքերին վերաբերող կանոնադրություն* 223

ՇԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 237

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՄՓՈՓՈՒՄ 243

«ՋԱՆԳԱԿ-97» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
375010, Երևան, Վարդանանց փակուղի 8,
հեռ.՝ 54-89-32,54-05-17
ֆաքս՝ 54-06-07, էլ.փոստ՝ zangak@arminco.com
Տպագրվել է «Ջանգակ-97»
հրատարակչության տպարանում

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0065572

[1400 pp]

A II
87258